27/28

ՎԱՐՔ

ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

ԽՄԲԱԳՐԵԱԼ

Ի ՉՈՐԻՑ ԱՒԵՏԱՐԱՆՉԱՑ

Ի ՊԷՏՍ ԱՇԱԿԵՐՏԱՑ

ԱՐՔՈՒՆԻ ԴՊՐՈՑԱՑ ՅԱՅՍԿՈՅՍ ԿՈՎԿԱՍՈՒ

А II/42602

Ի ԼՈՅՍ ԱԾ

ՅՈՎՍԷՓ ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅ ՕՐԲԵԼԻ

ԿՐՕՆՈՒՍՈՅՑ

ԳԻՒՌԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՏՓԽԻՍԱՑ։

Ի ՄՈՍԿՈՒԱ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԷՐՆԵՍՏԱՅ ԲԱՐԳՔՆԵՀԹԻ·

1859.

ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ:

съ тѣмъ, чтобы по отпечатаніи представлено было въ Ценсурный Комитетъ узаконенное число экземпляровъ. Тифлисъ, 25-го октября 1858 г.

Ценсоръ *Кайтмазовъ.*

ՎԱՐՔ

ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

Ա։ ԱՍՏՈՒԱԾԱՄԱՐԴ ՓՐԿԻՉՆ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ։

Յովհաննու 1. 1 — 5։

Ի սկզբանէ էր Բանն. և Բանն էր առ Աստուած. և Աստուած էր Բանն։ Նա էր 'ի սկզբանէ առ Աստուած։ Ամենայն ինչ նովաւ եղև. և առանց նորա եղև և ոչինչ՝ որ ինչ եղև։ Նովաւ կեանք էր. և կեանքն էր լոյս մարդկան։ Եւ լոյսն 'ի խաւարի անդ լուսաւոր է. և խաւար նմա ոչ եղև հասու։

6 — 13։

Եղև այր մի առաքեալ յԱստուծոյ. անուն նմա Յովհաննէս։ Սա եկն 'ի վկայութիւն՝ զի վկայեսցէ վասն լուսոյն. զի ամենեքին հաւատասցեն նովաւ։ Ո՛չ էր նա լոյսն, այլ զի վկայեսցէ վասն լուսոյն։ Էր լոյսն ճշմարիտ, որ լուսաւոր առնէ զամենայն մարդ՝ որ գալոց է յաշխարհ։ Յաշխարհի էր, և աշխարհ նովաւ եղև. և աշխարհ զնա ոչ ծանեաւ։ Յիւրսն եկն, և իւրքն զնա ոչ ընկալան։ Իսկ որք ընկալանն զնա, ետ նոցա իշխանութիւն լինել որդիս Աստուծոյ, որոց հաւատասցեն յանուն նորա։ Ոյք ոչ յարենէ, և ոչ 'ի կամաց մարմնոյ, և ոչ 'ի կամաց առն, այլ յԱստուծոյ ծնան։

14 — 18։

Եւ Բանն մարմին եղեւ, եւ բնակեցաւ 'ի մեզ. եւ տեսաք զփառս նորա, զփառս իբրեւ զմիածնի առ 'ի Հօրէ, լի՛ շնորհօք եւ ճշմարտութեամբ։ Յովհաննէս վկայեաց վասն նորա, աղաղակեաց եւ ասէ. սա՛ է, զորմէ ասէի՝ որ զկնի իմ գալոցն էր՝ առաջի իմ եղեւ. զի նախ քան զիս էր։ Զի 'ի լրութենէ անտի նորա՝ մեք ամենեքին առաք շնորհս, փոխանակ շնորհաց։ Զի օրէնքն 'ի ձեռն Մովսիսի տուան. շնորհք եւ ճշմարտութիւն 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի եղեն։ զԱստուած ո՛չ ոք ետես երբեք. բայց միածինն որդի՝ որ է 'ի ծոց Հօր, նա պատմեաց։

Բ։ ՅՂՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԿՐՏՉԻ։

Ղուկաս 1. 5 — 17։

Եւ եղեւ յաւուրս Հերովդի արքայի Հրէաստանի, քահանայ ոմն՝ անուն Զաքարիա՝ 'ի դասակարգէ Աբիայ. եւ կին նորա 'ի դստերաց Ահարոնի. եւ անուն նորա Եղիսաբեթ։ Եւ էին արդարք երկոքին առաջի Աստուծոյ, գընային յամենայն պատուիրանս եւ յիրաւունս Տեառն՝ անարատք։ Եւ ո՛չ գոյր նոցա որդեակ. քանզի Եղիսաբեթ ամուլ էր. եւ երկոքեան անցեալք էին յաւուրս իւրեանց։ Եւ եղեւ 'ի քահանայանալն նորա ըստ կարգի աւուրցն հասանելոյ առաջի Աստուծոյ։ Ըստ օրինի քահանայութեան եհաս նմա խունկ արկանել՝ մտեալ 'ի տաճարն Տեառն։ Եւ ամենայն բազմութիւն ժողովրդեանն՝ կային յաղօթս արտաքոյ 'ի ժամ խնկոցն։ Եւ երեւեցաւ նմա հրեշտակ Տեառն՝ զի կայր ընդ աջմէ սեղանոյ խընկոցն։ Եւ խռովեցաւ Զաքարիա իբրեւ ետես. եւ անկաւ ահ 'ի վերայ նորա։ Ասէ ցնա հրեշտակ Տեառն. մի՛ եր-

կընչիր Զաքարիա, զի լսելի եղեն աղօթք քո. և կին քո Եղիսաբէթ ծնցի քեզ որդի, և կոչեսցես զանուն նորա Յովհաննէս։ Եւ եղիցի քեզ ուրախութիւն և ցնծութիւն. և բազումք 'ի ծննդեան նորա խնդասցեն։ Զի եղիցի մեծ առաջի Տեառն. և գինի և օղի մի՛ արբցէ. և հոգւով սրբով լցցի անդստին յորովայնէ մօր իւրոյ։ Եւ զբազումս յորդւոցն Իսրայէլի՝ դարձուսցէ 'ի Տէր Աստուած իւրեանց։ Եւ ինքն եկեսցէ առաջի նորա հոգւով և զօրութեամբ Եղիայի. դարձուցանել զսիրտս հարց յորդիս, և զանհաւանս յիմաստութիւն արդարոց. պատրաստել Տեառն ժողովուրդ կազմեալ։

18 — 22։

Եւ ասէ Զաքարիա ցհրեշտակն. և ի՞ւ գիտացից զայդ, զի ես ծեր եմ, և կին իմ անցեալ զաւուրբք իւրովք։ Պատասխանի ետ հրեշտակն, և ասէ ցնա. ես եմ Գաբրիէլ՝ որ կամ առաջի Աստուծոյ. և առաքեցայ խօսել ընդ քեզ, և աւետարանել քեզ զայդ։ Եւ ահա եղիցիս համր, և մի՛ կարասցես խօսել մինչև ցօրն՝ յորում այդ լինիցի. փոխանակ զի ո՛չ հաւատացեր բանից իմոց, որք լցցին 'ի ժամանակի իւրեանց։ Եւ ժողովուրդն ակն ունէր Զաքարիա, և զարմանային ընդ յամելն նորա 'ի տաճարին։ Եւ իբրև ել՝ ո՛չ կարէր խօսել ընդ նոսա. և իմացան՝ թէ տեսիլ ետես 'ի տաճարին. և նա նշանացի խօսէր ընդ նոսա, և կայր պապանձեալ։

23 — 25։

Եւ եղև իբրև լցան աւուրք պաշտաման նորա, գնաց 'ի տուն իւր։ Եւ յետ աւուրցն այնոցիկ՝ յղացաւ Եղիսաբէթ կին նորա, և թաքուցանէր զանձն ամիսս հինգ, և ասէր.

*

Զի՛նչ գործ գործեաց ընդ իս Տէր յաւուրս՝ յորս հայեցաւ յիս բառնալ զնախատինս իմ 'ի մարդկանէ։

Գ։ ԱՒԵՏՈՒՄՆ ՀՐԵՇՏԱԿԻ ԶԾՆՆԴԵՆԷ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ։

Ղուկ· 1· 26 — 38։

Եւ յամսեանն վեցերորդի առաքեցաւ Գաբրիէլ հրեշտակ յԱստուծոյ 'ի քաղաք մի Գալիլեացւոց· որում անուն էր Նազարէթ։ Առ կոյս, խօսեցեալ առն· որում անուն էր Յովսէփ, 'ի տանէ Դաւթի· և անուն կուսին Մարիամ։ Եւ եկեալ առ նա հրեշտակն՝ ասէ· ուրախ լեր բերկրեալդ՝ Տէր ընդ քեզ· օրհնեալ ես դու 'ի կանայս։ Եւ նա ընդ բանսն խռովեցաւ· և խորհէր ընդ միտս, թէ ո՞րպիսի ինչ իցէ ողջոյնս այս։ Եւ ասէ ցնա հրեշտակն· մի՛ երկնչիր Մարիամ· զի գտեր շնորհս յԱստուծոյ։ Եւ ահա՛ յղասջիր՝ և ծնցիս որդի· և կոչեսցես զանուն նորա Յիսուս։ Նա եղիցի մեծ· և որդի Բարձրելոյ կոչեսցի· և տացէ նմա Տէր Աստուած զաթոռ Դաւթի հօր նորա· և թագաւորեսցէ 'ի վերայ տանն Յակովբայ 'ի յաւիտեան։ Եւ թագաւորութեան նորա՝ վախճան մի՛ լիցի։ Եւ ասէ Մարիամ ցհրեշտակն· զիա՞րդ լինիցի ինձ այդ· քանզի զայր ո՛չ գիտեմ։ Պատասխանի ետ հրեշտակն, և ասէ ցնա· Հոգին Սուրբ եկեսցէ 'ի քեզ· և զօրութիւն բարձրելոյն հովանի լիցի 'ի վերայ քո· քանզի և որ ծնանելոցն է 'ի քէն, սուրբ է, և որդի Աստուծոյ կոչեսցի։ Եւ ահա՛ Եղիսաբէթ ազգական քո՝ և նա յղի է 'ի ծերութեան իւրում· և այս վեցերորդ ամիս է նորա՝ որ ամուլն կոչեցեալ է։ Զի ո՛չ տկարասցի առ յԱստուծոյ ամենայն բան։ Եւ ասէ Մարիամ· ահաւասիկ կամ աղախին Տեառն· եղիցի ինձ ըստ բանի քում· և գնաց 'ի նմանէ հրեշտակն։

Դ։ ԱՍՏՈՒԱԾԱՄԱՅՐՆ ԳՆԱՅ ՅԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ԵՂԻՍԱԲԷԹԻ․ ՄԱՅՐ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԿՐՏՉԻ, ԵՒ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԿՈՑՈՒՆՑ։

Ղուկ․ 1․ 39 — 45։

Յարուցեալ Մարիամ յաւուրսն յայնոսիկ՝ գնաց 'ի լեռնակողմն փութապէս 'ի քաղաքն Յուդայ։ Եւ եմուտ 'ի տուն Զաքարիայ․ և ետ ողջոյն Եղիսաբէթի։ Եւ եղև իբրև լուաւ ողջոյնն Մարիամու Եղիսաբէթ, խաղաց մանուկն յորովայնի նորա, և լցաւ Եղիսաբէթ Հոգւով սրբով։ Եւ 'ի ձայն բարձր աղաղակեաց և ասէ, օրհնեալ ես դու 'ի կանայս, և օրհնեալ է պտուղ որովայնի քո։ Եւ ուստի՞ է ինձ այս, զի եկեսցէ մայր Տեառն իմոյ առիս։ Զի ահաւասիկ իբրև եղև ձայն ողջունի քո յականջս իմ, խաղաց ցնծալով մանուկս յորովայնի իմում։ Եւ երանի՝ որ հաւատայցէ, եթէ եղիցի կատարումն ասացելոցն նմա 'ի Տեառնէ։

46 — 55։

Եւ ասէ Մարիամ․ մեծացուսցէ անձն իմ զՏէր։ Եւ ցնծասցէ հոգի իմ՝ յԱստուած փրկիչ իմ։ Զի հայեցաւ 'ի խոնարհութիւն աղախնոյ իւրոյ․ զի ահա յայսմհետէ երանիցեն ինձ ամենայն ազգք։ Զի արար ինձ մեծամեծս հզօրն․ և սուրբ է անուն նորա։ Եւ ողորմութիւն նորա յազգաց յազգս երկիւղածաց իւրոց։ Արար զզօրութիւն բազկաւ իւրով․ ցրուեաց զամբարտաւանս մտօք սրտից իւրեանց։ Եւ քակեաց զհզօրս յաթոռոց․ և բարձրացոյց զխոնարհս։ Զքաղցեալս լցոյց բարութեամբ․ և զմեծատունս արձակեաց ունայնս։ Պաշտպանեաց Իսրայէլի ծառայի իւրոյ՝ յիշել զողորմութիւն իւր։ Որպէս խօսեցաւ առ հարս մեր, Աբրահամու և զաւակի նորա յաւիտեան։

56:

Եկաց Մարիամ առ նմա իբրեւ ամիսս երիս, եւ դարձաւ 'ի տուն իւր:

Ե: ԾՆՈՒՆԴ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԿՐՏՉԻ:

Ղուկ. 1. 57 — 66:

Եւ Եղիսաբեթի լցան աւուրք ծնանելոյ. եւ ծնաւ զորդի: Եւ լուան որք շուրջ զնովաւ էին. եւ ազգատոհմք նորա. զի մեծ արար Տէր զողորմութիւն իւր ընդ նմա եւ խնդային ընդ նմա: Եւ եղեւ յաւուրն ութերորդի՝ եկին թլփատել զմանուկն. եւ կոչէին զնա յանուն հօր իւրոյ Զաքարիա: Պատասխանի ետ մայր նորա, եւ ասէ. ո՛չ. այլ կոչեսցի Յովհաննէս: Եւ ասեն ցնա. քանզի ո՛չ ոք է յազգի քում, որոյ կոչի անուն Յովհաննէս: Ակնարկէին հօրն նորա՝ թէ զի՛նչ կամիցի կոչել զնա:

Եւ խնդրեաց տախտակ՝ գրեաց, եւ ասէ. Յովհաննէս է անուն դորա. եւ զարմացան ամենեքին: Եւ բացաւ բերան նորա վաղվաղակի, եւ լեզու նորա. եւ խօսէր՝ եւ օրհնէր զԱստուած: Եւ եղեւ ահ 'ի վերայ ամենեցուն՝ որք լսէին զայս, եւ որք շուրջ բնակեալք էին զնոքօք. եւ ընդ ամենայն լեռնակողմն Հրէաստանի պատմէին ամենայն բանքս այսոքիկ: Եւ եդին ամենեքեան՝ որք լսէինն՝ 'ի սիրտս իւրեանց, եւ ասէին. զի՛նչ լինիցի մանուկս այս. եւ ձեռն Տեառն էր ընդ նմա:

67 — 79:

Եւ Զաքարիա հայր նորա՝ լցաւ Հոգւով սրբով. մարգարէացաւ, եւ ասէ: Օրհնեալ Տէր Աստուած Իսրայէլի, զի յայց ել մեզ. եւ արար փրկութիւն ժողովրդեան իւրոյ: Եւ յարոյց զեղջիւր փրկութեան մեզ 'ի տանէ Դաւթի ծա-

ռայի իւրոյ: Որպէս խօսեցաւ բերանով սրբոցն՝ որք յաւիտենից մարգարէքն նորա էին: Փրկութիւն ՚ի թշնամեաց մերոց. և ՚ի ձեռաց ամենայն ատելեաց մերոց: Առնել ողորմութիւն ընդ հարս մեր. և յիշել զուխտն իւր սուրբ: Զերդումն՝ զոր երդուաւ Աբրահամու հօր մերում, տալ մեզ: Առանց երկիւղի, ՚ի ձեռաց թշնամեաց մերոց փրկեալս, պաշտել զնա: Սրբութեամբ և արդարութեամբ առաջի Նորա, զամենայն աւուրս կենաց մերոց: Եւ դու մանուկ, մարգարէ բարձրելոյն կոչեսջիր, զի երթիցես առաջի երեսաց Տեառն, պատրաստել զճանապարհս Նորա: Տալ զգիտութիւն փրկութեան ժողովրդեան նորա, ՚ի թողութիւն մեղաց նոցա: Վասն գթութեանց ողորմութեան Աստուծոյ մերոյ. որովք այց արար մեզ արեգակն ՚ի բարձանց: Երևիլ՝ որոց ՚ի խաւարի և ՚ի ստուերս մահու նըստէին. ուղղել զոտս մեր ՚ի ճանապարհս խաղաղութեան:

80:

Եւ մանուկն աճէր՝ և զօրանայր հոգւով. և էր յանապատս մինչև յօր երևելոյ նորա Իսրայէլի:

Դ: ԾՆՈՒՆԴ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ:

Ղուկ. 2. 1 — 7:

Եւ եղև ընդ աւուրսն ընդ այնոսիկ ել հրաման յՕգոստոս կայսերէ, աշխարհագիր առնել ընդ ամենայն տիեզերըս: Այս առաջին աշխարհագիր եղև ՚ի դատաւորութեան Ասորւոց Կիւրենայ: Եւ երթային ամենեքեան մտանել յաշխարհագիր՝ յիւրաքանչիւր քաղաքի: Ել և Յովսէփ ՚ի Գալիլեէ՝ ՚ի քաղաքէ Նազարեթէ ՚ի Հրէաստան, ՚ի քաղաք Դաւթի՝ որ կոչի Բեթղեհէմ, վասն լինելոյ նորա ՚ի տանէ՝ և յազգէ Դաւթի: Մտանել յաշխարհագիր Մարիամաւ

հանդերձ՝ որ խօսեցեալն էր նմա. և էր յղի։ Եւ եղև ՚ի հասանել նոցա անդր, լցան աւուրք ծնանելոյ նորա։ Եւ ծնաւ զորդին իւր զանդրանիկ, և պատեաց զնա ՚ի խանձարուրս՝ և եդ զնա ՚ի մսուր, զի ո՛չ գոյր նոցա տեղի իջևանի։

8 — 20։

Եւ հովիւքն էին ՚ի տեղւոջն յայնմիկ բացօթեայք՝ որք պահէին զպահպանութիւնս գիշերոյ հօտից իւրեանց։ Եւ հրեշտակ Տեառն երևեցաւ նոցա, և փառք Տեառն ծագեցան առ նոսա. և երկեան յերկիւղ մեծ։ Եւ ասէ ցնոսա հրեշտակն. մի՛ երկնչի՛ք, զի ահաւասիկ աւետարանեմ ձեզ ուրախութիւն մեծ. որ եղիցի ամենայն ժողովրդեանն։ Զի ծնաւ ձեզ այսօր Փրկիչ, որ է օծեալ Տէր ՚ի քաղաքի Դաւթի։ Եւ այս նշանակ ձեզ, գտանիջէք մանուկ պատեալ ՚ի խանձարուրս, և եդեալ ՚ի մսուր։ Եւ յանկարծակի եղև ընդ հրեշտակին ընդ այնմիկ բազմութիւն զօրաց երկնաւորաց՝ որք օրհնէին զԱստուած, և ասէին. փառք ՚ի բարձունս Աստուծոյ. և յերկիր խաղաղութիւն, ՚ի մարդիկ հաճութիւն։ Եւ եղև իբրև վերացան ՚ի նոցանէ հրեշտակքըն յերկինս. ասեն ցմիմեանս հովիւքն. եկա՛յք երթիցուք մինչև ցԲեթղեհէմ, և տեսցուք, զի՞նչ է բանս այս՝ որ եղև, զոր Տէր եցոյց մեզ։ Եւ եկին փութանակի, և գտին զՄարիամ և զՅովսէփ. և զմանուկն եդեալ ՚ի մսուր։ Եւ ծանեան վասն բանին՝ որ ասացաւ նոցա զմանկանէն։ Եւ ամենեքեան որք լսէին, զարմանային վասն բանիցն՝ զոր խօսեցան ընդ նոսա հովիւքն։ Եւ Մարիամ զամենայն բըբանս զայսոսիկ պահէր, և խելամուտ լինէր ՚ի սրտի իւրում։ Եւ դարձան հովիւքն. փառաւոր առնէին՝ և օրհնէին զԱստուած, վասն ամենայնի՝ զոր լուան և տեսին, որպէս պատմեցաւ նոցա։

21:

Եւ իբրեւ լցան աւուրք ութ թլփատել զնա. եւ կոչեցաւ անուն նորա Յիսուս՝ որ կոչեցեալն էր 'ի հրեշտակէն, մինչչեւ յղացեալ էր զնա 'ի յորովայնի:

Է: ՄՈԳՔ ՅԱՐԵՒԵԼԻՑ ԳԱՆ ՅԵՐԿՐՊԱԳՈՒԹԻՒՆ ՅԻՍՈՒՍԻ:

Մատ. 2. 1 — 12:

Եւ 'ի ծնանիլն Յիսուսի՝ 'ի Բեթղեհէմ Հրէաստանի, յաւուրս Հերովդէի արքայի. ահա մոգք յարեւելից եկին յԵրուսաղէմ, եւ ասեն. ո՞ւր է՝ որ ծնաւ արքայն Հրէից. զի տեսաք զաստղ նորա յարեւելս, եւ եկաք երկիրպագանել նմա: Եւ իբրեւ լուաւ արքայ Հերովդէս, խռովեցաւ. եւ ամենայն Երուսաղէմ ընդ նմա: Եւ ժողովեալ զամենայն զքահանայապետս՝ եւ զդպիրս ժողովրդեանն, հարցանէր 'ի նոցանէ. թէ ո՞ւր ծնանիցի Քրիստոսն: Եւ նոքա ասեն ցնա. 'ի Բեթղեհէմ Հրէաստանի. զի այսպէս գրեալ է 'ի ձեռն մարգարէին. Եւ դու Բեթղեհէմ՝ երկիր Յուդայ, ոչի՛նչ կրտսեր ես յիշխանս Յուդայ. 'ի քէն ելցէ ինձ իշխան՝ որ հովուեսցէ զժողովուրդ իմ զԻսրայէլ: Յայնժամ Հերովդէս գաղտ կոչեաց զմոգսն, եւ ստուգեաց 'ի նոցանէ զժամանակ աստեղն երեւելոյ: Եւ արձակեալ զնոսա 'ի Բեթղեհէմ, ասէ. գնացէ՛ք եւ ստուգեցէք վասն մանկանն. եւ յորժամ գտանիցէք՝ ազդ արասջիք ինձ, զի եւ ես եկեալ երկիրպագից նմա: Եւ նոքա իբրեւ լուան 'ի թագաւորէն, գնացին. եւ ահա աստղն՝ զոր տեսին յարեւելս՝ առաջնորդեաց նոցա, մինչեւ եկեալ եկաց 'ի վերայ՝ ուր էր մանուկն. իբրեւ տեսին զաստղն, խնդացին յոյժ յուրախութիւն մեծ: Եւ իբրեւ մտին 'ի տունն, տեսին զմանուկն հան-

դերձ Մարիամաւ մարբն իւրով. և անկեալ երկիր պագանէին նմա: Եւ բացեալ զգանձս իւրեանց, մատուցին նմա պատարագս ոսկի՝ և կնդրուկ և զմուռս: Եւ հրաման առեալ 'ի տեսլեան, չդառնալ անդրէն առ Հերովդէս. ընդ այլ ճանապարհ գնացին յաշխարհն իւրեանց:

Ը: ԸՆԾԱՅՈՒՄՆ ՅԻՍՈՒՍԻ Ի ՏԱՃԱՐՆ ԿԱՄ ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ:

Ղուկ. 2. 22 — 24:

Եւ իբրև լցան աւուրք սրբութեան նորա՝ ըստ օրինացն Մովսէսի, ածին զնա յԵրուսաղէմ յանդիման առնել Տեառն: Որպէս և գրեալ է յօրէնս Տեառն. թէ ամենայն արու՝ որ բանայ զարգանդ, սուրբ Տեառն կոչեսցի: Եւ տալ պատարագս ըստ ասացելոյն յօրէնս Տեառն. զոյգս տատրակաց, կամ երկուս ձագս աղաւնեաց:

25 — 35:

Եւ ահա այր մի յԵրուսաղէմ, որոյ անուն էր Սիմէոն. և էր այրն այն արդար և երկիւղած. և ակն ունէր մխիթարութեանն Իսրայէլի. և Հոգի սուրբ էր 'ի նմա: Եւ էր նորա հրաման առեալ 'ի Հոգւոյն սրբոյ. մի՛ տեսանել ըզմահ, մինչև տեսցէ զօծեալն Տեառն. Եւ եկն Հոգւովն 'ի տաճարն. և իբրև ածին ծնողքն զմանուկն Յիսուս, առնել նոցա ըստ սովորութեան օրինաց 'ի վերայ նորա: Եւ նա առընկալաւ զնա 'ի գիրկս իւր. և օրհնեաց զԱստուած, և ասէ. Արդ արձակես զծառայս քո Տէր՝ ըստ բանի քում 'ի խաղաղութիւն: Զի տեսին աչք իմ զփրկութիւն քո, զոր պատրաստեցեր առաջի ամենայն ժողովրդոց: Լոյս 'ի յայտնութիւն հեթանոսաց. և փառս ժողովրդեան քում Իսրայէլի: Եւ էին հայր և մայր նորա զարմացեալք 'ի վե-

րայ բանիցն՝ որք խօսէին զնմանէ։ Եւ օրհնեաց զնոսա Սիմէօն· և ասէ ցՄարիամ մայր նորա· ահա սա կայ 'ի գլորումն և 'ի կանգնումն բազմաց 'ի մէջ Իսրայէլի· և 'ի նշան հակառակութեան։ Եւ ընդ քո իսկ անձն անցցէ սուր, զի յայտնեսցին 'ի բազմաց սրտից խորհուրդք։

36 — 38։

Եւ անդ էր Աննա մարգարէ՝ դուստր Փանուելի, յազգէ Ասերայ։ Սա ինքն անցեալ էր զաւուրբք բազմօք, կեցեալ ընդ առն ամս եօթն 'ի կուսութենէ իւրմէ։ Եւ էր այրի, ամաց իբրև ութսուն և չորից, որ ոչ մեկնէր 'ի տաճարէն, այլ պահօք և աղօթիւք պաշտէր զցայգ և զցերեկ։ Եւ սա 'ի նմին ժամու յարուցեալ գոհանայր զՏեառնէ· և խօսէր զնմանէ ընդ ամենեսին՝ որք ակն ունէին փրկութեան Երուսաղէմի։

Թ։ ՅՈՎՍԷՓ Ի ՁԵՌԱՑ ՀԵՐՈՎԴԻ, ՓԱԽՈՒՑԱՆԷ ԸՆԴ ՄԱՆՈՒԿՆ ՅԻՍՈՒՍ ՅԵԳԻՊՏՈՍ։

Մատ· 2· 13 — 15։

Եւ իբրև գնացին նոքա անտի· ահա հրեշտակ Տեառն երևէր 'ի տեսլեանն Յովսեփու, և ասէր· արի՛, ա՛ռ զմանուկդ և զմայր իւր, և փախի՛ր յԵգիպտոս· և անդ լինիջիր ցորժամ ասացից քեզ· քանզի 'ի խնդիր է Հերովդէս կորուսանել զմանուկդ։ Եւ նա յարուցեալ էառ զմանուկն և զմայր իւր գիշերի, և գնաց յԵգիպտոս· և անդ էր մինչև ցվախճան Հերովդի։ Զի լցցի ասացեալն 'ի Տեառնէ 'ի ձեռն մարգարէին՝ որ ասէ· յԵգիպտոսէ կոչեցից զորդի իմ։

16 — 18։

Յայնժամ իբրև ետես Հերովդէս՝ թէ խաբեցաւ 'ի մո-

գուց անտի, բարկացաւ յոյժ. և առաքեալ կոտորեաց զամենայն մանկունսն՝ որք էին 'ի Բեթղեհէմ և յամենայն սահմանս նորա՝ յերկեմենից և 'ի խոնարհ. ըստ ժամանակին զոր ստուգեաց 'ի մոգուցն։ Յայնժամ կատարեցաւ ասացեալն 'ի ձեռն Երեմիայ մարգարէի, որ ասէ. Ձայն գուժեաց 'ի Հռամայ. ողբումն՝ և լալումն՝ և աշխարումն յոյժ։ Հռաքէլ լայր զորդիս իւր, և ոչ կամէր մխիթարել՝ զի ոչ էին։

19 — 23։

Եւ 'ի վախճանիլն Հերովդէի՝ ահա հրեշտակ Տեառն 'ի տեսլեան երևիւր Յովսեփայ յԵգիպտոս, և ասէր. արի՛, ա՛ռ զմանուկդ և զմայր իւր, և գնա՛ յերկիրն Իսրայելի. զի մեռան՝ որք խնդրէին զանձն մանկանդ։ Եւ նա յարուցեալ՝ էառ զմանուկն և զմայր նորա. և եկն յերկիրն Իսրայելի։ Եւ իբրև լուաւ՝ եթէ Արքեղայոս թագաւորեաց Հրէաստանի՝ փոխանակ Հերովդէի հօրն իւրոյ, երկեաւ երթալ անդր. և հրաման առեալ 'ի տեսլեան՝ գնաց 'ի կողմանս Գալիլեացւոց։ Եւ եկեալ բնակեցաւ 'ի քաղաքին՝ որ կոչէր Նազարէթ. զի լցցի բան մարգարէիցն. թէ Նազովրեցի կոչեսցի։

Ժ։ ՊԱՏԱՆԵԿՈՒԹԻՒՆ ՅԻՍՈՒՍԻ։

Ղուկ. 2. 40։

Եւ մանուկն աճէր և զօրանայր լի իմաստութեամբ. և շնորհք Աստուծոյ էին 'ի վերայ նորա։

41 — 51։

Եւ երթային ծնողք նորա ամի ամի յԵրուսաղէմ՝ 'ի տօնի Զատկին։ Եւ իբրև եղեն նորա ամք երկոտասան՝ ելանել նոցա յԵրուսաղէմ ըստ սովորութեան տօնին։ Եւ կատարել զաւուրսն. և դառնալ անդրէն, մնաց Յիսուս

մանուկն յԵրուսաղէմ, և ոչ գիտացին ծնողք նորա։ Կարծէին զնմանէ՝ թէ ընդ ուղեկիցսն իցէ. եկին իբրև աւուր միոյ ճանապարհ, և խնդրէին զնա ընդ դրացիսն և ընդ ծանօթս։ Եւ իբրև ոչ գտին, դարձան անդրէն յԵրուսաղէմ խնդրել զնա։ Եւ եղև յետ երից աւուրց՝ գտին զնա ՚ի տաճարին. զի նստէր ընդ վարդապետսն, լսէր ՚ի նոցանէ, և հարցանէր զնոսա։ Զարմանային ամենեքեան՝ որք լսէին ՚ի նմանէ ընդ իմաստութիւն և ընդ պատասխանիս նորա։ Եւ իբրև տեսին զնա, սքանչացան. և ասէ ցնա մայրն իւր. որդեակ՝ զի՞նչ գործ գործեցեր դու ընդ մեզ, ահաւասիկ հայր քո և ես տառապեալք՝ և խնդրեաք զքեզ։ Եւ ասէ ցնոսա. զի՞ խնդրէիք զիս. ո՞չ գիտէիք՝ եթէ ՚ի տան Հօր իմոյ պարտ է ինձ լինել։ Եւ նոքա ոչ իմացան զբանն՝ զոր խօսեցաւ ընդ նոսա։ Եւ էջ ընդ նոսա. և գնաց ՚ի Նազարեթ, և էր նոցա հնազանդ. և մայր նորա պահէր զամենայն զբանսն ՚ի սրտի իւրում։

52։

Եւ Յիսուս զարգանայր իմաստութեամբ, և հասակաւ. և շնորհօք յԱստուծոյ և ՚ի մարդկանէ։

ԺԱ։ ՍԿԻԶԲՆ ՔԱՐՈԶՈՒԹԵԱՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԿՐՏՉԻ։

Ղուկ. 3. 1 — 6։

Ի հնգետասաներորդի ամի տէրութեանն Տիբերեայ կայսեր. ՚ի դատաւորութեանն Հրէաստանի Պիղատոսի Պոնտացւոյ. և ՚ի չորրորդապետութեան Գալիլեացւոց Հերովդի. և ՚ի Փիլիպպոսի եղբօր նորա չորրորդապետութեան. Իտուրացւոց՝ և Տրաքոնացւոց աշխարհին. և ՚ի չորրորդապետութեան՝ Լիւսանեայ Աբիլինացւոց։ Եւ ՚ի քահանայապետութեան Աննայի և Կայիափայ. եղև բան Աս-

տուծոյ ՚ի վերայ Յովհաննու որդւոյ Զաքարիայ՝ յանապատի անդ։ Եւ եկն յամենայն կողմն Յորդանանու քարոզել մկրտութիւն ապաշխարութեան ՚ի թողութիւն մեղաց։ Որպէս և գրեալ է ՚ի գիրս պատգամաց Եսայեայ մարգարէի. ձայն բարբառոյ յանապատի, պատրաստ արարէք զճանապարհ Տեառն. և ուղի՛ղ արարէք զշաւիղս նորա։ Ամենայն ձորք լցցին. և ամենայն լերինք և բլուրք խոնարհեսցին. և եղիցին դժուարինքն ՚ի դիւրինս. և առապարքն՝ ՚ի հարթ ճանապարհս։ Եւ տեսցէ ամենայն մարմին զփրկութիւն Աստուծոյ։

7 — 14։

Եւ ասէ ժողովրդեանն՝ ելեալս մկրտել ՚ի նմանէ։ Ծնունդք իժից, ո՞ եցոյց ձեզ փախչել ՚ի բարկութենէն՝ որ գալոց է։ Արարէ՛ք այսուհետև պտուղս արժանի ապաշխարութեան, և մի՛ սկսանիցէք ասել՝ եթէ ունիմք հայր զԱբրահամ. զայս ասեմ ձեզ. եթէ կարող է Աստուած ՚ի քարանցս յայսցանէ՝ յարուցանել որդիս Աբրահամու։ Բայց ահաւասիկ տապար առ արմին ծառոց կայ։ Ամենայն ծառ՝ որ ո՛չ առնէ պտուղ բարւոք, հատանի և ՚ի հուր արկանի։ Հարցանէին զնա ժողովուրդքն և ասէին. իսկ արդ՝ զի՞նչ գործեսցուք։ Պատասխանի ետ՝ և ասէ ցնոսա. ոյր իցեն երկու հանդերձք՝ տացէ զմին այնմ, ոյր ո՛չն գուցէ. և ոյր կայցէ կերակուր, նոյնպէս արասցէ։ Եկին և մաքսաւորք մկրտել, և ասեն ցնա. վարդապետ՝ զի՞նչ գործեսցուք։ Եւ նա ասէ ցնոսա. մի՛ ինչ աւելի քան զհրամայեալն ձեզ առնիցէք։ Հարցանէին զնա և զինուորքն, և ասէին. և մեք զի՞նչ գործեսցուք։ Ասէ ցնոսա. մի՛ զոք խռովիցէք, և մի՛ զոք զրպարտիցէք. շատ լիցին ձեզ թոշակքն ձեր։

15 — 18:

Մինչ ակն ունէր ժողովուրդն՝ և խորհէին ամենեքեան 'ի սիրտս իւրեանց վասն Յովհաննու, միթէ սա իցէ Քրիստոսն: Պատասխանի ետ ամենեցուն, և ասէ. ես մկրտեմ զձեզ ջրով. բայց գայ զօրագոյն քան զիս, զորոյ չեմ բաւական բառնալ զկօշիկս. Նա մկրտեսցէ զձեզ Հոգւով սրբով և հրով: Որոյ հեծանոցն 'ի ձեռին իւրում, սրբել զկալ իւր՝ և ժողովել զցորեանն 'ի շտեմարանս իւր. և զյարդն այրեսցէ անշէջ հրով: Բազում և այլ ինչ մխիթարութեամբ աւետարանէր ժողովրդեանն:

ԺԲ. ՄԿՐՏՈՒԹԻՒՆ ՅԻՍՈՒՍԻ:

Մատ. 3. 13 — 17:

Յայնժամ գայ Յիսուս, 'ի Գալիլեէ 'ի Յորդանան առ Յովհաննէս՝ մկրտիլ 'ի նմանէ: Եւ Յովհաննէս արգելու զնա, և ասէ, ինձ պիտոյ է 'ի քէն մկրտիլ, և դու առ իս գաս: Պատասխանի ետ Յիսուս, և ասէ ցնա. Թոյլ տուր այժմ. զի այսպէս վայել է մեզ լնուլ զամենայն արդարութիւն. և ապա թոյլ ետ նմա: Եւ իբրև մկրտեցաւ Յիսուս, ել վաղվաղակի 'ի ջրոյ անտի. և ահա բացան նմա երկինք. և ետես զՀոգին Աստուծոյ՝ զի իջանէր իբրև զաղաւնի, և գայր 'ի վերայ նորա: Եւ ահա ձայն յերկնից՝ որ ասէր. դա է որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ:

ԺԳ. ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ ԱՌԱՆՁՆՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՊԱՀՕՔ ՊԱՏՐԱՍՏԻ Ի ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆ ԱՒԵՏԱՐԱՆԻ ԵՒ ՅԱՂԹԷ ՍԱՏԱՆԱՅԻ:

Մատ. 4. 1 — 2:

Յայնժամ վարեցաւ Յիսուս յանապատ 'ի Հոգւոյն՝

փորձել 'ի սատանայէ։ Եւ պահեալ զքառասուն տիւ և զքառասուն գիշեր՝ ապա քաղցեաւ։

3 — 4։

Եւ մատուցեալ փորձիչն, ասէ ցնա. եթէ որդի ես Աստուծոյ՝ ասա՛ զի քարինքս այսոքիկ հաց լինիցին։ Նա պատասխանի ետ, և ասէ. գրեալ է, թէ ո՛չ հացիւ միայն կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւ՝ որ ելանէ 'ի բերանոյ Աստուծոյ։

5 — 7։

Յայնժամ առեալ ածէ զնա սատանայ 'ի քաղաքն սուրբ. և կացուցանէ զնա 'ի վերայ աշտարակի տաճարին։ Եւ ասէ ցնա. եթէ որդի ես Աստուծոյ, արկ զքեզ աստի 'ի վայր. զի գրեալ է, թէ «հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո. և 'ի վերայ ձեռաց բարձցեն զքեզ՝ զի մի՛ երբէք հարցես զքարի զոտն քո։» Ասէ ցնա դարձեալ Յիսուս. գրեալ է, թէ ո՛չ փորձեսցես զՏէր Աստուած քո։

8 — 10։

Դարձեալ առեալ ածէ զնա սատանայ 'ի լեառն մի բարձր յոյժ, և ցուցանէ նմա զամենայն թագաւորութիւնս աշխարհի. և զփառս նոցա։ Եւ ասէ ցնա. զայս ամենայն քեզ տաց, եթէ անկեալ երկիրպագանիցես ինձ։ Յայնժամ ասէ ցնա Յիսուս. ե՛րթ յետս իմ սատանայ, զի գրեալ է. Տէառն Աստուծոյ քում երկիրպագցես, և զնա միայն պաշտեսցես։

11։

Ապա եթող զնա սատանայ. և ահա հրեշտակք մատեան և պաշտէին զնա։

Ա П/42602

ԺԴ: ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԶՅԻՍՈՒՍԷ:

Յովհ. 1. 19 — 28:

Եւ այս է վկայութիւնն Յովհաննու, յորժամ առաքեցին առ նա Հրէայքն յԵրուսաղէմէ քահանայս և Ղևտացիս, զի հարցցեն ցնա, թէ՝ դու ո՞ ես: Եւ խոստովան եղև, և ոչ ուրացաւ. խոստովան եղև, թէ ես ոչ եմ Քրիստոսն: Եւ հարցին ցնա. իսկ ո՞վ ես դու, Եղիա՞ ես: Եւ ասէ. ոչ եմ: Իսկ մարգարէ՞ն ես դու: Պատասխանի ետ, թէ՝ ոչ: Իսկ ասա մեզ, դու ո՞վ ես. զի պատասխանի տարցուք՝ որոց առաքեցինն զմեզ. զի՞ ասես վասն քո: Ասէ. «ես՝ ձայն բարբառոյ յանապատի. ուղի՛ղ արարէք զճանապարհս Տեառն, որպէս ասաց Եսայի մարգարէ: Եւ որք առաքեցանն ՚ի փարիսեցւոց անտի էին: Հարցին ցնա, և ասեն. իսկ զի՞ մկրտես՝ եթէ դու չես Քրիստոսն, և ոչ Եղիա, և ոչ մարգարէն: Պատասխանի ետ նոցա Յովհաննէս, և ասէ. «ես մկրտեմ զձեզ ջրով. ՚ի մէջ ձերում կայ՝ զոր դուքն ոչ գիտէք: Որ զկնի իմ գալոցն է. որ առաջի իմ եղև. որում չեմ արժանի, եթէ լուծից զխրացս կօշկաց նորա:» Այս ՚ի Բեթաբրայ եղև, յայնկոյս Յորդանանու՝ ուր էրն Յովհաննէս և մկրտէր:

29 — 34:

Ի վաղիւ անդր տեսանէ զՅիսուս զի գայր առ նա, և ասէ. ահաւասիկ գառն Աստուծոյ՝ որ բառնայ զմեղս աշխարհի: Սա է, վասն որոյ ես ասէի. զկնի իմ գայ այր՝ որ առաջի իմ եղև, զի յառաջ իսկ էր քան զիս: Եւ ես ոչ գիտէի զնա, այլ զի յայտնի լինիցի Իսրայէլի, վասն այնորիկ եկի ես ջրով մկրտել: Վկայեաց Յովհաննէս, և ասէ. թէ տեսանէի զՀոգին՝ զի իջանէր իբրև զաղաւնի

ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

յերկնից, և հանգչէր 'ի վերայ Նորա։ Եւ ես ո՛չ գիտէի զՆա, այլ որ առաքեացն զիս մկրտել ջրով՝ Նա ասաց ցիս. յոր վերայ տեսանիցես զհոգին, զի իջանիցէ և հանգչիցի 'ի վերայ Նորա, Նա՛ է՝ որ մկրտէ Հոգւովն Սրբով։ Եւ ես տեսի և վկայեցի, եթէ սա է որդին Աստուծոյ։

ԺԵ. ՀՐԷԱՅՔ ՀԵՏԵՒՈՂՔ ՅԻՍՈՒՍԻ։

Յովհ. 1. 35 — 42.

Ի վաղիւ անդր կայր Յովհաննէս, և յաշակերտաց անտի Նորա երկու։ Եւ Նայեցեալ ընդ Յիսուսի զի զգնայր, ասէ. ահաւասիկ Քրիստոս գառն Աստուծոյ։ Լուան 'ի Նմանէ երկու աշակերտքն զի խօսէր, և գնացին զհետ Յիսուսի։ Իբրև դարձաւ Յիսուս՝ և ետես զնոսա զի երթային զհետ Նորա, ասէ ցնոսա. զի՞նչ խնդրէք։ Նոքա ասեն ցՆա. Ռաբբի (որ թարգմանեալ կոչի վարդապետ), ո՞ւր են օթեւանք քո։ Ասէ ցնոսա. եկա՛յք և տեսէ՛ք։ Եկին և տեսին, ուր էին օթեւանք Նորա, և առ Նմա ագան այն օր, զի ժամ էր իբրև տասներորդ։ Էր Անդրէաս եղբայր Սիմօնի վիմի, մի յերկուց անտի. որք լուանն 'ի Յովհաննէ՝ և գնացին զկնի Նորա։ Գտանէ սա Նախ զեղբայր իւր զՍիմօն, և ասէ ցՆա. գտաք զՄեսիայ, (որ թարգմանի Քրիստոս)։ Սա էած զՆա առ Յիսուս. Հայեցեալ ընդ Նա Յիսուսի, ասէ. դու ես Սիմօն որդի Յօնանու. դու կոչեսցիս Կեփաս. որ թարգմանի Պետրոս։

43 — 44.

Ի վաղիւ անդր կամեցաւ ելանել 'ի Գալիլեա. գտանէ զՓիլիպպոս, և ասէ ցՆա Յիսուս. ե՛կ զկնի իմ։ Եւ էր Փիլիպպոս 'ի Բեթսայիդայ, 'ի քաղաքէ Անդրեայ և Պետրոսի։

45 — 51.

Գտանէ Փիլիպպոս զՆաթանայէլ, եւ ասէ ցնա. Զորմէ գրեաց Մովսէս յօրէնսն՝ եւ մարգարէքն, գտաք զՅիսուս՝ զորդի Յովսէփայ 'ի Նազարեթէ։ Ասէ ցնա Նաթանայէլ. Իսկ 'ի Նազարեթէ մարթ ի՞նչ իցէ բարւոյ իմիք լինել։ Ասէ ցնա Փիլիպպոս. Ե՛կ եւ տե՛ս։ Իբրեւ ետես Յիսուս զՆաթանայէլ զի գայր առ նա, ասէ վասն նորա. Ահա արդարեւ Իսրայէլացի՝ յորում նենգութիւն ո՛չ գոյ։ Ասէ ցնա Նաթանայէլ. Ուստի՞ ճանաչես զիս։ Պատասխանի ետ Յիսուս, եւ ասէ ցնա. Մինչչեւ էր Փիլիպպոսի կոչեալ զքեզ՝ զի էիր 'ի ներքոյ թզենւոյն, տեսի զքեզ։ Պատասխանի ետ նմա Նաթանայէլ, եւ ասէ. Ռաբբի, դու ես որդի Աստուծոյ. դու ես թագաւոր Իսրայէլի։ Պատասխանի ետ նմա Յիսուս, եւ ասէ. Փոխանակ զի ասացի քեզ՝ թէ տեսի զքեզ 'ի ներքոյ թզենւոյն, հաւատաս՝ մեծամեծս եւս քան զայս տեսցես։ Եւ ասէ ցնա. Ամէն ամէն ասեմ ձեզ՝ տեսանիցէք զերկինս բացեալ՝ եւ զհրեշտակս Աստուծոյ, զի ելանիցեն եւ իջանիցեն 'ի վերայ Որդւոյ մարդոյ։

ԺԶ. ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԵՐԿՈՏԱՍԱՆ ԱՌԱՔԵԼՈՑ։

Ղուկ. 6. 12 — 16։

Եւ եղեւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ ել 'ի լեառն կալ յաղօթս, եւ հանէր զգիշերն 'ի գլուխ յաղօթսն Աստուծոյ։ Եւ իբրեւ այգ եղեւ՝ կոչեաց զաշակերտսն իւր եւ ընտրեաց 'ի նոցանէ երկոտասանս (զորս եւ առաքեալս անուանեաց)։ ԶՍիմոն՝ զոր եւ Պետրոս անուանեաց. եւ զԱնդրէաս եղբայր նորին, եւ զՅակոբոս, եւ զՅօհաննէս, եւ զՓիլիպպոս, եւ զԲարթուղիմէոս։ Եւ զՄատթէոս, եւ զԹովմաս, եւ զՅակոբոս Ալփեայ եւ զՍիմոն զկոչեցեալն Նախան-

*

ձայոյզ։ Եւ զՅուդայ Յակոբայ, և զՅուդայ Իսկարիովտացի՝ որ եղև իսկ մատնիչ։

ԺԷ· ԻՆՉ ԻՆՉ ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆՔ ԵՒ ԽՐԱՏՔ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ։

1· ՍԿԻԶԲՆ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՔԱՐՈԶՈՒԹԵԱՆ Ի ՆԱԶԱՐԷԹ։

Ղուկ· 4· 14 — 22։

Եւ դարձաւ Յիսուս զօրութեամբ Հոգւոյն 'ի Գալիլեա· և ել համբաւ զնմանէ ընդ ամենայն կողմանս գաւառին։ Եւ նա ուսուցանէր 'ի ժողովուրդս նոցա՝ փառաւորեալ յամենեցունց։ Եւ եկն 'ի Նազարէթ՝ ուր սնեալ էր· և եմուտ ըստ սովորութեան իւրում յաւուր շաբաթու 'ի ժողովուրդն։ Եւ ետուն նմա գիրս զԷսայեայ մարգարէի· և յարեաւ ընթեռնուլ· և իբրև եբաց զգիրսն, եգիտ զայն տեղի՝ յորում գրեալն էր· Հոգի Տեառն 'ի վերայ իմ, վասն որոյ և էօծ իսկ զիս· աւետարանել աղքատաց առաքեաց զիս· բժշկել զբեկեալս սրտիւք, քարոզել գերեաց զթողութիւն, և կուրաց տեսանել· արձակել զվիրաւորս 'ի թողութիւն, քարոզել զտարեկան Տեառն ընդունելի, և զօր հատուցման։ Եւ խփեալ զգիրսն՝ ետ ցպաշտօնեայն և նստաւ· և ամենեցուն՝ որք 'ի ժողովրդեանն էին աչք՝ 'ի նա հայէին։ Եւ սկսաւ ասել ցնոսա· այսօր լցան գիրքս այս յականջս ձեր։ Եւ ամենեքին վկայէին նմա, և զարմանային ընդ բանս շնորհաց՝ որք ելանէին 'ի բերանոյ նորա։

2. ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆՔ Ի ԼԵՐԻՆՆ։

ՅԱՂԱԳՍ ԵՐԱՆՈՒԹԵԱՆՑ։

Մատ. 5. 1 — 12։

Իբրեւ տեսեալ զժողովուրդսն՝ ել 'ի լեառն, եւ իբրեւ նըստաւ անդ՝ մատեան առ նա աշակերտք նորա։ Եւ բացեալ զբերան իւր ուսուցանէր զնոսա, եւ ասէր. Երանի՛ աղքատաց հոգւով՝ զի նոցա է արքայութիւն երկնից։ Երանի՛ սգաւորաց՝ զի նոքա մխիթարեսցին։ Երանի՛ հեզոց՝ զի նոքա ժառանգեսցեն զերկիր։ Երանի՛՝ որք քաղցեալ եւ ծարաւիք իցեն արդարութեան, զի նոքա յագեսցին։ Երանի՛ ողորմածաց՝ զի նոքա ողորմութիւն գտցեն։ Երանի՛ այնոցիկ՝ որք սուրբք են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն։ Երանի՛ խաղաղարարաց՝ զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին։ Երանի՛ որք հալածեալք իցեն վասն արդարութեան՝ զի նոցա է արքայութիւն երկնից։ Երանի՛ է ձեզ՝ յորժամ նախատիցեն զձեզ եւ հալածեսցեն. եւ ասիցեն զամենայն բան չար զձէնջ սուտ՝ վասն իմ։ Ցնծացէ՛ք եւ ուրախ լերուք՝ զի վարձք ձեր բազում են յերկինս. զի այսպէս հալածեցին զմարգարէսն՝ որք յառաջ քան զձեզ էին։

ՅԱՂԱԳՍ ԴԵՐԱԶԱՆՑ ԿՈՉՄԱՆՑ ԱՇԱԿԵՐՏԱՑ ՔՐԻՍՏՈՍԻ։

13 — 16։

Դուք էք աղ երկրի, ապա թէ աղն անհամի՝ ի՞ւ յաղիցի. ոչ իմիք ազդիցէ այնուհետեւ, բայց եթէ ընկենուլ արտաքս եւ կոխան լինիլ 'ի մարդկանէ։ Դուք էք լոյս աշխարհի. ոչ կարէ քաղաք թաքչիլ՝ որ 'ի վերայ լերին կայցէ։ Եւ ոչ լուցանեն ճրագ՝ եւ դնեն ընդ գրուանաւ, այլ

'ի վերայ աշտանակի, և լոյս տայ ամենեցուն՝ որք 'ի տանն իցեն։ Այնպէս լուսաւորեսցէ լոյս ձեր առաջի մարդկան, որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս, և փառաւորեսցեն զՀայր ձեր՝ որ յերկինս է։ ✝

ՅԱՂԱԳՍ ՅԱՏԿՈՒԹԵԱՆՑ ՕՐԻՆԱՑ։

17 — 48։

Մի՛ համարիք եթէ եկի լուծանել զօրէնս՝ այլ լնուլ։ Ամէն ամէն ասեմ ձեզ, մինչև անցցեն երկինք և երկիր, Յովտ մի՝ որ նշանախեց մի է, ո՛չ անցցէ յօրինացն և 'ի մարգարէիցն՝ մինչև ամենայն եղիցի։ Որ ոք լուծցէ մի ինչ 'ի պատուիրանացս յայսցանէ 'ի փոքունց, և ուսուսցէ այնպէս զմարդիկ, փոքր կոչեսցի յարքայութեան երկնից։ Բայց ասեմ ձեզ. զի եթէ ո՛չ առաւելցի արդարութիւն ձեր, աւելի քան զդպրացն և զփարիսեցւոց, ո՛չ մտանիցէք յարքայութիւն երկնից։ Լուարուք՝ զի ասացաւ առաջնոցն, թէ «մի՛ սպանաներ, զի որ սպանանիցէ՝ պարտական լիցի դատաստանի։» Այլ ես ասեմ ձեզ. եթէ ամենայն՝ որ բարկանայ եղբօր իւրում տարապարտուց, պարտաւոր լիցի դատաստանի. և որ ասիցէ ցեղբայր իւր յիմար, պարտաւոր լիցի ատենի. և որ ասիցէ ցեղբայր իւր մորոս, պարտաւոր լիցի գեհենն հրոյն։ Եթէ մատուցանիցես ըզպատարագ քո 'ի վերայ սեղանոյ, և անդ յիշեսցես՝ եթէ եղբայր քո ունի ինչ խէթ զքէն. թո՛ղ զպատարագն քո առաջի սեղանոյն. և ե՛րթ նախ հաշտեա՛ց ընդ եղբօր քում, և ապա եկեալ մատուսջիր զպատարագն քո։ Լե՛ր իրաւախոհ ընդ ոսոխի քում վաղագոյն, մինչդեռ իցես ընդ նմա 'ի ճանապարհի. գուցէ՝ մատնիցէ զքեզ ոսոխն դատաւորի, և դատաւորն դահճի, և արկանիցիս 'ի բանտ։ Ամէն ասեմ քեզ. ո՛չ ելանիցես անտի, մինչև հատուցանիցես զյետին

նաքարակիտն։ Լուարուք՝ զի ասացաւ. «մի՛ շնար։» Բայց ես ասեմ ձեզ. թէ ամենայն՝ որ հայի 'ի կին մարդ առ 'ի ցանկանալոյ նմա, անդէն շնացաւ ընդ նմա 'ի սրտի իւրում։ Եթէ ակն քո աջ գայթակղեցուցանէ զքեզ՝ խլեա՛ զնա և ընկեա՛ 'ի քէն. զի լաւ է քեզ՝ եթէ մի յանդամոց քոց կորիցէ, և մի՛ ամենայն մարմինդ քո անկանիցի 'ի գեհեն։ Եւ եթէ աջ ձեռն քո գայթակղեցուցանէ զքեզ, հա՛տ ըզնա՝ և ընկեա՛ 'ի քէն. զի լաւ է քեզ՝ եթէ մի յանդամոց քոց կորիցէ, և մի՛ ամենայն մարմինդ քո արկանիցի 'ի գեհեն։ Ապաքէն ասացաւ. եթէ «որ արձակիցէ զկին իւր, տացէ նմա զարձակմանն։» Բայց ես ասեմ ձեզ. եթէ ամենայն՝ որ արձակէ զկին իւր առանց բանի պոռնկութեան, նա տայ նմա շնալ. և որ զարձակեալն առնէ, շնայ։ Դարձեալ լուարուք՝ զի ասացաւ առաջնոցն. «մի՛ երդնուցուս սուտ, բայց հատուցանիցես Տեառն զերդմունս քո։» Այլ ես ասեմ ձեզ. ամենևին մի՛ երդնուլ. մի՛ յերկինս՝ զի աթոռ է Աստուծոյ. և մի՛ յերկիր՝ զի պատուանդան է ոտից նորա. և մի՛ յԵրուսաղէմ՝ զի քաղաք է մեծի արքայի։ Եւ մի՛ 'ի գլուխ քո երդնուցուս, զի ոչ կարես մազ մի սպիտակ առնել կամ թուխ։ Այլ եղիցի ձեր բան. այո՛՝ այո՛, և ո՛չն՝ ո՛չ, զի աւելին քան զայն 'ի չարէն է։ Լուարուք՝ զի ասացաւ. «ակն ընդական, և ատամն ընդ ատաման։» Այլ ես ասեմ ձեզ. մի՛ կալ հակառակ չարի. այլ եթէ ոք ածիցէ ապտակ յաջ ծնօտ քո, դարձո՛ նմա և զմիւսն։ Եւ որ կամիցի ոք դատել և առնուլ զշապիկս քո, թո՛ղ 'ի նմա և զբաճկոն քո։ Եւ որ տարապարհակ վարիցէ զքեզ մղոն մի, ե՛րթ ընդ նմա և երկուս։ Որ ոք խնդրէ 'ի քէն՝ տո՛ւր. և որ կամի փոխ առնուլ 'ի քէն՝ մի՛ դարձուցաներ զերեսս (քո)։ Լուարուք ապաքէն՝ զի ասացաւ. «սիրեսցես զընկեր քո, և ատեսցես զթշնամիս քո։» Այլ ես ա-

սեմ ձեզ. սիրեցէ՛ք զթշնամիս ձեր, բարի՛ արարէք ատելեաց ձերոց, և աղօթս արարէք 'ի վերայ այնոցիկ՝ որք լլկեն զձեզ և հալածեն: Զի եղիջիք որդիք Հօր ձերոյ՝ որ յերկինս է. զի զարեգակն իւր ծագէ 'ի վերայ չարաց և բարեաց. և ածէ անձրև 'ի վերայ արդարոց և մեղաւորաց: Զի եթէ սիրիցէք զայնոսիկ՝ որք սիրեն զձեզ, զի՞նչ վարձք իցեն. ո՞չ ապաքէն և մաքսաւորք զնոյն գործեն: Եւ եթէ տայցէք միայն ողջոյն բարեկամաց ձերոց, զի՞նչ աւելի առնէք. ո՞չ ապաքէն մաքսաւորք և մեղաւորք զնոյն գործեն: Արդ՝ եղերո՛ւք դուք կատարեալք. որպէս և Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է:

ՅԱՂԱԳՍ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ:

6. 1 — 4:

Զգո՛յշ լերո՛ւք ողորմութեան ձերում, մի՛ առնել առաջի մարդկան, որպէս թէ 'ի ցոյց ինչ նոցա. գուցէ՛ և վարձս ոչ ընդունիցիք 'ի Հօրէն ձերմէ՝ որ յերկինս է: Այլ յորժամ առնիցես զողորմութիւն, մի՛ հարկաներ փող առաջի քո՝ որպէս կեղծաւորքն առնեն 'ի ժողովուրդս և 'ի հրապարակս, որպէս զի փառաւորեսցին 'ի մարդկանէ. ամէն ասեմ ձեզ. այն իսկ են վարձք նոցա: Այլ դու յորժամ զողորմութիւն առնիցես, մի՛ գիտասցէ ձախ քո, զի՛նչ գործէ աջ քո: Որպէս զի եղիցի ողորմութիւն քո 'ի ծածուկ. և Հայրն քո՝ որ տեսանէ 'ի ծածուկ, հատուսցէ քեզ յայտնապէս:

ՅԱՂԱԳՍ ԱՂՕԹԻՑ:

5 — 15:

Եւ յորժամ յաղօթս կայցէք, մի՛ լինիցիք որպէս կեղծաւորքն՝ զի սիրեն 'ի ժողովուրդս և յանկիւնս հրապա-

բակաց կալ յաղօթս. որպէս զի երևեսցին մարդկան. ամէն ասեմ ձեզ՝ այն իսկ են վարձք նոցա։ Այլ դու յորժամ կայցես յաղօթս, մո՛ւտ 'ի սենեակ քո, և փակեա՛ զդուրս քո. և կա՛ց յաղօթս առ Հայր 'ի ծածուկ. և Հայրն քո՝ որ տեսանէ 'ի ծածուկ, հատուսցէ քեզ յայտնապէս։ Եւ յորժամ կայցէք յաղօթս, մի՛ շատախօսք լինիք իբրև ըզհեթանոսսն. զի համարին եթէ 'ի բազում խօսից իւրեանց լսելի լինիցին։ Արդ՝ մի՛ նմանիցիք նոցա, զի գիտէ Հայր ձեր. զի՞նչ պիտոյ է ձեզ՝ մինչչև ձեր խնդրեալ ինչ իցէ 'ի նմանէ։ Եւ արդ՝ այսպէս կացէք դուք յաղօթս. Հա՛յր մեր՝ որ յերկինս ես. սուրբ եղիցի անուն քո։ Եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո՝ որպէս յերկինս և յերկրի։ Զհա՛ց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր։ Եւ թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց։ Եւ մի՛ տանիր զմեզ 'ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ 'ի չարէն. զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս։ Զի եթէ թողուցուք մարդկան զյանցանս նոցա. թողցէ՛ և ձեզ Հայրն ձեր երկնաւոր զյանցանըս ձեր։ Ապա թէ ո՛չ թողուցուք մարդկան զյանցանս նոցա. և ո՛չ Հայրն ձեր երկնաւոր, թողցէ ձեզ զյանցանս ձեր։

ՅԱՂԱԳՍ ՊԱՀՈՑ։

16 — 18։

Եւ յորժամ պահիցէք՝ մի՛ լինիք իբրև զկեղծաւորսն տրտմեալք՝ որք ապականեն զերեսս իւրեանց. որպէս զի երևեսցին մարդկան՝ թէ պահիցեն. ամէն ասեմ ձեզ. այն իսկ են վարձք նոցա։ Այլ դու յորժամ պահիցես, օ՛ծ զգլուխ քո՝ և լուա՛ զերեսս քո։ Զի մի՛ երևեսցիս մարդկան իբրև զպահօղ, այլ Հօրն քում 'ի ծածուկ. և Հայրն քո՝ որ տեսանէ 'ի ծածուկ, հատուսցէ՛ քեզ։ /

ՎԱՍՆ ԱՆԸՆՉԱՍԻՐՈՒԹԵԱՆ։

19 — 34:

Մի՛ գանձէք ձեզ գանձս յերկրի՝ ուր ցեց և ուտիճ ապականեն, և ուր գողք ական հատանեն, և գողանան։ Այլ գանձեցէ՛ք ձեզ գանձս յերկինս, ուր ո՛չ ցեց՝ և ո՛չ ուտիճ ապականեն, և ո՛չ գողք ական հատանեն և գողանան։ Զի ուր գանձք ձեր են, անդ և սիրտք ձեր եղիցին։ Ճրագ մարմնոյ ակն է. եթէ ակն քո առատ է, ամենայն մարմինդ լուսաւոր եղիցի. Ապա եթէ ակն քո չար է, ամենայն մարմինդ խաւարին եղիցի. իսկ արդ, եթէ լոյսդ՝ որ 'ի քեզ է, խաւար է. խաւարն ո՛րչափ ևս։ Ո՛չ ոք կարէ երկուց տերանց ծառայել. կամ զմին ատիցէ, և զմիւսն սիրիցէ. կամ զմին մեծարիցէ, և զմիւսն արհամարհիցէ. ո՛չ ոք կարէ Աստուծոյ ծառայել և մամոնայի։ Վասն այդորիկ ասեմ ձեզ. մի՛ հոգայք վասն ոգւոց ձերոց, զի՞նչ ուտիցէք. և մի՛ վասն մարմնոց ձերոց, թէ զի՞նչ ագանիցիք. ո՞չ ապաքէն ոգի առաւել է քան զկերակուր, և մարմին քան ըզհանդերձ։ Հայեցարո՛ւք 'ի թռչունս երկնից, զի ո՛չ վարեն, և ո՛չ հնձեն, և ո՛չ ժողովեն 'ի շտեմարանս. և հայրն ձեր երկնաւոր կերակրէ զնոսա. ո՞չ ապաքէն դուք առաւել էք քան զնոսա։ Իսկ արդ՝ ո 'ի ձէնջ առ հոգալ իւրում յաւելուլ կարիցէ 'ի հասակ իւր կանգուն մի։ Եւ վասն հանդերձի զի՞ հոգայք. հայեցարո՛ւք 'ի շուշանն վայրենի, որպէս աճէ. ո՛չ ջանայ, և ո՛չ նիւթէ։ Ասեմ ձեզ. զի և ո՛չ Սողոմոն յամենայն փառսն իւրում զգեցաւ իբրև զմի 'ի նոցանէ։ Իսկ եթէ զխոտն 'ի վայրի, որ այսօր է՝ և վաղիւն 'ի հնոց արկանի, Աստուած այնպէս զգեցուցանէ. ո՞րչափ ևս առաւել զձեզ թե՛րահաւատք։ Մի՛ այսուհետև հոգայցէք, և ասիցէք. զի՞նչ կերիցուք, կամ զի՞նչ

*արբցուք կամ զի՞նչ զգեցցուք: Զի զայդ ամենայն հե-
թանոսք խնդրեն. քանզի գիտէ Հայրն ձեր երկնաւոր՝ թէ
պիտոյ է ձեզ այդ ամենայն: Խնդրեցէ՛ք նախ զարքայու-
թիւն Աստուծոյ՝ և զարդարութիւն նորա, և այդ ամենայն
յաւելցի ձեզ: Մի՛ այսուհետև հոգայցէք վասն վաղուին,
զի վաղւին վասն իւր հոգասցէ. շատ է աւուրն չար իւր:*

ՎԱՍՆ ՉԴԱՏԵԼՈՅ ԶԱՅԼՍ:

7. 1 — 5:

*Մի՛ դատէք, զի մի՛ դատիցիք: Զի որով դատաստանաւ
դատէք՝ դատելոց էք. և որով չափով չափէք, չափեսցի
ձեզ: Զի՞ տեսանես զշիւղ յական եղբօր քո, և ՚ի քում
ական զգերանդ ո՛չ տեսանես: կամ զիա՞րդ ասես ցեղբայր
քո. թո՛ղ հանից զշիւղդ յականէ քումմէ. և ահաւադիկ
՚ի քում ական գերան կայ: Կե՛ղծաւոր. հա՛ն նախ ըզ-
գերանդ յականէ քումմէ, և ապա հայեսցիս հանել զշիւղն
յականէ եղբօր քո:*

ՎԱՍՆ ՉՏԱԼՈՅ ԶՍՐԲՈՒԹԻՒՆ ԱՆԱՐԺԱՆԻՑ:

6:

*Մի՛ տայք զսրբութիւն շանց, և մի՛ արկանէք զմարգա-
րիտս ձեր առաջի խոզաց. զի մի՛ առ ոտն կոխեսցեն զնոսա՝
և դարձեալ երգիծուցանիցեն զձեզ:*

ՎԱՍՆ ԶՕՐՈՒԹԵԱՆ ԱՂՕԹԻՑ:

7 — 11:

*Խնդրեցէ՛ք, և տացի ձեզ. հայցեցէ՛ք, և գտջիք. բաղ-
խեցէ՛ք, և բացցի ձեզ: Զի ամենայն՝ որ խնդրէ, առնու.
և որ հայցէ, գտանէ. և որ բաղխէ, բացցի նմա: Ո՞վ իցէ
՚ի ձէնջ մարդ, ցոր խնդրիցէ որդի իւր հաց, միթէ քա՞ր*

տայցէ նմա. կամ խնդրիցէ ձուկն, միթէ օ՞ձ տայցէ նմա: Արդ՝ եթէ դուք՝ որ չարքդ էք, գիտէք պարգևս բարիս տալ որդւոց ձերոց. ո՞րչափ ևս առաւել Հայրն ձեր՝ որ յերկինս է, տայցէ բարիս այնոցիկ՝ որք խնդրեն զնա:

ՅԱՂԱԳՍ ՊԱՐՏՈՒՑ ԱՌ ԸՆԿԵՐՆ:

12:

Զամենայն զոր միանգամ կամիցիք՝ թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս արարէք և դուք նոցա. զի այն իսկ են օրէնք և մարգարէք:

ՅԱՂԱԳՍ ԱՆՁՈՒԿ ՃԱՆԱՊԱՐՀԻ,

13 — 14:

Մտէ՛ք ընդ նեղ դուռն, քանզի ընդարձակ է դուռն՝ և համարձակ ճանապարհն՝ որ տանի 'ի կորուստ. և բազումք են՝ որք մտանեն ընդ նա: Քանզի անձուկ է դուռն, և նեղ ճանապարհն՝ որ տանի 'ի կեանս. և սակաւք են՝ որք գտանեն զնա:

ՅԱՂԱԳՍ ՍՈՒՏ ՎԱՐԴԱՊԵՏԱՑ:

15 — 20:

Զգոյշ լերուք 'ի սուտ մարգարէից՝ որք գան առ ձեզ հանդերձիւք ոչխարաց, և 'ի ներքոյ են գայլք յափշտակողք: Ի պտղոյ նոցա ծանիջիք զնոսա. միթէ քաղիցե՞ն 'ի փշոյ խաղող, կամ 'ի տատասկէ թուզ: Այսպէս ամենայն ծառ բարի՝ պտուղ բարի առնէ. և ծառ չար պտուղ չար առնէ: Ո՛չ կարէ ծառ բարի պտուղ չար առնել. և ո՛չ ծառ չար պտուղ բարի առնել: Ամենայն ծառ՝ որ ո՛չ առնէ պտուղ բարի, հատանի և 'ի հուր արկանի: Ապա 'ի պտղոյ նոցա ծանիջիք զնոսա:

ՅԱՂԱԳՍ ԿԱՏԱՐՄԱՆ ԿՄԱՑ ԵՒ ԲԱՆԻՑ ՏԵԱՌՆ:

20 — 29:

Ո՛չ ամենայն որ ասէ ցիս, Տէ՛ր Տէ՛ր՝ մտցէ յարքայութիւն երկնից. այլ որ առնէ զկամս Հօր իմոյ՝ որ յերկինս է: Բազումք ասիցեն ցիս յաւուր յայնմիկ՝ Տէ՛ր Տէ՛ր, ո՞չ յանուն քո մարգարէացաք, և յանուն քո դևս հանաք, և յանուն քո զօրութիւնս բազումս արարաք: Եւ յայնժամ ասացից ցնոսա. եթէ ո՛չ երբէք գիտէի զձեզ. 'ի բաց կացէք յինէն ամենեքեան՝ ոյք գործէք զանօրէնութիւն. Ամենայն որ լսէ զբանս իմ զայսոսիկ՝ և առնէ զսոսա, նմանեսցի առն իմաստնոյ՝ որ շինեաց զտուն իւր 'ի վերայ վէմի: Իջին անձրևք և խաղացին գետք, շնչեցին հողմք՝ և բաղխեցին զտունն, և ո՛չ կործանեցաւ. քանզի 'ի վերայ վիմի հաստատեալ էր: Եւ ամենայն որ լսէ զբանս իմ զայսոսիկ՝ և ո՛չ առնէ զսոսա, նմանեսցի առն յիմարի՝ որ շինեաց զտուն իւր 'ի վերայ աւազոյ: Իջին անձրևք, յարեան գետք, շնչեցին հողմք, հարին զտունն, և անկաւ. և էր կործանումն նորա մեծ յոյժ: Եւ եղև իբրև կատարեաց Յիսուս զամենայն զբանս զայսոսիկ, զարմանային ժողովուրդքն ընդ վարդապետութիւն նորա: Զի իբրև իշխանութեամբ ուսուցանէր. և ո՛չ որպէս դպիրքն և փարիսեցիքն:

3. ԲԱՆՔ ԱՌ ՆԻԿՈԴԻՄՈՍ ՅԱՂԱԳՍ ՎԵՐՍՏԻՆ ԾՆՆԴԵԱՆ:

Յովհ. 3. 1 — 3:

Եւ էր այր մի 'ի փարիսեցւոց անտի՝ Նիկոդեմոս անուն նորա, իշխան Հրէից: Սա եկն առ նա 'ի գիշերի, և ասէ ցնա. Ռաբբի, գիտեմք եթէ յԱստուծոյ եկեալ ես վարդապետ. զի ո՛չ ոք կարէ զայդ նշանս առնել, զոր դուդ

առնես. եթէ ոչ Աստուած իցէ ընդ նմա: Պատասխանի ետ Յիսուս, և ասէ ցնա. ամէն ամէն ասեմ քեզ, եթէ ոք ոչ ծնցի վերստին, ոչ կարէ տեսանել զարքայութիւն Աստուծոյ:

4 — 8:

Ասէ ցնա Նիկոդեմոս. զիա՞րդ կարէ մարդ ծնանել՝ որ ծերն իցէ. միթէ մա՞րթ իցէ անդրէն յորովայն մօր իւրոյ կրկին մտանել և ծնանել: Պատասխանի ետ Յիսուս, և ասէ ցնա. ամէն ամէն ասեմ քեզ. եթէ ոք ոչ ծնցի 'ի ջրոյ և 'ի Հոգւոյ, ոչ կարէ մտանել յարքայութիւն Աստուծոյ. զի ծնեալն 'ի մարմնոյ՝ մարմին է. և ծնեալն 'ի Հոգւոյ՝ հոգի է: Դու մի՛ զարմանար՝ թէ ասացի քեզ. պա՛րտ է ծնանել վերստին: Զի հողմն ուր կամի՝ շնչէ, և զձայն նորա լսես, այլ ոչ գիտես ուստի՛ գայ, կամ յո՛ երթայ. սոյնպէս և ամենայն ծնեալն 'ի Հոգւոյն:

9 — 21:

Պատասխանի ետ Նիկոդեմոս, և ասէ ցնա. զիա՞րդ մարթի այդմ լինել: Պատասխանի ետ Յիսուս, և ասէ ցնա. դու ես վարդապետ Իսրայէլի, և զայդ ո՞չ գիտես: Ամէն ամէն ասեմ. զի զոր ինչ գիտեմք՝ խօսիմք. և զոր տեսաք՝ վըկայեմք, և զվկայութիւն մեր ոչ ընդունիք: Իսկ արդ եթէ զերկրաւորս ասացի քեզ՝ և ոչ հաւատայք, զիա՞րդ եթէ զերկնաւորն ասացից՝ հաւատայցէք: Եւ ոչ ոք ել յերկինս, եթէ ոչ՝ որ էջն յերկնից որդի մարդոյ, որ էն յերկինս: Եւ որպէս Մովսէս բարձրացոյց զօձն յանապատի, նոյնպէս բարձրանալ պարտ է որդւոյ մարդոյ: Զի ամենայն որ հաւատայ 'ի նա՝ ոչ կորիցէ, այլ ընկալցի զկեանսըն յաւիտենականս: Զի այնպէս սիրեաց Աստուած զաշ-

խարհ, մինչև զՈրդին իւր միածին ետ. զի ամենայն որ հաւատայ ՚ի նա՝ մի՛ կորիցէ, այլ ընկալցի զկեանս յաւիտենականս։ Զի ոչ առաքեաց Աստուած զՈրդի իւր յաշխարհ՝ թէ դատեսցէ զաշխարհ, այլ զի փրկեսցի աշխարհ նովաւ։ Որ հաւատայ ՚ի նա, ոչ դատապարտեսցի. և որ ոչ հաւատայ ՚ի նա, արդէն իսկ դատապարտեալ է. զի ոչ հաւատաց յանուն միածնի Որդւոյն Աստուծոյ։ Եւ այս իսկ է դատաստան. զի լոյս եկն յաշխարհ, և սիրեցին մարդիկ զխաւար առաւել քան զլոյս. զի էին գործք իւրեանց չարութեան։ Զի ամենայն՝ որ զչար գործէ, ատեայ զլոյս. և ոչ գայ առ լոյսն, զի մի՛ յանդիմանեսցին գործք նորա։ Իսկ որ առնէ զճշմարտութիւն՝ գայ առ լոյսն, զի յայտնի լիցին գործք նորա՝ թէ Աստուծով գործեցան։

4. ԲԱՆՔ ԱՌ ԿԻՆՆ ՍԱՄԱՐԱՑԻ ՅԱՂԱԳՍ ՃՇՄԱՐԻՏ ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ։

Յովհ. 4. 4 — 18։

Եւ էր նմա անցանել ընդ Սամարիա։ Գայ նա ՚ի քաղաք մի Սամարացւոց՝ որում անուն էր Սիւքար, մերձ ՚ի գիւղն՝ զոր ետ Յակովբ որդւոյ իւրում Յովսէփայ։ Եւ անդ էր աղբիւր մի Յակովբայ. և Յիսուս վաստակեալ ՚ի ճանապարհէն, նստէր ՚ի վերայ աղբերն. և էր ժամ իբրև վեցերորդ։ Գայ կին մի ՚ի Սամարիայ հանել ջուր. ասէ ցնա Յիսուս. տո՛ւր ինձ ըմպել։ Ասէ ցնա կինն Սամարացի. դու՝ որ Հրեայդ ես, զիա՞րդ յինէն ըմպել խնդրես ՚ի կնոջէ Սամարացւոյ. զի ոչ երբէք խառնակին Հրեայք ընդ Սամարացիս։ Պատասխանի ետ նմա Յիսուս, և ասէ. եթէ գիտէիր դու զպարգևսն Աստուծոյ. և ո՛վ է որ ասէ ցքեզ՝ թէ տո՛ւր ինձ ըմպել. դու արդեօք խնդրէիր ՚ի նմանէ, և տայր քեզ զջուրն կենդանի։ Ասէ ցնա կինն. Տէ՛ր, դու

քանզի և դոյլ իսկ ո՛չ ունիս, և ջրհորս խոր է. իսկ արդ-
ուստի՛ ունիցիս զջուրն կենդանի։ Մի՞թէ դու մեծ ինչ ո՞ք
իցես քան զհայր մեր Յակոբ՝ որ զայս ջրհորս ետ մեզ. և
ինքն աստի էարբ, և որդիք նորա, և խաշինք նորա։ Պա-
տասխանի ետ Նմա Յիսուս, և ասէ. ամենայն՝ որ ըմպէ 'ի
ջրոյ յայդմանէ՝ միւսանգամ ծարաւի. բայց որ ըմպէ 'ի
ջրոյն՝ զոր ես տաց նմա, մի՛ ծարաւեսցի յաւիտեան։ Այլ
ջուրն՝ զոր ես տաց նմա, եղիցի նմա աղբիւր ջրոյ բղ-
խեցելոյ 'ի կեանս յաւիտենականս։ Ասէ ցնա կինն. Տէր,
տո՛ւր ինձ զջուրն զայն, զի մի՛ ծարաւեցայց, և մի՛ եկից
այսր հանել զջուր։ Ասէ ցնա Յիսուս. ե՛րթ, կոչեա՛ զայր
քո, և ե՛կ այսր։ Պատասխանի ետ Նմա կինն և ասէ. չի՛ք
իմ այր։ Ասէ ցնա Յիսուս. բարւոք ասացեր՝ թէ չի՛ք իմ
այր։ Զի հինգ այր փոխեալ է քո. և զոր այժմ ունիս՝
չէ՛ քո այր. զայդ արդա՛ր ասացեր։

19 — 26։

Ասէ ցնա կինն. Տէ՛ր, թուի ինձ թէ մարգարէ իցես դու։
Հարքն մեր 'ի լերինս յայսմիկ երկիր պագին. և դուք ա-
սէք, եթէ յԵրուսաղէմ և եթ է տեղի՝ ուր արժան իցէ
երկիր պագանել։ Ասէ ցնա Յիսուս. կին դու՝ հաւատա՛
ինձ, զի եկեսցէ ժամանակ յորժամ ո՛չ 'ի լերինս յայսմիկ,
և ո՛չ յԵրուսաղէմ երկիր պագանիցեն Հօր։ Դուք երկիր
պագանէք, որում ո՛չն գիտէք. մեք երկիր պագանեմք, ո-
րում գիտեմքն, զի փրկութիւն 'ի Հրէից է։ Այլ եկեսցէ
ժամանակ՝ և այժմ իսկ է. յորժամ ճշմարիտքն երկրպա-
գուք երկիր պագանիցեն Հօր հոգւով և ճշմարտութեամբ.
քանզի և Հայր զայնպիսի երկրպագուս իւր խնդրէ։ Հոգի
է Աստուած. և երկրպագուաց Նորա, հոգւով և ճշմարտու-
թեամբ պարտ է երկիր պագանել։ Ասէ ցնա կինն. գիտեմք

զի Մեսիայ գայ (անուանեալն Քրիստոս), յորժամ եկեսցէ նա, պատմեսցէ մեզ զամենայն: Ասէ ցնա Յիսուս. ես եմ որ խօսիմս ընդ քեզ:

27 — 38:

Եւ յայն բան եկին աշակերտքն նորա. և զարմանային, զի ընդ կնոջն խօսէր. բայց ոչ ոք ասաց 'ի նոցանէ, թէ զի՞նչ խնդրես, կամ զի՞նչ խօսիս ընդ դմա: Եթող կինն զսափոր իւր, և չոգաւ 'ի քաղաքն, և ասէ ցմարդիկն. եկա՛յք և տեսէ՛ք զայր մի, որ ասաց ինձ զամենայն՝ որ ինչ իմ գործեալ է. մի՞թէ նա իցէ Քրիստոսն: Ելին 'ի քաղաքէն, և գային առ նա: Եւ մինչև եկեալ էին նոքա, աղաչէին զնա աշակերտքն, և ասէին. Ռաբբի, հաց կեր: Նա ասէ ցնոսա. ես կերակուր ունիմ ուտել, զոր դուքն ոչ գիտէք: Ասէին աշակերտքն ընդ միմեանս. միթէ եբե՞ր ինչ ոք դմա ուտել: Ասէ ցնոսա Յիսուս. իմ կերակուր այն է, զի արարից զկամս այնորիկ՝ որ առաքեացն զիս, և կատարեցից զգործն նորա: Ո՞չ դուք ասէք. եթէ այլ ևս չորք ամիսք են, և հունձք գան. ահաւասիկ ես ասեմ ձեզ. ամբարձէ՛ք զաչս ձեր, և տեսէ՛ք զարտորայսն, զի սպիտակացեալք են՝ և 'ի հունձս հասեալք: Եւ որ հնձէ, վարձս առնու. և ժողովէ զպտուղ 'ի կեանս յաւիտենականս. զի որ սերմանէ՝ և որ հնձէ, հասարակ ցնծասցեն: Յայսմ իսկ է բանն ճշմարիտ. զի այլ է՝ որ սերմանէ, և այլ է՝ որ հնձէ: Ես առաքեցի զձեզ հնձել, զոր ոչ դուք վաստակեցիք. այլք վաստակեցին, և դուք 'ի վաստակս նոցա մտէք:

39 — 42:

Եւ 'ի քաղաքէն յայնմանէ Սամարացւոց բազումք հաւատացին 'ի նա, վասն բանի կնոջն վկայելոյ՝ եթէ ասաց ինձ զամենայն, որ ինչ իմ գործեալ էր: Իսկ իբրև եկին

առ Նա Սամարացիքն, աղաչէին զՆա լինել առ նոսա. և եղև անդ աւուրս երկուս: Եւ ևս բազումք հաւատացին 'ի Նա վասն բանին Նորա: Եւ ասէին ցկինն. Թէ ոչ այսուհետև վասն քո խօսիցդ հաւատամք. զի մեզէն իսկ լուաք 'ի դմանէ, և գիտեմք՝ եթէ դա է ճշմարիտ փրկիչ աշխարհաց:

5. ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ ԳՈՐԾՈՎՔ ԻՒՐՈՎՔ ԵՒ ԳՐՈՎՔ ՍՏՈՒԳԻ, ԹԷ ՆԱ Է ՈՐԴԻ ԱՍՏՈՒԾՈՅ:

Յովհ. 5. 17 — 47:

Եւ Յիսուս պատասխանի ետ նոցա. Հայր իմ մինչև ցայժմ գործէ. և ես գործեմ: Վասն այնորիկ առաւել խնդրէին Հրէայքն սպանանել զՆա. զի ոչ միայն լուծանէր զշաբաթս, այլ և Հայր իւր կոչէր զԱստուած՝ և հաւասար առնէր զանձն Աստուծոյ: Պատասխանի ետ Յիսուս, և ասէ ցնոսա. ամէն ամէն ասեմ ձեզ. ոչ կարէ Որդի մարդոյ առնել յանձնէ՝ և ոչինչ, եթէ ոչ տեսանիցէ զՀայրն զի առնէ. զի զոր Նայն առնէ, զնոյն և Որդին նմին նման գործէ: Զի Հայր սիրէ զՈրդի, և զամենայն ինչ ցուցանէ նմա՝ զոր ինքն առնէ. և մեծամեծս ևս քան զսոյնս ցուցանէ նմա զգործս, ընդ որս դուքդ զարմանայք: Զի որպէս Հայր յարուցանէ զմեռեալս և կենդանի առնէ, նոյնպէս և Որդի՝ զորս կամի կենդանի առնէ: Եւ ոչ եթէ Հայր դատէ զոք՝ այլ զամենայն դատաստան ետ Որդւոյ իւրոյ: Զի ամենեքեան պատուեսցեն զՈրդի, որպէս պատուեն զՀայրն. որ ոչ պատուէ զՈրդին, ոչ պատուէ զՀայր զառաքիչն Նորա: Ամէն ամէն ասեմ ձեզ. զի որ զբանն իմ լսէ, և հաւատայ այնմ՝ որ առաքեացն զիս, ընդունի զկեանսն յաւիտենականս. և 'ի դատաստան ոչ մտանէ, այլ փոխեցաւ 'ի մահուանէ 'ի կեանս: Ամէն ամէն ասեմ ձեզ. զի գայ

ժամանակ՝ և արդէն իսկ է. յորժամ մեռեալք լուիցեն ձայնի Որդւոյն Աստուծոյ. և որք լուիցենն կեցցեն: Զի որպէս Հայր ունի կեանս յանձին իւրում, Նոյնպէս ետ և Որդւոյ ունել կեանս յանձին իւրում: Եւ իշխանութիւն ետ Նմա դատաստան առնել. և զի Որդի մարդոյ է, ընդայն զի՞ զարմանայք. զի եկեսցէ ժամանակ՝ յորում ամենեքին որք 'ի գերեզմանս կային, լուիցեն ձայնի Նորա, և եկեսցեն արտաքս: Որոց բարիս գործեալ իցէ, 'ի յարութիւն կենաց. և որոց չար արարեալ, 'ի յարութիւն դատաստանաց: Ո՛չ կարեմ ես յանձնէ առնել և ո՛չինչ, այլ որպէս լսեմ, դատեմ. և դատաստան իմ արդար է. զի ո՛չ խնդրեմ զկամս իմ, այլ զկամս այնորիկ՝ որ առաքեացն զիս: Եթէ ես վկայեմ վասն անձին իմոյ. վկայութիւն իմ չէ՛ ճշմարիտ: Այլ է՝ որ վկայէ վասն իմ. և դուք գիտէք, եթէ ճշմարիտ է վկայութիւնն՝ զոր վկայեաց վասն իմ: Դուք առաքեցիք առ Յովհաննէս, և վկայեաց ճշմարտութեանն: Այլ ես ո՛չ եթէ 'ի մարդկանէ առնում զվկայութիւն, այլ զայս ասեմ՝ զի ապրեսջիք: Նա էր ճրագն՝ որ լուցեալ էր և ծագիւր. և դուք կամեցայք ցնծալ առ ժամանակ մի 'ի լոյս Նորա: Այլ ես ունիմ զվկայութիւն մեծ ես քան զՅովհաննու. զգործսն՝ զորս ետ ցիս Հայր՝ զի կատարեցից զնոսա. Նոքին իսկ գործքն՝ զորս գործեմ, վկայեն վասն իմ, եթէ Հայր առաքեաց զիս: Եւ որ առաքեացն զիս Հայր, Նա վկայեաց վասն իմ: Դուք ո՛չ զձայն Նորա երբէք լուայք. և ո՛չ զտեսիլ Նորա տեսիք: Եւ ո՛չ զբան Նորա ունիք 'ի ձեզ բնակեալ. զի զոր Նա առաքեաց, դուք Նմա ոչ հաւատայք: Քննեցէ՛ք զգիրս, զի դուք համարիք Նոքօք ունել զկեանս յաւիտենականս. և Նոքին իսկ վկայեն վասն իմ, որովք համարիք ունել կեանս: Եւ դուք ո՛չ կամիք գալ առ իս, զի զկեանսն ունիցիք: Ես

փառս ՚ի մարդկանէ ոչ առնում։ Այլ գիտեմ զձեզ, թէ զսէրն Աստուծոյ ոչ ունիք յանձինս։ Ես եկի յանուն Հօր իմոյ, և ոչ ընդունիք զիս. եթէ այլ ոք եկեսցէ յիւր անուն, զնա ընդունիցիք։ Զիա՞րդ կարէք դուք հաւատալ, զի զփառս ՚ի միմեանց առնուք, և զփառս զառ ՚ի միոյն Աստուծոյ ոչ խնդրէք։ Մի՛ համարիք՝ եթէ ես չարախօս ինչ իցեմ զձէնջ առ Հօր. գոյ, որ չարախօս կայ զձէնջ՝ Մովսէս, յոր դուքն յուսացեալ էք։ Զի եթէ հաւատայիք դուք Մովսիսի, հաւատայի՛ք արդեօք և ինձ. զի նա վասն իմ իսկ գրեաց։ Զի եթէ նորա գրոցն ոչ հաւատայք. զիա՞րդ իմոյս բանից հաւատայցէք։

6. ՅԻՍՈՒՍ ԴԱՏԱՊԱՐՏԷ ԶԱՆԶԵՂՋՍ, ՈՒՐԱԽ ԼԻՆԻ ԸՆԴ ՀԱՒԱՏԱՑԵԱԼՍ ԵՒ ԿՈՉԷ ԱՌ ԻՆՔՆ ԶԶՂՋԱՑԵԱԼՍ։

Մատ. 11. 20 — 24։

Յայնժամ սկսաւ նախատել զքաղաքսն՝ յորս եղեն բազում զօրութիւնք նորա, և ոչ ապաշխարեցին։ Վա՜յ քեզ Քորազին, վա՜յ քեզ Բեթսայիդա. զի եթէ ՚ի Տիւրոս և ՚ի Սիդօն եղեալ էին զօրութիւնքն՝ որք ՚ի ձեզ եղեն, վաղու ևս արդեօք խորգով և մոխրով ապաշխարեալ էին։ Բայց ասեմ ձեզ. դիւրագոյն լիցի երկրին Տիւրոսի և Սիդօնի յաւուրն դատաստանի քան ձեզ։ Եւ դու Կափառնայում. մի՛ մինչև յերկինս բարձրասցիս, այլ մինչև ՚ի դժոխս իջցես. զի եթէ ՚ի Սոդոմ եղեալ էին զօրութիւնքն՝ որք ՚ի քեզ եղեն, ապաքէն կային ևս մինչև ցայսօր։ Բայց ասեմ ձեզ. եթէ երկրին Սոդոմացւոց՝ դիւրագոյն լիցի յաւուրն դատաստանի քան ձեզ։

25 — 26։

Յայնմ ժամանակի պատասխանի ետ Յիսուս, և ասէ. Գոհանամ զքէն Հա՛յր՝ Տէր երկնի և երկրի, զի ծածկեցեր

զայս յիմաստնոց և 'ի գիտնոց՝ և յայտնեցեր տղայոց։ Այո՛ Հայր, զի այսպէս հաճոյ եղև առաջի քո։

27 — 30։

Ամենայն ինչ տուաւ ինձ 'ի Հօրէ իմմէ, և ո՛չ ոք ճանաչէ զՈրդի՝ եթէ ոչ Հայր. և ո՛չ զՀայր ոք ճանաչէ՝ եթէ ոչ Որդի. և ում Որդին կամիցի յայտնել։ Եկա՛յք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ։ Առէ՛ք զլուծ իմ 'ի ձեզ. և ուսարո՛ւք յինէն, զի հեզ եմ և խոնարհ սրտիւ. և գտջիք հանգիստ անձանց ձերոց։ Զի լուծ իմ քաղցր է, և բեռն իմ փոքրոգի։

7. ԸՍՏ ՀԱՒԱՏՈՅ ԵՒ ԸՍՏ ՍԻՐՈՅ ԱՌ ՅԻՍՈՒՍ, ԹՈՂԵԱԼ ԼԻՆԻՆ ՄԵՂՔ։

Ղուկ. 7. 36 — 50։

Աղաչէր զնա ոմն 'ի փարիսեցւոցն, զի կերիցէ հաց ընդ նմա. և մտեալ 'ի տուն փարիսեցւոյն՝ բազմեցաւ։ Եւ կին մի էր 'ի քաղաքին մեղաւոր, իբրև գիտաց՝ եթէ բազմեալ է 'ի տան փարիսեցւոյն, բերեալ շիշ մի իւղոյ նարդեան ազնուի, կայր յետոյ առ ոտսն նորա, լայր. և արտասուօքն սկսաւ թանալ զոտս նորա. և հերով գլխոյ իւրոյ ջնջէր, և համբուրէր զոտս նորա, և օծանէր իւղովն։ Եւ տեսեալ փարիսեցւոյն՝ որ կոչեացն զնա, ասէ ընդ միտս իւր. սա թէ մարգարէ ոք էր, ապա գիտէր թէ ո՛վ և որպիսի ոք կին մերձենայ 'ի սա, զի մեղաւոր է։ Պատասխանի ետ Յիսուս, և ասէ. Սի՛մոն, ունիմ ինչ ասել քեզ։ Եւ նա ասէ. ասա՛ վարդապետ։ Եւ ասէ. երկու պարտապանք էին ուրումն փոխատուի. մինն պարտիւր հինգ հարիւր դահեկան, և միւսն յիսուն։ Եւ իբրև ո՛չ գոյր հատուցանել, երկոցունց շնորհեաց. արդ՝ ասա՛ ո՞վ առաւել սիրեսցէ զնա։

Ասէ Սիմոն. ինձ այսպէս թուի, թէ որում զբազումն շնորհեաց: Եւ նա ասէ ցնա. ուղիղ դատեցար: Եւ դարձեալ 'ի կինն կողմն, ասէ ցՍիմոն. տեսանե՞ս զայս կին. մտի 'ի տուն քո, ջուր ոտից իմոց ոչ ետուր. իսկ սա արտասուօք իւրովք եթաց զոտս իմ, և հերօք իւրովք ջնջեաց: Համբոյր մի դու ոչ ետուր ինձ. սա աւասիկ յորմէ հետէ մրտեալ է, ոչ դադարեաց 'ի համբուրելոյ զոտս իմ: Իւղով զգլուխ իմ ոչ օծեր. սա իւղով անուշիւ էօծ: Վասն որոյ ասեմ քեզ. թողեա՛լ լիցին նմա մեղք իւր բազում, զի յոյժ սիրեաց. զի որում շատ թողուցու, շատ սիրէ. և որում սակաւ, սակաւ: Եւ ասէ ցնա. թողեալ լիցին քեզ մեղք քո: Եւ սկսան որք բազմեալ էին ընդ նմա, ասել ընդ միտս իւրեանց. ո՞վ է սա՝ որ զմեղս թողու: Եւ նա ասէ ցկինն. հաւատք քո կեցուցին զքեզ, ե՛րթ 'ի խաղաղութիւն:

Յ. ԳՈՎԷ ՅԻՍՈՒՍ ԶԼՍՈՂՍ ԵՒ ԶԿԱՏԱՐՈՂՍ ԲԱՆԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ:

Մատ. 12. 46 — 49:

Մինչդեռ նա ընդ ժողովուրդսն խօսէր, ահա մայր նորա և եղբարք նորա կային արտաքոյ, և խնդրէին խօսել ընդ նմա: Եւ ասէ ումն ցնա. ահա մայր քո և եղբարք քո կան արտաքոյ՝ և խնդրեն խօսել ընդ քեզ: Նա պատասխանի ետ այնմիկ՝ որ ասացն ցնա, և ասէ. ո՞վ է իմ մայր կամ եղբայր: Եւ ձգեալ զձեռն իւր յաշակերտսն՝ ասէ. ահա՛ մայր իմ և եղբարք իմ: Զի որ առնիցէ զկամս Հօր իմոյ՝ որ յերկինս է, նա՛ է իմ եղբայր՝ և քոյր և մայր:

Ղուկ. 10. 38 — 42:

Եւ եղև 'ի գնալն նոցա, և ինքն եմուտ 'ի գիւղ մի. և կին ումն անուն Մարթա, ընկալաւ զնա 'ի տան իւրում: Եւ նորա էր քոյր մի, որում անուն էր Մարիամ. որ և եկն

Նստաւ առ ոտսն Տեառն. և լսէր զբանսն Նորա: Եւ Մարթա զբաղեալ էր 'ի բազում սպասու. եկն եկաց առ Նմա, և ասէ. Տէ՛ր՝ ոչի՛նչ է փոյթ քեզ. զի քոյրդ իմ միայն եթող զիս 'ի սպասու. արդ՝ ասա՛ դմա, զի օգնեսցէ ինձ: Պատասխանի ետ Նմա Յիսուս, և ասէ. Մարթա՛, Մարթա՛. դու հոգաս և զբաղում իւիք զբաղեալ ես: Բայց աստ սակաւ ինչ պիտոյ է: Մարիամ մասն բարի ընտրեաց. որ ոչ բարձցի 'ի Նմանէ:

11. 27 — 28:

Եւ եղև մինչդեռ խօսէր զայս, ձայն եբարձ կին մի 'ի ժողովրդենէ անտի և ասէ. երանի է որովայնին՝ որ կրեացն զքեզ, և ստեանցն՝ որք դիեցուցին զքեզ: Եւ Նա ասէ. Նա երանի այնոցիկ է, որք լսեն զբանն Աստուծոյ և առնեն:

9. ԽՐԱՏ ԱՌ ԵՐԿՈՏԱՍԱՆ ԱՌԱՔԵԱԼՍ:

Մատ. 10. 5 — 42:

Զնոսա երկոտասանեսին առաքեաց Յիսուս, պատուիրեաց նոցա, և ասէ. 'ի ճանապարհ հեթանոսաց մի՛ երթայցէք, և 'ի քաղաք Սամարացւոց մի՛ մտանիցէք. այլ երթա՛յք առաւել առ ոչխարսն կորուսեալս տան Իսրայէլի: Եւ իբրև երթայցէք՝ քարոզեցէ՛ք և ասացէք, թէ մերձեալ է արքայութիւնն երկնից: Զհիւանդս բժշկեցէ՛ք, զբորոտս սրբեցէ՛ք, զդևս հանէք. ձրի առէք՝ և ձրի տուք: Մի՛ ըստանայք ոսկի, և մի՛ արծաթ, և մի՛ պղինձ 'ի գօտիս ձեր: Մի՛ պարկ 'ի ճանապարհ. և մի՛ երկուս հանդերձս. մի՛ կօշիկս. մի՛ ցուպ. զի արժանի՛ է մշակն կերակրոյ իւրում: Յոր քաղաք մտանիցէք կամ 'ի գեղ, հարցանիցէք թէ ո՞ է 'ի նմա արժանի. և անդ լինիջիք մինչև ելանիցէք անտի: Եւ իբրև մտանիցէք 'ի տունն, ողջո՛յն տաջիք նմա, և ասասջիք. ողջո՛յն տանս այսմիկ: Եթէ իցէ տունն արժանի,

եկեսցէ ողջոյնն ձեր ՚ի վերայ նորա· ապա թէ ոչ իցէ արժանի, ողջոյնն ձեր առ ձեզ դարձցի: Եւ որ ոչ ընկալցի զձեզ՝ և ոչ լուիցէ բանից ձերոց, իբրև ելանիցէք ՚ի քաղաքէն յայնմանէ, թօթափեսջի՛ք զփոշին յոտից ձերոց: Ամէն ասեմ ձեզ· դիւրագոյն լիցի երկրին Սոդոմացւոց և Գոմորացւոց յաւուրն դատաստանի, քան քաղաքին այնմիկ: Ահաւասիկ ես առաքեմ զձեզ իբրև զոչխարս ՚ի մէջ գայլոց· եղերո՛ւք այսուհետև խորագէտք իբրև զօձս, և միամիտք իբրև զաղաւնիս: Զգո՛յշ լինիջիք ՚ի մարդկանէ· զի մատնեսցեն զձեզ յատեանս, և ՚ի ժողովուրդս իւրեանց տանջեսցեն զձեզ· և առաջի դատաւորաց և թագաւորաց տանիցեն զձեզ վասն իմ, ՚ի վկայութիւն նոցա և հեթանոսաց: Այլ յորժամ մատնիցեն զձեզ, մի՛ հոգայցէք՝ թէ որպէս կամ զի՛նչ խօսիցէք· զի տացի ձեզ ՚ի ժամուն յայնմիկ զինչ խօսիցիք· զի ոչ եթէ դուք իցէք որ խօսիցիքն, այլ Հոգին Հօր ձերոյ որ խօսիցի ՚ի ձեզ: Մատնեսցէ եղբայր զեղբայր ՚ի մահ, և հայր զորդի· և յառնիցեն որդիք ՚ի վերայ հարց՝ և սպանանիցեն զնոսա: Եւ եղիջիք ատեցեալք յամենեցունց վասն անուան իմոյ· իսկ որ համբերեսցէ ՚ի սպառ, նա կեցցէ: Եւ յորժամ հալածիցեն զձեզ ՚ի քաղաքիս յայսմիկ՝ փախիջիք յայլ· և եթէ յայնմանէ հալածիցեն զձեզ՝ փախիջիք ՚ի միւսն: Ամէն ասեմ ձեզ· ոչ սպառեսջիք զքաղաքս Իսրայէլի, մինչև եկեսցէ Որդի մարդոյ: Ոչ է աշակերտ առաւել քան զվարդապետ, և ոչ ծառայ քան զտէր իւր· շատ իցէ աշակերտին՝ եթէ եղիցի իբրև զվարդապետ իւր, և ծառային՝ իբրև զտէր իւր: Եթէ զտանուտէրն Բէեղզեբուղ կոչեցին, ո՛րչափ ևս առաւել զընտանիս նորա: Մի՛ այսուհետև երկնչիցիք ՚ի նոցանէ· զի ոչինչ է ՚ի ծածուկ՝ որ ոչ յայտնեսցի, և գաղտնի՝ որ ոչ ծանիցի: Զոր ասեմ ձեզ ՚ի խաւարի, ասացէ՛ք ՚ի

լոյս· և զոր լսիցէք յունկանէ, քարոզեցէ՛ք ՚ի վերայ տանեաց։ Եւ մի՛ երկնչիք յայնցանէ՝ որ սպանանեն զմարմին, և զոգի ոչ կարեն սպանանել։ Այլ երկերո՛ւք դուք առաւել յայնմանէ՝ որ կարող է զոգի և զմարմին կորուսանել ՚ի գեհենի։ Ո՞չ ապաքէն երկու ճնճղուկք դանկի միոջ վաճառին, և մի ՚ի նոցանէ յերկիր ոչ անկցի առանց Հօր ձերոյ։ Այլ ձեր և ամենայն իսկ հեր գլխոյ թուեալ է· և արդ մի՛ երկնչիցիք, զի լաւ էք քան զամենայն ճնճղուկս։ Ամենայն որ խոստովանեսցի յիս առաջի մարդկան, խոստովանեցայց և ես զնմանէ առաջի Հօր իմոյ՝ որ յերկինս է։ Մի՛ համարիք եթէ եկի արկանել խաղաղութիւն յերկիր· ո՛չ եկի արկանել խաղաղութիւն, այլ սուր· քանզի եկի քակել զայր՝ ՚ի հօրէ իւրմէ, և զդուստր՝ ՚ի մօրէ, և զհարսն ՚ի սկեսրէ իւրմէ· և թշնամիք առն՝ ընտանիք իւր։ Որ սիրէ զհայր կամ զմայր առաւել քան զիս, ո՛չ է ինձ արժանի։ Եւ որ սիրէ զուստր կամ զդուստր առաւել քան զիս, չէ՛ ինձ արժանի։ Որ գտանէ զանձն իւր՝ կորուսցէ զնա, և որ կորոյս զանձն իւր վասն իմ, գտցէ՛ զնա։ Որ ընդունի զձեզ՝ զիս ընդունի, և որ զիս ընդունի՝ ընդունի զառաքիչն իմ։ Որ ընդունի զմարգարէ յանուն մարգարէի, զվարձս մարգարէի առցէ։ Եւ որ ընդունի զարդար յանուն արդարոյ, զվարձս արդարոյ առցէ։ Եւ որ արբուսցէ միում ՚ի փոքրկանցս յայսցանէ բաժակ մի ջուր ցուրտ միայն յանուն աշակերտի· ամէն ասեմ ձեզ, ո՛չ կորուսցէ զվարձս իւր։

10· ԽՐԱՏ ԱՌ ԵՕԹԱՆԱՍՈՒՆ ԱՇԱԿԵՐՏՍ։

Ղուկ. 10. 1 — 2։

Յետ այսորիկ երևեցոյց Տէր և այլ ես եօթանասուն և երկուս· և առաքեաց զնոսա երկուս երկուս առաջի իւր

յամենայն քաղաքս և 'ի տեղիս, ուր ինքն երթալոց էր: Եւ ասէ ցնոսա. հունձք բազում են՝ և մշակք սակաւ. արդ՝ աղաչեցէ՛ք զՏէր հնձոց, զի հանցէ մշակս 'ի հունձս իւր:

17 — 20:

Դարձան եօթանասունն և երկուքն խնդութեամբ՝ և ասեն. Տէ՛ր՝ և դևք հնազանդին մեզ յանուն քո: Եւ ասէ ցնոսա. տեսանէի զսատանայ անկեալ յերկնից իբրև զփայլակն: Ահա ետու ձեզ զիշխանութիւն, կոխել զօձս և զկարիճս և զամենայն զօրութիւն թշնամւոյն, և ձեզ ոչինչ մեղանչիցեն: Բայց ընդ այն մի՛ խնդայք՝ եթէ այսք հնազանդին ձեզ. այլ խնդացէ՛ք, զի անուանք ձեր գրեալ են յերկինս:

11. ՅԻՍՈՒՍ ՕՐՀՆԷ ԶՄԱՆԿՏԻՍ:

Մարկ. 10. 13 — 16:

Եւ մատուցանէին առ Նա մանկտի՝ զի ձեռն դիցէ Նոցա. իսկ աշակերտքն սաստէին այնոցիկ՝ որք մատուցանէինն: Իբրև ետես Յիսուս, բարկացեալ սաստեաց Նոցա, և ասէ. Թո՛յլ տուք մանկտւոյդ գալ առ իս, և մի՛ արգելուք զդոսա. զի այդպիսեացդ է արքայութիւն Աստուծոյ: Ամէն ասեմ ձեզ, զի որ ո՛չ ընկալցի զարքայութիւն Աստուծոյ իբրև զմանուկ՝ ո՛չ մտցէ 'ի նա: Եւ առեալ զնոսա 'ի գիրկս՝ ձեռն եդ 'ի վերայ՝ և օրհնեաց զնոսա:

12. ՔՐԻՍՏՈՍ ԱՒԵՏԷ, ԹԷ ԻՆՔՆ Է ՀԱՑՆ ԿԵՆԱՑ:

Յովհ. 6. 27 — 29:

Որթա՛յք, գործեցէ՛ք՝ մի՛ զկորստական կերակուրն, այլ զկերակուրն, որ մնայ 'ի կեանսն յաւիտենականս, զոր Որդին մարդոյ տացէ ձեզ. քանզի զնա Հայր կնքեաց Աստուած:

Ասեն ցնա. զի՞նչ առնիցեմք՝ զի զգործս Աստուծոյ գործեսցուք: Պատասխանի ետ Յիսուս, և ասէ ցնոսա. այս է գործն Աստուծոյ, զի հաւատասջիք յայն՝ զոր առաքեացըն նա:

30 — 40:

Ասեն ցնա. զի՞նչ նշանս առնիցես՝ զի տեսցուք, և հաւատասցուք. զի՞նչ գործիցես: Հարքն մեր կերին զմանանայն յանապատի անդ՝ որպէս և գրեալ է: Զհաց երկնից ետ նոցա ուտել: Ասէ ցնոսա Յիսուս. ամէն ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ Մովսէս ետ ձեզ զհացն երկնից, այլ Հայրն իմ տայ ձեզ զհացն երկնից զճշմարիտ: Զի հաց յԱստուծոյ է, որ իջանէ յերկնից՝ և կեանս տայ աշխարհի: Ասեն ցնա. Տէ՛ր, յամենայն ժամ տո՛ւր մեզ զհացն զայն: Ասէ ցնոսա Յիսուս. ե՛ս եմ հացն կենաց. որ գայ առ իս, ոչ քաղցիցի. և որ հաւատայ յիս՝ ոչ երբէք ծարաւեսցի: Այլ ասացի ձեզ. թէ տեսանէք զիս, և ոչ հաւատայք: Զամենայն՝ զոր տայ ինձ Հայր, առ իս եկեսցէ, և որ գայ առիս, ոչ հանից արտաքս: Զի իջի ես յերկնից՝ ոչ զի զկամս իմ արարից. այլ զկամս այնորիկ՝ որ առաքեացն զիս: Այս են կամք Հօր իմոյ, որ առաքեացն զիս. զի զամենայն՝ զոր ետ ցիս Հայր, ոչ կորուսից 'ի նմանէ. այլ յարուցից զնա յաւուրն յետնում: Այս են կամք Հօր իմոյ. զի ամենայն՝ որ տեսանէ զՈրդի, և հաւատայ 'ի նա, ընկալցի զկեանսն յաւիտենականս. և ես յարուցից զնա յաւուրն յետնում:

41 — 59:

Տրտնջէին զնմանէ Հրէայքն, զի ասաց՝ թէ ես եմ հացն իջեալ յերկնից: Եւ ասէին. ո՞չ սա է Յիսուս որդին Յովսէփու՝ զորոյ մեք գիտեմք զհայրն: Իսկ արդ՝ զիա՞րդ ասէ, թէ ես յերկնից իջի: Պատասխանի ետ Յիսուս, և ասէ

ցնոսա. մի՛ քրթմնջէք ընդ միմեանս։ Ո՛չ ոք կարէ գալ առ իս. եթէ ոչ Հայրն՝ որ զիս առաքեաց, ձգեսցէ զնա. և ես յարուցից զնա յաւուրն յետնում։ Գրեալ է ՚ի մարգարէս. և եղիցին ամենեքեան ուսեալք յԱստուծոյ. ամենայն որ լսէ ՚ի Հօրէ՝ և ուսանի, գայ առ իս։ Իբրև ոչ եթէ զՀայր ուրուք տեսեալ իցէ, եթէ ոչ՝ որ էն յԱստուծոյ, նա ետես զՀայր։ Ամէն ամէն ասեմ ձեզ. զի որ հաւատայ յիս, ընդունի զկեանսն յաւիտենականս։ Ես եմ հացն կենաց։ Հարքն ձեր կերին զմանանայն յանապատին՝ և մեռան։ Այս է հացն, որ յերկնից իջեալ է. զի որ ուտիցէ ոք ՚ի սմանէ՝ մի՛ մեռանիցի։ Ես եմ հացն կենդանի, որ յերկնից իջեալ։ Եթէ ոք ուտիցէ ՚ի հացէ յայսմանէ, կեցցէ յաւիտեան։ Եւ հացն՝ զոր ես տաց, մարմին իմ է. զոր ես տաց վասն կենաց աշխարհի։ Մարտնչէին ընդ միմեանս Հրէայքն, և ասէին. զիա՞րդ կարէ սա տալ մեզ զմարմին իւր յուտել։ Ասէ ցնոսա Յիսուս. ամէն ամէն ասեմ ձեզ. եթէ ոչ կերիջիք զմարմին Որդւոյ մարդոյ՝ և արբջիք զարիւն նորա, ոչ ունիք կեանս յանձինս։ Որ ուտէ զմարմին իմ՝ և ըմպէ զարիւն իմ, ունի զկեանս յաւիտենականս. և ես յարուցից զնա յաւուրն յետնում։ Զի մարմին իմ ճշմարիտ կերակուր է. և արիւն իմ, ճշմարիտ ըմպելի է։ Որ ուտէ զմարմին իմ, և ըմպէ զարիւն իմ՝ նա յիս բնակեսցի, և ես ՚ի նմա։ Որպէս առաքեաց զիս կենդանին Հայր, և ես կենդանի եմ վասն Հօր. և որ ուտէն զիս, և նա կեցցէ վասն իմ։ Այս է հացն, որ յերկնից իջեալ. ոչ որպէս կերին հարքն ձեր զմանանայն և մեռան, որ ուտէ զհացս զայս, կեցցէ յաւիտեան։ Զայս ասաց ՚ի ժողովրդեանն, յուսուցանելն ՚ի Կափառնաում։

60 — 69։

Եւ բազումք յաշակերտացն իբրև լուան, ասէին. խի՛ստ է բանդ այդ. ո՞վ կարէ լսել դմա։ Իբրև գիտաց Յիսուս յանձն իւր՝ եթէ տրտնջեն վասն այնորիկ աշակերտքն իւր, ասէ ցնոսա. ա՞յդ գայթակղեցուցանէ զձեզ։ Իսկ արդ՝ եթէ տեսանիցէք զՈրդի մարդոյ, զի ելանիցէ ուր էր զառաջինն։ Հոգին է կենդանարար, մարմինն ինչ ոչ օգնէ. զբանսն զոր ես խօսեցայ ընդ ձեզ՝ հոգի է և կեանք։ Այլ են ոմանք ՚ի ձէնջ՝ որք ոչ հաւատան. քանզի գիտէր Յիսուս ՚ի սկզբանէ, ո՞վ են այնոքիկ՝ որք ոչն հաւատան. և ո՛վ այն է՝ որ մատնելոց է զնա։ Եւ ասէր. վասն այնորիկ ասացի ձեզ, թէ ոչ ոք կարէ գալ առ իս, եթէ ոչ իցէ տուեալ նմա ՚ի Հօրէ իմմէ։ Յայսմանէ բազումք յաշակերտացն Նորա չոգան յետս. և ոչ ևս շրջէին ընդ Նմա։ Ասէ Յիսուս ցերկոտասան աշակերտսն, միթէ և դո՞ւք կամիք երթալ։ Պատասխանի ետ Նմա Սիմոն Պետրոս. Տէ՛ր, առ ո՞վ երթիցուք. բանս կենաց յաւիտենականաց ունիս։ Եւ մեք հաւատացաք՝ և ծանեաք, եթէ դու ես Քրիստոսն Որդի Աստուծոյ։

13. ԹԷ ՔՐԻՍՏՈՍ Է ԱՂԲԻՒՐ ՋՐՈՅ ԿԵՆԴԱՆՈՒԹԵԱՆ։

Յովհ. 7. 14 — 17։

Իբրև տօնն ընդմիջեցաւ՝ ել Յիսուս ՚ի տաճարն, և ուսուցանէր։ Զարմանային Հրէայքն, և ասէին. զիա՞րդ ըզգիրս գիտէ սա, զի ուսեալ բնաւ չի՛ք։ Պատասխանի ետ Նոցա՛ Յիսուս, և ասէ. իմ վարդապետութիւնս չէ՛ իմ, այլ այնորիկ՝ որ առաքեացն զիս։ Եթէ ոք կամի զկամս Նորա առնել, գիտասցէ վասն վարդապետութեանս. յԱստուծո՞յ իցէ արդեօք, եթէ ես ինչ յանձնէ իմմէ խօսիմ։

37 — 39։

Ի վերջնում աւուր մեծի տօնին կայր Յիսուս, աղաղակէր և ասէր. եթէ ոք ծարաւի իցէ՝ եկեսցէ առ իս, և արբցէ։ Որ հաւատայ յիս, որպէս ասէն գիրք՝ գետք յորովայնէ նորա բղխեսցեն ջրոց կենդանութեան։ Զայս ասէր վասն հոգւոյն՝ զոր ընդունելոց էին, որք հաւատային. զի չև էր հոգի. քանզի Յիսուս չև էր փառաւորեալ։

14. ԹԷ ՔՐԻՍՏՈՍ Է ԼՈՅՍ ԱՇԽԱՐՀԻ։

Յովհ. 12. 44 — 50։

Եւ Յիսուս աղաղակէր, և ասէր. որ հաւատայ յիս՝ ո՛չ հաւատայ յիս. այլ յայն՝ որ առաքեացն զիս։ Եւ որ տեսանէ զիս, զայն տեսանէ՝ որ առաքեացն զիս։ Ես լոյս յաշխարհ եկի. զի ամենայն՝ որ հաւատայ յիս, ՚ի խաւարի մի՛ մնասցէ։ Եւ եթէ ոք լուիցէ բանից իմոց, և ո՛չ պահեսցէ, ես ո՛չ դատեմ զնա. քանզի ո՛չ եկի զի դատեցից զաշխարհ. այլ զի փրկեցից զաշխարհ։ Որ անարգէ զիս, և ո՛չ ընդունի զբանս իմ. գոյ՝ որ դատէ զնա. Բանն՝ զոր ես խօսեցայ, նա դատէ զնա յաւուրն յետնում։ Զի ես յանձնէ իմմէ ո՛չ խօսեցայ, այլ որ առաքեացն զիս Հայր, ետ ինձ պատուէր. զի՞նչ ասացից՝ և զի՞նչ խօսեցայց։ Եւ գիտեմ, թէ պատուէրն այն կեանք են յաւիտենականք. ա՛րդ՝ զոր ես խօսիմ, որպէս ասաց ինձ Հայրն՝ այնպէս խօսիմ։

15. ՅԻՍՈՒՍ ՊԱՇՏՊԱՆԷ ԶՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ ԻՒՐ ԸՆԴԴԷՄ ՀՐԷԻՑ։

Յովհ. 8. 28 — 59։

Ասէ ցնոսա Յիսուս. յորժամ բարձրացուցանէք զՈրդի մարդոյ, յայնժամ գիտասջիք՝ թէ ես եմ. և յանձնէ

իմմէ ինչ ոչ առնեմ, այլ որպէս ուսոյց զիս Հայրն իմ, զայն խօսիմ։ Եւ որ առաքեացն զիս, ընդ իս է. ոչ եթող զիս միայն. զի ես զհաճոյս Նորա առնեմ հանապազ։ Իբրեւ զայս խօսեցաւ, բազումք հաւատացին 'ի Նա։ Եւ ասէր Յիսուս առ Հրէայսն հաւատացեալս. եթէ դուք կայջիք 'ի բանի իմում, ճշմարիտ աշակերտք իմ էք։ Եւ ծանիջիք զճշմարտութիւնն. և ճշմարտութիւնն ազատեսցէ զձեզ։ Պատասխանի ետուն Նմա, և ասեն. զաւակք Աբրահամու եմք, և ոչ ումեք երբէք ծառայեցաք. զիա՞րդ ասես եթէ ազատք լինիջիք։ Պատասխանի ետ Նոցա Յիսուս, ամէն ամէն ասեմ ձեզ. եթէ ամենայն՝ որ առնէ զմեղս, ծառայ է մեղաց։ Եւ ծառայն ոչ յաւիտեան կայ 'ի տան. իսկ Որդին յաւիտեան կայ։ Իսկ արդ՝ եթէ Որդին զձեզ ազատեսցուցէ, ճշմարիտ ազատք լինիջիք։ Գիտեմ՝ զի զաւակ Աբրահամու էք. այլ խնդրէք սպանանել զիս, զի բանին իմոյ չիք տեղի 'ի ձեզ։ Ես՝ զոր տեսի առ Հօր իմում, խօսիմ. և դուք՝ զոր լուայք 'ի հօրէն ձերմէ, առնէք։ Պատասխանի ետուն Նմա, և ասեն. հայր մեր Աբրահամ է։ Ասէ ցնոսա Յիսուս. եթէ որդիք Աբրահամու էիք, զգործսն Աբրահամու գործէիք։ Այլ այժմ խնդրէք սպանանել զիս. զայր մի, որ ձեզ զճշմարտութիւն խօսեցայ՝ զոր լուայ 'ի Հօրէ իմմէ. զայդ Աբրահամ ոչ արար։ Դուք առնէք զգործսն հօրն ձերոյ։ Ասեն ցնա. մեք 'ի պոռնկութենէ չեմք ծընեալ. մի է հայր մեր Աստուած։ Ասէ ցնոսա Յիսուս. եթէ Աստուած էր հայր ձեր, սիրէիք արդեօք զիս. զի ես յԱստուծոյ ելի, և եկի. և ոչ եթէ յանձնէ ինչ եկի. այլ Նա առաքեաց զիս։ Ընդէ՞ր զխօսս իմ ոչ գիտէք դուք. վասն զի՝ ոչ կարէք լսել զբանն իմ։ Դուք 'ի հօրէ սատանայէ էք, և զցանկութիւն հօրն ձերոյ կամիք առնել. զի Նա մարդասպան էր 'ի սկզբանէ, և 'ի ճշմարտութեան ոչ եկաց. զի

ոչ գոյ ճշմարտութիւն 'ի նմա. յորժամ խօսիցի սուտ՝ յիւրոց անտի խօսի. զի սուտ է և հայր նորա։ Իսկ ես, զի զճշմարտութիւն խօսիմ, ոչ հաւատայք ինձ։ Ո՞վ 'ի ձէնջ յանդիմանեսցէ զիս վասն մեղաց. եթէ զճշմարտութիւն ասեմ ձեզ, ընդէ՞ր ոչ հաւատայք ինձ։ Որ էն յԱստուծոյ՝ զբանս Աստուծոյ լսէ, և դուք վասն այնորիկ ոչ լսէք, զի չէ՛ք յԱստուծոյ։ Պատասխանի ետուն Հրէայքն, և ասեն ցնա. ո՞չ բարւոք ասեմք մեք եթէ Սամարացի ես դու. և դև գոյ 'ի քեզ։ Պատասխանի ետ Յիսուս, և ասէ. յիս դև ոչ գոյ՝ այլ պատուեմ զՀայր իմ, և դուք անարգէք զիս։ Ես ոչ խնդրեմ զփառս իմ. է՛ որ խնդրէն՝ և դատի։ Ամէն ամէն ասեմ ձեզ. եթէ ոք զբանն իմ պահեսցէ, զմահ մի՛ տեսցէ 'ի յաւիտեան։ Ասեն ցնա Հրէայքն. արդ գիտացաք՝ եթէ դև գոյ 'ի քեզ։ Աբրահամ մեռաւ՝ և մարգարէքն. և դու ասես, եթէ ոք զբանն իմ պահեսցէ, մի՛ ճաշակեսցէ զմահ 'ի յաւիտեան։ Միթէ դու մեծ ինչ ո՞ք իցես քան զՀայր մեր Աբրահամ՝ որ մեռաւ. և մարգարէքն մեռան. արդ դու զո՞ առնես զքեզ։ Պատասխանի ետ Յիսուս. եթէ ես փառաւորեմ զանձն իմ, փառքն իմ ոչինչ են. է Հայր՝ որ փառաւորէ զիս. զորմէ դուքն ասէք՝ թէ Աստուած մեր է, և ոչ ճանաչէք զնա։ Բայց ես գիտեմ զնա. և թէ ասեմ՝ թէ ոչ գիտեմ զնա, ձեզ նման սուտ լինիմ. այլ ես գիտեմ զնա, և զբան նորա պահեմ։ Աբրահամ հայր ձեր ցանկացաւ տեսանել զօր իմ. ետես, և ուրախ եղև։ Ասեն ցնա Հրէայքն. յիսուն ամ չև ևս է քո. և զԱբրահամ տեսե՞ր։ Ասէ ցնոսա Յիսուս. ամէն ամէն ասեմ ձեզ. յառաջ քան զլինել Աբրահամու եմ ես։ Վէմս առին Հրէայքն, զի արկցեն 'ի վերայ նորա. և Յիսուս խոյս ետ. և ելեալ գնաց 'ի տաճարէ անտի։

16. ԿԱՆԽԱՍԱՑՈՒԹԻՒՆ ՅԻՍՈՒՍԻ ՎԱՍՆ ՉԱՐՉԱՐԱՆԱՑ ԻՒՐՈՑ, ԵՒ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՎԱՍՆ ՉԱՐՉԱՐԱՆԱՑ ՔՐԻՍՏՈՆԷԻՑ:

Մատ. 16. 13 — 23:

Եւ եկեալ Յիսուս 'ի կողմանս Փիլիպպեայ Կեսարեայն, հարցանէր ցաշակերտսն և ասէր. զո՞ ոք ասեն զինէն մարդիկն՝ թէ իցէ Որդի մարդոյ: Եւ նոքա ասեն. ոմն զՅովհաննէս Մկրտիչ. և այլք զԵղիայ՝ և կէսք զԵրեմիայ, կամ զմի ոք 'ի մարգարէից: Ասէ ցնոսա. իսկ դուք զո՞ ասէք զինէն թէ իցեմ: Պատասխանի ետ Սիմօն Պետրոս, և ասէ ցնա. դու ես Քրիստոսն Որդի Աստուծոյ կենդանւոյ: Պատասխանի ետ Յիսուս, և ասէ ցնա. երանի՛ քեզ Սի՛մօն որդի Յօնանու. զի մարմին և արիւն ո՛չ յայտնեաց քեզ, այլ Հայր իմ՝ որ յերկինս է: Եւ ես քեզ ասեմ. զի դու ես վէմ. և 'ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ. և դրունք դժոխոց զնա մի՛ յաղթահարեսցեն: Եւ տաց քեզ զփականս արքայութեան երկնից. և զոր միանգամ կապեսցես յերկրի, եղիցի կապեալ յերկինս. և զոր արձակեսցես յերկրի, եղիցի արձակեալ յերկինս:

Յայնժամ սաստեաց աշակերտացն, զի մի՛ ումեք ասիցեն՝ թէ նա է Քրիստոսն: Յայնմհետէ սկսաւ Յիսուս ցուցանել աշակերտացն իւրոց՝ թէ պարտ է նմա երթալ յԵրուսաղէմ, և բազում չարչարանս չարչարիլ 'ի քահանայապետիցն՝ և 'ի ծերոց ժողովրդեանն՝ և սպանանիլ, և յերիր աւուր յառնել: Եւ առեալ զնա մեկուսի Պետրոսի, սկսաւ կագել ընդ նմա և ասել. քա՛ւ լիցի քեզ Տէր. մի՛ եղիցի քեզ այդ: Եւ նա դարձեալ 'ի Պետրոս՝ ասէ. ե՛րթ յետս իմ սատանայ. գայթակղութիւն իմ ես. զի ո՛չ խորհիս դու զԱստուծոյսն, այլ զմարդկան:

24 — 27:

Յայնժամ Յիսուս ասէ ցաշակերտսն. եթէ ոք կամի զկնի իմ գալ՝ ուրասցի զանձն. և առցէ զխաչ իւր, և եկեսցէ զկնի իմ: Զի որ կամիցի զանձն իւր կեցուցանել՝ կորուսցէ զնա. և որ կորուսցէ զանձն իւր վասն իմ, գտցէ զնա: Զի՞նչ օգտիցի մարդ՝ թէ զաշխարհս ամենայն շահեսցի, և զանձն իւր տուժեսցէ. կամ զի՞նչ տացէ մարդ փրկանս ընդ անձին իւրոյ: Զի գալոց է որդի մարդոյ փառօք հօր իւրոյ՝ հանդերձ հրեշտակօք իւրովք. և յայնժամ հատուսցէ իւրաքանչիւր ըստ գործս իւր:

17. ԽՐԱՏՔ ՆՈՐԱ ՎԱՍՆ ՀԵԶՈՒԹԵԱՆ, ՎԱՍՆ ԶԳՈՒՇՈՒԹԵԱՆ Ի ԳԱՅԹԱԿՂՈՒԹԵԱՆՑ, ՎԱՍՆ ՆԵՐՈՂՈՒԹԵԱՆ ԱՌ ՄԵՂՈՒՑԵԱԼՍ ԵՒ ՎԱՍՆ ԶՕՐՈՒԹԵԱՆ ԱՂՕԹԻՑ:

Մատ. 18. 1 — 5:

Յայնմ աւուր մատեան աշակերտքն առ Յիսուս, և ասեն. ո՞վ իցէ 'ի մէնջ մեծ յարքայութեան երկնից: Եւ կոչեաց առ ինքն Յիսուս զմանուկ մի. կացոյց զնա 'ի մէջ նոցա: Եւ ասէ. ամէն ասեմ ձեզ, եթէ ո՛չ դարձջիք, և եղիջիք իբրև զմանկտի, ո՛չ մտանիցէք յարքայութիւն երկնից: Արդ՝ որ խոնարհեցուցանէ զանձն իբրև զմանուկս զայս, նա՛ է մեծ յարքայութեան երկնից: Եւ որ ոք ընկալցի զմանուկ մի այսպիսի յանուն իմ, զիս ընդունի:

6 — 11:

Եւ որ ոք գայթակղեցուսցէ զմի 'ի փոքրկանցս յայսցանէ յիս հաւատացելոց՝ լաւ է նմա եթէ կախիցի երկան իշոյ ընդ պարանոց նորա, և ընկղմիցի 'ի խորս ծովու: Վա՜յ աշխարհի 'ի գայթակղութեանց. հարկ է գալ գայ-

թակղութեանց. բայց վայ մարդոյն այնմիկ՝ յոյր ձեռն գայցէ գայթակղութիւն: Եթէ ձեռն քո կամ ոտն գայթակղեցուցանէ զքեզ, հատ զնա՛ և ընկեա՛ 'ի քէն. լաւ իցէ քեզ միաձեռանի կամ կաղ մտանել 'ի կեանս. քան թէ երկուս ձեռս և երկուս ոտս ունիլ, և անկանիլ 'ի հուրըն յաւիտենական: Եւ եթէ ակն քո գայթակղեցուցանէ զքեզ, խլեա՛ զնա և ընկեա՛ 'ի քէն. լաւ իցէ քեզ միականի մտանել 'ի կեանս. քան երկուս աչս ունիլ՝ և անկանիլ 'ի գեհեն հրոյն: Զգոյշ լերուք՝ մի՛ արհամարհիցէք զմի 'ի փոքրկանցս յայսցանէ. ասեմ ձեզ, զի հրեշտակք նոցա յերկինս հանապազ տեսանեն զերեսս Հօր իմոյ՝ որ յերկինս է: Զի եկն որդի մարդոյ կեցուցանել զկորուսեալսն:

15 — 18:

Եթէ մեղիցէ քեզ եղբայր քո, ե՛րթ յանդիմանեա՛ զնա՝ յորժամ դու և նա միայն իցէք. եթէ լուիցէ քեզ, շահեցար զեղբայր քո: Ապա թէ ոչ լուիցէ քեզ, ա՛ռ ընդ քեզ մի ևս՝ կամ երկուս, զի 'ի բերանոյ երկուց և երից վկայից՝ հաստատեսցի ամենայն բան: Իսկ եթէ նոցա ոչ լուիցէ՝ ասասջիր յեկեղեցւոջ. ապա եթէ և եկեղեցւոյն ոչ լուիցէ՝ եղիցի քեզ իբրև հեթանոսն և մաքսաւոր: Ամէն ասեմ ձեզ. զոր կապիցէք յերկրի, եղիցի կապեալ յերկինս. և զոր արձակիցէք յերկրի, եղիցի արձակեալ յերկինս:

19 — 20:

Դարձեալ ասեմ ձեզ. եթէ երկու 'ի ձէնջ միաբանիցին յերկրի վասն ամենայն իրաց. զի՞նչ և խնդրեսցին, եղիցի նոցա 'ի Հօրէ իմմէ՝ որ յերկինս է: Զի ուր իցեն երկու կամ երեք ժողովեալ յանուն իմ, անդ եմ ես 'ի մէջ նոցա:

*

21 — 22։

Յայնժամ մատեաւ առ նա Պետրոս, և ասէ․ Տէ՛ր, քանի՞ցս անգամ եթէ մեղիցէ ինձ եղբայր իմ, և թողից նմա, մինչև ցեօ՞թն անգամ։ Ասէ ցնա Յիսուս․ ո՛չ ասեմ քեզ, թէ մինչև ցեօթն անգամ, այլ մինչև ցեօթանասնեկին եօթն։

18․ ՉԷ ՊԱՐՏ ՁԱՆՁՐԱՆԱԼ ՅԱՂՕԹԻՑ։

Ղուկ․ 11․ 5 — 13։

Եւ ասէ ցնոսա․ ո՞վ է 'ի ձէնջ որոյ իցէ բարեկամ, և երթայցէ առ նա 'ի մէջ գիշերի, և ասիցէ ցնա․ բա՛րեկամ, տո՛ւր ինձ փոխ երիս նկանակս։ Զի բարեկամ իմ եկն առ իս յուղւոյ․ և ո՛չինչ ունիմ դնել առաջի նորա։ Եւ 'ի ներքուստ տայցէ պատասխանի և ասիցէ․ մի՛ աշխատ առներ զիս, զի դուրքդ փակեալ են․ և մանկունքս ընդ իմ և կան յանկողնի, ո՛չ կարեմ յառնել և տալ քեզ։ Եթէ նա ստիպեսցէ բաղխելով՝ ասեմ ձեզ․ եթէ ո՛չ յարուցեալ տայցէ նմա վասն բարեկամութեան, սակայն վասն ժտութեանն յարուցեալ տայցէ նմա՝ զինչ և պիտոյ իցէ։ Եւ ես ասեմ ձեզ․ խնդրեցէ՛ք, և տացի ձեզ․ հայցեցէ՛ք, և գտջիք․ բաղխեցէ՛ք, և բացցի ձեզ։ Զի ամենայն՝ որ խնդրէ, առնու․ և որ հայցէ, գտանէ․ և որ բաղխէ, բացցի նմա։ Յո՞ ոք 'ի ձէնջ հայր՝ խնդրիցէ որդի իւր ձուկն, միթէ փոխանակ ձկան օ՞ձ տայցէ նմա։ Եւ կամ խնդրիցէ ձու՝ միթէ կարի՞ճ տայցէ նմա։ Իսկ եթէ դուք՝ որք չարքդ էք, գիտէք պարգևս բարիս տալ որդւոց ձերոց․ ո՞րչափ ևս առաւել հայրն ձեր յերկնից տացէ բարիս այնոցիկ՝ որք խնդրեն 'ի նմանէ։

19. ՊԱՐՏԱԻՈՐՈՒԹԻՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՅ ԶՊԱՏՈՒԻՐԱՆՍ, ՎՏԱՆԳ ՀԱՐՍՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԱՐՁ ՎԱՍՆ ՀՐԱԺԱՐԵԼՈՅ ՅԱՇԽԱՐՀԷ:

Մատ. 19. 16 — 19:

Եւ ահա մատուցեալ ոմն ասէ. վարդապետ բարի, զի՞նչ բարի գործեցից, զի ընդունիցիմ զկեանս յաւիտենականս: Եւ նա ասէ ցնա. զի՞ հարցանես զիս զբարւոյ. մի է բարի, եթէ կամիս 'ի կեանս յաւիտենականս մտանել, պահեա զպատուիրանսն: Ասէ ցնա. զո՞րս: Ասէ ցնա Յիսուս. զմի՛ սպանաներն. և մի՛ շնար. և մի՛ սուտ վկայեր: Պատուեա զհայր քո և զմայր. և սիրեսցես զընկեր քո՝ իբրև զանձըն քո:

20 — 26:

Ասէ ցնա պատանին. զայդ ամենայն պահեցի 'ի մանկութենէ իմմէ. արդ ի՞ւ իւիք պակաս իցեմ: Ասէ ցնա Յիսուս. եթէ կամիս կատարեալ լինել. ե՛րթ վաճառեա զինչս քո՝ և տո՛ւր աղքատաց. և ունիցիս գանձս յերկինս. և ե՛կ զկնի իմ: Իբրև լուաւ պատանին զբանն, գնաց տրտմեալ. զի ունէր ստացուածս բազումս: Ասէ Յիսուս ցաշակերտսն. ամէն ասեմ ձեզ. զի դժուարաւ մտցէ մեծատուն յարքայութիւն երկնից: Դարձեալ ասեմ ձեզ. դիւրին է մալխոյ մտանել ընդ ծակ ասղան, քան մեծատան յարքայութիւն Աստուծոյ մտանել: Իբրև լուան աշակերտքն՝ զարմացան յոյժ, և ասեն. իսկ ո՞ կարիցէ ապրել: Հայեցաւ 'ի նոսա Յիսուս, և ասէ. առ 'ի մարդկանէ այդ անկար է. այլ առ յԱստուծոյ ամենայն ինչ զօրաւոր:

27 — 30:

Յայնժամ պատասխանի ետ Պետրոս, և ասէ ցնա. աւասիկ մեք թողաք զամենայն՝ և եկաք զկնի քո. արդ զի՞նչ

մեզ։ Ասէ ցնոսա Յիսուս. ամէն ասեմ ձեզ. զի դուք՝ որք եկիք զկնի իմ, 'ի միւսանգամ գալստեան, յորժամ նստցի Որդի մարդոյ յաթոռ փառաց իւրոց, նստջիք և դուք յերկոտասան աթոռ դատել զերկոտասան ազգս Իսրայէլի։ Եւ ամենայն որ ոք եթող զտուն, կամ զեղբարս՝ կամ զքորս՝ կամ զհայր. կամ զմայր՝ կամ զկին՝ կամ զորդիս՝ կամ զագարակս վասն անուան իմոյ. հարիւրապատիկ առցէ՝ և զկեանսն յաւիտենականսն ժառանգեսցէ։ Բազումք եղիցին առաջինք յետինք՝ և յետինք առաջինք։

20. ԳԼԽԱՒՈՐՔ Ի ՊԱՏԳԱՄԱՑ։

Մատ. 21. 25 — 40։

Եւ եհարց մի ոմն 'ի նոցանէ զնա փորձելով և ասէ։ Վարդապետ, ո՞ր պատուիրան է մեծ յօրէնս։ Եւ Յիսուս ասէ ցնա. սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ՝ և յամենայն անձնէ քումմէ՝ և յամենայն մտաց քոց։ Այս է մեծն և առաջին պատուիրան։ Երկրորդն նման սմին. սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո։ Յայս երկուս պատուիրանս ամենայն օրէնք և մարգարէք կախեալ կան.

21. ԴԱՐՁ ԶԱՔԷՈՍԻ։

Ղուկ. 19. 1 — 10։

Եւ մտեալ շրջէր ընդ Երիքով։ Եւ ահա այր մի՝ անուն կոչեցեալ Զաքէոս. և նա էր մաքսապետ. և ինքն մեծատուն։ Եւ խնդրէր տեսանել՝ թէ ո՞վ իցէ Յիսուս. և ո՛չ կարէր 'ի բազմութենէն, զի կարճ էր հասակաւ։ Եւ ընթացեալ յառաջ՝ ել 'ի ժանտաթզենին՝ զի տեսանիցէ զնա. քանզի ընդ այն իսկ անցանելոց էր։ Իբրև եկն 'ի

տեղին. հայեցաւ 'ի վեր Յիսուս, և ասէ ցնա. Զա՛քէ՝ փութա՛, է՛ջ այտի. զի այսօր 'ի տան քում արժան է ինձ ագանել։ Փութացաւ, և էջ, և ընկալաւ զնա ուրախութեամբ։ Իբրև տեսին ամենեքեան. տրտնջէին, և ասէին՝ թէ առ առն մեղաւորի եմուտ լուծանել։ Եկն՝ եկաց Զաքէոս՝ և ասէ ցՏէր. Տէ՛ր, ահա՛ զկէս ընչից իմոց տաց աղքատաց. և եթէ զոք զրկեցի, հատուցից չորեքկին։ Եւ ասէ ցնա Յիսուս. այսօր եղև փրկութիւն տանս այսմիկ, քանզի և սա որդի Աբրահամու էր։ Զի եկն որդի մարդոյ խնդրել և կեցուցանել զկորուսեալն։

22. ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՀՊԱՏԱԿԱՑ։

Մարկ. 12. 13 — 18։

Եւ առաքեն առ նա զոմանս 'ի փարիսեցւոց անտի՝ և 'ի Հերովդիանոսաց, զի զնա որսասցեն բանիւ. և նոքա եկեալ հարցանէին զնա նենգութեամբ, և ասէին. Վա՛րդապետ՝ գիտեմք զի ճշմարիտ ես, և ոչինչ փոյթ է քեզ զումեքէ, զի ո՛չ հայիս յերեսս մարդկան. այլ ճշմարտութեամբ զճանապարհն Աստուծոյ ուսուցանես. արդ՝ ասա՛ մեզ, արժա՞ն է հարկս տալ կայսեր, թէ ո՛չ. տացո՞ւք, եթէ ո՛չ տացուք։ Եւ Յիսուս գիտաց զկեղծաւորութիւն նոցա. ասէ ցնոսա. զի՞ փորձէք զիս կե՛ղծաւորք. բերէ՛ք ինձ դահեկան մի՝ զի տեսից։ Եւ նոքա բերին։ Եւ ասէ ցնոսա. ո՞յր է պատկերս այս կամ գիր. և նոքա ասեն ցնա. կայսեր։ Պատասխանի ետ Յիսուս, և ասէ ցնոսա. երթա՛յք, տո՛ւք զկայսերն՝ կայսեր, և զԱստուծոյն՝ Աստուծոյ. և զարմացան ընդ նա։

23. ԸՆԾԱՅԱԲԵՐՈՒԹԻՒՆ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ, ԳՆԱՀԱՏԻ ԸՍՏ ՋԵՐ-ՄԵՌԱՆԴՈՒԹԵԱՆՆ։

Մարկ. 12. 41 — 44։

Կայր Յիսուս ընդդէմ գանձանակին, տեսանէր թէ զիարդ ժողովուրդն արկանէր պղինձ 'ի գանձանակն. և բազում մեծատունք արկին բազում ինչ։ Եկն այրի մի, և էարկ երկուս լումայս, որ է նաքարակիտ մի։ Եւ կոչեալ առ ինքն զաշակերտսն, ասէ ցնոսա. ամէն ասեմ ձեզ. զի այրին այն տառապեալ՝ շատ էարկ քան զամենեսեան 'ի գանձանակն։ քանզի ամենեքին յաւելորդաց իւրեանց արկին, այլ նա 'ի չքաւորութենէ իւրմէ, զամենայն ինչ զոր ունէր՝ էարկ գոյիւ չափ զկեանս իւր։

24. ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ ԶՅԱՐՈՒԹԵՆԷ ՄԵՌԵԼՈՑ։

Մատ. 22. 23 — 33։

Յայնմ աւուր մատեան առ Նա Սադուկեցիքն, որք ասէին՝ թէ չի՛ք յարութիւն։ Հարցին ցՆա, և ասեն. վա՛րդապետ, Մովսէս ասաց՝ եթէ ոք մեռցի անորդի, արասցէ զկին նորա եղբայր իւր. և յարուսցէ զաւակ եղբօր իւրում։ Նոյնպէս և երկրորդն, և երրորդն, մինչև ցեօթներորդն։ Յետ ամենեցուն մեռաւ և կինն։ Արդ՝ 'ի յարութեան ո՞յր յեօթանցն եղիցի նա կին։ Պատասխանի ետ նոցա Յիսուս, և ասէ. մոլորեալք՝ ոչ գիտէք զգիրս և ոչ զզօրութիւն Աստուծոյ։ Զի 'ի յարութեան ոչ կանայս առնեն՝ և ոչ արանց լինին. այլ են իբրև զհրեշտակս յերկինս։ Բայց վասն յարութեան մեռելոց չիցէ՞ ընթերցեալ ձեր զասացեալսն ձեզ յԱստուծոյ։ Ես եմ Աստուած Աբրահամու՝ Աստուած Իսահակայ և Աստուած Յակոբայ. և չէ՛ Աստուած՝ Աստուած մեռելոց, այլ կենդանեաց։ Իբրև լուան ժողովուրդքն, զարմանային ընդ վարդապետութիւն Նորա։

25. ԱՆԱԿՆԿԱԼ ՄԻՒՍԱՆԳԱՄ ԳԱԼՈՒՍՏ ՔՐԻՍՏՈՍԻ:

Մատ. 24. 27 — 31:

Զի որպէս փայլակն՝ որ ելանէ յարևելից և երևի մինչև յարևմուտս, այնպէս եղիցի գալուստն Որդւոյ մարդոյ: Զի ուր գէշն իցէ, անդ ժողովեսցին արծուիք: Վաղվաղակի յետ նեղութեան աւուրցն այնոցիկ, արեգակն խաւարեսցի, և լուսին ոչ տայցէ զլոյս իւր. և աստեղք անկցին յերկնից, և զօրութիւնք երկնից շարժեսցին: Եւ ապա երևեսցի նշան Որդւոյ մարդոյ յերկինս. և յայնժամ կոծեսցին ամենայն ազգք երկրի. և տեսցեն զՈրդի մարդոյ եկեալ ՚ի վերայ ամպոց երկնից զօրութեամբ և փառօք բազմօք: Եւ առաքեսցէ զհրեշտակս իւր փողով մեծաւ. և ժողովեսցեն զընտրեալս նորա ՚ի չորից հողմոց, ՚ի ծագաց երկնից մինչև ՚ի ծագս նոցա:

36 — 44:

Բայց վասն աւուրն այնորիկ և ժամու, ոչ ոք գիտէ. ոչ հրեշտակք երկնից՝ և ոչ Որդի, բայց միայն Հայր: Այլ որպէս աւուրքն Նոյի. նոյնպէս եղիցի գալուստն Որդւոյ մարդոյ: Զի որպէս էին յաւուրսն՝ որք յառաջ քան ըզջրհեղեղն. ուտէին և ըմպէին, կանայս առնէին և արանց լինէին, մինչև յօրն՝ յորում եմուտ Նոյ ՚ի տապանն: Եւ ոչ գիտացին, մինչև եկն ջրհեղեղն՝ և եբարձ զամենեսին. այնպէս եղիցի և գալուստն Որդւոյ մարդոյ: Յայնժամ թէ իցեն երկու յագարակի, մին առցի՝ և միւսն թողցի: Եւ եթէ երկու աղայցեն ՚ի մի երկանս, մին առցի՝ և միւսն թողցի: Արթուն կացէք՝ զի ոչ գիտէք յորում ժամու Տէրն ձեր գայ: Զայն գիտասջիք. եթէ գիտէր տանուտէրն յորում պահու գող գայ, հսկէր, և ոչ տայրական հատանել

զտան իւրոյ: Վասն այսորիկ և դուք եղերուք պատրաստք, զի յորում ժամու ոչ ակն ունիցիք՝ գայ Որդի մարդոյ:

Ղուկ. 21. 34 — 36:

Զգոյշ լերուք անձանց, գուցէ՝ ծանրանայցեն սիրտք ձեր շուայտութեամբ և արբեցութեամբ՝ և հոգօք աշխարհականօք. և յանկարծակի հասանիցի 'ի վերայ ձեր օրն այն: Զի իբրև զորոգայթ հասանիցի 'ի վերայ ամենեցուն, որք բնակեալ են ընդ ամենայն երեսս երկրի: Արթուն կացէք այսուհետև. յամենայն ժամ աղօթս արարէք. զի արժանի լինիցիք զերծանել յայնմ յամենայնէ՝ որ լինելոց է. և կալ առաջի Որդւոյ մարդոյ:

26. ՎԱՍՆ ԱՀԵՂ ԴԱՏԱՍՏԱՆԻՆ:

Մատ. 25. 31—46:

Եւ յորժամ եկեսցէ Որդի մարդոյ փառօք իւրովք և ամենայն հրեշտակք ընդ նմա. յայնժամ նստցի յաթոռ փառաց իւրոց: Եւ ժողովեսցին առաջի նորա ամենայն ազգք. և մեկնեսցէ զնոսա 'ի միմեանց, որպէս հովիւ զի մեկնեսցէ զօդիս յայծեաց: Եւ կացուսցէ զօդիսն ընդ աջմէ իւրմէ՝ և զայծիսն 'ի ձախմէ իւրմէ: Յայնժամ ասասցէ թագաւորն ցայնոսիկ՝ որք ընդ աջմէն իցեն. եկա՛յք օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէ՛ք զպատրաստեալ ձեզ արքայութիւնն 'ի սկզբանէ աշխարհի: Զի քաղցեայ՝ և ետուք ինձ ուտել. ծարաւեցայ՝ և արբուցիք ինձ. օտար էի՝ և ժողովեցիք զիս: Մերկ էի և զգեցուցիք զիս. հիւանդ էի՝ և տեսիք զիս. 'ի բանտի էի՝ և եկիք առ իս: Յայնժամ պատասխանի տացեն նմա արդարքն՝ և ասասցեն. Տէ՛ր՝ ե՞րբ տեսաք զքեզ քաղցեալ՝ և կերակրեցաք. կամ ծարաւի՝ և արբուցաք: Ե՞րբ տեսաք զքեզ օտար՝ և ժողովե-

ցաք. կամ մերկ՝ և զգեցուցաք։ Ե՞րբ տեսաք զքեզ հիւանդ, կամ 'ի բանտի՝ և եկաք առ քեզ։ Պատասխանի տայցէ Թագաւորն և ասասցէ ցնոսա. ամէն ասեմ ձեզ. որովհետև արարէք միում յեղբարցս այսոցիկ փոքրկանց՝ ինձ արարէք։ Յայնժամ ասասցէ և ցայնոսիկ՝ որք ընդ ահեկէն իցեն. երթայք յինէն անիծեալք 'ի հուրն յաւիտենականն, որ պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նորա։ Զի քաղցեայ՝ և ոչ ետուք ինձ ուտել. ծարաւեցայ՝ և ոչ արբուցէք զիս։ Օտար էի, և ոչ ժողովեցէք զիս. մերկ էի, և ոչ զգեցուցէք զիս. հիւանդ էի և 'ի բանտի, և ոչ տեսէք զիս։ Յայնժամ պատասխանի տացեն և նոքա, և ասասցեն. Տէր, ե՞րբ տեսաք զքեզ քաղցեալ կամ ծարաւի, կամ օտար, կամ մերկ, կամ հիւանդ, կամ 'ի բանտի, և ոչ պաշտեցաք զքեզ։ Յայնժամ պատասխանի տացէ նոցա, և ասասցէ. ամէն ասեմ ձեզ. որովհետև ոչ արարէք միում 'ի փոքրկանցս յայսցանէ, և ոչ ինձ արարէք։ Եւ երթիցեն նոքա 'ի տանջանսն յաւիտենականս. և արդարքն 'ի կեանսն յաւիտենականս։

27. ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ ՅԱՌԱՋ ՔԱՆ ԶՉԱՐՉԱՐԱՆՍ ԻՒՐ Ի ՎԵՐՋՆՈՒՄ ՆՈՒԱԳԻ ԽՕՍԱԿՑԻ ԸՆԴ ԱՌԱՔԵԼՈՑՆ, ԵՒ ԱՂՕԹՍ ԱՌՆԷ ՎԱՍՆ ԵԿԵՂԵՑԻՈՑ ԻՒՐՈՑ։

Յովհաննու 14. 1 — 4։

Մի՛ խռովեսցին սիրտք ձեր, այլ հաւատացէք յԱստուած, և յիս հաւատացէք։ Ի տան Հօր իմոյ օթևանք բազում են, ապա թէ ոչ՝ ասացեալ էր իմ ձեզ, եթէ երթամ և պատրաստեմ ձեզ տեղի։ Եւ եթէ երթամ, և պատրաստեմ ձեզ տեղի, դարձեալ գամ, և առնում զձեզ առ իս. զի ուր եսն իցեմ, և դուք ընդ իս իցէք։ Եւ ուր երթամն գիտիցէք, և զճանապարհն գիտիցէք։

5 — 7։

Ասէ Թովմաս. Տէ՛ր՝ ոչ գիտեմք յո՛վ երթաս. և զիա՞րդ զճանապարհն կարասցուք գիտել։ Ասէ ցնա Յիսուս. ես եմ ճանապարհ, և ճշմարտութիւն և կեանք. ոչ ոք գայ առ Հայր՝ եթէ ոչ ինև։ Եթէ զիս գիտէիք, ապա և զՀայրն իմ գիտէիք. և այսուհետև գիտասջիք զնա, և տեսիք զնա։

8 — 31։

Ասէ ցնա Փիլիպպոս. Տէ՛ր՝ ցո՛յց մեզ զՀայր, և շա՛տ է մեզ։ Ասէ ցնա Յիսուս. այսչափ ժամանակս ընդ ձեզ եմ, և ո՛չ ծանեար զիս Փի՛լիպպէ. որ ետեսն զիս՝ ետես ըզ-Հայրն. և դու զիա՞րդ ասես, եթէ ցո՛յց մեզ զՀայր։ Ո՞չ հաւատաս, եթէ ես 'ի Հայր՝ և Հայր յիս է. զբանս՝ զորս ես խօսիմ ընդ ձեզ, ո՛չ եթէ յանձնէ ինչ խօսիմ. այլ Հայրն՝ որ յիս բնակեալ է, նա գործէ զգործսն։ Հաւատա՛յք ինձ, եթէ ես 'ի Հայր՝ և Հայր յիս է։ Ապա թէ ոչ՝ գոնէ վասն գործոցն հաւատայէ՛ք ինձ. ամէն ամէն ասեմ ձեզ. թէ որ հաւատայն յիս, զգործսն զորս ես գործեմ, և նա գործեսցէ. և մեծամեծս ևս քան զնոյնս գործեսցէ. զի ես առ Հայր երթամ։ Եւ զոր ինչ խնդրիցէք յանուն իմ՝ արարից զայն, զի փառաւորեսցի Հայր յՈրդի։ Եթէ սիրէք զիս, զպատուիրանս իմ պահեսջիք։ Եւ ես աղաչեցից զՀայր. և այլ մխիթարիչ տացէ ձեզ, զի ընդ ձեզ բնակեսցի 'ի յաւիտեան։ զՀոգին ճշմարտութեան՝ զոր աշխարհս ոչ կարէ ընդունիլ, զի ոչ տեսանէ զնա՝ և ոչ ճանաչէ զնա. բայց դուք ճանաչէք զնա, զի առ ձեզ բնակեսցի՝ և ընդ ձեզ եղիցի։ Ոչ թողից զձեզ որբս. գամ առ ձեզ։ Փոքր միւս ևս, և աշխարհս ո՛չ ևս տեսանէ զիս. բայց դուք տեսանիցէք զիս, զի ես կենդանի եմ, և դուք կենդանի լինե-

լոց էք։ Յայնմ աւուր գիտասջիք դուք, զի ես 'ի Հօր իմում, և դուք յիս՝ և ես 'ի ձեզ։ Որ ունի զպատուիրանս իմ՝ և պահէ զնոսա, նա է որ սիրէ զիս. և որ սիրէ զիս, սիրեսցի 'ի Հօրէ իմմէ. և ես սիրեցից զնա, և երևեցուցից նմա զիս։ Ասէ ցնա Յուդայ՝ ոչ Իսկարիովտացին. Տէ՛ր, զի՞ եղև զի մեզ յայտնելոց ես զքեզ՝ և ոչ աշխարհի։ Պատասխանի ետ Յիսուս, և ասէ ցնա. եթէ ոք սիրէ զիս՝ զբանն իմ պահեսցէ. և Հայր իմ սիրեսցէ զնա. և առ նա եկեսցուք, և օթևանս առ նմա արասցուք։ Եւ որ ոչն սիրէ զիս՝ զբանն իմ ո՛չ պահէ. և բանն իմ զոր լսէք՝ ոչ է իմ, այլ Հօրն՝ որ առաքեացն զիս։ Զայս խօսեցայ ընդ ձեզ, մինչ առ ձեզս եմ։ Իսկ մխիթարիչն Հոգին սուրբ՝ զոր առաքեսցէ Հայր յանուն իմ, նա ուսուսցէ ձեզ զամենայն. և յիշեցուսցէ զամենայն՝ զոր ինչ ասացի ձեզ։ Զխաղաղութիւն թողում ձեզ. զխաղաղութիւն զիմ տամ ձեզ. ոչ որպէս աշխարհս տայ՝ տամ ես ձեզ. մի՛ խռովեսցին սիրտք ձեր, և մի՛ զանգիտեսցեն։ Լուայք՝ զի ասացի ես ձեզ՝ թէ երթամ և գամ առ ձեզ. եթէ սիրէիք զիս՝ ապա ուրախ լեալ էր ձեր՝ թէ ես առ Հայր երթամ. զի Հայր իմ մեծ է քան զիս։ Եւ այժմ ասացի ձեզ մինչչև եղեալ, զի յորժամ լինիցի հաւատասջիք։ Ո՛չ ես այլ շատ խօսեցայց ընդ ձեզ, գայ իշխան աշխարհիս այսորիկ՝ և յիս ինչ ո՛չ գտանէ։ Այլ զի ծանիցէ աշխարհ, եթէ սիրեմ զՀայր. և որպէս պատուիրեաց ինձ Հայր՝ այնպէս առնեմ. օ՛ն արիք, գնասցուք աստի։

15։

Ես եմ որթն ճշմարիտ. և Հայր իմ մշակ է։ Ամենայն ուռ՝ որ յիս է, և ո՛չ բերէ զպտուղ՝ կտրէ զնա. և ամենայն որ բերէ զպտուղ՝ սրբէ զնա, զի առաւել ևս պտղաբեր լի-

ցի։ Դուք արդէն իսկ սուրբ էք վասն բանին՝ զոր խօսեցայ ընդ ձեզ։ Կացէ՛ք յիս՝ և ես 'ի ձեզ. որպէս ուռն ո՛չ կարէ զպտուղ բերել յանձնէ իւրմէ, եթէ ո՛չ իցէ հաստատեալ յորթն. նոյնպէս և դուք՝ եթէ ո՛չ յիս հաստատեալ իցէք։ Ես եմ որթ՝ և դուք ուռ. որ հաստատեալ է յիս՝ և ես 'ի նա, նա բերէ զպտուղ յոյժ. զի առանց իմ ոչինչ կարէք առնել։ Եթէ ոք ո՛չ է հաստատեալ յիս, ել նա արտաքս իբրև զուռն՝ և ցամաքեցաւ. և ժողովեն զնա՝ և 'ի հուր արկանեն՝ և այրի։ Եթէ կայցէք յիս՝ և բանք իմ 'ի ձեզ կայցեն. զոր ինչ կամիցիք, խնդրեսջիք. և լինիցի ձեզ։ Ցայսմիկ փառաւորեցաւ Հայր իմ, զի պտուղ յոյժ բերիցէք. և եղիջիք իմ աշակերտք։ Որպէս սիրեաց զիս Հայր, և ես սիրեցի զձեզ. հաստատո՛ւն կացէք 'ի սէր իմ։ Եթէ պահիցէք զպատուիրանս իմ, կացջիք 'ի սէր իմ. որպէս և ես զպատուիրանս Հօր իմոյ պահեցի, և կա՛մ 'ի սէր նորա։ Զայս խօսեցայ ընդ ձեզ. զի ուրախութիւնն իմ 'ի ձեզ իցէ. և ձեր ուրախութիւն լցեալ եղիցի։ Այս է պատուէր իմ. զի սիրեսջիք զմիմեանս, որպէս և ես զձեզ սիրեցի։ Մեծ ևս քան զայս սէր՝ ո՛չ ոք ունի, եթէ զանձն իւր դիցէ 'ի վերայ բարեկամաց իւրոց։ Դուք բարեկամք էք իմ. եթէ առնիցէք՝ զոր ես պատուիրեմ ձեզ։ Ո՛չ ևս կոչեմ զձեզ ծառայս, զի ծառայն ո՛չ գիտէ՝ զի՞նչ գործէ Տէր նորա. այլ զձեզ կոչեցի բարեկամս, զի զամենայն՝ զոր լուայ 'ի Հօրէ իմմէ, ծանուցի ձեզ։ Ո՛չ եթէ դուք ընտրեցիք զիս. այլ ես ընտրեցի զձեզ, և եդի զձեզ. զի դուք երթայցէք՝ և պտղաբերք լինիցիք. և պտուղն ձեր կայցէ. և զոր ինչ խնդրիցէք 'ի Հօրէ իմմէ յանուն իմ, տացէ ձեզ։ Զայս պատուիրեմ, զի սիրեսջիք զմիմեանս։ Եթէ աշխարհ զձեզ ատեայ. գիտասջիք զի նախ զիս ատեաց։ Եթէ յաշխարհէ աստի էիք՝ աշխարհ զիւրն սիրէր արդեօք. բայց

զի չէ՛ք յաշխարհէ, այլ ես ընտրեցի զձեզ յաշխարհէ, վասն այսորիկ ատեայ զձեզ աշխարհ: Յիշեցէ՛ք զբանն՝ զոր ասացի ձեզ. եթէ ո՛չ է ծառայ մեծ՝ քան զտէր իւր: Եթէ զիս հալածեցին, ապա և զձեզ հալածեսցեն. եթէ զբանն իմ պահեցին, ապա և զձերն պահեսցեն: Այլ զնոյնս արասցեն ընդ ձեզ վասն անուան իմոյ, զի ո՛չ գիտեն զայն՝ որ առաքեացն զիս: Իմ եթէ չէ՛ր եկեալ և խօսեցեալ ընդ նոսա, մեղ ինչ ո՛չ գոյր նոցա. բայց արդ չի՛ք պատճառ վասն մեղաց իւրեանց: Որ զիս ատեայ, և զհայրն իմ ատեայ: Եթէ զգործսն չէ՛ր գործեալ ՚ի նոսա՝ զոր ո՛չ այլ ոք գործեաց, մեղ ինչ ո՛չ գոյր նոցա. բայց արդ տեսին, և ատեցին. և զիս և զհայր իմ: Այլ զի լցցի բանն, որ յօրէնս նոցա գրեալ է. թէ ատեցին զիս տարապարտուց: Բայց յորժամ եկեսցէ մխիթարիչն՝ զոր ես առաքեցից ձեզ ՚ի Հօրէ. զհոգին ճշմարտութեան որ ՚ի Հօրէ ելանէ, նա վկայեսցէ վասն իմ: Եւ դուք վկայէք, զի ՚ի սկզբանէ ընդ իս էք:

16. 1 — 28:

Զայս խօսեցայ ընդ ձեզ՝ զի մի՛ գայթակղեսջիք: Ի ժողովրդոց իւրեանց հանիցեն զձեզ. այլ եկեսցէ ժամանակ՝ զի ամենայն որ սպանանիցէ զձեզ, համարիցի պաշտօն մատուցանել Աստուծոյ: Եւ զայն արասցեն ընդ ձեզ. քանզի ո՛չ ծանեան զհայր՝ և ո՛չ զիս: Այլ և զայս խօսեցայ ընդ ձեզ՝ զի յորժամ եկեսցէ ժամանակ, յիշեցէ՛ք թէ ես ասացի ձեզ: Զայս ՚ի սկզբանէ ո՛չ ասացի ձեզ. քանզի ընդ ձեզ էի. բայց արդ երթամ ես առ առաքիչն իմ. և ո՛չ ոք ՚ի ձէնջ հարցանիցէ ցիս. թէ յո՞ երթաս: Այլ զի զայս խօսեցայ ընդ ձեզ. տրտմութիւն ելից զսիրտըս ձեր: Այլ ես զճշմարիտն ասեմ ձեզ. լաւ է ձեզ,

եթէ ես երթամ․ զի եթէ ես ոչ երթայց, մխիթարիչն ոչ եկեսցէ առ ձեզ․ ապա եթէ երթամ, առաքեցից զնա առ ձեզ․ Եւ նա եկեալ յանդիմանեսցէ զաշխարհ վասն մեղաց՝ և վասն արդարութեան՝ և վասն դատաստանի։ Վասն մեղաց՝ զի ոչ հաւատան յիս։ Վասն արդարութեան՝ զի առ Հայր իմ երթամ․ և ոչ ևս տեսանէք զիս։ Վասն դատաստանի՝ զի իշխան աշխարհիս այսորիկ դատապարտեալ է։ Եւս բազում ինչ ունիմ ասել ձեզ՝ այլ ոչ կարէք հանդարտել այժմիկ։ Յորժամ եկեսցէ նա Հոգին ճշմարտութեան՝ առաջնորդեսցէ ձեզ ամենայն ճշմարտութեամբ․ զի ոչ եթէ յանձնէ ինչ խօսիցի, այլ զոր լսիցէ՝ խօսիցի․ և զգալոցն պատմեսցէ ձեզ։ Նա զիս փառաւորեսցէ․ զի յիմմէ անտի առնուցու և պատմեսցէ ձեզ։ Զամենայն ինչ զոր ունի Հայր՝ իմ է, վասն այնորիկ ասացի ձեզ․ թէ յիմմէ անտի առնուցու և պատմեսցէ ձեզ։ Փոքր մի՛ և ոչ ևս տեսանէք զիս․ և ապա սակաւիք մի, և տեսանիցէք զիս, և զի ես երթամ առ Հայր։ Ասէին ոմանք յաշակերտաց անտի ցմիմեանս, զի՞նչ է այս՝ զոր ասէ ցմեզ․ թէ փոքր մի՛, և ոչ տեսանէք զիս, և դարձեալ սակաւիկ մի, և տեսանիցէք զիս․ և թէ ես առ Հայր երթամ։ Եւ ասէին, զի՞նչ իցէ այն փոքր միւս ևս, չգիտեմք զի՞նչ խօսի։ Գիտաց Յիսուս եթէ կամին ցնա հարցանել, և ասէ ցնոսա․ վասն այդորիկ խնդրէք ընդ միմեանս՝ զի ասացի թէ փոքր մի, և ոչ տեսանէք զիս, և դարձեալ սակաւիկ միւս ևս, և տեսանիցէք զիս։ Ամէն ամէն ասեմ ձեզ․ զի լացջիք, և ողբասջիք դուք, և աշխարհ խնդասցէ, դուք տրտմեսջիք՝ այլ տրտմութիւն ձեր յուրախութիւն եղիցի։ Կին յորժամ ծնանիցի՝ տրտմութիւն է նմա, զի հասեալ է ժամ նորա, այլ յորժամ ծնցի զմանուկն, ոչ ևս յիշէ զնեղութիւնն վասն խնդութեանն, զի ծնաւ մարդ յաշխարհ։

Եւ դուք այժմ տրտմութիւն ունիք. այլ դարձեալ տեսից զձեզ՝ և ուրախ լիցին սիրտք ձեր, և զուրախութիւն ձեր ոչ ոք հանիցէ 'ի ձէնջ։ Եւ յայնմ աւուր զիս ինչ ոչ հարցանիցէք. ամէն ամէն ասեմ ձեզ՝ զի զոր ինչ խնդրիցէք 'ի Հօրէ իմմէ յանուն իմ՝ տացէ ձեզ։ Մինչև ցայժմ ոչինչ խնդրեցիք յանուն իմ, խնդրեցէ՛ք՝ և առնուցուք. զի ուրախութիւնն ձեր լցեալ իցէ։ Զայս առակօք խօսեցայ ընդ ձեզ. եկեսցէ ժամանակ՝ յորժամ ոչ ևս առակօք խօսեցայց ընդ ձեզ. այլ յայտնապէս զՀօրէ պատմեցից ձեզ։ Յայնմ աւուր խնդրեսջիք յանուն իմ, և ոչ ասեմ ձեզ՝ եթէ ես աղաչեցից զՀայր վասն ձեր։ Զի ինքն իսկ Հայր սիրէ զձեզ. զի դուք զիս սիրեցիք, և հաւատացիք՝ թէ ես յԱստուծոյ ելի։ Ելի 'ի Հօրէ՝ և եկի յաշխարհ. դարձեալ թողում զաշխարհ՝ և երթամ առ Հայր։

29 — 33։

Ասեն ցնա աշակերտքն. ահա արդ յայտնութեամբ խօսիս, և առակ և ոչ մի ինչ ասես։ Այժմ գիտեմք, եթէ գիտես զամենայն, և ոչինչ պիտոյ է եթէ ոք հարցանիցէ զքեզ. յայսմիկ հաւատամք՝ եթէ յԱստուծոյ ելեր։ Պատասխանի ետ նոցա Յիսուս, և ասէ. այժմ հաւատայ՞ք. ահա եկեսցէ ժամ, և եկեալ իսկ է. զի ցրուեսջիք յիւրաքանչիւր տեղիս. և զիս միայն թողուցուք, և չեմ միայն՝ զի Հայր ընդ իս է։ Զայս խօսեցայ ընդ ձեզ. զի ընդ իս զխաղաղութիւն ունիցիք, յաշխարհի աստ զնեղութիւն ունիցիք, այլ քաջալերեցարո՛ւք. զի ես յաղթեցի աշխարհի։

17. 1 — 26։

Զայս իբրև խօսեցաւ Յիսուս. համբարձ զաչս իւր յերկինս՝ և ասէ. Հա՛յր՝ հասեալ է ժամ, փառաւորեա՛ զՈրդի

քո. զի և Որդի քո փառաւորեսցէ զքեզ: Որպէս ետուր նմա իշխանութիւն ամենայն մարմնոյ, զի ամենայնի՝ զոր ետուր նմա, տացէ զկեանսն յաւիտենականս: Այս են յաւիտենական կեանք, զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ Աստուած. և զոր առաքեցեր զՅիսուս Քրիստոս: Ես զքեզ փառաւորեցի յերկրի, զգործն կատարեցի. զորս ետուր ցիս՝ զի արարից: Եւ այժմ փառաւորեա զիս Հայր, առ 'ի քէն փառօքն՝ զոր ունէի յառաջ քան զլինել աշխարհի առ 'ի քէն: Յայտնեցի զանուն քո մարդկան, զորս ետուր ինձ յաշխարհէ. քո էին, և ինձ ետուր զնոսա՝ և զբանն քո պահեցին: Արդ գիտացին, եթէ զամենայն ինչ՝ զոր ետուր ինձ, առ 'ի քէն են: Զի զբանն՝ զոր ետուր ինձ, ետու նոցա. և նոքա ընկալան, և ծանեան ճշմարտութեամբ՝ թէ առ 'ի քէն ելի, և հաւատացին՝ եթէ դու առաքեցեր զիս: Արդ՝ ես վասն նոցա աղաչեմ, և ոչ վասն աշխարհի աղաչեմ. այլ վասն նոցա՝ զորս ետուրն ինձ՝ զի քո են: Եւ որ ինչ իմ է, ամենայն քո է. և որ ինչ քո է, այն իմ է. և փառաւորեալ եմ 'ի նոսա: Եւ ես ոչ ևս եմ յաշխարհի՝ և նոքա յաշխարհի են. և ես առ քեզ գամ, Հայր սուրբ՝ պահեա զնոսա յանուն քո, որով ետուրն ինձ. զի եղիցին մի, որպէս և մեք մի եմք: Մինչ էի յաշխարհի ընդ նոսա, ես պահէի զնոսա յանուն քո՝ որով ետուրն ինձ, և պահեցի. և ոչ ոք 'ի նոցանէ կորեաւ՝ բայց որդին կորստեան, զի գիրն լցցի: Բայց արդ առ քեզ գամ, և զայս խօսիմ յաշխարհի, զի ունիցին զուրախութիւն իմ լիով յանձինս իւրեանց: Ես ետու նոցա զբանն քո. և աշխարհ ատեաց զնոսա՝ զի չեն յաշխարհէ, որպէս և ես չեմ յաշխարհէ: Ո՛չ զայս աղաչեմ, զի բարձցես զնոսա յաշխարհէ. այլ զի պահեսցես զնոսա 'ի չարէ: Յաշխարհէ աստի չեն, որպէս և ես չեմ յաշխարհէ: Սուրբ արա զնոսա ճշմարտու-

թեամբ քով, զի քո բանդ ճշմարտութիւն է։ Որպէս զիս առաքեցեր յաշխարհ, և ես առաքեցի զնոսա յաշխարհ։ Եւ 'ի վերայ նոցա ես սուրբ առնեմ զանձն իմ, զի եղիցին և նոքա սրբեալք ճշմարտութեամբ։ Այլ ոչ վասն նոցա միայն աղաչեմ, այլ և վասն ամենայն հաւատացելոց բանիւն նոցա յիս։ Զի ամենեքին մի իցեն. որպէս դու Հայր յիս, և ես 'ի քեզ, զի և նոքա 'ի մեզ իցեն. զի և աշխարհ հաւատասցէ՝ եթէ դու առաքեցեր զիս։ Եւ ես ըզփառսն՝ զորս ետուր ինձ, ետու նոցա՝ զի իցեն մի, որպէս և մեք մի եմք։ Ես 'ի նոսա՝ և դու յիս. զի եղիցին կատարեալք 'ի մի. և գիտասցէ աշխարհ՝ եթէ դու առաքեցեր զիս. և սիրեցի զնոսա՝ որպէս դու զիս սիրեցեր։ Հա՛յր՝ զորս ետուրն ինձ, կամիմ, զի ուր եսն եմ, և նոքա իցեն ընդ իս. զի տեսանիցեն զփառսն իմ՝ զորս ետուրն ցիս. զի սիրեցեր զիս յառաջ քան զլինել աշխարհի։ Հա՛յր արդար, և աշխարհ զքեզ ոչ ծանեաւ, այլ ես զքեզ ծանեայ, և նոքա ծանեան՝ եթէ դու առաքեցեր զիս։ Եւ ծանուցի զանուն քո, և ծանուցից, զի սէրն՝ որով սիրեցեր զիս, 'ի նոսա իցէ՝ և ես 'ի նոսա։

ԺԲ. ԻՆՉ ԻՆՉ ՀՐԱՇԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՔ ՅԻՍՈՒՍԻ։

1. ԶՋՈՒՐՆ Ի ԳԻՆԻ ՓՈԽԱՐԿԵԼՆ։

Յովհ. 2. 1 — 10.

Եւ յաւուրն երրորդի հարսանիք էին 'ի կանայ Գալիլեացւոց. և անդ էր մայրն Յիսուսի։ Կոչեցաւ և Յիսուս՝ և աշակերտքն նորա 'ի հարսանիսն։ Եւ 'ի պակասել գինւոյն, ասէ մայրն ցՅիսուս. գինի ոչ ունին։ Եւ ասէ ցնա Յիսուս. զի՞ կայ իմ և քո՝ կի՛ն դու, չև է հասեալ ժա-

մանակ իմ։ Ասէ մայրն Նորա ցսպասաւորսն. զոր ինչ ասիցէ՝ արասջիք։ Անդ էին թակոյկք կճեայք վեց, ըստ սրբութեան Հրէից. տանէին մի մի 'ի նոցանէ մարս երկուս կամ երիս։ Ասէ ցնոսա Յիսուս. լցէ՛ք զթակոյկսդ ջրով. և լցին զնոսա մինչև 'ի վեր։ Եւ ասէ ցնոսա. արդ առէ՛ք՝ և բերէ՛ք տաճարապետիս. և նոքա բերին։ Եւ իբրև ճաշակեաց տաճարապետն զջուրն գինի եղեալ, և ո՛չ գիտէր ուստի՛ իցէ. բայց սպասաւորքն գիտէին՝ որք արկին զջուրն։ Խօսի ընդ փեսային տաճարապետն, և ասէ. ամենայն մարդ զանոյշ գինին յառաջագոյն պաշտէ. զի յորժամ արբենան՝ յայնժամ զյոռին. դու պահեցեր զանոյշ գինիդ մինչև ցայժմ։

11։

Զայս արար սկիզբն նշանաց Յիսուս 'ի Կանայ Գալիլեացւոց, և յայտնեաց զփառս իւր. և հաւատացին 'ի նա աշակերտքն Նորա։

2. ԲԺՇԿՈՒԹԻՒՆ ՈՐԴՒՈՅ ԻՇԽԱՆԻՆ։

Յովհ. 4. 46 — 53։

Եկն դարձեալ 'ի Կանայ Գալիլեացւոց՝ ուր արար զջուրն գինի. և անդ էր թագաւորազն մի՝ որոյ որդին հիւանդ կայր 'ի Կափառնայում։ Նա իբրև լուաւ եթէ Յիսուս եկեալ է 'ի Հրէաստանէ 'ի Գալիլեայ. եկն առ նա, և աղաչէր՝ զի իջցէ և բժշկեսցէ զորդի Նորա, քանզի մերձ էր 'ի մեռանիլ։ Ասէ ցնա Յիսուս. եթէ ո՛չ նշանս ինչ և արուեստս տեսանէք, ո՛չ հաւատայք։ Ասէ ցնա թագաւորազն. Տէ՛ր՝ է՛ջ մինչչև մեռեալ իցէ մանուկն իմ։ Ասէ ցնա Յիսուս. ե՛րթ՝ որդին քո կենդանի է։ Եւ հաւատաց այրն բանին՝ զոր ասաց ցնա Յիսուս, և գնաց։ Եւ մինչդեռ

իջանէր՝ ընդ առաջ եղեն նմա ծառայքն նորա, աւետիս ետուն և ասեն, թէ մանուկն նորա կենդանի է։ Հարցանէր ցնոսա վասն ժամուն՝ յորում ապաքինեցաւ։ Եւ ասեն ցնա. երէկ յեօթներորդ ժամուն եթող զնա ջերմն։ Գիտաց Հայրն նորա, եթէ յայնմ ժամու էր յորում ասացն ցնա Յիսուս՝ թէ որդին քո կենդանի է. և հաւատաց ինքն և ամենայն տուն իւր։

54։

Զայս դարձեալ երկրորդ նշան արար Յիսուս՝ եկեալ 'ի Հրէաստանէ 'ի Գալիլեա։

3. ՀԱԼԱԾՈՒՄՆ ԱՅՍՈՅ ՊՂԾՈՅ։

Ղուկ. 4. 33 — 36։

Եւ էր 'ի ժողովրդեանն այր մի՝ որ ունէր այս դիւի պղծոյ. և աղաղակեաց 'ի ձայն մեծ, ասէ. Թուլացո՛, զի՞ կայ մեր և քո՝ Յիսուս Նազովրեցի. եկիր կորուսանել ըզմեզ, գիտեմք զքեզ՝ ո՛վ ես սուրբդ Աստուծոյ։ Սաստեաց 'ի նա Յիսուս, և ասէ. պապանձեա՛ց՝ և ե՛լ 'ի դմանէ։ Զգետնեաց զնա դեւն 'ի միջի անդ, և ել 'ի նմանէ. և ինչ ոչ վնասեաց նմա։ Եւ եղեն զարմանալիք 'ի վերայ ամենեցուն. խօսէին ընդ միմեանս՝ և ասէին. զի՞նչ է բանս այս՝ զի իշխանութեամբ և զօրութեամբ սաստէ այսոց պղծոց, և ելանեն։

4. ԲԺՇԿԵԼՆ ՅԻՍՈՒՍԻ ԶԶՈՔԱՆՉ ՍԻՄՈՆԻ ԵՒ ԶԱՅԼՍ ԲԱԶՈՒՄՍ։

Ղուկ. 4. 38 — 41։

Եւ յարուցեալ 'ի ժողովրդենէ անտի՝ եմուտ 'ի տուն Սիմոնի. զոքանչ Սիմոնի տագնապիւր ջերմամբ մեծաւ. և աղաչեցին զնա վասն նորա։ Եկաց առ նմա, սաստեաց ջեր-

մանն, և եթող զնա. և վաղվաղակի յարեաւ՝ և պաշտէր զնոսա։ Եւ ընդ արեւուն մտանել, ամենեքեան՝ որոց էին հիւանդք 'ի պէսպէս ցաւս, բերէին զնոսա առ նա։ Եւ նա իւրաքանչիւր ումեք 'ի նոցանէ դնէր ձեռս՝ և բժշկէր զնոսա։ Ելանէին դեւք 'ի բազմաց, աղաղակէին և ասէին. եթէ դու ես Որդի Աստուծոյ։ Եւ նա սաստէր, և ո՛չ տայր թոյլ խօսիլ. զի գիտէին զնա՝ թէ Քրիստոսն է։

5. ՍՔԱՆՉԵԼԻ ՈՐՍ ՁԿԱՆՑ։

Ղուկ. 5. 1 — 11։

Եւ եղեւ 'ի խռնել զնովաւ ժողովրդեանն՝ և լսել զբանն Աստուծոյ. և ինքն կայր առ ծովակին Գեննեսարէթայ։ Եւ ետես երկուս նաւս՝ զի կային առ ծովակին, և ձկնորսքն ելեալք 'ի նոցանէ՝ լուանային զգործիսն։ Ել նա 'ի մի նաւուցն՝ որ էր Սիմոնի, և աղաչեաց զնա սակաւիկ մի տանել 'ի ներքս 'ի ցամաքէն. նստաւ, և ուսուցանէր 'ի նաւէ անտի զժողովուրդսն։ Եւ իբրեւ լռեաց 'ի խօսիցն, ասէ ցՍիմոն. խաղացո՛ 'ի խորն, և արկէ՛ք զգործիս ձեր յորս։ Պատասխանի ետ Սիմոն, և ասէ ցնա. վա՛րդապետ՝ զամենայն գիշերս աշխատ եղեաք, և ո՛չինչ կալաք. բայց վասն քո բանիդ՝ արկցուք զգործիսս։ Զայս իբրեւ արարին, փակեցին 'ի ներքս բազմութիւն ձկանց յոյժ, մինչեւ պարպատէին ուռկանք նոցա։ Եւ ակնարկէին որսակցացն 'ի միւս նաւուն՝ գալ օգնել նոցա. և եկին. և լցան երկոքին նաւքն մինչեւ մերձ յընկղմիլ նոցա։ Իբրեւ ետես Սիմոն Պետրոս՝ անկաւ առ ծունկսն Յիսուսի, և ասէ. 'ի բա՛ց գնա յինէն Տէ՛ր, զի այր մեղաւոր եմ ես։ Քանզի ահ պատեաց զնա և զամենեսին՝ որք ընդ նմայն էին վասն որսոյ ձկանցն՝ զորս ըմբռնեցին։ Նոյնպէս և զՅակովբոս, և զՅովհաննէս՝ որք էին որ-

սակիցք Սիմոնի։ Եւ ասէ ցՍիմոն Յիսուս. մի՛ երկնչիր, յայսմհետէ զմարդիկ որսայցես 'ի կենանս։ Եւ հանեալ ըզնաւն 'ի ցամաք՝ թողին զամենայն, և գնացին զհետ Նորա։

6. ՍՐԲՈՒՄՆ ԲՈՐՈՏԻ։

Մարկ. 1. 40 — 44։

Գայ առ Նա բորոտ մի, աղաչէր՝ 'ի ծունր իջանէր, և ասէր. Տէ՛ր, եթէ կամիս՝ կարող ես զիս սրբել։ Իսկ Յիսուս գթացեալ ձգեաց զձեռն՝ մերձեցաւ 'ի Նա, և ասէ ցնա. կամիմ, սրբեա՛ց։ Եւ իբրև ասաց ցնա, վաղվաղակի սրբեցաւ 'ի նմանէ բորոտութիւնն՝ և սրբեցաւ։ Եւ սաստեալ նմա՝ եհան արտաքս վաղվաղակի, և ասէ. զգո՛յշ լեր, մի՛ ումեք ասիցես. այլ ե՛րթ՝ ցո՛յց զքեզ քահանային, և մատո՛ վասն սրբութեան քո պատարագ՝ զոր հրամայեաց Մովսէս 'ի վկայութիւն նոցա։

7. ԲԺՇԿՈՒԹԻՒՆ ԱՆԴԱՄԱԼՈՅԾԻ։

Մարկ. 2. 1 — 12։

Եւ մտեալ դարձեալ 'ի Կափառնայում յետ աւուրց։ Լուր եղև՝ եթէ 'ի տան է. և ժողովեցան բազումք՝ մինչև տեղի ևս ոչ լինել, և ոչ առ դրանն. և խօսէր նոցա զբանն։ Եւ գային առ Նա, բերէին անդամալոյծ մի բարձեալ 'ի չորից։ Եւ իբրև ոչ կարէին մերձենալ առ Նա յամբոխէ անտի, քակեցին զյարկն՝ ուր էր Յիսուս. և բացեալ զառաստաղն, իջուցին զմահիճսն՝ յորում կայր անդամալոյծն։ Եւ տեսեալ Յիսուսի զհաւատս նոցա, ասէ ցանդամալոյծն. որդեակ, թողեա՛լ լիցին քեզ մեղք քո։ Եւ էին ոմանք 'ի դպրաց անտի՝ որք անդ նստէին, և խորհէին 'ի սիրտս իւրեանց. զի՞նչ է այս, որ խօսի սա զհայհոյութիւնս. ո՞վ կարէ թողուլ զմեղս, եթէ ոչ մի Աստուած։ Եւ գիտաց

Յիսուս յոգի իւր՝ թէ այնպէս խորհէին 'ի սիրտս իւրեանց, և ասէ. զի՞ խորհիք զայդ 'ի սիրտս ձեր: Զի՞նչ դիւրին է, ասե՞լ ցանդամալոյծն. թողեալ լիցին քեզ մեղք քո. եթէ ասել՝ արի՛, ա՛ռ զմահիճս քո՝ և ե՛րթ 'ի տուն քո: Այլ զի գիտասջիք՝ եթէ իշխանութիւն ունի Որդի մարդոյ 'ի վերայ երկրի թողուլ զմեղս: (Ասէ ցանդամալոյծն). քեզ ասեմ. արի՛, ա՛ռ զմահիճս քո՝ և ե՛րթ 'ի տուն քո: Եւ յարեաւ վաղվաղակի, առեալ զմահիճսն՝ ել առաջի ամենեցուն, մինչև զարմանալ ամենեցուն՝ և փառաւոր առնել զԱստուած, և ասել. թէ այսպիսի ինչ՝ երբէք ո՛չ տեսաք:

8. ԲԺՇԿՈՒԹԻՒՆ ԵՐԵՍՆՈՒԹԱՄԵԱՅ ՀԻՒԱՆԴԻ:

Յովհ. 5. 2 — 14:

Եւ էր յԵրուսաղէմ 'ի Պրոբատիկէ աւազանին՝ որ կոչիւր Եբրայեցերէն Բեթհեզդայ,—հինգ սրահ. յորս անկեալ դնիւր բազմութիւն յոյժ հիւանդաց, կուրաց, կաղաց, գօսացելոց՝ որք ակն ունէին ջրոյն յուզելոյ: Եւ հրեշտակ Տեառն իջանէր ըստ ժամանակի յաւազանն՝ և յուզէր զջուրն. և որ նախ 'ի շարժումն ջուրցն իջանէր յաւազանն՝ բժշկիւր, ո՛չ ունելով զնշան հիւանդութեան: Եւ անդ էր այր մի, որոյ երեսուն և ութ ամ էր 'ի հիւանդութեան իւրում: Զնա իբրև ետես Յիսուս, զի անկեալ դնիւր. և գիտաց՝ եթէ բազում ժամանակք են այնուհետև, ասէ ցնա. կամի՞ս ողջ լինել: Պատասխանի ետ նմա հիւանդն. Տէ՛ր, ո՛չ զոք ունիմ՝ թէ յորժամ ջուրքն յուզիցին, արկցէ զիս յաւազանն. և մինչ ես գանգաղիմ, այլ ոք քան զիս յառաջագոյն իջանէ: Ասէ ցնա Յիսուս. արի՛, ա՛ռ զմահիճս քո, և գնա՛: Եւ ողջացաւ այրն. և յարեաւ՝ էառ զմահիճս իւր, և շրջէր. և էր շաբաթ յաւուրն յայնմիկ: Ասեն Հրէայքն ցբժշկեալն. շաբաթ է՝ և ո՛չ է արժան քեզ

առնուլ զմահիճս քո։ Պատասխանի ետ նոցա, և ասէ. որ բժշկեացն զիս, նա ասաց ցիս. առ զմահիճս քո, և գնա՛։ Հարցին ցնա, և ասեն. ո՞վ է այրն՝ որ ասաց ցքեզ, առ զմահիճս քո՝ և շրջեա՛ց։ Եւ բժշկեալն ոչ գիտէր՝ թէ ո՛վ իցէ. քանզի Յիսուս խոյս ետ վասն ամբոխին 'ի տեղւոջէ անտի։ Յետ այսորիկ գտանէ զնա Յիսուս 'ի տաճարին, և ասէ ցնա. ահաւադիկ ողջացար, մի՛ ևս մեղանչէր. զի մի՛ ևս չար լինիցի քեզ։

9. ԲԺՇԿՈՒԹԻՒՆ ԳՕՍԱՑԵԼՈՅ։

Ղուկ. 6. 6 — 10։

Եւ եղև 'ի միւսում շաբաթուն մտանել նմա 'ի ժողովուրդն, և ուսուցանել. և էր անդ այր մի՝ որոյ ձեռն աջ գօսացեալ էր։ Եւ սպասէին նմա դպիրքն և փարիսեցիք՝ թէ 'ի շաբաթուն բժշկիցէ, զի գտանիցեն չարախօսութիւն զնմանէ։ Եւ նա գիտէր զխորհուրդս նոցա. ասէ ցայրն՝ որոյ ձեռն գօսացեալ էր. արի՛, կա՛ց 'ի միջի. և նա յարուցեալ եկաց։ Ասէ ցնոսա Յիսուս, հարցից ինչ ձեզ. զի՞նչ արժան է 'ի շաբաթու, բարի՞ ինչ առնել՝ եթէ չար գործել. ոգի մի ապրեցուցանե՞լ՝ եթէ կորուսանել։ Եւ հայեցեալ շուրջ զամենեքումբք զայրագին, ասէ ցնա. ձգեա՛ զձեռն քո. և նա ձգեաց. և հաստատեցաւ ձեռն նորա իբրև զմիւսն։

10. ԲԺՇԿՈՒԹԻՒՆ ԾԱՌԱՅԻ ՀԱՐԻՒՐԱՊԵՏԻ։

Մատ. 8. 5 — 13-

Եւ մտեալ 'ի Կափառնայում. մատեաւ առ նա հարիւրապետ մի՝ աղաչէր զնա, և ասէր. Տէ՛ր, մանուկ իմ անկեալ կայ 'ի տան անդամալոյծ, չարաչար տանջեալ։ Ասէ ցնա Յիսուս. ես եկից՝ և բժշկեցից զնա։ Պատասխանի ետ

հարիւրապետն, և ասէ. Տէ՛ր՝ չեմ բաւական եթէ ընդ յարկաւ իմով մտցես. այլ ասա՛ բանիւ՝ և բժշկեսցի մանուկն իմ: Քանզի և ես այր մի եմ ընդ իշխանութեամբ. ունիմ ընդ ինև զինուորս, ասեմ սմա՝ ե՛րթ, և երթայ. և այլում թէ՝ ե՛կ, և գայ. և ծառայի իմում թէ՝ արա՛ զայս, և առնէ: Իբրև լուաւ Յիսուս՝ զարմացաւ, և ասէ ցայնոսիկ՝ որք զհետն երթային. ամէն ասեմ ձեզ, և ոչ յԻսրայէլի այսպիսի հաւատս գտի երբէք: Բայց ասեմ ձեզ. զի բազումք յարևելից և յարևմտից եկեսցեն՝ և բազմեսցին ընդ Աբրահամու՝ և ընդ Իսահակայ՝ և ընդ Յակոբու յարքայութեան երկնից: Եւ որդիքն արքայութեան ելցեն 'ի խաւարն արտաքին. անդ եղիցի լալ և կրճել ատամանց: Եւ ասէ Յիսուս ցհարիւրապետն. ե՛րթ, և որպէս հաւատացեր, եղիցի՛ քեզ: Եւ ողջացաւ մանուկն Նորա 'ի նմին ժամու:

11. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՈՐԴՒՈՅ ԱՅՐԻ ԿՆՈՋ:

Ղուկ. 7. 11 — 16:

Եւ եղև 'ի վաղիւն երթայր 'ի քաղաք մի՝ որում անուն էր Նային. երթային ընդ Նմա աշակերտքն Նորա՝ և ժողովուրդք բազումք: Իբրև մերձ եղև 'ի դուռն քաղաքին, և ահա ելանէր մեռեալ մի՝ որդի միամօր մօր իւրոյ. և նա էր այրի, և ժողովուրդ բազում քաղաքին էր ընդ Նմա: Իբրև ետես զնա Տէր, գթացաւ 'ի նա՝ և ասէ. մի՛ լար: Եւ մատուցեալ մերձեցաւ 'ի դագաղն. և որք բարձեալն տանէին, զտեղի առին. և ասէ. պատանի դու, քեզ ասեմ, արի՛: Կանգնեցաւ՝ և նստաւ մեռեալն, և սկսաւ խօսիլ. և ետ զնա ցմայր իւր: Եւ ահ կալաւ զամենեսին. և փառաւոր առնէին զԱստուած և ասէին. մարգարէ ոմն մեծ յարուցեալ է 'ի միջի մերում. և թէ այց արար Աստուած ժողովրդեան իւրում 'ի բարութիւն:

12· ԲԺՇԿՈՒԹԻՒՆ ԱՅՍԱՀԱՐԻ, ԿՈՒՐԻ ԵՒ ՀԱՄԵՐ։

Մատ· 12· 22 — 23։

Յայնժամ մատուցաւ առ նա դիւահար մի կոյր՝ և համր· և բժշկեաց զնա· որպէս զի համրն և կոյրն, խօսիցի և տեսանիցէ։ Զարմացան ամենայն ժողովուրդքն՝ և ասեն· միթէ սա՞ իցէ Քրիստոսն Որդի Դաւթի։

13։ ԱԼԵԱՑ ՍԱՍՏՈՒՄՆ ԵՒ ՀԱՆԴԱՐՏԻԼՆ ՆՈՑԻՆ։

Մարկ· 4· 35 — 41։

Եւ ասէ ցնոսա յաւուր յայնմիկ, իբրև ընդ երեկս լինէր· եկայք անցցուք յայն կողմն։ Թողուն զժողովուրդն, և առնուն զնա նաւաւն հանդերձ· և այլ ևս նաւսն՝ որք էին ընդ նմա։ Եւ լինէր մրրիկ մեծ հողմոյ, և զալիսն 'ի նաւն զեղոյր, մինչ գրեթէ՝ լի իսկ լինել։ Եւ ինքն ննջէր 'ի խելս նաւին 'ի վերայ բարձի· զարթուցանէին զնա, և ասէին· վարդապետ՝ ոչինչ է քեզ փոյթ, զի կորնչիմք ահաւասիկ։ Եւ զարթուցեալ սաստեաց հողմոյն, և ծովուն՝ ասէ· դադարեա՝ կարկեա՛ց· և դադարեաց հողմն· և եղև խաղաղութիւն մեծ։ Եւ ասէ ցնոսա· ընդէ՞ր այդպէս վատասիրտք էք, չև ևս ունիք հաւատս· և երկեան յերկիւղ մեծ, և ասէին ցմիմեանս· ո՞ ոք արդեօք իցէ սա, զի և հողմ և ծով հնազանդին սմա։

14· ՀԱԼԱԾՈՒՄՆ ԼԵԳԵՈՆԱՑ ԱՅՍՈՑ ՊՂԾՈՑ։

Մարկ· 5· 1 — 20։

Եւ եկն յայնկոյս ծովուն յաշխարհն Գերգեսացւոց։ Եւ ընդ ելանելն նորա 'ի նաւէ անտի, պատահեաց նմա այր մի 'ի գերեզմանացն՝ զոր ունէր այս պիղծ։ Որոյ բնա-

կութիւն իսկ 'ի գերեզմանս էր, և ո՛չ շղթայիւք ոք ևս կարէր կապել զնա։ Վասն բազում անգամ ոտնակապօք և շղթայիւք կապելոյ՝ և խզելոյ 'ի նմանէ զշղթայսն, և զոտնակապսն խորտակելոյ, և ո՛չ ոք կարէր պարտել զնա։ Քանզի հանապազ զցայգ և զցերեկ 'ի գերեզմանս և 'ի լերինս աղաղակէր, և կոծէր զանձն իւր քարամբք։ Իբրև ետես զՅիսուս 'ի հեռաստանէ, ընթացաւ և երկիր եպագ նմա։ Աղաղակեաց 'ի ձայն մեծ, և ասէ. զի՞ կայ իմ և քո Յիսուս Որդի Աստուծոյ բարձրելոյ. երդմնեցուցանեմ ըզքեզ յԱստուած, մի՛ տանջեր զիս։ Քանզի ասէր ցնա. ե՛լ այսդ պիղծ 'ի մարդոյ այտի։ Եւ հարցանէր ցնա՝ թէ զի՞նչ անուն է քո. և ասէ ցնա, Լեգէօն անուն իմ է. քանզի բազումք եմք։ Եւ աղաչէին զնա յոյժ. զի մի՛ առաքեսցէ զնոսա արտաքս քան զաշխարհն։ Եւ անդ էր առ լերամբն երամակ մի խոզից արօտական մեծ։ Աղաչեցին զնա ամենայն դեւքն, և ասեն. առաքեա՛ զմեզ 'ի խոզսն, զի մտցուք 'ի նոսա։ Եւ հրամայեաց նոցա. և իբրև ելին այսքն պիղծք՝ մտին 'ի խոզսն. և դիմեաց երամակն 'ի դարէ անտի 'ի ծովն. էին իբրև երկու հազարք՝ և հեղձնուին 'ի ծովուն։ Եւ խոզարածքն փախեան, և պատմեցին 'ի քաղաքին և յագարակս. և ելին տեսանել զի՞նչ իցէ՝ որ գործեցաւն։ Գան առ Յիսուս. և տեսանեն զդիւահարն, զի նստէր զգեցեալ և զգաստացեալ՝ որ ունէր զԼեգէօնն. և զահի հարան։ Եւ պատմեցին նոցա՝ որոց տեսեալն էր, թէ զի՞նչ եղև դիւահարին. և զի՞նչ վասն խոզիցն։ Եւ սկսան աղաչել զնա գնալ 'ի սահմանաց նոցա։ Եւ իբրև եմուտ նա 'ի նաւն՝ աղաչէր զնա դիւահարն՝ զի ընդ նմա իցէ։ Եւ Յիսուս ո՛չ ետ նմա թոյլ, այլ ասէ ցնա. ե՛րթ 'ի տուն քո՝ առ ընտանիս քո. և պատմեա՛ նոցա՝ զոր ինչ միանգամ Տէր արար քեզ՝ և ողորմեցաւ քեզ։ Եւ չոգաւ

և սկսաւ քարոզել՝ ի Դեկապօլին՝ զոր ինչ արար Նմա Յիսուս. և ամենեքին զարմանային։

15. ԲԺՇԿՈՒԹԻՒՆ ՏԵՌԱՏԵՍ ԿՆՈՋ, ԵՒ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԴՍՏԵՐ ՅԱՅՐՈՍԻ։

Ղուկ. Ց. 41 — 56։

Իբրև աշխամ եկն այր մի՝ որոյ անուն էր Յայրոս, և նա էր իշխան ժողովրդեանն. անկեալ առ ոտն Յիսուսի՝ աղաչէր զնա մտանել 'ի տուն Նորա։ Զի դուստր միամօր էր Նորա՝ ամաց իբրև երկոտասանից, և էր մերձ 'ի մահ. և ընդ երթալն Նորա՝ ժողովուրդքն նեղէին զնա։ Եւ կին մի էր 'ի տեռատեսութեան արեան յամաց երկոտասանից. որ 'ի բժիշկս ծախեալ էր զամենայն ինչս իւր. որում ոչ էր լեալ հնար յումեքէ բժշկել։ Մատուցեալ յետոյ՝ մերձեցաւ 'ի դրօշակ հանդերձի Նորա. և նոյն ժամայն եկաց բղխումն արեան Նորա։ Եւ ասէ Յիսուս. ով է՝ որ մերձեցաւն յիս. իբրև ամենեքեան ուրանային, ասէ Պետրոս՝ և որք ընդ Նմայն էին. վարդապետ, ժողովուրդք պնդեն և նեղեն զքեզ։ Եւ ասէ Յիսուս. ոմն մերձեցաւ յիս, քանզի գիտացի եթէ զօրութիւն ել յինէն։ Իբրև ետես կինն՝ եթէ ոչ ծածկեցաւ 'ի Նմանէ, եկն դողալով՝ և անկաւ առաջի Նորա, թէ վասն որոյ իրաց մերձեցաւ 'ի Նա, պատմեաց առաջի ամենայն ժողովրդեանն. և եթէ որպէս բժշկեցաւ առ ժամայն։ Եւ ասէ. քաջալերեաց դուստր. հաւատք քո կեցուցին զքեզ. երթ 'ի խաղաղութիւն։ Եւ մինչդեռ Նա զայս խօսէր, գայ ոմն 'ի տանէ ժողովրդապետին՝ և ասէ ցնա. մեռաւ դուստրն քո. մի՛ ինչ աշխատ առներ զդա։ Իսկ Յիսուս իբրև լուաւ, պատասխանի ետ Նմա և ասէ. մի՛ երկնչիր, միայն հաւատա, և կեցցէ։ Եւ մտեալ 'ի տունն՝ ոչ

զոք եթող մտանել, բայց միայն զՊետրոս, և զՅակովբոս, և զՅովհաննէս, և զհայր մանկանն և զմայր նորա: Լային ամենեքեան՝ և կոծէին զնա. և նա ասէ. մի՛ լայք, զի չէ՛ մեռեալ, այլ ննջէ: Եւ նոքա ծաղր առնէին զնա, զի գիտէին թէ մեռաւ: Եւ նորա հանեալ զամենեսին արտաքս. կալաւ զձեռանէ նորա բարբառեցաւ, և ասէ. արի՛, կա՛ց՝ մա՛նուկ դու: Եւ դարձաւ ոգի նորա, և կանգնեցաւ վաղվաղակի. և հրամայեաց տալ նմա ուտել: Եւ զարմացան ծնողքն նորա և նա. պատուիրէր մի՛ ումեք ասել՝ որ ինչ եղեն:

16. ԲԺՇԿՈՒԹԻՒՆ ԵՐԿՈՒՑ ԿՈՒՐԱՑ ԵՒ ՀԱՄԵՐ ԱՅՍԱՀԱՐԻ:

Մատ. 9. 27 — 31:

Եւ մինչդեռ անցանէր ընդ այն Յիսուս, զհետ եղեն նորա կոյրք երկու, աղաղակէին՝ և ասէին. ողորմեա՛ց մեզ Որդի Դաւթի: Եւ իբրև եկն 'ի տուն, մատեան առ նա կոյրքն. և ասէ ցնոսա Յիսուս. հաւատա՞յք, եթէ կարող եմ առնել ձեզ զայդ. ասեն ցնա, այո՛ Տէր: Յայնժամ մերձեցաւ յաչս նոցա, և ասէ. ըստ հաւատոց ձերոց եղիցի ձեզ: Եւ բացան աչք նոցա. և սաստեաց նոցա Յիսուս, և ասէ. զգո՛յշ կացէք, մի՛ ոք գիտասցէ: Եւ նոքա ելեալ համբաւեցին զնա ընդ ամենայն երկիրն ընդ այն:

32 — 33:

Եւ յելանելն նոցա արտաքս՝ ահա մատուցին առ նա զայր մի՛ համր դիւահար: Եւ յելանել դիւին՝ խօսեցաւ համրն. և զարմացան ժողովուրդքն՝ և ասեն. թէ և ո՛չ երբէք երևեցաւ այսպիսի ինչ յԻսրայէլի:

17. ՅԱԳԵՑՈՒՑԱՆԵԼՆ ԶՀԻՆԳ ՀԱԶԱՐ ԱՐՍ ՀԻՆԳ ՀԱՑԻՒՔՆ:

Յովհ. 6. 3 — 15:

Ել 'ի լեառն Յիսուս, և անդ նստէր աշակերտօքն հանդերձ: Եւ էր մերձ զատիկ տօնն Հրէից: Եբարձ 'ի վեր զաչս իւր Յիսուս, և ետես՝ զի ժողովուրդ բազում գայր առ նա. ասէ ցՓիլիպպոս. ուստի՞ գնեսցուք հացս՝ զի կերիցեն դոքա: Զայս ասէր փորձելով զնա. այլ ինքն գիտէր զի՞նչ առնելոցն էր: Պատասխանի ետ նմա Փիլիպպոս, երկերիւր դահեկանի հաց չէ՛ դոցա բաւական, թէպէտ և իւրաքանչիւր ոք սակաւ ինչ առնուցու: Ասէ ցնա մի յաշակերտացն նորա Անդրէաս՝ եղբայր Սիմոնի վիմի. է՛ աստ պատանեակ մի՝ որ ունի հինգ նկանակ գարեղէն, և երկուս ձկունս. այլ այն զի՞նչ է առ այդչափ մարդիկ: Ասէ Յիսուս, բազմեցուցէ՛ք զմարդիկդ. և էր խոտ յոյժ 'ի տեղւոջն, և բազմեցան մարդիկն թուով իբրև հինգ հազար: Եւ էառ զհացն Յիսուս. և գոհացաւ, և բաշխեաց բազմականացն. նոյնպէս և 'ի ձկանցն որչափ և կամեցան: Եւ իբրև յագեցան՝ ասէ ցաշակերտսն իւր. ժողովեցէ՛ք զընշխարհեալ կոտորսդ. զի մի՛ ինչ կորիցէ: Ժողովեցին, և լցին երկոտասան սակառի զկոտորոցն 'ի հինգ գարեղէն նկանակէ անտի, որ յաւելաւ 'ի կերողացն: Իսկ մարդիկն իբրև տեսին զնշանսն՝ զոր արար, ասէին. սա՛ է ճշմարիտ մարգարէն՝ որ գալոց է յաշխարհ: Յիսուս իբրև գիտաց՝ եթէ գալոց են յափշտակել զնա, զի արասցեն զնա թագաւոր. գնաց դարձեալ 'ի լեառն միայն:

18. ԳՆԱԼՆ ՅԻՍՈՒՍԻ Ի ՎԵՐԱՅ ԾՈՎՈՒ:

Մատ. 14. 22 — 33:

Եւ ստիպեաց զաշակերտսն վաղվաղակի մտանել 'ի նաւ, և յառաջել յայնկոյս. մինչ ինքն զժողովուրդսն արձակի-

ցէ։ Եւ իբրև արձակեաց զժողովուրդսն. ել 'ի լեառն առանձինն կալ յաղօթս. և իբրև ընդ երեկս եղև, անդ էր միայն։ Եւ նաւն մեկնեալ էր 'ի ցամաքէն բազում ասպարիսօք ծփեալ յալեացն. քանզի ընդդէմ էր հողմն։ Եւ 'ի չորրորդ պահու գիշերոյն՝ եկն առ նոսա Յիսուս գնալով 'ի վերայ ծովուն։ Իբրև տեսին զնա աշակերտքն՝ զի գնայր 'ի վերայ ծովուն, խռովեցան՝ և ասեն, թէ առ աչօք ինչ իցէ. և առ ահին աղաղակեցին։ Եւ վաղվաղակի խօսեցաւ ընդ նոսա Յիսուս, և ասէ. քաջալերեցարո՛ւք՝ ես եմ՛, մի՛ երկընչիք։ Պատասխանի ետ նմա Պետրոս, և ասէ. Տէ՛ր, եթէ դու ես, հրամայեա՛ ինձ գալ առ քեզ 'ի վերայ ջրոցն։ Եւ նա ասէ՝ ե՛կ. և իջեալ 'ի նաւէն Պետրոս՝ գնաց 'ի վերայ ջրոցն՝ և եկն առ Յիսուս։ Եւ տեսեալ զհողմն սաստիկ, երկեաւ. և իբրև սկսաւ ընկղմիլ՝ աղաղակեաց, և ասէ. Տէ՛ր՝ փրկեա՛ զիս։ Եւ վաղվաղակի Յիսուս ձգեաց զձեռն իւր՝ կալաւ զնա, և ասէ. թե՛րահաւատ՝ ընդէ՞ր երկմտեցեր։ Եւ իբրև ել 'ի նաւն, հանդարտեցաւ հողմն։ Եւ որք 'ի նաւին էին՝ մատեան և երկիրպագին նմա, և ասեն. արդարև Որդի Աստուծոյ ես դու։

19. ԲԺՇԿԻԼՆ ԲԱԶՈՒՄ ՀԻՒԱՆԴԱՑ, ՄԵՐՁԵՑԵԼՈՑ Ի ՔՂԱՆՑՍ ՀԱՆԴԵՐՁԻ ՅԻՍՈՒՍԻ։

Մարկ. 6. 53 — 56։

Եւ իբրև անցին յայնկոյս, եկին յերկիրն Գեննեսարէթ։ Եւ իբրև ելին 'ի նաւէ անտի, իսկ և իսկ ծանեան զնա արք տեղւոյն այնորիկ։ Եւ ընթացեալ այսր անդր ընդ ամենայն գաւառն, սկսան մահճօք բերել զամենայն հիւանդըս՝ ուր լսէին՝ թէ անդ իցէ։ Եւ ուր և մտանէր 'ի գեօղս, կամ 'ի քաղաքս, կամ յագարակս, 'ի հրապարակս դնէին

զախտաժետս. և աղաչէին զՆա՝ զի գոնէ 'ի քղանցս հանդերձի Նորա մերձենայցեն. և որք միանգամ մերձեցան, փրկեցան:

20. ԲԺՇԿՈՒԹԻՒՆ ԱՅՍԱՀԱՐ ԿՆՈՋՆ ՔԱՆԱՆԱՑԻՈՅՆ:

Մատ. 15. 21 — 28:

Եւ ելեալ անտի Յիսուսի գնաց 'ի կողմանս Տիւրոսի և Սիդոնի: Եւ ահա կին մի Քանանացի 'ի սահմանաց անտի նոցա ելեալ, աղաղակէր և ասէր. ողորմեա՛ց ինձ Տէր՝ Որդի Դաւթի. դուստր իմ չարաչար այսահարի: Եւ Նա ո՛չ ետ նմա պատասխանի. և մատուցեալ աշակերտքն Նորա՝ աղաչէին զՆա և ասէին. արձակեա՛ զնա՝ զի աղաղակէ զհետ մեր: Նա պատասխանի ետ և ասէ. ո՛չ ուրեք առաքեցայ՝ եթէ ո՛չ առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայէլի: Եւ Նա մատուցեալ երկիր պագանէր Նմա, և ասէր. Տէ՛ր՝ օգնեա՛ ինձ: Պատասխանի ետ Նմա և ասէ. ո՛չ է բարւոք առնուլ զհաց մանկանց՝ և արկանել շանց: Եւ Նա ասէ՝ այո՛ Տէ՛ր, քանզի և շունք կերակրին 'ի փշրանաց անկելոց 'ի սեղանոյ տեառն իւրեանց: Յայնժամ պատասխանի ետ Նմա Յիսուս, և ասէ. ո՛վ կին դու. մե՛ծ են հաւատք քո. եղիցի քեզ՝ որպէս և կամիս. և բժշկեցաւ դուստր Նորա 'ի նմին ժամու:

21. ԲԺՇԿՈՒԹԻՒՆ ԿՈՒՐԻ ԵՒ ՀԱՄԲՐ:

Մարկ. 7. 32 — 37:

Եւ բերին առաջի Նորա խուլ մի և համր. և աղաչէին զի ձեռն դիցէ 'ի վերայ Նորա: Եւ առեալ զնա մեկուսի յամբոխէ անտի, էարկ զմատունս իւր ընդ ականջս Նորա՝ և եթուք անդր, և կալաւ զլեզուէ Նորա: Հայեցաւ յերկինս՝ յոգւոց եհան, և ասէ ցնա. եփփաթայ, որ է՝ բացի՛ր:

Եւ նոյն ժամայն բացան լսելիք նորա, և լուծան կապանք լեզուի նորա. և խօսէր ուղիղ: Եւ պատուիրեաց նոցա, զի մի՛ ումեք ասիցեն. և որչափ նա պատուիրէր նոցա, նոքա ևս առաւել քարոզէին: Եւ ևս քան զևս զարմանային և ասէին. զամենայն ինչ բարւոք գործեաց սա, զի խլից լսել տայ՝ և համերց խօսիլ:

22. ՅԱԳԵՑՈՒՑԱՆԵԼՆ ՉՈՐՍ ՀԱԶԱՐ ԱՐՍ ԵՕԹՆ ՆԿԱՆԱԿՕՔ:

Մատ. 15. 32 — 38:

Եւ կոչեալ առ ինքն Յիսուսի զաշակերտսն, ասէ. գթամ 'ի ժողովուրդդ, զի արդ՝ երեք աւուրք են՝ զի կան առ իս, և ո՛չ ունին զինչ ուտիցեն. և արձակել զնոսա նօթիս՝ չկամիմ, գուցէ՛ նքթիցին զճանապարհայն: Ասեն ցնա աշակերտքն. արդ մեզ յանապատի աստ՝ ուստի՞ իցէ այնչափ հաց՝ մինչև յագեցուցանել զայսչափ ժողովուրդ: Եւ ասէ ցնոսա Յիսուս. քանի՞ նկանակ ունիք. և նոքա ասեն. եօթն, և սակաւ ձկունս: Եւ հրամայեաց ժողովրդեանն բազմիլ 'ի վերայ գետնոյ: Եւ առեալ զեօթն նըկանակսն և զձկունսն, գոհացաւ՝ և եբեկ, և ետ ցաշակերտսն՝ և նոքա ժողովրդեանն: Կերին ամենեքեան և յագեցան. և բարձին զնշխարս կոտորոցն՝ եօթն զամբիւղ լի: Եւ որք կերինն՝ էին արք իբրև չորք հազարք, թո՛ղ զկանայս և զմանկտիս:

23. ԲԺՇԿՈՒԹԻՒՆ ԿՈՒՐԻՆ, ԹՔԱՆԵԼՈՎ ՅԱՉՍ ՆՈՐԱ:

Մարկ. 8. 22 — 25:

Գան 'ի Բեթսայիդայ. և ածեն առաջի նորա կոյր մի, և աղաչէին զնա՝ զի մերձեսցի 'ի նա: Եւ առեալ զձեռանէ կուրին՝ եհան արտաքոյ շինին. եթուք յաչս նորա, և ձեռն եդ 'ի վերայ նորա, և հարցանէր ցնա՝ թէ տեսանի-

ցէ՞ ինչ: Բացաւ՝ և ասէր. տեսանեմ զմարդիկս՝ զի շրջին իբրև զծառս: Դարձեալ եդ զձեռն 'ի վերայ աչաց նորա. եբաց՝ և տեսանէր. ողջացաւ՝ և տեսանէր համարձակ զամենայն:

24. ԲԺՇԿՈՒԹԻՒՆ ԼՈՒՍՆՈՏԻ:

Մատ. 17. 14 — 21:

Եւ իբրև եկն 'ի ժողովուրդն՝ մատեաւ այր մի՝ 'ի ծունր իջանէր և ասէր. Տէ՛ր՝ ողորմեա՛ց որդւոյ իմում, զի լուսնոտի և չարաչար հիւանդանայ. բազում անգամ անկանի 'ի հուր, և երբեք 'ի ջուր: Եւ մատուցի զնա աշակերտացն քոց, և ոչ կարացին բժշկել: Պատասխանի ետ Յիսուս, և ասէ. ո՜վ ազգ անհաւատ և թիւր, մինչև յե՞րբ իցեմ ընդ ձեզ, մինչև յե՞րբ անսայցեմ ձեզ. ած զնա առ իս. և ածին զնա առ Յիսուս: Եւ սաստեաց 'ի նա Յիսուս, և ել 'ի նմանէ դևն. և բժշկեցաւ մանուկն 'ի ժամէն յայնմանէ: Յայնժամ մատեան աշակերտքն առանձին, և ասեն ցՅիսուս. մեք ընդէ՞ր ոչ կարացաք հանել զդա: Եւ նա ասէ ցնոսա, վասն թերահաւատութեան ձերոյ. ամէն ասեմ ձեզ, եթէ ունիցիք հաւատս քան զհատն մանանխոյ, ասասջիք լերինս այսմիկ. փոխեա՛ց աստի անդր, և փոխեսցի. և ոչինչ անհնարին լինիցի ձեզ: Բայց այս ազգ՝ ոչ ելանէ, եթէ ոչ աղօթիւք և պահօք:

25. ՏԱԼՆ ՅԻՍՈՒՍԻ ՍՔԱՆՉԵԼԵՕՔՆ ԶՀԱՐԿՆ ԿՈՉԵՑԵԱԼ ԵՐԿԴՐԱՄԵԱՆ:

Մատ. 17. 23 — 26:

Իբրև եկին նոքա 'ի Կափառնայում, մատեան՝ որք զերկդրամեանն պահանջէին՝ առ Պետրոս, և ասեն. վարդապետն ձեր ո՞չ տայ զերկդրամեանն. և ասէ, այո: Եւ իբրև եմուտ

*

'ի տուն՝ յառաջեաց քան զՆա Յիսուս, և ասէ. զի՞րդ թուի քեզ Սիմոն. թագաւորք երկրի՝ յումմէ՞ առնուն ըզ-հարկս կամ զհաս, յորդւո՞ց իւրեանց՝ թէ յօտարաց։ Եւ իբրև ասաց՝ թէ յօտարաց. ասէ ցՆա Յիսուս. ապա ու-րեմն ազատք են որդիքն։ Բայց զի մի՛ գայթակղեցուս-ցուք զնոսա. ե՛րթ 'ի ծով՝ և ընկեա՛ զկարթ, և զառաջին ձուկն՝ որ ելանիցէ, ա՛ռ՝ և բա՛ց զբերան Նորա, և գտանի-ցես զսատեր. և զայն առեալ տացես Նոցա ընդ իմ և ընդ քո։

26. ԱՆՈՒՆՆ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԳՈՐԾԷ ԶՍՔԱՆՉԵԼԻՍ։

Մարկ. 9. 38 — 39.

Պատասխանի ետ Նմա Յովհաննէս, և ասէ. վա՛րդապետ, տեսաք զոմն՝ որ յանուն քո դևս հանէր, և զմեր կնի ո՛չ շրջէր. և արգելաք զնա։ Եւ Նա ասէ. մի՛ արգելուք զնա, զի ո՛չ ոք է՝ որ առնէ զզօրութիւնս յանուն իմ, և կարի-ցէ հայհոյել զիս։

27. ԲԺՇԿՈՒԹԻՒՆ ԿԱՐԿԱՄԵԱԼ ԿՆՈՋ։

Ղուկ. 13. 10 — 13։

Եւ ուսուցանէր 'ի միում ժողովրդանոցացն 'ի շաբաթ-սուն։ Եւ ահա կին մի՝ զոր ունէր այս հիւանդութեան՝ ամս ութուտասն, և էր կարկամեալ. և ո՛չ կարէր ամենևին 'ի վեր հայել։ Եւ տեսեալ զնա Յիսուսի՝ կոչեաց առ ինքն, և ասէ ցնա. կի՛ն դու, արձակեալ ես 'ի հիւանդութենէ քումմէ։ Եւ եդ 'ի վերայ Նորա ձեռն, և առ ժամայն ուղ-ղեցաւ. և փառաւոր առնէր զԱստուած։

28․ ԲԺՇԿՈՒԹԻՒՆ Ի ԾՆԷ ԿՈՒՐԻՆ։

Յովհ․ 9․ 1 — 38։

Եւ մինչդեռ անցանէր՝ ետես զայր մի կոյր 'ի ծնէ։ Եւ հարցին զնա աշակերտքն նորա, և ասեն․ Ռաբբի՛ ո՞ր վնաս է, սորա՞՝ թէ հօր և մօր իւրոյ, զի կոյր ծնցի։ Պատասխանի ետ Յիսուս․ ո՛չ դորա վնաս է, և ո՛չ հօր և մօր իւրոյ․ այլ զի յայտնի լիցին գործքն Աստուծոյ 'ի դմա։ Եւ ինձ պարտ է գործել զգործս այնորիկ՝ որ առաքեացն զիս, մինչ օր կայ․ գայ գիշեր, յորժամ ոչ ոք կարէ գործել։ Մինչդեռ յաշխարհի եմ, լոյս եմ աշխարհի։ Զայս իբրև ասաց, եթուք 'ի գետին․ և արար կաւ 'ի թքոյն, և ծեփեաց զկաւն 'ի վերայ աչաց կուրին։ Եւ ասէ ցնա․ ե՛րթ, լուա՛ յաւազանին Սելովմայ՝ (որ թարգմանի առաքեալ)։ Չոքաւ՝ լուացաւ, եկն և տեսանէր։ Իսկ դրացիքն՝ և որոց տեսեալ էր զնա յառաջագոյն՝ եթէ մուրացիկ էր, ասէին․ ո՞չ սա էր՝ որ նստէրն և մուրանայր․ կէսքն ասէին․ Նա է։ Այլքն ասէին․ ո՛չ, այլ նման է նմա․ և ինքն ասէր․ թէ ես եմ։ Ասեն ցնա․ իսկ զիա՞րդ բացան աչք քո։ Նա ետ պատասխանի․ այր մի՝ որում Յիսուսն ասեն, կաւ արար՝ և ծեփեաց զաչս իմ․ և ասէ ցիս, ե՛րթ 'ի Սելովամ, և լուա՛․ չոգայ՝ և լուացայ, և տեսանեմ։ Ասեն ցնա․ ո՞ւր է նա․ ասէ ցնոսա․ ո՛չ գիտեմ։ Ածին առ փարիսեցիս զնա, որ երբեմն կոյրն էր։ Եւ էր շաբաթ՝ յորժամ զկաւն արար Յիսուս, և եբաց զաչս կուրին։ Դարձեալ հարցանէին զնա փարիսեցիքն․ թէ զիա՞րդ տեսանես։ Եւ նա ասէ ցնոսա․ կաւ եդ 'ի վերայ աչաց իմոց՝ և լուացայ, և տեսանեմ։ Ասեն ոմանք 'ի փարիսեցւոցն․ ո՛չ է այրն այն յԱստուծոյ, զի զշաբաթ ո՛չ պահէ․ կէսքն ասէին․ իսկ զիա՞րդ կարէ մարդ մեղաւոր զայդպիսի նշանս առնել․ և էին հերձուածք

'ի մէջ նոցա։ Ասեն դարձեալ ցկոյրն· դու զի՞ ասես վասն
նորա՝ զի եբաց զաչս քո· և նա ասէ· թէ մարգարէ է։ Եւ
ոչ հաւատային Հրէայքն զնմանէ, եթէ կոյր էր՝ և բացաւ,
մինչև կոչեցին զծնողս բացելոյն։ Հարցին ցնոսա, և ա-
սեն· սա՞ է որդին ձեր՝ զորմէ դուքն ասէիք, թէ կոյր ծը-
նաւ· արդ՝ զիա՞րդ տեսանէ։ Պատասխանի ետուն նոցա
ծնողքն նորա, և ասեն· գիտեմք՝ զի սա է որդին մեր· և զի
կոյր ծնաւ։ Բայց զիա՞րդ այժմդ տեսանէ, ոչ գիտեմք·
կամ թէ՝ ո՞վ եբաց զաչս դորա, մեք ոչ գիտեմք· ցդա իսկ
հարցէ՛ք, ինքնին 'ի չափ հասեալ է· ինքն իսկ խօսեսցի
վասն իւր։ Զայս ասացին ծնողքն նորա, զի երկնչէին 'ի
Հրէից· քանզի ուխտ եդեալ էր Հրէից, եթէ որ խոստո-
վանեսցի զնա Քրիստոս, 'ի բաց կացցէ 'ի ժողովրդենէն։
Վասն այնորիկ ասացին ծնողքն նորա, եթէ ինքնին 'ի չափ
հասեալ է՝ ցնա իսկ հարցէ՛ք։ Դարձեալ կրկին անգամ կո-
չեցին զայրն՝ որ կոյրն էր, և ասեն ցնա· տո՛ւր փառս Աս-
տուծոյ· մեք գիտեմք՝ զի այրն այն մեղաւոր է։ Եւ նա ա-
սէ· թէ մեղաւոր իցէ՝ ես ոչ գիտեմ· բայց զայս գիտեմ,
զի կոյր էի և արդ տեսանեմ։ Դարձեալ ասեն ցնա· զի՞նչ
արար քեզ· զիա՞րդ եբաց զաչս քո։ Պատասխանի ետ նո-
ցա· այժմ ասացի ձեզ, և ոչ լուայք· զի՞ կամիք միւսան-
գամ լսել, մի՞ թէ և դուք կամիք աշակերտիլ նմա։ Նոքա
հայհոյէին զնա, և ասէին· դու լիջիր նորա աշակերտ· մեք
Մովսիսի աշակերտք եմք։ Մեք գիտեմք՝ զի ընդ Մովսիսի
խօսեցաւ Աստուած· զսա ոչ գիտեմք՝ ուստի՞ իցէ։ Պա-
տասխանի ետ այրն, և ասէ ցնոսա· այդ իսկ են սքանչելիք,
զի դուք ոչ գիտէք՝ ուստի՛ իցէ· և զիմ զաչս եբաց։ Գի-
տեմք՝ զի Աստուած մեղաւորաց ոչ լսէ· բայց եթէ Աս-
տուածապաշտ ոք իցէ, և զկամս նորա առնիցէ, նմա լսէ։
Ի յաւիտենից ոչ ոք լուաւ, եթէ եբաց ոք զաչս կուրի՝ 'ի

ծնէ կոյր ծնեցելոյ: Եթէ ոչ յԱստուծոյ էր այրն այն, ոչ կարէր առնել ինչ: Պատասխանի ետուն, և ասեն ցնա. 'ի մեղս իսկ ծնեալ ես ամենևին, և դու վարդապե՛տ լինիս մեր. և հանին զնա արտաքս: Լուաւ Յիսուս՝ եթէ հանին զնա արտաքս. և իբրև եգիտ զնա, ասէ ցնա. դու հաւատա՞ս յՈրդի Աստուծոյ: Նա պատասխանի ետ, և ասէ. Տէ՛ր, ո՞վ է՝ զի հաւատացից 'ի նա: Ասէ ցնա Յիսուս. և տեսեր զնա, և որ խօսիդ ընդ քեզ՝ նա է: Եւ նա ասէ. հաւատամ Տէր. և երկիր եպագ նմա:

29. ԲԺՇԿՈՒԹԻՒՆ ՋՐԳՈՂԻՆ:

Ղուկ. 14. 1 — 6:

Եւ եղև 'ի մտանել նորա 'ի տուն ուրումն իշխանացն փարիսեցւոց 'ի շաբաթու՝ ուտել հաց. և նոքա սպասէին նմա: Եւ ահա այր ոմն էր անդ ջրգողեալ առաջի նորա: Պատասխանի ետ Յիսուս, և ասէ ցօրինաւորս և ցփարիսեցիս, եթէ արժա՞ն իցէ 'ի շաբաթու բժշկել: Եւ նոքա լուռ եղեն. և բուռն հարեալ զնմանէ բժշկեաց զնա, և արձակեաց: Եւ ասէ ցնոսա. ո՞յր ուրուք 'ի ձէնջ էշ կամ եզն անկանիցի 'ի ջրհոր, և ոչ վաղվաղակի հանիցէ զնա՝ յաւուր շաբաթու: Եւ ոչ կարացին տալ նմա պատասխանի առ այն:

30. ԲԺՇԿՈՒԹԻՒՆ ՏԱՍՆ ԲՈՐՈՏԻՑ:

Ղուկ. 17. 12 — 19:

Եւ մինչդեռ մտանէր 'ի դեօղ ուրումն, պատահեցան նմա տասն արք բորոտք՝ որք կացին 'ի հեռաստանէ: Բարձին զձայնս, և ասեն. Յիսո՛ւս վարդապետ, ողորմեա՛ց մեզ: Եւ իբրև ետես զնոսա, ասէ ցնոսա. երթա՛յք, ցուցէ՛ք

զանձինս քահանայիցն. և եղև իբրև գնացին՝ առ ժամայն սրբեցան։ Մի ոմն 'ի նոցանէ իբրև ետես՝ թէ բժշկեցաւ, դարձաւ անդրէն. 'ի ձայն մեծ փառաւոր առնէր զԱստուած։ Անկաւ առ ոտս նորա 'ի վերայ երեսաց իւրոց՝ և գոհանայր զնմանէ. և ինքն էր Սամարացի։ Պատասխանի ետ Յիսուս, և ասէ. ո՞չ տասն սոքա սրբեցան. իսկ արդ՝ ինունքն ո՞ւր են. զի ո՞չ գտան դառնալ՝ և տալ փառս Աստուծոյ. բայց միայն այլազգիս այս։ Եւ ասէ ցնա. արի՛՝ գնա՛, զի հաւատք քո կեցուցին զքեզ։

31. ԲԺՇԿՈՒԹԻՒՆ ԵՐԿՈՒՑ ԿՈՒՐԱՑ։

Մատ. 20. 19 — 34։

Եւ յելանել նորա յԵրիքովէ՝ գնացին զհետ նորա ժողովուրդք բազումք։ Եւ ահա կոյրք երկու նստէին առ ճանապարհաւն։ Իբրև լուան՝ թէ Յիսուս անցանէ, աղաղակեցին և ասեն. ողորմեա՛ց մեզ Յիսուս Որդի Դաւթի։ Եւ ամբոխն սաստեաց նոցա՝ զի լռեսցեն. և նոքա ևս առաւել աղաղակէին և ասէին. Տէ՛ր՝ ողորմեա՛ց մեզ Որդի Դաւթի։ Զտեղի էառ Յիսուս՝ կոչեաց զնոսա, և ասէ. զի՞նչ կամիք՝ զի արարից ձեզ։ Ասեն ցնա. Տէ՛ր, զի բացցին աչք մեր։ Եւ գթացեալ Յիսուս՝ մերձեցաւ յաչս նոցա, և վաղվաղակի տեսին. և գնացին զհետ նորա։

32. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՂԱԶԱՐՈՒ։

Յովհ. 11. 1 — 45։

Եւ էր ոմն հիւանդ Ղազարոս 'ի Բեթանիայ, 'ի գեղջէ Մարիամայ՝ և Մարթայի քեռ նորա։ (Այս այն Մարիամ էր՝ որ էօծ զՏէրն իւղով, և ջնջեաց զոտս նորա հերով իւրով, որոյ եղբայրն Ղազարոս հիւանդ էր)։ Առաքեցին

առ նա քորքն նորա, և ասեն. Տէ՛ր՝ աՀաւասիկ զոր դուն սիրէիր, Հիւանդացեալ է։ Իբրև լուաւ Յիսուս, ասէ. այն Հիւանդութիւն չէ՛ ՚ի մաՀ, այլ վասն փառացն Աստուծոյ՝ զի փառաւոր լիցի Որդի մարդոյ այնուիկ։ Եւ սիրէր Յիսուս զՄարիամ, և զՄարթա զքոյր նորա, և զՂազար։ Իբրև լուաւ՝ թէ Հիւանդացեալ է, զտեղի կալաւ անդէն՝ ուր էրն, աւուրս երկուս։ Ապա յետ այնորիկ ասէ ցնոսա. եկա՛յք երթիցո՛ւք միւսանգամ ՚ի Հրէաստան։ Ասեն ցնա աշակերտքն. Ռա՛բբի, այժմ ևս խնդրէին զքեզ Հրէայքն քարկոծ առնել. և դարձեա՞լ երթաս անդրէն։ Պատասխանի ետ Յիսուս. ո՞չ երկոտասան ժամ է աւուր. եթէ ոք գնայ ՚ի տուընջեան՝ ո՛չ գայթակղի, զի զլոյս աշխարՀիս այսորիկ տեսանէ. ապա թէ ոք գնայ ՚ի գիշերի՝ գայթակղի, զի լոյս ո՛չ գոյ ընդ նմա։ Զայս իբրև ասաց. յետ այսորիկ ասէ. Ղազարոս բարեկամ մեր ննջեաց. այլ երթամ զի զարթուցից զնա։ Ասեն ցնա աշակերտքն նորա. Տէ՛ր՝ եթէ ննջեաց՝ ապա ապրի։ Այլ Յիսուս վասն մաՀու նորա ասէր. նոցա այսպէս թուեցաւ՝ թէ վասն ննջելոյ քնոյն ասէր։ Յայնժամ ասէ ցնոսա Յիսուս յայտնապէս. Ղազարոս մեռաւ։ Եւ ես ուրախ եմ վասն ձեր. զի դուք Հաւատասջիք ինձ՝ զի ես չէի անդ. բայց արդ՝ եկա՛յք երթիցուք առ նա։ Ասէ Թովմաս անուանեալն երկուորեակ ցաշակերտակիցսն. ո՛ն, եկա՛յք և մեք զի ընդ նմա մեռցուք։ Եկն Յիսուս, և եգիտ զնա չորեքօրեայ ՚ի գերեզմանի։ (Եւ էր Բեթանիա մերձ յԵրուսաղէմ, իբրև ասպարիսօք Հնգետասան)։ Բազումք ՚ի Հրէից անտի եկեալ էին առ Մարթայ և Մարիամ, զի մխիթարեսցեն զնոսա վասն եղբօրն։ Մարթա իբրև լուաւ՝ թէ Յիսուս գայ, ընդառաջ գնաց նորա. բայց Մարիամ անդէն նստէր ՚ի տան։ Ասէ Մարթա ցՅիսուս. Տէ՛ր՝ եթէ աստ լեալ էիր, եղբայրն իմ

չէր մեռեալ։ Այլ և արդ գիտեմ, եթէ զոր ինչ խնդրես-
ցես յԱստուծոյ՝ տացէ քեզ Աստուած։ Ասէ ցնա Յի-
սուս. յարիցէ եղբայրն քո։ Ասէ ցնա Մարթա. գիտեմ՝
զի յարիցէ յաւուրն յետնում։ Ասէ ցնա Յիսուս. ես իսկ
եմ յարութիւն և կեանք. որ հաւատայ յիս, թէպէտ և
մեռանի՝ կեցցէ։ Եւ ամենայն՝ որ կենդանի է՝ և հաւատայ
յիս, մի՛ մեռցի ՚ի յաւիտեան. հաւատա՞ս այսմիկ։ Ասէ
ցնա. այո՛ Տէր. ես հաւատացի, եթէ դու ես Քրիստոսն
Որդի Աստուծոյ՝ որ յաշխարհ գալոց էիր։ Եւ զայս իբրև
ասաց, գնաց՝ և կոչեաց զՄարիամ զքոյր իւր լռելեայն, և
ասէ. վարդապետն եկեալ է, և կոչէ զքեզ։ Նա իբրև լը-
ւաւ՝ յարեաւ վաղվաղակի, և եկն առ Նա։ Չև ևս էր ե-
կեալ Յիսուս ՚ի գեօղն, այլ էր անդէն ՚ի տեղւոջն՝ ուր
ընդառաջ եղև Նմա Մարթա։ Իսկ Հրէայքն՝ որք էին ընդ
Նմա ՚ի տան անդ՝ և մխիթարէին զնա, իբրև տեսին զՄա-
րիամ՝ թէ յարեաւ վաղվաղակի՝ և գնաց, գնացին և Նոքա
զհետ Նորա. համարէին թէ ՚ի գերեզմանն երթայ՝ զի լաց-
ցէ անդ։ Իսկ Մարիամ իբրև եկն՝ ուր էրն Յիսուս՝ և ե-
տես զնա, անկաւ առ ոտս Նորա, և ասէ. Տէ՛ր՝ եթէ աստ
էիր դիպեալ, ո՛չ էր մեռեալ եղբայրն իմ։ Յիսուս իբրև ե-
տես զնա զի լայր, և որք ընդ Նմայն էին Հրէայքն՝ լային,
խռովեցաւ յոգի իւր իբրև զայրացեալ։ Եւ ասէ. ո՞ւր եդիք
զնա. ասեն ցնա. Տէ՛ր, ե՛կ՝ և տե՛ս։ Եւ արտասուեաց Յի-
սուս։ Ասէին Հրէայքն. տեսէ՛ք, ո՛րչափ սիրէր զնա։ Կէս-
քըն ՚ի Նոցանէ ասէին. ո՞չ կարէր սա՝ որ եբաց զաչս կու-
րին, առնել զի և սա մի՛ մեռցի։ Յիսուս դարձեալ զայրա-
ցեալ ընդ միտս իւր, գայ ՚ի գերեզմանն. և էր այր մի, և
վէմ մի եդեալ ՚ի վերայ Նորա։ Եւ ասէ Յիսուս. ՚ի բա՛ց ա-
րարէք զվէմդ։ Ասէ ցնա Մարթա՝ քոյր մեռելոյն. Տէ՛ր
արդ հոտեալ իցէ, քանզի չորեքօրեայ է։ Ասէ ցնա Յի-

սուս· ո՞չ ասացի քեզ, եթէ հաւատասցես՝ տեսցես զփառս Աստուծոյ: Եւ իբրև 'ի վեր առին զվէմն· Յիսուս ամբարձ զաչս իւր 'ի վեր, և ասէ· Հա՛յր, գոհանամ զքէն, զի լուար ինձ: Եւ ես գիտէի՝ զի յամենայն ժամ լսես ինձ· այլ վասն ժողովրդեանս՝ որք շուրջ կան, ասեմ, զի հաւատասցեն՝ թէ դու առաքեցեր զիս: Զայս իբրև ասաց՝ 'ի ձայն մեծ աղաղակեաց, և ասէ· Ղա՛զարէ, արի՛, ե՛կ արտաքս: Եւ ել մեռեալն ոտիւք կապելովք, և ձեռօքն երիզապնդօք, և երեսօքն վարշամակապատօք: Եւ ասէ ցնոսա Յիսուս· լուծէ՛ք զդա, և թողէ՛ք երթալ: Բազումք 'ի Հրէիցն՝ որք եկեալ էին առ Մարիամանս, իբրև տեսին՝ զոր արարն՝ հաւատացին 'ի նա:

33· Ի ԲԱՆԻՑՆ ՅԻՍՈՒՍԻ ՑԱՄԱՔԻ ԹԶԵՆԻՆ:

Մարկ· 11· 11 — 14:

Եւ եմուտ Յիսուս յԵրուսաղէմ 'ի տաճարն, և հայեցաւ շուրջ զամենեքումբք, և զի էր երեկոյացեալ ժամն· ել 'ի Բեթանիա երկոտասանիւքն հանդերձ: Եւ 'ի վաղիւ անդր մինչդեռ ելանէին 'ի Բեթանիա, քաղցեաւ: Եւ ետես զթզենի մի 'ի բացուստ տերևալից· և եկն թէ գտանիցէ ինչ 'ի նմա· և իբրև եկն 'ի նա՝ ոչինչ եգիտ, բայց միայն տերև, զի ո՛չ էր իսկ ժամանակ թզոյ: Պատասխանի ետ, և ասէ ցնա· մի՛ ես ոք յաւիտեան 'ի քէն պտուղ կերիցէ· և լսէին աշակերտքն նորա:

20 — 24:

Եւ մինչդեռ այգուցն առ նովաւ անցանէին, տեսին զթզենին ցամաքեալ յարմատոյ: Եւ յիշեաց Պետրոս, և ասէ ցնա· Ռա՛բբի, ահաւասիկ թզենին՝ զոր անիծեր, ցամաքեցաւ: Պատասխանի ետ Յիսուս, և ասէ ցնոսա· եթէ

ունիցիք զհաւատսն Աստուծոյ· ամէն ասեմ ձեզ· որ ոք ասիցէ լերինս այսմիկ՝ բարձի՛ր, և անկի՛ր 'ի ծով· և ո՛չ երկմտիցի 'ի սրտի իւրում, այլ հաւատայցէ՝ թէ զոր ասէն՝ լինի· եղիցի նմա զոր ինչ և ասիցէ:

ԺԹ· ԱՌԱԿԱԽՕՍՈՒԹԻՒՆՔ ՔՐԻՍՏՈՍԻ:

1· ԱՌԱԿ ՍԵՐՄԱՆԱՑԱՆԻ:

Մարկ· 4· 1 — 20:

Դարձեալ սկսաւ ուսուցանել առ ծովեզերբն· և խռնեցան զնովաւ ժողովուրդք բազումք, մինչև 'ի նաւ մտանել նմա, և նստել 'ի ծովուն· և ամենայն ժողովուրդն զծովեզերբն զցամաքն ունէին· Եւ ուսուցանէր զնոսա առակօք բազում ինչ· և ասէր նոցա 'ի վարդապետութեան իւրում· Լուարո՛ւք: Ահաւասիկ ել սերմանող 'ի սերմանել: Եւ եղև 'ի սերմանելն, ոմն անկաւ առ ճանապարհաւ, և եկն թռչունն՝ և եկեր զնա: Եւ այլն անկաւ յապառաժի՝ ուր ո՛չ գոյր հող բազում· և վաղվաղակի բուսաւ, քանզի ո՛չ գոյր հիւթ երկրին· Եւ յորժամ ծագեցաւ արև՝ ջեռաւ, և զի ո՛չ գոյին արմատք՝ ցամաքեցաւ: Եւ այլն անկաւ 'ի մէջ փշոց· ելին փուշքն՝ և հեղձուցին զնա· և պտուղ ո՛չ ետ: Եւ այլն անկաւ յերկիր բարւոք· և ելեալ աճեցեալ տայր զպտուղ· և բերէր ընդ միոյ երեսուն, և ընդ միոյ վաթսուն, և ընդ միոյ հարիւր: Եւ ասէր· որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ: Եւ իբրև եղև առանձինն, հարցին ցնա՝ որք զնովաւն էին աշակերտօքն հանդերձ զառակսն: Եւ ասէ ցնոսա· ձեզ տուեալ է գիտել զխորհուրդ արքայութեան Աստուծոյ· բայց նոցա՝ որք արտաքինքն են, ամենայն ինչ առակօք լինի: Զի տեսանելով տեսցեն, և մի՛ տեսցեն· և լսելով լուիցեն, և մի՛ իմասցին· զի մի՛ երբէք դարձցին՝ և թողցի նոցա: Եւ ասէ ցնոսա· ո՛չ գիտէք զառակս զայս· և

զխորհուրդ զամենայն առակսն գիտիցէք։ Որ սերմանէ, զբանն սերմանէ։ Եւ նոքա են՝ որք առ ճանապարհաւն, ուր բանն սերմանի. և յորժամ լսեն զնա, գայ սատանայ՝ և հանէ զսերմանեալն 'ի սիրտս նոցա։ Եւ նոքա են՝ որք յապառաժին սերմանեցան, որք յորժամ լսիցեն զբանն, վաղվաղակի խնդութեամբ ընդունին։ Եւ զի ոչ ունին արմատս յանձինս, այլ առ ժամանակ մի են. ապա 'ի հասանել նեղութեան կամ հալածման վասն բանին, վաղվաղակի գայթակղին։ Իսկ որ 'ի մէջ փշոցն սերմանեցաւ, նոքա են՝ որք իբրև զբանն լսեն։ Եւ հոգք աշխարհիս, և պատրանք մեծութեան մտանեն. և հեղձուցանեն զբանն, և անպտուղ լինի։ Եւ նոքա են՝ որք յերկիրն բարւոք սերմանեցան. որք լսեն զբանն՝ և ընդունին, և տան զպտուղ. ընդ միոյ երեսուն, և ընդ միոյ վաթսուն, և ընդ միոյ հարիւր։

2. ԱՌԱԿ ՀԱՍԵԱԼ ՀՆՁՈՑ։

Մարկ. 4. 26 — 29։

Եւ ասէր, այսպէս է արքայութիւն Աստուծոյ. որպէս զի այր մի արկանիցէ զսերմանիս յերկիր։ Եւ ննջիցէ, և յառնիցէ զցայգ և զցերեկ. և սերմանիքն բուսանիցին և աճիցեն. և նա ոչ գիտէ. Թէ երկիրն ինքնին բերէ զպտուղըն. նախ զխոտն՝ և ապա զհասկն՝ ապա զցորեան ատոք 'ի հասկին։ Եւ յորժամ տայցէ զպտուղն. վաղվաղակի առաքի մանգաղ՝ զի հասեալ են հունձք։

3. ԱՌԱԿ ԲԱՐԻ ՍԵՐՄԱՆ ԵՒ ՈՐՈՄԱՆ։

Մատ. 13. 24 — 30։

Այլ առակ էարկ առ նոսա, և ասէ. Նմանեցաւ արքայութիւն երկնից առն՝ որ սերմանիցէ զսերմն բարի յագարակի իւրում։ Եւ 'ի քուն լինել մարդկան, եկն թշնամին նորա,

և ցանեաց ՚ի վերայ զորոմն ՚ի մէջ ցորենոյն՝ և գնաց։ Եւ իբրև բուսաւ խոտն, և արար պտուղ. ապա երևեցաւ և որոմն։ Մատուցեալ ծառայք տանուտեառնն, ասեն ցնա. տէ՛ր՝ ո՞չ սերմն բարի սերմանեցեր յագարակին քում. արդ՝ ուստի՞ ունիցի զորոմն։ Եւ նա ասէ ցնոսա. այր թշնամի արար զայն։ Ասեն ցնա ծառայքն. կամի՞ս զի երթիցուք՝ քաղեսցուք զայն ՚ի բաց։ Եւ նա ասէ ցնոսա. մի՛ գուցէ մինչ քաղիցէք զորոմն, և զցորեանն ընդ նմին ՚ի բաց խլլիցէք։ Թո՛յլ տուք երկոցունցն աճել ՚ի միասին մինչև ՚ի հունձս. և ՚ի ժամանակի հնձոցն, ասացից ցհնձողսն. քաղեցէ՛ք նախ զորոմն, և կապեցէ՛ք զայդ խրձունս առ ՚ի յայրել. և զցորեանն ժողովեցէ՛ք ՚ի շտեմարան իմ։

36 — 43։

Յայնժամ թողեալ Յիսուսի զժողովուրդսն՝ եկն ՚ի տուն. մատեան առ նա աշակերտքն նորա, և ասեն. մեկնեա՛ մեզ զառակ որոմանցն ագարակի։ Նա պատասխանի ետ, և ասէ ցնոսա. որ սերմանէ զսերմն բարի, է Որդի մարդոյ։ Եւ ագարակն աշխարհս է. սերմն բարի նոքա են՝ որք որդիքն արքայութեան են. իսկ որոմն որդիք չարին են։ Եւ թշնամին՝ որ վարեաց զայն, սատանայ է. և հունձըն կատարած աշխարհիս է. և հնձողքն հրեշտակք են։ Որպէս ժողովի որոմն՝ և ՚ի հուր այրի. այնպէս եղիցի ՚ի կատարածի աշխարհիս։ Առաքեսցէ Որդի մարդոյ զհրեշտակս իւր. և ժողովեսցեն յարքայութենէ նորա զամենայն գայթակղութիւնս, և զայնոսիկ՝ որք գործեն զանօրէնութիւն։ Եւ արկցեն զնոսա ՚ի հնոց հրոյ. անդ եղիցի լալ՝ և կրճել ատամանց։ Յայնժամ արդարքն ծագեսցին իբրև զարեգակն յարքայութեան երկնից. որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ։

4. ԱՌԱԿ ՀԱՏՈՅ ՄԱՆԱՆԽՈՅ:

Մատ. 13. 31 — 32:

Այլ առակ եարկ առ նոսա, և ասէ. Նման է արքայութիւն երկնից հատոյ մանանխոյ, զոր առեալ մարդոյ՝ սերմանեաց յագարակի իւրում: Որ փոքր է քան զամենայն սերմանիս. և յորժամ աճիցէ, մեծ է քան զամենայն բանջարս. և լինի ծառ, մինչև գալ թռչնոց երկնից՝ և հանգչել յոստս նորա:

5. ԱՌԱԿ ԽՄՈՐՈՅ:

Մատ. 13. 33:

Այլ առակ խօսեցաւ ընդ նոսա, և ասէ. Նման է արքայութիւն երկնից խմորոյ. զոր առեալ կնոջ՝ թագոյց ՚ի գրիւս երիս ալեր՝ մինչև ամենայն խմորեցաւ:

6. ԱՌԱԿ ԳԱՆՁԻ ԾԱԾԿԵԼՈՅ:

Մատ. 13. 44:

Դարձեալ նման է արքայութիւն երկնից գանձի ծածկելոյ յագարակի, զոր գտեալ մարդոյ թագոյց. և ՚ի խընդութենէ անտի երթայ՝ վաճառէ զամենայն ինչ՝ զոր ունի, և գնէ զագարակն զայն:

7. ԱՌԱԿ ԳԵՂԵՑԻԿ ՄԱՐԳԱՐՏԻ:

Մատ. 13. 45 — 46:

Դարձեալ նման է արքայութիւնն երկնից առն վաճառականի՝ որ խնդրիցէ մարգարիտս գեղեցիկս: Եւ գտեալ մի պատուական մարգարիտ, երթեալ վաճառեաց զամենայն զոր ինչ ունէր՝ և գնեաց զայն մարգարիտ:

8· ԱՌԱԿ ՈՒՌԿԱՆԻ ԱՐԿԵԼՈՅ Ի ԾՈՎ։

Մատ. 13· 47 — 50։

Դարձեալ նման է արքայութիւն երկնից ուռկանի արկելոյ 'ի ծով, և յամենայն ազգաց ժողովելոյ։ Որ իբրև լցաւ, հանեալ 'ի ցամաք՝ և նստեալ ժողովեցին զբարի բարին յամանս, և զխոտանն 'ի բաց ընկեցին։ Այնպէս եղիցի 'ի կատարածի աշխարհիս. ելցեն հրեշտակք, և մեկնեսցեն զչարս 'ի միջոյ արդարոց։ Եւ արկցեն զնոսա 'ի հնոց հրոյ, անդ եղիցի լալ՝ և կրճել ատամանց։

9· ԱՌԱԿ ԱՆՈՂՈՐՄ ՊԱՐՏԱՏԵԱՌՆ։

Մատ. 18· 23 — 35։

Վասն այսորիկ նմանեցաւ արքայութիւն երկնից առն թագաւորի՝ որ կամեցաւ համար առնուլ 'ի մէջ ծառայից իւրոց։ Եւ իբրև սկսաւ առնուլ՝ մատուցաւ առ նա պարտապան մի բիւր քանքարոյ։ Իբրև ոչ ունէր հատուցանել, հրամայեաց վաճառել զնա տէրն նորա, և զկին նորա, և զորդիս՝ և զամենայն որ ինչ և ունիցի, և հատուցանել։ Եւ անկեալ ծառայն երկիրպագանէր նմա, և ասէր. երկայնամիտ լեր առ իս՝ և զամենայն հատուցից քեզ։ Գթացեալ տէր ծառային այնորիկ՝ արձակեաց զնա. և զփոխն եթող նմա։ Եւ ելեալ ծառայն այն՝ եգիտ զմի 'ի ծառայակցաց իւրոց, որ պարտէր նմա հարիւր դահեկան. և կալեալ զնա խեղդէր, և ասէր. հատո՛ ինձ՝ զոր պարտիս։ Արդ՝ անկեալ ծառայակցին առ ոտս նորա, աղաչէր զնա, և ասէր. երկայնամիտ լեր առ իս, և հատուցից քեզ։ Եւ նա ոչ կամէր. այլ չոքաւ էարկ զնա 'ի բանտ, մինչև հատուսցէ զպարտսն։ Իբրև տեսին ծառայակիցքն նորա՝ որ ինչ եղեն, տրտմեցան յոյժ. և եկեալ ցուցին տեառն իւրեանց զամե-

նայն՝ որ ինչ եղևն։ Յայնժամ կոչեաց զնա Տէրն իւր, և ասէ. ծառայ չար. զամենայն զպարտսն թողի քեզ, վասն զի աղաչեցեր զիս. իսկ արդ՝ ո՞չ էր պարտ և քեզ ողորմել ծառայակցին քում, որպէս և ես քեզ ողորմեցայ։ Եւ բարկացեալ տէրն նորա, մատնեաց զնա դահճաց. մինչև հատուսցէ զամենայն զպարտսն։ Նոյնպէս և Հայր իմ՝ որ յերկինս է, արասցէ՛ ձեզ. եթէ ո՛չ թողուցուք իւրաքանչիւր եղբօր իւրում ՚ի սրտից ձերոց զյանցանս նոցա։

10. ԱՌԱԿ ԳԹԱԾ ՍԱՄԱՐԱՑԻՈՅՆ։

Ղուկ. 10. 25 — 37։

Եւ ահա յարեաւ ոմն օրինական, փորձէր զնա՝ և ասէր. վարդապետ, զի՞նչ գործեցից՝ զի զկեանս յաւիտենականս ժառանգեցից։ Եւ նա ասէ ցնա. յօրէնս զի՞նչ գրեալ է. ո՞րպէս ընթեռնուս։ Նա պատասխանի ետ, և ասէ. „Սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ, և յամենայն անձնէ քումմէ, և յամենայն զօրութենէ քումմէ, և յամենայն մտաց քոց. և զընկեր քո՝ իբրև զանձն քո“։ Եւ ասէ ցնա. ուղիղ ետուր զպատասխանիդ. զայդ արա՛, և կեցցես։ Նա իբրև կամեցաւ զանձն արդարացուցանել, ասէ ցՅիսուս. և ո՞վ է իմ ընկեր։ Պատասխանի ետ Յիսուս, և ասէ. այր մի իջանէր յԵրուսաղէմէ յԵրիքով, և անկաւ ՚ի ձեռս աւազակաց. որք մերկացուցին ըզնա՝ և վէրս ՚ի վերայ եդին. թողին կիսամահ և գնացին։ Դէպ եղև քահանայի միոջ իջանել ընդ նոյն ճանապարհ. և տեսեալ զնա՝ զանց արար։ Նոյնպէս և Ղևտացի մի եկեալ ընդ նոյն տեղի, ետես՝ և զանց արար։ Սամարացի ոմն ճանապարհորդեալ ընդ նոյն առ նովաւ, և տեսեալ զնա՝ գթացաւ։ Եւ մատուցեալ պատեաց զվէրս նորա, արկեալ ՚ի վերայ ձէթ և գինի. և եդեալ ՚ի վերայ գրաստու իւ-

րոյ, էած զնա 'ի պանդոկ մի՝ և դարմանեաց զնա։ Եւ 'ի վաղիւ անդր իբրև ելանէր անտի, հանեալ ետ ցպանդոկապետն երկուս դահեկանս, և ասէ. դարմա՛ն տար դմա. և զոր ինչ ծախեսցես 'ի դմա, 'ի միւսանգամ գալստեան իմում հատուցից քեզ։ Արդ՝ ո՞ յերեցունց 'ի նոցանէ թուի քեզ մերձաւոր լեալ անկելոյն 'ի ձեռս աւազակաց։ Եւ նա ասէ. որ արար զողորմութիւնն 'ի վերայ նորա։ Եւ ասէ ցնա Յիսուս. ե՛րթ՝ և դու արա՛ նոյնպէս։

11. ԱՌԱԿ ԸՆՉԱՍԻՐՈՒԹԵԱՆ։

Ղուկ. 12. 15 — 21։

Եւ ասէ ցնոսա. տեսէ՛ք, և զգո՛յշ լերուք յամենայն ագահութենէ. զի ո՛չ եթէ 'ի մթերից ընչից ուրուք իցեն կեանք նորա։ Խօսեցաւ առ նոսա զառակ մի, և ասէ. առն ուրումն մեծատան եսուն անդք տոհմականս։ Եւ խորհէր 'ի միտս իւր՝ և ասէր. զի՞ գործեցից՝ զի ո՛չ գոյ տեղի, ուր ժողովեցից զարդիւնս իմ։ Եւ ասէ. գիտեմ զինչ արարից. քակեցից զշտեմարանս իմ, և ևս մեծամեծս շինեցից. և անդր ժողովեցից զցորեան, և զամենայն բարութիւնս իմ։ Եւ ասացից ցանձն իմ. ա՛նձն, ունիս բազում բարութիւնս՝ համբարեալ ամաց բազմաց. հանգի՛ր, կե՛ր, ա՛րբ՝ և ուրա՛խ լեր։ Ասէ ցնա Աստուած. անմի՛տ, յայսմ գիշերի զոգիդ 'ի քէն 'ի բաց պահանջիցեն. իսկ զոր պատրաստեցերն՝ ո՞ւմ լինիցի։ Նոյնպէս և որ գանձէ անձին, և ո՛չ յԱստուած մեծանայցէ։

12. ԱՌԱԿ ԾԱՌԱՅԻՑ ԱԿՆԿԱԼԵԼՈՑ ՏԵԱՌՆ ԻՒՐԵԱՆՑ։

Ղուկ. 12. 35 — 48։

Եղիցին գօտիք ձեր պնդեալ ընդ մէջս. և ճրագունք լուցեալք։ Եւ դուք նմանողք մարդկան՝ որք ակն ունիցին

տեառն իւրեանց, թէ ե՛րբ դառնայցէ 'ի հարսանեաց· զի յորժամ գայցէ և բախիցէ, վաղվաղակի բանայցեն նմա։ Երանի՜ իցէ ծառայիցն այնոցիկ՝ զորս եկեալ տէրն, գտցէ արթունս· ամէն ասեմ ձեզ, զի գօտի ընդ մէջ ածցէ՝ և բազմեցուսցէ զնոսա· և անցեալ պաշտեսցէ զնոսա։ Եւ եթէ յերկրորդ կամ յերրորդ պահու եկեսցէ՝ և գտցէ այնպէս, երանելի՜ք են ծառայքն այնոքիկ։ Բայց զայն գիտասջիք· եթէ գիտէր տանուտէրն յորում ժամու գող գայ՝ հսկէր, և չտայր թողուլ ական հատանել 'ի տան իւրում։ Եւ դուք եղերո՛ւք պատրաստք, զի յորում ժամու ո՛չ կարծիցէք՝ գայ Որդի մարդոյ։ Ասէ Պետրոս· Տէ՛ր, առ մե՞զ ասացեր զառակդ զայդ՝ թէ առ ամենեսեան։ Եւ ասէ Տէր· ո՞վ իցէ հաւատարիմ տնտես և իմաստուն· զոր կացուցէ Տէր իւր 'ի վերայ գերդաստանի իւրոյ՝ տալ 'ի ժամու զկերակուրս։ Երանի՜ իցէ ծառային այնմիկ՝ զոր եկեալ Տէր իւր գտանիցէ արարեալ այնպէս։ Արդարև ասեմ ձեզ, զի 'ի վերայ ամենայն ընչից իւրոց կացուսցէ զնա։ Ապա թէ ասիցէ ծառայն այն 'ի սրտի իւրում, յամէ տէր իմ 'ի գալ· և սկսանիցի հարկանել զծառայս և զաղախնայս, ուտել՝ և ըմպել՝ և արբենալ։ Եկեսցէ տէր ծառային այնորիկ, յաւուր՝ յորում ակն ո՛չ ունիցի, և 'ի ժամու՝ յորում ո՛չ գիտիցէ· ընդ մէջ կտրեսցէ զնա, և զբաժին նորա ընդ անհաւատս դիցէ։ Եւ ծառայ՝ որ գիտիցէ զկամս տեառն իւրոյ՝ և ո՛չ պատրաստեսցէ ըստ կամաց նորա, արբցէ գան բազում։ Եւ որ ո՛չն գիտիցէ՝ և արժանի գանի ինչ գործիցէ, արբցէ գան սակաւ· ամենայնի՝ որում շատ տուաւ, շատ խնդրեսցի 'ի նմանէ· և որում բազում աւանդեցաւ, առաւել ևս պահանջեսցեն 'ի նմանէ։

*

13· ԱՌԱԿ ԱՆՊՏՈՒՂ ԹԶԵՆՒՈՅ։

Ղուկ· 13· 1 — 9։

Եկին ոմանք 'ի նմին ժամանակի· և պատմեցին նմա վասն գալիլեացւոցն՝ որոց զարիւնն Պիղատոս խառնեաց ընդ զոհսն նոցա։ Պատասխանի ետ, և ասէ ցնոսա· Համարիք եթէ այնք Գալիլեացիք եղեն մեղաւորք քան զամենայն գալիլեացիս· զի զայնպիսի անցս կրեցին։ Ո՛չ ասեմ ձեզ, այլ եթէ ոչ ապաշխարիցէք՝ ամենեքին նոյնպէս կորնչիցիք։ Կամ նոքա ութուտասանքն՝ յորոց վերայ աշտարակն անկաւ 'ի Սելովամ, և սպան զնոսա· համարիք՝ թէ նոքա պարտապանք եղեն քան զամենայն մարդիկ՝ որք բնակեալք են յԵրուսաղէմ։ Ո՛չ ասեմ ձեզ, այլ եթէ ոչ ապաշխարիցէք՝ ամենեքեան նոյնպէս կորնչիցիք։ Ասաց և զառակս զայս· Թզենի մի էր ուրումն տնկեալ յայգւոջ իւրում, և եկն խնդրել զպտուղ 'ի նմանէ, և ոչ եգիտ։ Ասէ ցայգեգործն· ահա երեք ամք են յորմէ հետէ գամ խնդրել զպտուղ 'ի թզենւոջդ, և ոչ գտանեմ։ Արդ՝ կոտրեա զդա, ընդէ՞ր և զերկիրդ խափանէ։ Նա պատասխանի ետ, և ասէ· տէ՛ր, թո՛ղ զդա յայս ամ ևս, մինչև շուրջ զդովաւ բրեցից՝ և արկից զաղբ, թերևս արասցէ զպտուղ· ապա թէ ոչ՝ յամէ ևս, հատցես զդա։

14· ԱՌԱԿ ՀՈՎՈՒԻ ԵՒ ՎԱՐՁԿԱՆԻ։

Յովհ· 10· 1 — 16։

Ամէն ամէն ասեմ ձեզ, որ ոչ մտանէ ընդ դուռն 'ի գաւիթ ոչխարաց՝ այլ ընդ այլ ելանէ, նա գող է՝ և աւազակ։ Իսկ որ մտանէ ընդ դուռն, հովիւ է ոչխարաց։ Նմա դռնապանն բանայ, և ոչխարքն ձայնի նորա լսեն· և զիւր զոչխարսն կոչէ յանուանէ, և հանէ զնոսա։ Եւ յորժամ զիւրն

զամենայն հանիցէ՝ առաջի նոցա երթայ. և ոչխարքն զհետ նորա երթան, զի ճանաչեն զձայն նորա։ Զօտարի զհետ ոչ երթիցեն, այլ փախիցեն 'ի նմանէ. զի ոչ ճանաչեն զձայն օտարաց։ Զայս առակ ասաց նոցա Յիսուս, և նոքա ոչ գիտէին, եթէ զի՞նչ էր՝ որ խօսէրն ընդ նոսա։ Դարձեալ ասէ ցնոսա Յիսուս. ամէն ամէն ասեմ ձեզ. ես եմ դուռն ոչխարաց։ Ամենեքեան՝ որք յառաջ քան զիս եկին, գողք էին՝ և աւազակք. այլ ոչ լուան նոցա ոչխարքն։ Ես եմ դուռն. ընդ իս եթէ ոք մտանիցէ, կեցցէ. մտցէ, և ելցէ, և ճարակ գտցէ։ Գող ոչ գայ, եթէ ոչ՝ զի գողասցի, և սպանցէ, և կորուսցէ. ես եկի զի զկեանս ունիցին, և առաւել ևս ունիցին։ Ես եմ հովիւն քաջ. հովիւ քաջ զանձն իւր դնէ 'ի վերայ ոչխարաց։ Իսկ վարձկանն՝ որ ոչ է հովիւ. որոյ ոչ իւր են ոչխարքն, իբրև տեսանէ զգայլն՝ զի գայ, թողու զոչխարսն, և փախչի. և գայլն յափշտակէ զնոսա, և ցրուէ. քանզի վարձկան է, և չէ՛ փոյթ նմա վասն ոչխարացն։ Ես եմ հովիւն քաջ. և ճանաչեմ զիմսն, և ճանաչիմ յիմոցն։ Որպէս գիտէ զիս Հայր, գիտեմ և ես զՀայր. և զանձն իմ դնեմ 'ի վերայ ոչխարաց։ Նաև՝ այլ ևս ոչխարք են իմ՝ որք ոչ են յայսմ գաւթէ, և զայն ևս պարտ է ինձ ածել այսր. և ձայնի իմում լուիցեն. և եղիցին մի հօտ, և մի հովիւ։

15. ԱՌԱԿ ՀՐԱՒԻՐԵԼՈՑ Ի ԿՈՉՈՒՆՍ։

Ղուկ. 14. 8 — 24։

Յորժամ կոչիցէ ոք զքեզ 'ի հարսանիս՝ կամ 'ի կոչունս, մի՛ բազմիցիս յառաջին բարձին. գուցէ՛ պատուականագոյն ևս քան զքեզ իցէ կոչեցեալ 'ի նմանէ։ Եւ եկեալ՝ որ զքեզ և զնա կոչեաց, ասիցէ ցքեզ. տո՛ւր սմա տեղի. և ապա սկսանիցիս ամօթով զյետին տեղին ունել։

Այլ յորժամ կոչիցիս. երթիջիր՝ բազմեսջիր 'ի յետին տեղւոջ, զի յորժամ գայցէ՝ որ կոչեացն զքեզ, ասիցէ ցքեզ. բա՛րեկամ, 'ի վե՛ր մատիր. յայնժամ եղիցին քեզ փառք առաջի բազմակցացն քոց։ Զի ամենայն՝ որ բարձրացուցանէ զանձն, խոնարհեսցի. և որ խոնարհեցուցանէ զանձն, բարձրասցի։ Ասէ և ցկոչնատէրն. յորժամ առնիցես ճաշ՝ կամ ընթրիս, մի՛ կոչեր զբարեկամս քո, և մի՛ զեղբարս քո, և մի՛ զազգականս քո, և մի՛ զդրացիս քո, և մի՛ զմեծամեծս, զի մի՛ և նոքա փոխարէն կոչիցեն զքեզ, և լինիցի քեզ հատուցումն։ Այլ յորժամ առնիցես ընդունելութիւն, կոչեա՛ զաղքատս՝ և զխեղս՝ և զկաղս՝ և զկոյրս։ Եւ երանելի լինիցիս, զի ո՛չ ունին փոխարէն հատուցանելոյ քեզ. և հատուսցի քեզ փոխարէն 'ի յարութեան արդարոց։ Իբրև լուաւ զայս ոմն 'ի բազմականացն, ասէ ցնա. երանի՛, որ կերիցէ ճաշ յարքայութեան Աստուծոյ։ Եւ նա ասէ ցնա. այր ոմն գործեաց ընթրիս. և հրաւիրեաց զբազումս։ Եւ առաքեաց զծառայ իւր 'ի ժամու ընթրեացն, կոչել զհրաւիրեալսն. թէ եկա՛յք՝ զի ահաւասիկ պատրա՛ստ է ամենայն ինչ։ Եւ սկսան մի ըստ միոջէ ամենեքեան հրաժարել. առաջինն ասէ. ագարակ գնեցի, և հարկ է ելանել՝ և տեսանել զնա. աղաչեմ զքեզ, կա՛լ զիս հրաժարեալ։ Եւ միւսն ասէ. լուծս հինգ՝ եզանց գնեցի, և երթամ փորձել զնոսա. աղաչեմ զքեզ, կա՛լ զիս հրաժարեալ։ Եւ միւսն ասէ. կին առի. և վասն այնորիկ՝ ո՛չ կարեմ գալ։ Եւ եկեալ ծառայն պատմեաց զամենայն տեառն իւրում։ Յայնժամ բարկացեալ տանուտէրն, ասէ ցծառայն իւր. ե՛լ վաղվաղակի 'ի հրապարակս և 'ի փողոցս քաղաքիս, և զաղքատս՝ և զխեղս՝ և զկաղս՝ և զկոյրս մո՛յծ այսր։ Եւ ասէ ծառայն. տէ՛ր, եղև զոր հրամայեցերն, և կայ ևս տեղի։ Եւ ասէ տէրն ցծառայն. ե՛լ

՚ի ճանապարհս և ՚ի ցանգս. և արա՛ այսր մտանել, զի լցցի տունս իմ։ Ասեմ ձեզ. զի ո՛չ ոք յայնց կոչեցելոց ճաշակեսցէ յընթրեաց իմոց։

16. ԱՌԱԿ ԿՈՐՈՒՍԵԱԼ ՈՉԽԱՐԻՆ։

Ղուկ. 15. 4 — 7։

Ո՞վ ոք իցէ ՚ի ձէնջ մարդ՝ որոյ իցէ հարիւր ոչխար, և կորուսանիցէ զմի ՚ի նոցանէ, ո՞չ թողուցու զիննսուն և զինն յանապատի. և երթայցէ զհետ կորուսելոյն մինչև գտանիցէ զնա։ Եւ իբրև գտանէ, դնէ զնա ՚ի վերայ ուսոց իւրոց խնդալով։ Եւ երթայ ՚ի տուն. կոչէ զբարեկամս և զդրացիս, և ասէ ցնոսա. ուրախ եղերուք ընդ իս. զի գտի զոչխարս իմ զկորուսեալ։ Ասեմ ձեզ, զի այսպէս է ուրախութիւն յերկինս վասն միոյ մեղաւորի՝ որ ապաշխարիցէ. քան վասն իննսուն և ինն արդարոց՝ որոց չիցէ պիտոյ ապաշխարութիւն։

17. ԱՌԱԿ ԿՈՐՈՒՍԵԱԼ ԴՐԱՄՈՅՆ։

Ղուկ. 15. 8 — 10։

Կամ ո՞վ իցէ կին՝ որոյ իցեն դրամք տասն, և եթէ կորուսանիցէ զդրամ մի, ո՞չ լուցանիցէ զճրագ, և ածիցէ զաւել ՚ի տան. և խնդրիցէ ստէպ՝ մինչև գտանիցէ։ Եւ իբրև գտանէ, կոչէ զբարեկամս և զդրացիս՝ և ասէ. ուրախ եղերուք ընդ իս, զի գտի զդրամն իմ՝ զոր կորուսի։ Այնպէս՝ ասեմ ձեզ՝ ուրախութիւն եղիցի առաջի հրեշտակաց Աստուծոյ ՚ի վերայ միոյ մեղաւորի՝ որ ապաշխարիցէ։

18. ԱՌԱԿ ԱՆԱՌԱԿ ՈՐԴԻՈՅՆ։

Ղուկ. 15. 11 — 32։

Եւ ասէ. առն միոջ էին երկու որդիք։ Ասէ կրտսերն ՚ի նոցանէ ցհայրն. հա՛յր՝ տո՛ւր ինձ բաժին՝ որ անկանի յըն-

չիցէ. և նա բաժանեաց նոցա զկեանսն: Եւ յետ ոչ բազում աւուրց՝ ժողովեալ զամենայն կրտսեր որդւոյն՝ գնաց յաշխարհ հեռի, և անդ վատնեաց զինչս իւր, զի կեայր անառակութեամբ: Եւ իբրև սպառեաց զամենայն, եղև սով սաստիկ յաշխարհին յայնմիկ, և սկսաւ ինքն չքաւորիլ: Եւ գնացեալ յարեցաւ 'ի մի ումն քաղաքացւոց աշխարհին այնորիկ, և յղեաց զնա յագարակ իւր արածել զխոզս: Եւ ցանկայր լնուլ զորովայն իւր յեղջերեն՝ զոր խոզքն ուտէին. և ոչ ոք տայր նմա: Եւ եկեալ 'ի միտս իւր, ասէ. քանի՞ վարձկանք են 'ի տան հօր իմոյ հացալիցք. և ես աստ սովամահ կորնչիմ: Յարուցեալ գնացից առ հայր իմ, և ասացից ցնա. հա՛յր, մեղա՛յ յերկինս՝ և առաջի քո: Եւ ոչ ես եմ արժանի կոչել որդի քո. արա՛ զիս իբրև զմի 'ի վարձկանաց քոց: Եւ յարուցեալ եկն առ հայր իւր. և մինչդեռ հեռագոյն էր, ետես զնա հայրն՝ և գթացաւ: Յարեաւ և ընթացաւ ընդ առաջ՝ անկաւ զպարանոցաւն նորա, և համբուրեաց զնա: Եւ ասէ ցնա որդին. Հա՛յր, մեղա՛յ յերկինս՝ և առաջի քո. ոչ ես եմ արժանի կոչել որդի քո: Ասէ հայրն ցծառայս իւր. վաղվաղակի հանէ՛ք ըզպատմուճանն առաջին, և ագուցէ՛ք նմա. և տուք զմատանին 'ի ձեռս նորա՝ և կօշիկս յոտս նորա: Եւ ածէ՛ք զեզն պարարակ և զենէ՛ք. կերիցո՛ւք, և ուրա՛խ լիցուք: Զի այս որդի իմ մեռեալ էր, և եկեաց. կորուսեալ էր, և գտաւ. և սկսան ուրախ լինել: Եւ էր երէց որդի նորա յագարակի. և մինչդեռ գայր՝ և մերձ եղև 'ի տունն, լուաւ զձայն երգոցն և պարուց: Եւ կոչեալ առ ինքն զմի 'ի ծառայիցն հարցանէր. թէ զի՞նչ իցէ այն: Եւ նա ասէ ցնա. զի եղբայր քո եկեալ է. և եզեն հայր քո զեզն պարարակ, զի ողջամբ ընկալաւ զնա: Բարկացաւ՝ և ոչ կամէր մտանել. և հայրն ելեալ արտաքս՝ աղաչէր զնա: Պատասխանի ետ, և ասէ

ցնայրն. այս քանի՞ ամք են՝ զի ծառայեմ քեզ. և երբեք զպատուիրանաւ քով ո՛չ անցի. ուլ մի երբեք ո՛չ ետուր ինձ՝ զի ուրախ եղէց ընդ բարեկամս իմ։ Եւ յորժամ եկն որդիդ քո այդ՝ որ եկեր զկեանս քո ընդ պոռնիկս, զեներ դմա զեզն պարարակ։ Եւ ասէ ցնա, որդեա՛կ, դու հանապազ ընդ իս ես. և ամենայն՝ որ ինչ իմ է, քո է։ Այլ ուրախ լինել և խնդալ պարտ էր. զի եղբայր քո այս՝ մեռեալ էր, և եկեաց. կորուսեալ էր, և գտաւ։

19, ԱՌԱԿ ՏՆՏԵՍԻ։

Ղուկ. 16. 1 — 18։

Եւ ասէր առ աշակերտսն. այր մի էր մեծատուն, որոյ էր տնտես. և եղև զնմանէ ամբաստանութիւն, որպէս թէ վատնիցէ զինչս նորա։ Կոչեաց, և ասէ ցնա. զի՞նչ է այս՝ զոր լսեմս զքէն. տո՛ւր զհամար տնտեսութեան քո. զի ո՛չ ևս կարես լինել տնտես։ Ասէ ընդ միտս իւր տնտեսն. զի՞նչ գործեցից, զի տէ՛ր իմ հանէ զտնտեսութիւնս. գործել ո՛չ կարեմ, մուրանալ ամաչեմ։ Գիտեմ՝ զի՞նչ արարից. զի յորժամ 'ի բաց լինիցիմ 'ի տնտեսութենէս՝ ընկալցին զիս 'ի տունս իւրեանց։ Եւ կոչեալ առ ինքն մի ըստ միոջէ 'ի պարտապանաց տեառն իւրոյ. ասէ ցառաջինն, քանի՞ ինչ պարտիս տեառն իմում։ Եւ նա ասէ. հարիւր մար ձիթոյ. ասէ ցնա. կա՛ զգիր քո՝ և նի՛ստ գրեա՛ վաղվաղակի յիսուն։ Դարձեալ ասէ ցմիւսն. դու քանի՞ ինչ պարտիս. և նա ասէ. հարիւր քոռ ցորենոյ. և ասէ ցնա. կա՛ զգիր քո՝ և նի՛ստ գրեա՛ ութսուն։ Եւ գովեաց տէրն զտնտեսն անիրաւութեան՝ զի իմաստութեամբ արար. զի որդիք աշխարհիս այսորիկ իմաստնագոյնք են քան զորդիս լուսոյ յազգս իւրեանց։ Եւ ես ձեզ ասեմ. արարէ՛ք ձեզ բարեկամս 'ի մամոնայէ անիրաւութեան. զի

յորժամ պակասիցի այն՝ ընկալցին զձեզ 'ի յարկսն յաւիտենականս :

20. ԱՌԱԿ ՄԵԾԱՏԱՆ ԵՒ ԱՂՔԱՏ ՂԱԶԱՐՈՍԻ:

Ղուկ. 16. 19 — 31:

Այր ոմն էր մեծատուն, և ագանէր բեհեզս և ծիրանիս. և ուրախ լինէր հանապազ առատապէս: Եւ աղքատ ոմն անուն Ղազարոս՝ անկեալ դնիւր առ դրան նորա վիրաւորեալ: Եւ ցանկայր յագել 'ի փշրանացն՝ որք անկանէին 'ի սեղանոյ մեծատանն. այլ և շունք եկ գային. և լիզուին ըզվէրս նորա: Եղև մեռանել աղքատին, և տանել հրեշտակաց զնա 'ի գոգն Աբրահամու: Մեռաւ և մեծատունն՝ և թաղեցաւ. և 'ի դժոխսն ամբարձ զաչսն իւր՝ մինչ 'ի տանջանսն էր. ետես զԱբրահամ 'ի հեռաստանէ, և զՂազարոս 'ի գոգ նորա հանգուցեալ: Եւ նա աղաղակեաց և ասէ. հայր Աբրահամ, ողորմեաց ինձ. և առաքեա զՂազարոս՝ զի թացցէ զծագ մատին իւրոյ 'ի ջուր. զովացուսցէ զլեզու իմ. զի պապակիմ 'ի տապոյ աստի: Եւ ասէ ցնա Աբրահամ. որդեակ, յիշեա՝ զի ընկալար անդէն զբարիս քո 'ի կեանսն քում. և Ղազարոս նոյնպէս զչարչարանսն. արդ՝ սա աստ մխիթարի. և դու այդր պապակիս: Եւ 'ի վերայ այսր ամենայնի՝ վիհ մեծ է ընդ մեզ և ընդ ձեզ. եթէ կամիցին աստի առ ձեզ անցանել՝ ոչ կարեն, և ոչ այտի առ մեզ անցանել: Եւ ասէ՝ արդ աղաչեմ զքեզ հայր. զի արձակեսցես զդա 'ի տուն հօր իմոյ: Են իմ անդ եղբարք հինգ, որպէս զի տացէ նոցա զվկայութիւն. զի մի՛ և նոքա գայցեն յայս տեղի տանջանաց: Եւ ասէ Աբրահամ. ունին զՄովսէս և զմարգարէս. նոցա լուիցեն: Եւ նա ասէ. ոչ՝ հայր Աբրահամ. բայց եթէ 'ի մեռելոց ոք երթիցէ առ նոսա, ապաշխարեսցեն: Եւ ասէ ցնա. եթէ Մովսիսի և մար-

դարձից ո՛չ լսեն, և ո՛չ թէ ՚ի մեռելոց ոք յառնիցէ՝ հաւատասցեն:

21· ԱՌԱԿ ԾԱՌԱՅԻ ԵԿԵԼՈՅ ՅԱԳԱՐԱԿԷ:

Ղուկ· 17· 7 — 10:

Իսկ ո՞վ ոք ՚ի ձէնջ՝ որ ունիցի ծառայ հողագործ, կամ հովիւ· որ իբրև մտանիցէ յագարակէ՝ ասիցէ ցնա վաղվաղակի· թէ ա՛նց, բազմեա՛ց: Այլ ո՞չ ասիցէ ցնա, թէ պատրաստեա՛ զինչ ընթրելոց իցեմ· և գօտի ածեալ պաշտեա՛ զիս, մինչև կերից և արբից· և ապա կերիցես՝ և արբցես դու: Միթէ շնո՞րհ ինչ ունիցի ծառային այնմիկ, զի արար զամենայն հրամանսն: Նոյնպէս և դուք· յորժամ առնիցէք զամենայն հրամայեալսն ձեզ, ասասջիք՝ եթէ ծառայք անպիտանք եմք, զոր պարտ էաքն առնել՝ արարաք:

22· ԱՌԱԿ ԴԱՏԱՒՈՐԻՆ:

Ղուկ· 18· 1 — 8:

Ասաց և առակ մի նոցա, առ այն՝ թէ պարտ է յամենայն ժամ կալ նոցա յաղօթս՝ և մի՛ ձանձրանալ: Ասէ· դատաւոր մի էր ՚ի քաղաքի ուրեմն· յԱստուծոյ ո՛չ երկնչէր, և ՚ի մարդկանէ ո՛չ ամաչէր: Եւ այրի մի էր ՚ի նմին քաղաքի· գայր առ նա, և ասէր· դա՛տ արա ինձ յոսոխէ իմմէ: Եւ ո՛չ կամէր ՚ի բազում ժամանակս· յետ այնորիկ, ասէ ՚ի մտի իւրում· թէ և յԱստուծոյ ո՛չ երկնչիմ, և ՚ի մարդկանէ ո՛չ ամաչեմ, գո՛նէ վասն աշխատ առնելոյ զիս այրւոյն՝ արարից նմա դատ, զի մի՛ իսպառ եկեալ թախանձիցէ զիս: Եւ ասէ Տէր· լուարո՛ւք զի՞նչ դատաւորն անիրաւութեան ասէր: Իսկ Աստուած ո՞չ առնիցէ զվրէժխնդրութիւն ծառայից իւրոց· որք աղաղակեն առ նա ՚ի տուէ և

՚ի գիշերի, և երկայնամիտ միայն լինիցի առ նոսա։ Այո՛, ասեմ ձեզ. զի արասցէ զվրէժխնդրութիւն նոցա վաղվաղակի. իսկ Որդի մարդոյ եկեալ՝ գտանիցէ՞ արդեօք հաւատս յերկրի։

23. ԱՌԱԿ ՓԱՐԻՍԵՑՒՈՅՆ ԵՒ ՄԱՔՍԱՒՈՐԻՆ։

Ղուկ. 18. 9 — 14։

Ասաց և առ ոմանս պանծացեալս յանձինս՝ թէ արդարք իցեն, և խոտիցեն զբազումս, զառակս զայս։ Արք երկու ելին ՚ի տաճարն կալ յաղօթս. մին փարիսեցի, և միւսն մաքսաւոր։ Փարիսեցին կայր մեկուսի. և զայս առանձինն աղօթս մատուցանէր։ Աստուած իմ, գոհանամ զքէն. զի ոչ եմ իբրև զայլս ՚ի մարդկանէ, զյափշտակողս՝ և զանիրաւս՝ և զշունս՝ կամ իբրև զայս մաքսաւոր։ Այլ պահեմ երկիցս ՚ի շաբաթու՝ և տամ տասանորդս յամենայն ըստացուածոց իմոց։ Եւ մաքսաւորն կայր մեկուսի. և ոչ կամէր, և ոչ զաչսն ընդ երկինս ամբառնալ. այլ կոծէր զկուրծս իւր, և ասէր. Աստուած՝ քաւեա՛ զիս զմեղաւորս։ Ասեմ ձեզ. էջ սա արդարացեալ ՚ի տուն իւր քան զնա. զի ամենայն՝ որ բարձրացուցանէ զանձն, խոնարհեսցի. և որ խոնարհեցուցանէ զանձն, բարձրասցի։

24. ԱՌԱԿ ՀԱՒԱՍԱՐ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԵԱՆ ՄՇԱԿԱՑ ԱՅԳՒՈՅՆ։

Մատ. 20. 1 — 16։

Քանզի նման է արքայութիւն երկնից առն տանուտեառն, որ ել ընդ առաւօտս ՚ի վարձու ունիլ մշակս յայգի իւր։ Եւ հարկ վարձս մշակացն յաւուրն դահեկան. և առաքեաց զնոսա յայգի իւր։ Եւ ելեալ զերրորդ ժամու, ետես այլս՝ զի կային դատարկք ՚ի հրապարակս։ Ասէ և ցնոսա. երթայք և դուք յայգի իմ. և որ ինչ արժան իցէ՝ տաց

ձեզ։ Գնացին և նոքա. և դարձեալ ելեալ զվեց ժամու՝ և զինն ժամու, արար նոյնպէս։ Եւ զմետասաներորդ ժամու ելեալ՝ եգիտ այլս, զի կային դատարկք. և ասէ ցնոսա. ընդէ՞ր կայք աստ զօրս ցերեկ դատարկք։ Ասեն ցնա. զի ոչ ոք կալաւ զմեզ ՚ի վարձու. ասէ ցնոսա. երթայք և դուք յայգին, և որ ինչ արժան է՝ առնուցուք։ Եւ իբրև երեկոյ եղև, ասէ տէր այգւոյն ցգաւառապետ իւր, կոչեա՛ զմշակսըն, և տո՛ւր նոցա զվարձս՝ սկսեալ ՚ի յետնոցն մինչև ցառաջինսն։ Իբրև եկին որք զմետասաներորդ ժամուն. առին մէն մի դահեկան։ Եկեալ և առաջինքն, համարէին՝ թէ աւելի առնուցուն. և առին մէն մի դահեկան և նոքա։ Իբրև առին, տրտնջէին զտանուտեառնէն, և ասէին. թէ դոքա յետինքդ մի ժամ գործեցին, և հաւասարակորդս մեզ արարեր զդոսա, որք զծանրութիւն աւուրն բարձաք և զտօթ։ Նա պատասխանի ետ միում ՚ի նոցանէ, և ասէ. ընկեր՝ չըզրկեմ զքեզ. ո՞չ դահեկանի միոջ սակ արկեր ընդ իս։ Ա՛ռ զքոյդ՝ և ե՛րթ. եթէ կամիցիմ յետնոյս տալ՝ որպէս և քեզ։ Եթէ չիցէ՞ ինձ իշխանութիւն յիմս առնել զի՛նչ և կամիմ. կամ թէ ակն քո չար է. զի ես առատ եմ։ Այսպէս եղիցին յետինք առաջինք, և առաջինք յետինք. զի բազումք են կոչեցեալք. և սակաւք են ընտրեալք։

25. ԱՌԱԿ ԱՆՀՆԱԶԱՆԴ ՈՐԴԻՈՅ ՅԵՏՈՅ ԶՂՋԱՑԵԼՈՅ։

Մատ. 21. 28 — 32։

Բայց զի՞նչ թուի ձեզ. առն միոջ էին երկու որդիք. և մատուցեալ առ առաջինն, ասէ. որդեակ՝ ե՛րթ այսօր գործեա՛ յայգւոջ։ Նա պատասխանի ետ և ասէ. երթամ տէր՝ և ո՛չ չոգաւ։ Մատեաւ և առ միւսն և ասէ նոյնպէս, նա պատասխանի ետ, և ասէ. ո՛չ կամիմ. բայց յետոյ զղջացաւ՝ և չոգաւ յայգին։ Արդ՝ ո՞ յերկոցունց արար զկամս հօրն։

Ասեն՝ յետինն։ Ասէ ցնոսա Յիսուս. ամէն ասեմ ձեզ. զի մաքսաւորք և պոռնիկք յառաջեսցեն քան զձեզ յարքայութիւն երկնից։ Զի եկն Յովհաննէս ճանապարհաւ արդարութեան, և ոչ հաւատացիք նմա. և մաքսաւորք և պոռնիկք հաւատացին նմա. և դուք տեսիք՝ և ոչ զղջացայք յետոյ հաւատալ նմա։

26. ԱՌԱԿ ՉԱՐ ՄՇԱԿԱՑՆ։

Մատ. 21. 33 — 45։

Այլ առակ՝ լուարո՛ւք. այր մի էր տանուտէր՝ որ տընկեաց այգի, և ցանգով պատեաց զնա. և փորեաց ՚ի նմա հնձան. և շինեաց աշտարակ, և ետ զնա մշակս. և գնաց ՚ի տար աշխարհ։ Իբրև մերձեցաւ ժամանակ պտղոյ՝ առաքեաց զծառայս իւր առ մշակսն, առնուլ զպտուղս նորա։ Եւ կալեալ մշակացն զծառայս նորա, զոմն տանջեցին, զոմն սպանին, զոմն քարկոծեցին։ Դարձեալ առաքեաց այլ ծառայս բազումս քան զառաջինսն. և արարին նոցա նոյնպէս։ Յետոյ առաքեաց առ նոսա զորդի իւր, և ասէ. թերևս ամաչեսցեն յորդւոյ աստի իմմէ։ Իսկ մշակքն իբրև տեսին զորդին, ասեն ընդ միտս. սա՛ է ժառանգն, եկա՛յք սպանցուք զսա. և կալցուք զժառանգութիւն սորա։ Եւ առեալ հանին զնա արտաքոյ քան զայգին, և սպանին։ Արդ՝ յորժամ եկեսցէ տէր այգւոյն, զի՞նչ արասցէ մշակացն այնոցիկ։ Ասեն ցնա. զչարսն՝ չարաւ կորուսցէ. և զայգին տացէ այլոց մշակաց, որք տացեն նմա զպտուղս ՚ի ժամու իւրեանց։ Ասէ ցնոսա Յիսուս. չիցէ՞ երբէք ընթերցեալ ձեր ՚ի գիրս. „զվէմն՝ զոր անարգեցին շինողք, նա եղև գլուխ անկեան։ Ի Տեառնէ եղև այս. և է սքանչելի յաչս մեր‟։ Վասն այսորիկ ասեմ ձեզ. զի բարձցի ՚ի ձէնջ արքայութիւն Աստուծոյ, և տացի ազգի՝ որ առնիցէ զպտուղս

նորա։ Եւ որ անկցի 'ի վերայ վիմիս այսորիկ, փշրեսցի· և յորոյ վերայ անկցի, հոսեսցէ զնա։

27· ԱՌԱԿ ՏԱՍՆ ԿՈՒՍԱՆԱՑ։

Մատ· 25· 1 — 13։

Յայնժամ նմանեսցի արքայութիւն երկնից տասն կուսանաց· որոց առեալ զլապտերս իւրեանց՝ ելին ընդ առաջ փեսայի և հարսին· հինգն 'ի նոցանէ յիմարք էին և հինգն իմաստունք։ Յիմարքն առին զլապտերսն· և զձէթ ընդ իւրեանս ոչ բարձին· իսկ իմաստունքն՝ առին զձէթ ամանօք ընդ լապտերս իւրեանց· և 'ի յամել փեսային՝ նիրհեցին ամենեքեան, և 'ի քուն մտին։ Եւ 'ի մէջ գիշերին եղև բարբառ· ահա՛, փեսայ գայ, արի՛ք ընդ առաջ նորա։ Յայնժամ յարեան ամենայն կուսանքն, և կազմեցին զլապտերս իւրեանց։ Ասեն յիմարքն ցիմաստունսն· տո՛ւք մեզ յիւղոյդ ձերմէ, զի ահա շիջանին լապտերքս մեր։ Պատասխանի ետուն իմաստունքն, և ասեն· գուցէ ոչ իցէ մեզ և ձեզ բաւական· այլ երթա՛յք 'ի վաճառականս, և գնեսջի՛ք ձեզ։ Իբրև գնացին նոքա գնել, եկն փեսայն· և պատրաստքն մտին ընդ նմա 'ի հարսանիսն· և փակեցաւ դուռն։ Յետոյ գան և այլ կուսանքն, և ասեն· Տէ՛ր՝ Տէ՛ր, բաց մեզ։ Նա պատասխանի ետ, և ասէ· ամէն ասեմ ձեզ, թէ ոչ գիտեմ զձեզ։ Արթո՛ւն կացէք, զի ոչ գիտէք զօրն՝ և ոչ զժամ։

28· ԱՌԱԿ ՔԱՆՔԱՐԱՑՆ։

Մատ· 25· 14 — 30։

Որպէս այր մի գնացեալ 'ի տար աշխարհ, կոչեաց ըզծառայս իւր, և ետ նոցա զինչս իւր։ Ումեմն ետ հինգ քանքար, և ումեմն երկուս, և ումեմն մի· իւրաքանչիւր ըստ իրում կարի, և գնաց։ Չոգաւ վաղվաղակի՝ որ էառ զհինգն,

գործեաց նոքօք. և շահեցաւ այլ ևս հինգ: Նոյնպէս և որ զերկուսն՝ շահեցաւ այլ ևս երկուս: Եւ որ զմին էառ, գնաց, փորեաց զերկիր, և թաքոյց զարծաթ տեառն իւրոյ: Յետ բազում ժամանակի՝ գայ տէր ծառայից այնոցիկ. և առնէ համարս 'ի մէջ նոցա: Եւ մատուցեալ՝ որ զհինգ քանքարն էառ, մատոյց այլ ևս հինգ քանքար, և ասէ. տէ՛ր՝ հինգ քանքար ետուր ցիս. արդ աւասիկ հինգ այլ ևս քանքար 'ի վերայ շահեցայ: Ասէ ցնա տէրն իւր. ազնիւ ծառայ, բարի և հաւատարիմ. որովհետև 'ի սակաւուդ հաւատարիմ ես, 'ի վերայ բազմաց կացուցից զքեզ. մուտ յուրախութիւն տեառն քո: Մատուցեալ և որոյ զերկուս քանքարսն առեալ էր, և ասէ. տէ՛ր՝ երկուս քանքարս ետուր ցիս, ահաւասիկ երկուս ևս այլ քանքարս՝ զորս 'ի վերայ շահեցայ: Ասէ ցնա տէր իւր. ազնիւ ծառայ, բարի և հաւատարիմ. որովհետև 'ի սակաւուդ հաւատարիմ ես, 'ի վերայ բազմաց կացուցից զքեզ. մուտ յուրախութիւն տեառն քո: Մատուցեալ և որոյ զմի քանքարն առեալ էր, և ասէ. տէ՛ր՝ գիտէի, զի այր մի խիստ ես, հնձես՝ զոր ո՛չ սերմանեցեր, և ժողովես՝ ուստի ո՛չ սփռեցեր. երկեայ, գնացի՝ և թաքուցի զքանքարն քո յերկրի. արդ՝ ահաւասիկ քո՛դ ցքեզ: Պատասխանի ետ տէրն, և ասէ ցնա. ծառա՛յ չար և վատ. գիտէիր, եթէ հնձեմ՝ ուստի ո՛չ սերմանեցի, և ժողովեմ՝ ուստի ո՛չ սփռեցի. պարտ էր քեզ արկանել զարծաթդ իմ 'ի սեղանաւորս. և եկեալ ես՝ տոկոսեօք պահանջէի զիմս: Արդ՝ առէ՛ք 'ի դմանէ զքանքարդ, և տո՛ւք այնմ՝ որ ունիցի զտասն քանքարն: Զի ամենայնի՝ որ ունիցի, տացի և յաւելցի. և որ ո՛չն ունիցի, և զոր ունիցին՝ բարձցի 'ի նմանէ: Եւ զծառայդ անպիտան հանէ՛ք 'ի խաւարն արտաքին. անդ եղիցի լալ՝ և կրճել ատամանց:

Ի. ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ:

Ղուկ. 9. 27 — 36:

Բայց արդարև ասեմ ձեզ. եթէ են ոմանք 'ի դոցանէ՝ որք այդր կան, որք մի՛ ճաշակեսցեն զմահ, մինչև տեսցեն զարքայութիւնն Աստուծոյ: Եւ եղև յետ այսց բանից իբրև աւուրք ութ, առեալ զՊետրոս՝ և զՅակովբոս՝ և զՅովհաննէս, ել 'ի լեառն կալ յաղօթս: Եւ 'ի կալ Նմա յաղօթս, եղև տեսիլ երեսաց Նորա այլակերպ. և փոխեցաւ հանդերձ Նորա, և եղև սպիտակ փայլուն: Եւ ահա արք երկու խօսէին ընդ Նմա, որք էին Մովսէս և Եղիա, երևեալ փառօք. և ասէին զելիցն Նորա՝ զոր կատարելոց էր յԵրուսաղէմ: Իսկ Պետրոս՝ և որք ընդ Նմայն էին՝ ծանրացեալք 'ի քնոյ, զարթեան, և տեսին զփառսն Նորա, և զերկուս արսն՝ որք կային առ Նմա: Եւ եղև 'ի մեկնելն նոցա 'ի Նըմանէ, ասէ Պետրոս ցՅիսուս. վարդապետ՝ բարւո՛ք է մեզ աստ լինել, և արասցուք երիս տաղաւարս. մի Քեզ, և մի Մովսիսի, և մի Եղիայի. և ո՛չ գիտէր զի՞նչ խօսէր: Եւ իբրև զայս ասաց. եկն ամպ, և հովանի եղև 'ի վերայ նոցա. և երկեան 'ի մտանելն նոցա ընդ ամպովն: Ձայն եղև յամպոյն, և ասէ. դա՛ է Որդի իմ ընտրեալ. դմա՛ լուարուք: Եւ ընդ լինել բարբառոյն, գտաւ Յիսուս միայն:

Մատ. 17. 9:

Եւ մինչդեռ իջանէին 'ի լեռնէ անտի, պատուիրեաց Նոցա Յիսուս, և ասէ. մի՛ ումեք ասիցէք զտեսիլդ, մինչև Որդի մարդոյ 'ի մեռելոց յարիցէ:

ԻԱ. ՅԻՍՈՒՍ ՆԱԽԱԳՈՒՇԱԿԷ ԶԹԱՂՄԱՆԷ ԻՒՐՄԷ:

Յովհաննու 12. 1 — 6:

Իսկ Յիսուս վեց աւուրբք յառաջ քան զզատիկն՝ եկն 'ի Բեթանիա, ուր էր Ղազար մեռեալն, զոր յարոյց 'ի մեռելոց: Եւ արարին անդ նմա ընթրիս. և 'ի սպասու կայր Մարթա. և Ղազար մի էր 'ի բազմելոց ընդ նմա: Իսկ Մարեմայ առեալ լիտր մի իւղոյ նարդեան ազնուի մեծագնոյ, էօծ զոտսն Յիսուսի. և հերով իւրով մաքրէր զոտս նորա. և տունն լի եղև 'ի հոտոյ իւղոյն: Ասէ մի ոմն յաշակերտաց անտի Յուդայ Իսկարիովտացի՝ որ մատնելոցն էր զնա. ընդէ՞ր ոչ իւղդ այդ վաճառեցաւ երեք հարիւր դենարի, և տուաւ աղքատաց: Զայս ասաց. ո՛չ զի զաղքատացն ինչ փոյթ էր նմա. այլ զի գող էր՝ և զարկղն ինքն ունէր. և որ ինչ անկանիւրն, նա կրէր:

Մարկ. 14. 6 — 9:

Եւ Յիսուս ասէ ցնոսա. թո՛յլ տուք դմա. զի՞ աշխատ առնէք, զի գործ մի բարի գործեաց դա յիս: Յամենայն ժամ զաղքատս ընդ ձեզ ունիք, և յորժամ կամիք՝ կարող էք առնել նոցա բարիս. այլ զիս ո՛չ յամենայն ժամ ընդ ձեզ ունիք: Դա զոր ունէր, արար. յառաջագոյն խնկեաց զմարմին իմ 'ի նշան պատանաց: Ամէն ասեմ ձեզ. ուր և քարոզեսցի աւետարանս այս ընդ ամենայն աշխարհ, և զոր արար դա՝ խօսեսցի յիշատակի դորա:

ԻԲ. ՀՐԱՇԱՓԱՌ ՄՈՒՏ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՅԵՐՈՒՍԱՂԷՄ:

Մատ. 21. 1 — 17:

Իբրեւ մօտ եղեն յԵրուսաղէմ, եւ եկին 'ի Բեթփագէ մերձ 'ի լեառն Ձիթենեաց: Յայնժամ Յիսուս արձակեաց երկուս յաշակերտաց իւրոց, եւ ասէ ցնոսա. երթա՛յք 'ի գեօղդ՝ որ առաջի ձեր է. եւ անդէն գտանէք էշ կապեալ՝ եւ յաւանակ ընդ նմին. լուծէ՛ք՝ եւ ածէ՛ք ինձ: Եւ եթէ ոք ասիցէ ինչ ձեզ, ասասջի՛ք. եթէ տեառն իւրեանց պիտոյ են. եւ վաղվաղակի առաքեսցէ զնոսա: Բայց այս ամենայն եղեւ, զի լցցի բան մարգարէին՝ որ ասէ. Ասացէ՛ք՝ դստեր Սիոնի, ահա թագաւոր քո գայ քեզ հեզ, հեծեալ յէշ եւ յաւանակի իշոյ: Գնացին աշակերտքն. եւ արարին որպէս հրամայեաց նոցա Յիսուս: Եւ ածին զէշն եւ զյաւանակն. եւ արկին զնոքօք ձորձս, եւ նստաւ 'ի վերայ նոցա: Եւ բազում ժողովուրդք տարածեցին զհանդերձս իւրեանց 'ի ճանապարհին. եւ այլք հատանէին ոստս 'ի ծառոց, եւ տարածանէին 'ի ճանապարհին: Եւ ժողովուրդքն՝ որք առաջի եւ զկնի երթային, աղաղակէին՝ եւ ասէին. Օրհնութիւն Որդւոյ Դաւթի. օրհնեալ որ գայ յանուն Տեառն. օրհնութիւն 'ի բարձունս: Եւ 'ի մտանելն Նորա յԵրուսաղէմ, դղրդեցաւ քաղաքն ամենայն, եւ ասէ. ո՞վ իցէ սա: Եւ ժողովուրդքն ասեն. սա՛ է մարգարէն Յիսուս՝ որ 'ի Նազարեթէ Գալիլեացւոց: Եւ եմուտ Յիսուս 'ի տաճարն. եւ եհան արտաքս զամենեսին՝ որք վաճառէին եւ գնէին 'ի տաճարի անդ. եւ զսեղանս հատավաճառացն կործանեաց, եւ զաթոռս աղաւնեվաճառացն: Եւ ասէ ցնոսա. գրեալ է, տուն իմ՝ տուն աղօթից կոչեսցի. եւ դուք արարէք զդա

այրս աւազակաց։ Եւ մատեան առ նա կոյրք և կաղք 'ի տաճարին. և բժշկեաց զնոսա։ Իբրև տեսին քահանայապետքն և դպիրք զսքանչելիսն՝ զոր արար. և զմանկտին՝ որք աղաղակէին 'ի տաճարին, և ասէին. Ովսաննա, օրհնութիւն Որդւոյ Դաւթի բարկացան։ Եւ ասեն ցնա. լսե՞ս, զի՞նչ ասեն դոքա։ Ասէ ցնոսա Յիսուս. այո. չիցէ՞ ընթերցեալ ձեր, թէ 'ի բերանոյ տղայոց և ստնդեայց կատարեցեր զօրհնութիւն։ Եւ թողեալ զնոսա, ել արտաքոյ քաղաքին 'ի Բեթանիա. և անդ ագաւ։

ԻԳ. ՆՈՐ ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՀՕՐ ԱՍՏՈՒԾՈՅ ԶՅԻՍՈՒՍԷ ՔՐԻՍՏՈՍԷ։

Յովհ. 12. 20 — 32։

Էին անդ ոմանք և հեթանոսք յելելոց անտի, զի երկիրպագանիցեն 'ի տօնին։ Նոքա մատեան առ Փիլիպպոս՝ որ 'ի Բեթսայիդայ Գալիլեացւոյն էր, աղաչէին զնա, և ասէին. տէ՛ր՝ կամիմք զՅիսուս տեսանել։ Գայ Փիլիպպոս, և ասէ ցԱնդրէաս. Անդրէաս և Փիլիպպոս ասեն ցՅիսուս։ Եւ Յիսուս պատասխանի ետ նոցա, և ասէ. եհաս ժամ, զի փառաւորեսցի Որդի մարդոյ։ Ամէն ամէն ասեմ ձեզ. եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի, ինքն միայն կայ. ապա եթէ մեռանիցի, բազում արդիւնս առնէ։ Որ սիրէ զանձն իւր՝ արձակէ զնա. և որ ատեայ զանձն իւր յաշխարհիս յայսմիկ, 'ի կեանսն յաւիտենականս պահեսցէ զնա։ Եթէ ոք զիս պաշտեսցէ, զկնի իմ եկեսցէ. և ուր եմ ես, անդ և պաշտօնեայն իմ եղիցի. եթէ ոք զիս պաշտեսցէ, պատուեսցէ զնա Հայրն իմ։ Բայց այժմ անձն իմ խռովեալ է. և զի՞նչ ասացից. եթէ Հա՛յր՝ ապրեցո՛ զիս 'ի ժամէ աստի յայսմանէ. այլ վասն այնորիկ եկի ես

՚ի ժամս յայս։ Հա՛յր, փառաւորեա՛ զանուն քո։ Եկն բարբառ յերկնից՝ և փառաւոր արարի, և դարձեալ փառաւոր արարից։ Եւ ժողովուրդն՝ որ կայր և լսէր, ասէին. որոտումն լինիլ. կէսքն ասէին. հրեշտակ խօսեցաւ ընդ նմա։ Պատասխանի ետ Յիսուս, և ասէ. ոչ վասն իմ ինչ եկն բարբառս այս. այլ վասն ձեր։ Այժմիկ դատաստան է աշխարհիս այսորիկ. այժմիկ իշխան աշխարհիս այսորիկ ընկեսցի արտաքս։ Եւ ես յորժամ բարձրացայց յերկրէ, զամենեսին ձգեցից առ իս։

ԻԴ. ՅՈՒԴԱՅ ՅԱՆՁՆ ԱՌՆՈՒ ՄԱՏՆԵԼ ԶՅԻՍՈՒՍ։

Ղուկ. 22. 1 — 2։

Մերձեցաւ տօն բաղարջակերացն՝ որ կոչիւր Պասքա։ Եւ խնդրէին քահանայապետքն և դպիրք՝ թէ որպէս սպանանիցեն զնա. բայց երկնչէին ՚ի ժողովրդենէ անտի։

Մատ. 26. 14 — 16։

Յայնժամ գնաց մի յերկոտասանիցն՝ անուանեալ Յուդա Իսկարիովտացի առ քահանայապետսն, և ասէ. զի՞նչ կամիք տալ ինձ. և ես մատնեցից զնա ձեզ։ Եւ նոքա կշռեցին նմա երեսուն արծաթի։ Եւ յայնմհետէ խնդրէր պարապ, զի մատնեսցէ զնա նոցա։

ԻԵ. ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ ԼՈՒԱՆԱՅ ԶՈՏՍ ԱՇԱԿԵՐՏԱՑ։

Յովհ. 13. 1 — 17։

Յառաջագոյն քան զտօնն զատկին՝ գիտաց Յիսուս, թէ հասեալ է ժամ նորա՝ զի փոխեսցի յաշխարհէ աստի առ Հայր. սիրեաց զիւրսն՝ որք աշխարհի աստ էին. իսպառ սի-

րեաց զնոսա։ Եւ 'ի լինել ընթրեացն՝ սատանայի իսկ արկեալ էր 'ի սիրտ, զի մատնեսցէ զնա Յուդայ Սիմոնի Իսկարիովտացւոյ։ Գիտաց Յիսուս, զի զամենայն ինչ ետ Հայր 'ի ձեռս Նորա. և թէ յԱստուծոյ ել, և առ Աստուած երթայ։ Յառնէ ընթրեաց անտի, և դնէ զհանդերձն. և առեալ զղենջակ մի՝ սփածաւ։ Եւ ապա առեալ զջուր՝ էարկ 'ի կոնք, և սկսաւ լուանալ զոտս աշակերտացն. և սրբէր ղենջակաւն՝ զոր սփածեալն էր։ Գայ առ Սիմոն Պետրոս. և Նա ասէ ցնա. Տէ՛ր՝ դո՞ւ զիմ զոտս լուանաս։ Պատասխանի ետ Նմա Յիսուս, և ասէ. զոր ինչ ես գործեմ, դու այժմ ոչ գիտես. բայց յապա գիտասջիր։ Ասէ ցնա Պետրոս. ոչ լուասցես զոտս իմ յաւիտեան։ Պատասխանի ետ Նմա Յիսուս. եթէ ոչ լուացից զքեզ, ոչ ունիս ընդ իս մասն։ Ասէ ցնա Սիմոն Պետրոս. Տէ՛ր, մի՛ միայն զոտս իմ, այլև զձեռս՝ և զգլուխ։ Ասէ ցնա Յիսուս. լուացելոյն չէ՛ ինչ պիտոյ, բայց զի զոտսն լուանայցէ, քանզի ամենևին սուրբ է. և դուք սուրբ էք, այլ ոչ ամենեքին։ Զի գիտէր զայն՝ որ մատնելոցն էր զնա. վասն այնորիկ ասաց. եթէ ոչ ամենեքին սուրբ էք։ Եւ յորժամ լուաց զոտս Նոցա, էառ զհանդերձն իւր՝ և դարձեալ բազմեցաւ, և ասէ ցնոսա. գիտէ՞ք զինչ արարի ձեզ։ Դուք կոչէք զիս վարդապետ և Տէր. և բարւոք ասէք, քանզի եմ իսկ։ Իսկ արդ՝ եթէ ես լուացի զոտս ձեր, Տէրս և վարդապետս. և դուք պարտիք զմիմեանց զոտս լուանալ։ Զի օրինակ մի ետու ես ձեզ. զի որպէս ես ձեզ արարի, և դուք առնիջիք։ Ամէն ամէն ասեմ ձեզ. ոչ է ծառայ մեծ քան զՏէր իւր. և ոչ առաքեալ մեծ քան զայն՝ որ առաքեացն զնա։ Եթէ զայս գիտէք, երանելի եւս էք՝ եթէ առնիցէք զայս։

ԻԶ· ՏՕՆՈՒՄՆ ՊԱՍԵՔԻ ՀՆՈՑ ՈՒԽՏԻ:

Ղուկ. 22. 7 — 16:

Եկն օր բաղարջակերացն՝ յորում օրէն էր զենուլ զպասեքն: Եւ առաքեաց զՊետրոս՝ և զՅովհաննէս, և ասէ. երթա՛յք՝ պատրաստեցէ՛ք մեզ զպասեքն, զի կերիցուք: Եւ նոքա ասեն. ո՞ւր կամիս՝ զի պատրաստեսցուք: Եւ ասէ ցնոսա. ահա իբրև մտանիցէք 'ի քաղաքն, պատահեսցի ձեզ այր մի բարձեալ սափոր ջրոյ. երթիջիք զհետ նորա 'ի տունն՝ յոր մտանիցէ: Եւ ասասջիք ցտանուտէր տան. վարդապետն ասէ քեզ. ո՞ւր են վանքն իմ, յորում զպասեքն ուտիցեմ աշակերտօքս հանդերձ: Եւ նա ցուցցէ ձեզ վերնատուն մի մեծ զարդարեալ. և անդ պատրաստեսջիք: Եւ գնացեալ գտին, որպէս և ասաց նոցա. և պատրաստեցին զպասեքն: Եւ իբրև ժամ եղև. բազմեցաւ, և երկոտասան առաքեալքն ընդ նմա: Եւ ասէ ցնոսա. ցանկանալով ցանկացայ զայս պասեք ուտել ընդ ձեզ, մինչչև չարչարեալ իցեմ: Բայց ասեմ ձեզ, թէ ո՛չ ևս կերից 'ի սմանէ մինչև լցցի յարքայութեան Աստուծոյ:

ԻԷ· ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ ԽՈՐՀՐԴՈՑ ՊԱՏԱՐԱԳԻ ՆՈՐՈՑ ՈՒԽՏԻ:

Մատ. 26. 26 — 29:

Եւ մինչդեռ ուտէին նոքա, էառ Յիսուս հաց, և օրհնեաց՝ և եբեկ, և ետ աշակերտացն, և ասէ. Առէ՛ք կերա՛յք՝ ա՛յս է մարմին իմ: Եւ առեալ բաժակ՝ գոհացաւ, ետ նոցա՝ և ասէ. Արբէ՛ք 'ի դմանէ ամենեքին: Զի ա՛յդ է արիւն իմ նորոյ ուխտի, որ 'ի վերայ բազմաց հեղանի 'ի թողութիւն մեղաց: Բայց ասեմ ձեզ. ո՛չ ևս արբից յայսմ

հետէ 'ի բերոյ որթոյ՝ մինչև ցօրն ցայն՝ յորժամ արբից զդա ընդ ձեզ նոր յարքայութեան հօր իմոյ։

ԻԸ. ՅԱՌԱՋԱԳՈՅՆ ՅԱՅՏՆԵԼՆ ՅԻՍՈՒՍԻ ԶՄԱՏՆԻՉՆ ԻՒՐ Ի ՎԵՐԱՅ ԸՆԹՐԵԱՑ ԱՆԴ, ԶԹԱՑԵԱԼ ՊԱՏԱՌՆ ՏԱԼՈՎ ՅՈՒԴԱՅԻ։

Մատ. 26. 21 — 25։

Եւ մինչդեռ ուտէին նոքա, ասէ. ամէն ասեմ ձեզ, զի մի ոմն 'ի ձէնջ մատնելոց է զիս։ Եւ տրտմեցան յոյժ. սկսան ասել ցնա իւրաքանչիւր ոք 'ի նոցանէ՝ մի՞թէ ես իցեմ՝ Տէ՛ր։ Նա պատասխանի ետ, և ասէ. որ մխեաց ընդ իս զձեռն իւր 'ի սկաւառակդ, նա մատնելոց է զիս։ Որդի մարդոյ երթայ՝ որպէս և գրեալ է վասն նորա. բայց վայ մարդոյն այնմիկ՝ յոյր ձեռն Որդի մարդոյ մատնեսցի. լաւ էր նմա՝ թէ չէր ծնեալ մարդն այն։ Պատասխանի ետ Յուդայ՝ որ մատնելոցն էր զնա, և ասէ. միթէ ե՞ս իցեմ՝ վարդապետ։ Ասէ ցնա. դո՛ւ ասացեր։

31 — 32։

Յայնժամ ասէ ցնոսա Յիսուս. ամենեքեան դուք գայթակղելոց էք յինէն յայսմ գիշերի. զի գրեալ է. թէ հարից զհովիւն, և ցրուեսցին ոչխարք հօտին։ Եւ յետ յառնելոյն իմոյ, յառաջեցից քան զձեզ 'ի Գալիլեա։

Ղուկ. 22. 31 — 39։

Եւ ասէ Տէր. Սի՛մոն, Սի՛մոն. ահա սատանայ խնդրեաց զձեզ խարբալել իբրև զցորեան։ Այլ ես աղաչեցի վասն քո՝ զի մի՛ պակասեսցին հաւատք քո. և դու երբեմն դարձ-

ցիս, և հաստատեսցես զեղբարս քո: Եւ Նա ասէ ցնա. Տէ՛ր, ընդ քեզ պատրաստ եմ և 'ի բանդ և 'ի մահ երթալ: Եւ Նա ասէ ցնա. ասեմ քեզ՝ Պե՛տրէ. չիցէ այսօր հաւու խօսեալ, մինչ երիցս ուրասցիս զիս չգիտել: Եւ ասէ ցնոսա. յորժամ առաքեցի զձեզ առանց քսակի՝ և մախաղի՝ և կօշկաց, միթէ կարօտացայ՞ք իմիք: Եւ Նոքա ասեն. և ո՛չ իմիք. ապա ասէ. այլ այժմ որ ունի զքսակ՝ բարձցէ, նոյնպէս և մախաղ. և որ ոչն ունի՝ վաճառեսցէ զձորձս իւր, և գնեսցէ իւր սուսեր: Բայց ասեմ ձեզ. զի այս ևս որ գրեալ է, պարտ է զի կատարեսցի յիս, թէ ընդ անօրէնս համարեցաւ, զի որ վասն իմ ինչ է՝ վճարեալ է: Եւ Նոքա ասեն. Տէ՛ր, ահաւասիկ են աստ երկու սուրք. և Նա ասէ ցնոսա. բաւական են: Եւ ելեալ գնաց ըստ սովորութեանն 'ի լեառն Ձիթենեաց. գնացին զհետ Նորա և աշակերտքն:

ԻԹ. ՅԻՍՈՒՍ Ի ՊԱՐՏԻԶԻՆ ԳԷԹՍԷՄԱՆԻ:

Մատ. 26. 36 — 44:

Յայնժամ գայ Յիսուս ընդ Նոսա 'ի գիւղ մի՝ որում անուն էր Գէթսէմանի, և ասէ ցնոսա. Նստարո՛ւք այդր, մինչև երթայց կացից յաղօթս: Եւ առեալ ընդ իւր զՊետրոս և զերկուս որդիսն Զեբեդեայ, սկսաւ տրտմիլ և հոգալ: Յայնժամ ասէ ցնոսա. տրտում է ոգի իմ մինչև 'ի մահ. կացէ՛ք աստ, և հսկեցէ՛ք ընդ իս: Եւ մատուցեալ յառաջ սակաւիկ մի, անկաւ 'ի վերայ երեսաց իւրոց՝ եկաց յաղօթս, և ասէ. Հա՛յր իմ, եթէ հնար է, անցցէ՛ բաժակս այս յինէն. բայց ո՛չ որպէս ես կամիմ, այլ որպէս դու: Գայ առ աշակերտսն, և գտանէ զնոսա 'ի քուն, և ասէ ցՊետրոս. այդպէս ո՛չ կարացիք մի ժամ արթուն կալ ընդ իս: Արթո՛ւն կացէք, և աղօթս արարէք՝ զի մի՛ անկա-

նիցիք 'ի փորձութիւն. հոգիս յօժար է՝ բայց մարմինս տկար: Դարձեալ երկրորդ անգամ չոգաւ, եկաց յաղօթս Յիսուս, և ասէ: Հա՛յր իմ, եթէ հնար իցէ անցանել յինէն բաժակիս այսմիկ. ապա թէ ո՛չ՝ արբից զսա. եղիցին կամք քո: Եւ եկեալ միւսանգամ՝ եգիտ զնոսա 'ի քուն, զի էին աչք իւրեանց ծանրացեալք: Եթող զնոսա և գնաց. եկաց յաղօթս երրորդ անգամ. և դարձեալ զնոյն բան ասաց:

Ղուկ 22. 43 — 44:

Եւ երեւեցաւ նմա հրեշտակ յերկնից, և զօրացուցանէր զնա, և էր 'ի տագնապի. և մտադիւրութեամբ եւս կայր յաղօթս: Եւ հոսէին 'ի նմանէ քրտունք իբրև զկայլակս արեան, ոլոռն ոլոռն հեղեալ յերկիր:

Մատ. 26. 45 — 46:

Յայնժամ գայ առ աշակերտսն, և ասէ ցնոսա. Ննջեցէ՛ք այսուհետև և հանգերո՛ւք, զի ահա հասեալ է ժամ. և Որդի մարդոյ մատնի 'ի ձեռս մեղաւորաց: Արի՛ք՝ երթիցո՛ւք աստի, զի ահաւասիկ եհաս՝ որ մատնելոց է զիս:

Լ. ՅՈՒԴԱՑ ՄԱՏՆԷ ԶՅԻՍՈՒՍ:

Ղուկ. 22. 47 — 49:

Եւ մինչդեռ խօսէր, ահաւասիկ ամբոխ. և որ կոչիւրն Յուդա՛յ՝ մի յերկոտասանիցն, առաջնորդէր նոցա: Իբրև մերձեցաւ առ Յիսուս, համբուրեաց զնա. քանզի զայն նշան տուեալ էր նոցա, թէ ընդ որում ես համբուրեցից՝ նա է, զնա ունիցիք: Ասէ ցնա Յիսուս. Յո՛ւդայ, համբուրելո՞վ մատնես զՈրդի մարդոյ: Իբրև տեսին՝ որք զնովաւն էին՝ որ ինչ եղև, ասեն ցնա. Տէ՛ր՝ հարցո՞ւք զնոսա սրով:

Յովհ. 18. 4 — 10։

Իսկ Յիսուս իբրև ետես զայն ամենայն եկեալ 'ի վերայ նորա, ել՝ և ասէ ցնոսա. զո՞ խնդրէք։ Պատասխանի ետուն նմա. զՅիսուս Նազովրեցի։ Ասէ ցնոսա Յիսուս. ես եմ։ Կայր ընդ նոսա և Յուդայ՝ որ մատնէրն զնա։ Իբրև ասաց, թէ ես եմ. յետս յետս չոգան՝ և զարկան զգետնի։ Դարձեալ եհարց զնոսա. զո՞ խնդրէք։ Նոքա ասեն. զՅիսուս Նազովրեցի։ Պատասխանի ետ նոցա Յիսուս. ասացի ձեզ, թէ ես եմ. արդ՝ եթէ զիս խնդրէք, թոյլ տուք դոցա երթալ. զի լցցի բանն՝ զոր ասաց, թէ զոր ետուր ցիս՝ ոչ կորուսից 'ի նոցանէ, և ոչ զոք։ Իսկ Սիմոն Պետրոս քանզի ունէր զսուր, ձգեաց զնա, և եհար զքահանայապետին ծառայ, և 'ի բաց հատ զունկն նորա զաջոյ. և էր անուն ծառային Մաղքոս։

Ղուկ. 22. 51։

Պատասխանի ետ Յիսուս, և ասէ. թոյլ տուք մինչև ցայդ վայր. և մատուցեալ յունկն բժշկեաց զնա։

Մատ. 26. 52 — 56։

Յայնժամ ասէ ցնա Յիսուս. դարձո զսուր քո 'ի տեղի իւր. զի ամենեքեան՝ որք զսուր առնուցուն, սրով անկանիցին։ Թէ համարիցիս, թէ ոչ կարեմ աղաչել զՀայր իմ, և հասուցանիցէ ինձ այսր՝ աւելի քան զերկոտասան գունդս հրեշտակաց. այլ զիա՞րդ լնանիցին գիրք՝ թէ այսպէս պարտ է լինել։ Յայնժամ ասաց Յիսուս ցամբոխն. իբրև 'ի վերայ աւազակի ելէք սուսերօք՝ և բրօք ունել զիս. հանապազ 'ի տաճարին նստէի և ուսուցանէի. և ոչ կալայք զիս։ Այլ այս ամենայն եղև, զի լցցին գիրք մարգարէիցն. յայնժամ աշակերտքն ամենեքին թողին զնա, և փախեան։

ԼԱ· ՉԱՐՉԱՐԱՆՔ ՅԻՍՈՒՍԻ։

Յովհ· 18· 12 — 27։

Իսկ գունդն, և հազարապետն, և սպասաւորքն Հրէից՝ կալան զՅիսուս, և կապեցին։ Եւ ածին զնա նախ առ Աննա, որ էր աներ Կայիափայի՝ որ քահանայապետն էր տարւոյն այնորիկ։ Այս այն Կայիափայ էր՝ որ խրատն ետ Հրէից, եթէ լաւ է առն միում մեռանել 'ի վերայ ժողովրդեանն։ Եւ երթային զհետ Նորա Սիմոն Պետրոս՝ և միւս աշակերտն. և աշակերտն այն՝ քանզի ծանօթ էր քահանայապետին, եմուտ ընդ Յիսուսի 'ի գաւիթ քահանայապետին։ Եւ Պետրոս կայր առ դրանն արտաքոյ. ել միւս աշակերտն՝ որ էր ծանօթ քահանայապետին, և ասաց ցդռնապանն, և եմոյծ 'ի ներքս զՊետրոս։ Ասէ աղջիկն՝ որ դռնապանն էր՝ ցՊետրոս. մի՞թէ և դու յաշակերտաց առնն այնորիկ իցես. և Նա ասէ. ո՛չ եմ։ Կային անդ ծառայքն և սպասաւորք խարոյկ արկեալ, քանզի ցուրտ էր՝ և ջեռնուին. կայր ընդ Նոսա և Պետրոս՝ և ջեռնոյր։ Եւ քահանայապետն եհարց զՅիսուս, վասն աշակերտացն՝ և վասն վարդապետութեան Նորա։ Պատասխանի ետ Նմա Յիսուս. Ես յայտնապէս խօսեցայ յաշխարհի. ես յամենայն ժամ ուսուցի 'ի ժողովրդեանն, և 'ի տաճարի անդ՝ ուր ամենայն Հրէայքն ժողովեալ էին. և 'ի ծածուկ ինչ ո՛չ խօսեցայ։ Զի՞ հարցանես զիս. հարց զայնոսիկ՝ որք լուանն, եթէ զի՞նչ ասացի ցնոսա. ահաւանիկ Նոքա գիտեն՝ զի՞նչ ասացի ես։ Իբրև Նա զայս ասաց, մի ոմն 'ի սպասաւորացն՝ որ անդ կայր, եած ապտակ Յիսուսի, և ասէ. ա՞յդպէս պատասխանի տաս քահանայապետիդ։ Եւ Յիսուս ասէ ցնա. եթէ չար ինչ խօսեցայ, վկայեա՛ վասն չարին. իսկ եթէ

բարի, ընդէ՞ր հարկանես զիս: Եւ առաքեաց զնա Աննա կապեալ՝ առ Կայիափայ քահանայապետ: Եւ Սիմոն Պետրոս կայր անդ՝ և ջեռնոյր: Ասեն ցնա· մի՞թէ և դու յաշակերտաց անտի նորա իցես: Նա ուրացաւ, և ասէ· թէ չե՛մ: Եւ ասէ մի ոմն ՚ի ծառայից քահանայապետին, ազգական այնորիկ՝ զորոյ զունկն եհատ Պետրոս· ո՞չ ես իսկ տեսի զքեզ ՚ի պարտիզի անդ ընդ նմա: Դարձեալ ուրացաւ Պետրոս· և վաղվաղակի հաւ խօսեցաւ:

Ղուկ· 22· 61 — 62:

Դարձաւ Տէր՝ և հայեցաւ ՚ի Պետրոս· և յիշեաց Պետրոս զբանն Տեառն՝ զոր ասաց ցնա· մինչչև հաւու խօսեալ իցէ, երիցս ուրասցիս չգիտել զիս: Եւ ելեալ արտաքս, ելաց դառնապէս:

Մատ· 26· 59 — 68:

Իսկ քահանայապետն և ամենայն ատեանն խնդրէին սուտ վկայութիւն զՅիսուսէ՝ զի սպանցեն զնա· և ո՛չ գտանէին ՚ի բազմաց սուտ վկայիցն մատուցելոց: Յետոյ մատուցեալ երկու սուտ վկայք՝ ասէին, թէ՝ սա ասէր· կարող եմ քակել զտաճարն Աստուծոյ, և զերիս աւուրս շինել: Եւ յարուցեալ քահանայապետն, ասէ ցնա· չտա՞ս ինչ պատասխանի· զի՞նչ դոքա ամբաստանեն զքէն: Եւ Յիսուս լուռ կայր: Պատասխանի ետ քահանայապետն, և ասէ ցնա· երդմնեցուցանեմ զքեզ յԱստուած կենդանի, զի ասասցես մեզ, թէ դո՛ւ ես Քրիստոսն Որդի Աստուծոյ: Ասէ ցնա Յիսուս· դու ասացեր: Բայց ասեմ ձեզ· յայսմհետէ տեսանիցէք զՈրդի մարդոյ նստեալ ընդ աջմէ զօրութեանն, և եկեալ ընդ ամպս երկնից: Յայնժամ քահանայապետն պատառեաց զհանդերձս իւր, և ասէ· հայհոյեաց,

զի՞ ևս պիտոյ են մեզ վկայք. ահա արդ լուայք զհայհոյութիւն նորա. զի՞նչ հաճոյ է ձեզ: Նոքա պատասխանի ետուն, և ասեն. մահապարտ է: Յայնժամ թքին ընդ երեսս նորա, և կռփեցին զնա. և ոմանք ապտակեցին, և ասեն. մարգարէա՛ց մեզ Քրիստոսդ, ո՞վ է՝ որ եհարն ըզքեզ:

27. 1 — 2:

Իբրև այգ եղև, խորհուրդ արարին ամենայն քահանայապետք և ծերք ժողովրդեանն վասն Յիսուսի՝ սպանանել զնա: Կապեցին զնա, և առին գնացին. և ետուն 'ի ձեռս Պոնտացւոյ Պիղատոսի դատաւորի:

ԼԲ. ԿՈՐՈՒՍՏ ՅՈՒԴԱՅԻ ՄԱՏՆՉԻ:

Մատ. 27. 3 — 10:

Յայնժամ տեսեալ Յուդայի՝ որ մատնեաց զնա, թէ պարտաւորեցաւ, զղջացաւ. և դարձոյց զարծաթն առ քահանայապետսն և ծերս ժողովրդեանն, և ասէ. մեղայ, զի մատնեցի զարիւն արդար: Եւ նոքա ասեն. մեզ չէ՛ փոյթ, դու գիտես: Եւ ընկէց զարծաթն 'ի տաճարն՝ և գնաց. և չոգաւ խեղդեցաւ: Իսկ քահանայապետիցն առեալ զարծաթն, ասեն. ոչ է արժան ընդունել զայդ 'ի կորբանն, քանզի գինք արեան են: Խորհուրդ առեալ՝ գնեցին այնու զագարակն բրտի 'ի գերեզման օտարաց. վասն այնորիկ կոչեցաւ ագարակն այն, ագարակ արեան՝ մինչև ցայսօր: Յայնժամ լցաւ՝ որ ասացաւ 'ի ձեռն Երեմիայի մարգարէին. առին զերեսուն արծաթին զգինս վաճառելոյն՝ զոր առին յորդւոց Իսրայէլի: Եւ ետուն զնա յագարակն բրտի, որպէս հրամայեաց ինձ Տէր:

ԼԳ. ՉԱՐՉԱՐԱՆՔ ՅԻՍՈՒՍԻ Ի ՏԱՆ ՊԻՂԱՏՈՍԻ ԵՒ ՀԵՐՈՎԴԻԱՑ։

Յովհ. 18. 28 — 38։

Եւ ածին զՅիսուս 'ի վանաց Կայիափայ յապարանս դատաւորին. և էր այգուց. և նոքա ոչ մտին յապարանսն, զի մի՛ պղծեսցին. այլ զի ուտիցեն զզատիկն։ Ել առ նոսա Պիղատոս արտաքս, և ասէ. զի՞նչ չարախօսութիւն մատուցանէք զառնէն զայնմանէ։ Պատասխանի ետուն, և ասեն ցնա. եթէ չէր չարագործ այրն այն, ապա ոչ մատնէաք զնա քեզ։ Ասէ ցնոսա Պիղատոս. առէ՛ք զնա դուք, և ըստ ձերոց օրինացն դատեցէ՛ք. ասեն ցնա Հրէայքն. մեզ ոչ է արժան սպանանել զոք։ Զի լցցի բանն Յիսուսի՝ զոր ասաց նշանակեալ, թէ որո՞վ մահու մեռանելոց իցէ։ Եմուտ միւսանգամ յապարանսն Պիղատոս, կոչեաց զՅիսուս՝ և ասէ ցնա. դո՞ւ ես թագաւորն Հրէից։ Պատասխանի ետ Յիսուս. 'ի քէ՞ն ասես զայդ՝ եթէ այլք ասացին քեզ զինէն։ Պատասխանի ետ Պիղատոս. միթէ և ես Հրէա՞յ իցեմ. ազգն քո և քահանայապետքն մատնեցին զքեզ ինձ. զի՞նչ գործ գործեալ է քո։ Պատասխանի ետ Յիսուս. իմ արքայութիւն չէ՛ յայսմ աշխարհէ. եթէ յաշխարհէ աստի էր արքայութիւն իմ, սպասաւորքն իմ մարտնչէին արդեօք՝ զի մի՛ մատնեցայց Հրէից. բայց արդ թագաւորութիւնն իմ չէ՛ աստի։ Ասէ ցնա Պիղատոս. ապա թէ այդպէս իցէ, թագաւոր ո՞ւմն ես դու։ Պատասխանի ետ Յիսուս. դու ասես, թէ թագաւոր իցեմ. բայց ես յայդ իսկ ծնեալ եմ. և 'ի դոյն իսկ եկեալ եմ յաշխարհ, զի վկայեցից ճշմարտութեանն. ամենայն՝ որ 'ի ճշմարտութենէ է, լսէ բարբառոյ իմոյ։ Ասէ ցնա Պիղատոս.

զի՞նչ է ճշմարտութիւն։ Զայս իբրեւ ասաց, դարձեալ ել առ Հրէայսն՝ եւ ասէ ցնոսա. ես՝ եւ ոչ մի ինչ պատճառս գտանեմ ՚ի նմա։

Ղուկ. 23. 5 — 16։

Եւ նոքա պնդէին՝ եւ ասէին, եթէ խռովէ զժողովուրդս. ուսուցանէ ընդ ամենայն Հրէաստան, սկսեալ ՚ի Գալիլեէ մինչեւ ցայսր։ Իսկ Պիղատոս իբրեւ լուաւ զԳալիլեէ, եհարց՝ եթէ Գալիլեացի իցէ այրն։ Եւ իբրեւ գիտաց՝ եթէ յիշխանութենէ Հերովդէի է, ետ տանել զնա առ Հերովդէս. քանզի եւ նա յԵրուսաղէմ էր յաւուրսն յայնոսիկ։ Եւ Հերովդէս իբրեւ ետես զՅիսուս, ուրախ եղեւ յոյժ. զի ցանկայր ՚ի բազում ժամանակաց տեսանել զնա. քանզի լսէր բազում անգամ զնմանէ, եւ ակն ունէր նշան ինչ լեալ տեսանել ՚ի նմանէ։ Հարցանէր զնա բանիւք բազմօք. եւ նա ոչինչ ետ նմա պատասխանի։ Կային քահանայապետքն եւ դպիրք, եւ պնդագոյնս չարախօսէին զնմանէ։ Արհամարհեաց զնա եւ Հերովդէս հանդերձ իւրովք զօրականօքն. եւ այպն արարեալ՝ էարկ զնովաւ հանդերձս սպիտակս. եւ ետ տանել անդրէն առ Պիղատոս։ Եւ եղեն բարեկամք Պիղատոս եւ Հերովդէս յաւուրն յայնմիկ. քանզի յառաջ թշնամիք էին միմեանց։ Կոչեաց Պիղատոս զքահանայապետսն, եւ զիշխանս եւ զժողովուրդն, եւ ասէ ցնոսա. ածիք մատուցիք ինձ զայրս զայս իբրեւ զխոտորեցուցիչ ժողովրդեանն. եւ ահաւասիկ առաջի ձեր դատեցի, եւ մեղս ինչ ոչ գտի յառնս յայսմիկ՝ զորոյ դուք չարախօսէքդ զմանէ։ Այլ եւ ոչ Հերովդէս, քանզի ետու տանել զդա առ նա. եւ արդ՝ ոչինչ մահու արժանի է գործեալ դորա։ Խրատեցից զդա, եւ արձակեցից։

Յովհ. 18. 39 — 40:

Բայց է ձեր սովորութիւն, զի զմի ոք արձակեցից ձեզ 'ի զատկիս. արդ՝ կամի՞ք զի արձակեցից ձեզ զԹագաւորն Հրէից: Աղաղակեցին ամենեքեան, և ասացին. մի՛ զդա, այլ զԲարաբբայ. և էր Բարաբբայն այն աւազակ:

Մատ. 27. 19 — 23:

Եւ մինչդեռ նստէր յատենին, առաքեաց առ նա կինն իւր՝ և ասէ. չկայ ինչ քո և արդարոյն այնորիկ. զի բազում անցք անցին ընդիս այսօր յանուրջս վասն նորա: Իսկ քահանայապետքն և ծերք հաւանեցուցին զժողովուրդսն՝ զի խնդրեսցեն զԲարաբբայն, և զՅիսուս կորուսցեն: Պատասխանի ետ դատաւորն, և ասէ ցնոսա. զո՞ կամիք զի արձակեցից ձեզ յերկուց այտի. և նոքա ասեն. զԲարաբբայն: Ասէ ցնոսա Պիղատոս. իսկ զի՞ արարից ըզՅիսուս զանուանեալն Քրիստոս: Ասեն ամենեքեան. խաչեսցի: Եւ նա ասէ. զի՞նչ չար արար. և նոքա ևս առաւել աղաղակէին և ասէին. խաչեսցի:

Յովհ. 19. 1 — 15:

Յայնժամ էառ Պիղատոս զՅիսուս՝ և գան եհար: Եւ զինուորայն արարեալ պսակ 'ի փշոց՝ եդին 'ի գլուխ նորա, և զգեցուցին նմա զհանդերձ ծիրանի: Եւ գային առ նա, և ասէին. ողջ եր արքայ Հրէից. և հարկանէին նմա ապտակս: Ել դարձեալ Պիղատոս արտաքս. և ասէ ցնոսա. ահա ածեմ զնա արտաքս առ ձեզ, զի գիտասջիք՝ թէ ես վնաս ինչ 'ի նմա ոչ գտանեմ: (Ել Յիսուս արտաքս, և ունէր պսակ 'ի փշոց և զհանդերձ ծիրանի). և ասէ ցնոսա. ահա այրդ ցձեզ: Իբրև տեսին զնա քահանայապետքն և սպա-

սաւորք. ղաղաղակ բարձին, և ասեն. 'ի խաչ հան, 'ի խաչ հան զդա։ Ասէ ցնոսա Պիղատոս. առէ՛ք զդա 'ի ձեզ, և ձեզէ՛ն հանէք 'ի խաչ, զի ես 'ի դմա վնաս ինչ ոչ գտանեմ։ Պատասխանի ետուն նմա Հրէայքն. մեք օրէնս ունիմք, և ըստ օրինաց մերոց պարտի մեռանել. զի զանձն իւր Որդի Աստուծոյ արար։ Իբրև լուաւ զբանս զայս Պիղատոս, առաւել ևս երկեաւ։ Եմուտ դարձեալ անդրէն յապարանսն, և ասէ ցՅիսուս. ուստի՞ ես դու. և Յիսուս ոչ ետ նմա պատասխանի։ Ասէ ցնա Պիղատոս. ընդ իս ո՞չ խօսիս. ո՞չ գիտես՝ եթէ իշխանութիւն ունիմ հանել զքեզ 'ի խաչ, և իշխանութիւն ունիմ արձակել զքեզ։ Պատասխանի ետ Յիսուս. ոչ ունէիր դու իշխանութիւն 'ի վերայ իմ և ոչ մի, եթէ ոչ էր տուեալ քեզ 'ի վերուստ. վասն այսորիկ՝ որ մատնեացն զիս քեզ, նորա մեծ մեղք են։ Եւ յայնմանէ Պիղատոս խնդրէր արձակել զնա. և Հրէայքն աղաղակէին, և ասէին. եթէ զդա արձակես, չե՛ս բարեկամ կայսեր. ամենայն ոք՝ որ թագաւոր կոչէ զանձն իւր, հակառակ է կայսեր։ Իսկ Պիղատոս իբրև լուաւ զբանս զայս, եած զՅիսուս արտաքս. և նստաւ 'ի վերայ բեմին, 'ի տեղւոջն՝ որ կոչէր Քարայատակ, և Եբրայեցերէն Կապպաթա։ Էր ուրբաթն զատկի. և էր ժամ իբրև վեցերորդ. և ասէ ցՀրէայսն. ահա՛ թագաւոր ձեր ցձեզ։ Եւ նոքա աղաղակէին. բա՛րձ 'ի մէնջ, բա՛րձ 'ի մէնջ, և հա՛ն զդա 'ի խաչ։ Ասէ ցնոսա Պիղատոս. ես զթագաւորդ ձեր 'ի խա՞չ հանիցեմ։ Պատասխանի ետուն քահանայապետքն. չի՛ք մեր թագաւոր բայց 'ի կայսերէ։

Մատ. 27 24 — 25։

Եւ տեսեալ Պիղատոսի՝ թէ ոչինչ օգնէ, այլ առաւել խռովութիւն լինի, առեալ ջուր՝ լուաց զձեռս առաջի ժո-

ղովրդեան, և ասէ. քաւեալ եմ ես յարենէ արդարոյդ այդորիկ. դուք գիտասջիք։ Պատասխանի ետ ամենայն ժողովուրդն, և ասէ. արիւն դորա ՚ի վերայ մեր և ՚ի վերայ որդւոց մերոց։

Ղուկ. 23. 23 — 25։

Եւ նոքա ստիպէին մեծաձայն, և խնդրէին զնա ՚ի խաչ հանել. և զօրանային բարբառք նոցա և քահանայապետիցն։ Եւ Պիղատոս հաւանեցաւ առնել զհայցուածս նոցա։ Արձակեաց նոցա զԲարաբբայն՝ զոր վասն խռովութեան և սպանութեան արկեալ էր ՚ի բանդ՝ զոր և խնդրէինն իսկ. և զՅիսուս մատնեաց կամաց նոցա։

Մարկ. 15. 16։

Եւ զինուորքն տարան զնա ՚ի ներքս ՚ի գաւիթն՝ ուր հրապարակն էր. և կոչեն միանգամայն զամենայն զգունդն։

18 — 20։

Եւ սկսան ողջոյն տալ նմա, և ասել. ողջ եր արքայդ Հրէից։ Եւ ծեծէին զգլուխն եղեգամբ. և թքանէին ընդ երեսս. և ՚ի ծունր իջեալ երկիր պագանէին նմա։ Եւ իբրև կատակեցին զնա, մերկացուցին զքղամիդն (նորա) և զծիրանիս. և զգեցուցին նմա զիւր հանդերձն. և ածէին արտաքս, զի ՚ի խաչ հանիցեն զնա։

ԼԴ. ԽԱՉԵԼՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՀ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ։

Ղուկ. 23. 26 — 31։

Իբրև տարին զնա, ըմբռնեցին զոմն Սիմոն Կիւրենացի՝ որ գայր յանդէ. եդին ՚ի վերայ նորա զխաչն բե-

բել զկնի Յիսուսի: Եւ երթայր զհետ Նորա բազմութիւն ժողովրդեանն, և կանանց՝ որք կոծէին, և աշխարէին զնա: Դարձաւ Յիսուս, և ասէ ցնոսա. դստե՛րք Երուսաղէմի՝ մի՛ լայք 'ի վերայ իմ, այլ լացէ՛ք 'ի վերայ անձանց և 'ի վերայ որդւոց ձերոց: Զի եկեսցեն աւուրք՝ յորս ասիցեն, թէ երանի ամլոց՝ և որովայնից՝ որք ո՛չ ծնան. և ստեանց՝ որք ո՛չ դիեցուցին: Յայնժամ սկսանիցին ասել լերանց, թէ անկերո՛ւք 'ի վերայ մեր. և բլրոց՝ թէ ծածկեցէ՛ք ըզմեզ: Զի եթէ ընդ փայտ դալար զայս առնեն, ընդ չորն զի՞նչ լինիցի:

Մատ. 27. 33 — 34:

Եւ եկեալ 'ի տեղին անուանեալ Գողգոթայ՝ որ է տեղի կառափելոյ: Ետուն Նմա գինի ընդ լեղի խառնեալ. և իբրև ճաշակեաց՝ ո՛չ կամէր ըմպել:

Ղուկ. 23. 32 — 33:

Ածին և այլ երկուս չարագործս, սպանանել ընդ Նմա: Իբրև չոգան 'ի տեղին կոչեցեալ գագաթն. անդ հանին զնա 'ի խաչ. և զչարագործսն՝ զոմն ընդ աջմէ՝ և զոմն ընդ ձախմէ խաչեցին:

Մարկ. 15 — 28:

Եւ լցաւ գիրն՝ որ ասէ, թէ ընդ անօրէնս համարեցաւ:

Ղուկ. 23 — 34:

Եւ Յիսուս ասէ. Հա՛յր, թո՛ղ դոցա, զի ո՛չ գիտեն զի՛նչ գործեն:

Յովհ. 19. 19 — 27:

Գրեաց և տախտակ մի Պիղատոս, և եդ 'ի վերայ խաչին. և էր գրեալ, Յիսուս Նազօրեցի, Թագաւոր Հրէից: Զայն

տախտակ ընթերցան բազումք 'ի Հրէից, զի մօտ էր 'ի քաղաք անդր տեղին՝ ուր խաչեցաւ Յիսուս. և էր գրեալ Եբրայեցերէն, Դաղմատերէն, և Յունարէն: Ասեն ցՊիղատոս քահանայապետքն Հրէից. մի՛ գրեր Թագաւոր Հրէից, այլ թէ՝ Նա ասաց Թագաւոր եմ Հրէից: Պատասխանի ետ Պիղատոս. զոր ինչ գրեցի՝ գրեցի: Իսկ զինուորքն իբրև հանին 'ի խաչ զՅիսուս, առին զհանդերձս Նորա. (և արարին չորս մասունս, իւրաքանչիւր զինուորի մասն). իսկ պատմուճանն՝ քանզի էր առանց կարանի, 'ի վերուստ փորանկեալ ամենևին, ասեն ցմիմեանս. մի՛ պատառեսցուք զայդ. այլ արկցուք վիճակս 'ի վերայ դորա՝ ում և ելցէ. զի լցցի գիրն՝ որ ասէ. բաժանեցին զհանդերձս իմ յիւրեանս. և 'ի վերայ պատմուճանի իմոյ վիճակ արկին. զինուորքն զայս ինչ գործեցին: Եւ կային առ խաչին Յիսուսի մայր Նորա, և քոյր մօր Նորա Մարիամ Կղէօպայ, և Մարիամ Մագդաղենացի: Յիսուս իբրև ետես զմայրն, և զաշակերտն՝ զոր սիրէր, զի կայր մօտ. ասէ ցմայրն. կի՛ն դու, ահա՛ որդի քո: Ապա ասէ ցաշակերտն. ահա՛ մայր քո: Եւ յայնմ ժամանակէ էառ աշակերտն զնա առ իւր:

Մատ. 27. 39 — 43:

Եւ որք անցանէին, հայհոյէին զնա. շարժէին զգլուխս իւրեանց, և ասէին. վա՜հ՝ որ քակէիր զտաճարն, և զերիս աւուրս շինէիր զնա՝ ապրեցո՛ զքեզ. եթէ Որդի ես Աստուծոյ՝ էջ 'ի խաչէդ: Նոյնպէս և քահանայապետքն ձաղէին հանդերձ դպրօքն և ծերօք, և ասէին. զայլս ապրեցոյց՝ զինքն ո՛չ կարէ ապրեցուցանել. եթէ Թագաւոր է Իսրայէլի՝ իջցէ այժմ 'ի խաչէդ, և հաւատասցուք դմա: Եթէ յուսացաւ յԱստուած, փրկեսցէ այժմ զդա՝ եթէ կամի զդա. քանզի ասաց, եթէ Աստուծոյ Որդի եմ:

Ղուկ. 23. 39 — 44։

Իսկ մի ոմն ՚ի կախելոց չարագործացն հայհոյէր զնա, և ասէր. եթէ դու ես Քրիստոսն. փրկեա՛ զանձն քո, և ըզմեզ։ Պատասխանի ետ ընկերն սաստելով նմա, և ասէ. չերկնչի՞ս դու յԱստուծոյ՝ զի ՚ի նմին պատժի կաս։ Եւ մեք յիրաւի, զի արժանի՝ որոց գործեցաքն, առնումք զհատուցումն. և սա ապիրատ ինչ ոչ գործեաց։ Եւ ասէ ցՅիսուս. յիշեա՛ զիս Տէ՛ր՝ յորժամ գայցես արքայութեամբ քով։ Եւ ասէ ցնա Յիսուս. ամէն ասեմ քեզ. այսօր ընդ իս իցես ՚ի դրախտին։ Եւ էր իբրև վեցերորդ ժամ. և խաւար եղև ՚ի վերայ ամենայն երկրի մինչ ցիններորդ ժամ խաւարեցաւ արեգակն։

Մատ. 27. 46 — 47։

Եւ զինն ժամուն գոչեաց Յիսուս ՚ի ձայն մեծ, և ասէ. էլի էլի՝ լամասաբաքթանի. այսինքն է. Աստուած իմ, Աստուած իմ, ընդէ՞ր թողեր զիս։ Ոմանք յայնցանէ՝ որք անդն կային, իբրև լուան՝ ասէին. զԵղիա կարդայ։

Յովհ. 19. 28 — 30։

Յետ այսորիկ գիտաց Յիսուս, եթէ ահա՛ ամենայն ինչ կատարեալ է. զի կատարեսցի գիրն, ասէ. ծարաւի եմ։ Եւ անդ կայր աման ինչ լի քացախով. և նոցա սպունգ լցեալ քացախով ընդ լեղւոյ՝ շուրջ եդեալ զմշտկաւ զոպայի, մատուցին ՚ի բերան նորա։ Իբրև էառ Յիսուս զքացախն հանդերձ լեղւովն՝ ասէ. ամենայն ինչ կատարեալ է։

Ղուկ. 23. 46։

Եւ կարդաց Յիսուս ՚ի ձայն մեծ, և ասէ. Հա՛յր՝ ՚ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ։ Զայս իբրև ասաց, եհան զոգի։

Մատ. 27. 51 — 54։

Եւ ահա վարագոյր տաճարին ցելաւ յերկուս՝ 'ի վերուստ մինչև 'ի վայր. երկիր շարժեցաւ. և վէմք պատառեցան։ Եւ գերեզմանք բացան. և բազում մարմինք ննջեցելոց սրբոց յարեան։ Եւ ելեալք 'ի գերեզմանացն՝ յետ յարութեանն նորա, մտին 'ի քաղաքն սուրբ, և երևեցան բազմաց։ Իսկ հարիւրապետն՝ և որք ընդ նմա պահէին զՅիսուս, իբրև տեսին զշարժումն և զեղեալսն՝ երկեան յոյժ, և ասեն. արդարև Աստուծոյ Որդի էր սա։

Ղուկ. 23. 48։

Եւ ամենայն ժողովուրդն՝ որք եկեալ էին, և տեսանէին զտեսիլն զայն՝ և զգործ. բաղխէին զկուրծս՝ և դառնային։

Յովհ. 19. 31 — 37։

Իսկ Հրէայքն (քանզի ուրբաթ էր) զի մի՛ անդէն 'ի խաչին ագանիցին մարմինքն մինչև ցշաբաթն. (զի էր օր մեծ շաբաթուն այնորիկ). աղաչեցին զՊիղատոս, զի խորտակեսցեն զբարձս նոցա, և բարձցեն։ Եկին զինուորքն, և զառաջնոյն խորտակեցին զբարձս, նոյնպէս և զմիւսոյն՝ որ ընդ նմա 'ի խաչն ելեալ էր։ Բայց իբրև եկին առ Յիսուս, և տեսին զի այն ինչ մեռեալ էր՝ ոչ խորտակեցին զբարձս նորա։ Այլ մի ոմն 'ի զինուորացն տիգաւ խոցեաց զկողս նորա. և վաղվաղակի ել արիւն, և ջուր։ Եւ որ ետեսն, վկայեաց. և ճշմարիտ է վկայութիւն նորա, և նա գիտէ եթէ ճշմարիտ ասէ. զի և դուք հաւատասջիք։ Այս եղև՝ զի լցցի գիրն. եթէ ոսկր նորա մի՛ փշրեսցի։ Եւ դարձեալ միւս գիր ասէ. եթէ հայեսցին 'ի նա՝ յոր խոցեցինն։

ԼԵ· ԹԱՂՈՒՄՆ ՅԻՍՈՒՍԻ։

Մարկ· 15· 42 — 45։

Եւ իբրեւ երեկոյ եղեւ՝ (քանզի ուրբաթ էր՝ որ ՚ի շաբաթն մտանէր)։ Եկեալ Յովսէփ՝ որ Յարեմաթեայն էր, այր պարկեշտ, նախարար, որ եւ ինքն իսկ ակն ունէր արքայութեան Աստուծոյ. համարձակեցաւ՝ եմուտ առ Պիղատոս, եւ խնդրեաց զմարմինն Յիսուսի։ Եւ Պիղատոս զարմացաւ, թէ այնչափ վաղ մեռաւ, եւ կոչեալ առ ինքն զհարիւրապետն՝ եհարց զնա, եւ ասէ. թէ արդարեւ այնչափ վա՞ղ մեռաւ։ Եւ իբրեւ ստուգեաց ՚ի հարիւրապետէ անտի, շնորհեաց զմարմինն Յովսէփայ։

Յովհ· 39։

Եկն եւ Նիկոդեմոս՝ որ եկեալն էր առ Յիսուս ՚ի գիշերի զառաջինն, եւ եբեր զմուռս խառն ընդ հալուէս, իբրեւ լըտերս հարիւր։

Մատ· 27· 59 — 33։

Եւ առեալ զմարմինն Յովսէփ՝ պատեաց սուրբ կտաւօք. եւ եդ ՚ի նոր գերեզմանի՝ զոր փորեաց ՚ի վիմի. եւ թաւալեցուցեալ կափարիչ դրան գերեզմանին վէմ մի մեծ, եւ գնաց։ Անդ էր Մարիամ Մագդաղենացի՝ եւ միւս Մարիամն. նստէին հանդէպ գերեզմանին։ Եւ ՚ի վաղիւ անդր՝ որ է յետ ուրբաթուն. ժողովեցան քահանայապետքն եւ փարիսեցիք առ Պիղատոս, եւ ասեն. տէ՛ր, յիշեցաք՝ զի մոլորեցուցիչն այն ասէր, մինչ կենդանին էր. թէ յետ երից աւուրց յառնեմ։ Արդ՝ հրամայեա՛ զգուշանալ գերեզմանին մինչեւ ցերիս աւուրս. գուցէ՛ եկեալ աշակերտքն գիշերի գողանայցեն զնա, եւ ասիցեն ժողովրդեանն. թէ յա-

րեալ 'ի մեռելոց. և լինիցի յետին մոլորութիւնն չար քան զառաջինն: Ասէ ցնոսա Պիղատոս. ունիք զզօրականս, երթայք զգուշացարուք՝ որպէս և գիտէք: Եւ նոքա երթեալ զգուշացան գերեզմանին. և կնքեցին զվէմն հանդերձ զօրականօքն:

ԼԶ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ:

Մարկ. 16. 1 — 3:

Եւ իբրև էանց շաբաթն, Մարիամ Մագդաղենացի և Մարիամ Յակոբայ և Սաղոմէ, չոգան՝ պատրաստեցին խունկս, զի եկեսցեն և օծցեն զնա: Եւ ընդ առաւօտս միաշաբաթուն, գան 'ի գերեզմանն ընդ արևագալն. և ասէին ցմիմեանս. ո՞վ թաւալեցուսցէ մեզ զվէմն 'ի դրանց գերեզմանին:

Մատ. 28. 2 — 7:

Եւ ահա շարժումն մեծ եղև. զի հրեշտակ Տեառն իջեալ յերկնից, մատուցեալ՝ 'ի բաց թաւալեցոյց զվէմն 'ի դրնաց անտի, և նստէր 'ի վերայ նորա: Եւ էր տեսիլ նորա իբրև զփայլակն. և հանդերձ նորա սպիտակ՝ իբրև զձիւն: Եւ յահէ անտի նորա՝ խռովեցան պահապանքն, և եղեն իբրև զմեռեալս: Պատասխանի ետ հրեշտակն, և ասէ ցկանայս. մի՛ երկնչիք դուք, գիտեմ՝ զի զՅիսուս զխաչեալն խնդրէք. չէ՛ աստ, քանզի յարեաւ. որպէս ասացն. եկայք, և տեսէ՛ք զտեղին՝ ուր կայր: Եւ վաղվաղակի երթայք, ասացէ՛ք աշակերտացն նորա, թէ յարեաւ. և ահա յառաջանայ քան զձեզ 'ի Գալիլեա. անդ տեսանիցէք զնա, ահա ասացի ձեզ:

Մարկ. 16. 8։

Եւ իբրև լուան, ելին և փախեան ՚ի գերեզմանէն, քանզի զահի հարեալ էին. և ոչ ումեք ինչ ասային, զի երկնչէին ։

Ղուկ. 24. 8 — 11։

Եւ յիշեցին զբանսն նորա։ Եւ դարձան պատմեցին զայս ամենայն մետասանիցն՝ և այլոցն ամենեցուն։ Եւ էին Մարիամ Մագդաղենացի, և Յոհաննա, և Մարիամ Յակոբայ, և այլք ընդ նոսա՝ որք պատմէին զայս առաքելոցն ։ Եւ երևեցան առաջի նոցա շաղփաղփութիւն բանք նոցա, և չհաւատային նոցա ։

Յովհ. 20. 3 — 10.

Ել Պետրոս և միւս աշակերտն, և գային ՚ի գերեզմանն. ընթանային երկոքեան ՚ի միասին. և միւս աշակերտն յառաջեաց՝ ընթացաւ վաղագոյն քան զՊետրոս, և եկն նախ ՚ի գերեզմանն։ Եւ խոնարհեալ տեսանէ, զի կային անդ կտաւքն. բայց ՚ի ներքս ոչ եմուտ։ Եկն և Սիմոն Պետրոս՝ որ գայրն զկնի նորա. և եմուտ ՚ի գերեզմանն, և տեսանէ զկտաւսն, զի կային անդ։ Եւ վարշամակն՝ որ էր ՚ի գլուխ նորա, ոչ ընդ այլ կտաւսն կայր. այլ ուրոյն ծալեալ ՚ի մի կողմն։ Յայնժամ եմուտ և միւս աշակերտն՝ որ եկեալն էր յառաջագոյն ՚ի գերեզմանն. ետես՝ և հաւատաց։ Զի չև ևս գիտէին զգիրս, թէ պարտ է նմա ՚ի մեռելոց յառնել։ Չոգան դարձեալ առ միմեանս աշակերտքն ։

Մատ. 28. 11 — 15։

Իբրև նոքա գնացին, ահա ոմանք ՚ի զօրականացն՝ եկին ՚ի քաղաքն, և պատմեցին քահանայապետիցն զամենայն՝

որ ինչ եղեն։ Եւ նոքա ժողովեալ հանդերձ ծերօքն, խորհուրդ առեալ արծաթ յոյժ ետուն զօրականացն, և ասեն. ասասջի՛ք՝ եթէ աշակերտքն նորա եկեալ գիշերի, գողացան զնա՝ մինչ մեք 'ի քուն էաք։ Եւ եթէ լուր լիցի այդ առ դատաւորն, մեք հաճեսցուք զնա՝ և զձեզ անհոգս արասցուք։ Եւ նոցա առեալ զարծաթն, արարին՝ որպէս ուսանն. և ել համբաւս այս 'ի Հրէից մինչև ցայսօր։

ԼԷ. ՅԻՍՈՒՍ ՅԵՏ ՅԱՐՈՒԹԵԱՆ ԻՒՐՈՅ, ԵՐԵՒԻ ՄԱՐԻԱՄՈՒ ՄԱԳԴԱՂԵՆԱՑՒՈՅ։

Յովհ. 20. 11 — 18։

Բայց Մարիամ կայր արտաքոյ գերեզմանին, և լայր. և մինչդեռ լայր՝ խոնարհեցաւ 'ի գերեզմանն։ Եւ տեսանէ երկուս հրեշտակս 'ի սպիտակս, զի նստէին մի 'ի սնարից՝ և մի յանոտից՝ ուր կայր մարմինն Յիսուսի։ Եւ նոքա ասեն ցնա. կի՛ն դու, զի՞ լաս. ասէ ցնոսա. զի բարձին ըզՏէրն իմ 'ի գերեզմանէ աստի, և ո՛չ գիտեմ՝ ո՛ւր եդին զնա։ Զայս իբրև ասաց, դարձաւ 'ի թիկունս կոյս. և տեսանէ զՅիսուս՝ զի կայր, և ո՛չ գիտէր՝ թէ Յիսուս իցէ։ Ասէ ցնա Յիսուս. կի՛ն դու, զի՞ լաս՝ զո՞ խնդրես։ Նմա այսպէս թուեցաւ՝ թէ պարտիզպանն իցէ, ասէ ցնա. Տէ՛ր, եթէ դու բարձեր զնա, ասա՛ ինձ. ո՛ւր եդեր զնա, զի ես առից զնա։ Ասէ ցնա Յիսուս. Մա՛րիամ. և նա դարձաւ, և ասէ ցնա Եբրայեցերէն՝ Ռա՛բբունի, (որ թարգմանի վարդապետ)։ Ասէ ցնա Յիսուս. մի՛ մերձենար յիս, զի չև ես ելեալ եմ առ Հայր իմ. այլ ե՛րթ դու առ եղբարս իմ, և ասա՛ ցնոսա. ելանեմ ես առ Հայրն իմ, և առ Հայր ձեր. և Աստուածն իմ, և Աստուած ձեր. Գայ Մարիամ Մագդաղենացի, և պատմէ աշակերտացն, եթէ ետես նա զՏէր. և զայս ինչ ասաց ցնա։

ԼԸ· ՅԻՍՈՒՍ ԵՐԵՒԻ ԵՐԿՈՒՑ ԱՇԱԿԵՐՏԱՑ ԻՒՐՈՑ Ի ՃԱՆԱՊԱՐՀԻ։

Ղուկ. 24. 13 — 35:

Եւ ահա երկուք 'ի նոցանէ երթային 'ի նմին աւուր 'ի գեօղ մի՝ որ հեռի էր յԵրուսաղէմէ վաթսուն ասպարիսաւ. և էր անուն նորա Էմմաւուս։ Եւ նոքա խօսէին ընդ միմեանս վասն ամենայն անցիցն անցելոց։ Եւ եղև ընդ խօսիլն նոցա և ընդ վիճել, և ինքն իսկ Յիսուս մերձեցաւ՝ և երթայր ընդ նոսա։ Եւ նոցա աչք կալեալ էին՝ առ 'ի չճանաչելոյ զնա։ Եւ ասէ ցնոսա. զի՞նչ են բանքդ՝ վասն որոյ վիճիքդ ընդ միմեանս, մինչդեռ երթայքդ և տրտմեալ էք։ Պատասխանի ետ մի ոմն 'ի նոցանէ՝ որում անուն էր Կղէոպաս, և ասէ ցնա. դու միայն կաս յԵրուսաղէմ, որ ո՛չ գիտացեր՝ զի՞նչ գործեցաւ 'ի նմա յաւուրս յայսոսիկ։ Եւ ասէ ցնոսա. զի՞նչ։ Եւ նոքա ասեն. զՅիսուսէ Նազովրեցւոյ՝ որ եղև այր մարգարէ, հզօր արդեամբք և բանիւք՝ առաջի Աստուծոյ՝ և ամենայն ժողովրդեանն. որպէս մատնեցին զնա քահանայապետքն՝ և իշխանքն մեր 'ի դատաստան մահու, և հանին զնա 'ի խաչ։ Մեք ակն ունէաք՝ թէ նա է որ փրկելոց իցէ զԻսրայէլ. այլև հանդերձ այսու ամենայնիւ, այս երրորդ օր է՝ յորմէ հետէ այն գործեցաւ։ Այլ և կանայք ոմանք 'ի մէնջ զարմացուցին զմեզ, որք կանխեալք ընդ առաւօտս՝ չոգան 'ի գերեզմանն։ Եւ ո՛չ գտին զմարմին նորա. եկին, և ասեն, թէ և տեսիլ ևս հրեշտակաց տեսին, որք ասէին զնմանէ, թէ կենդանի է։ Եւ գնացին ոմանք 'ի մէնջ 'ի գերեզմանն, և գտին նոյնպէս՝ որպէս և կանայքն ասացին. բայց զնա ո՛չ տեսին։ Եւ նա ասէ ցնոսա. ո՛վ անմիտք և հեղգասիրտք առ 'ի հաւատալ

յամենայնի՝ զոր խօսեցան մարգարէքն: Ո՞չ զնոյն պարտ էր չարչարիլ Քրիստոսի, և մտանել 'ի փառս իւր: Եւ սկսեալ 'ի Մովսիսէ՝ և յամենայն մարգարէից, մեկնէր նոցա՝ որ ինչ յամենայն գիրս գրեալ էր զնմանէ: Իբրև մերձեցան 'ի գեօղն՝ յոր երթային, և նա պատճառէր հեռագոյն ևս ուրեք երթալ: Եւ բռնադատեցին զնա, և ասեն. առ մե՛զ ագիր, զի ընդ երեկս է՝ և տարաժամեալ է օրս. և եմուտ ագանիլ անդ ընդ նոսա: Եւ եղև 'ի բազմելն նորա ընդ նոսա, առեալ զհացն, օրհնեաց՝ եբեկ՝ և ետ նոցա: Եւ նոցա բացան աչք, և ծանեան զնա. և նա եղև 'ի նոցանէ աներևոյթ: Եւ ասեն ցմիմեանս. ո՞չ իսկ և սիրտք մեր ճմլէին 'ի մեզ՝ մինչ խօսէրն ընդ մեզ զճանապարհայն. և որպէս բանայր մեզ զգիրս: Եւ յարուցեալ նոյն ժամայն՝ դարձան յԵրուսաղէմ, և գտին ժողովեալ զերկոտասանսն, և զորս ընդ նոսայն էին, և ասեն, թէ արդարև յարեաւ Տէր, և երևեցաւ Սիմոնի: Եւ նոքա պատմէին զայն՝ որ զճանապարհայնն, և թէ զիա՞րդ ետ ծանօթս նոցա 'ի բեկանել հացին:

ԼԹ. ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ ԵՐԵՒԻ ԵՐԿՈՏԱՍԱՆ ԱՇԱԿԵՐՏԱՑ ԻՒՐՈՑ ՅԵՐՈՒՍԱՂԷՄ.

Ղուկ. 24. 36 — 48:

Մինչդեռ զայն խօսէին, ինքն իսկ Յիսուս եկաց 'ի մէջ նոցա, և ասէ ցնոսա. խաղաղութիւն ընդ ձեզ. ե՛ս եմ, մի՛ երկնչիք: Եւ զահի հարեալ երկնչէին. և համարէին զոգի ինչ տեսանել: Եւ ասէ ցնոսա. զի՞ խռովեալ էք. և ընդէ՞ր խորհուրդք ելանեն 'ի սիրտս ձեր: Տեսէ՛ք զձեռս իմ և զոտս, զի ես նոյն եմ. շօշափեցէ՛ք զիս՝ և տեսէ՛ք, զի ոգի՝ մարմին և ոսկերս ո՛չ ունի, որպէս զիս տեսանէք՝

զի ունիմ: Եւ զայս ասացեալ, եցոյց Նոցա զձեռսն և զոտըս: Եւ մինչդեռ տակաւին չհաւատային 'ի խնդութենէն, և զարմացեալ էին, ասէ ցնոսա. ունի՞ք ինչ կերակուր աստ: Եւ Նոքա ետուն Նմա ձկան խորովելոյ մասն, և խորիսխ մեղու: Եւ էառ, եկեր առաջի Նոցա. և զմնացորդսըն ետ Նոցա, և ասէ. այս բանք են՝ զոր խօսեցայ ընդ ձեզ՝ մինչ առ ձեզն էի, թէ պարտ է լնանել ամենայն գրելոցն յօրէնսն Մովսէսի, և 'ի մարգարէս, և 'ի սաղմոսն վասն իմ: Յայնժամ եբաց զմիտս Նոցա՝ իմանալ զգիրս: Եւ ասէ ցնոսա, թէ այսպէս պարտ էր չարչարել Քրիստոսի, և յառնել 'ի մեռելոց յաւուր երրորդի. և քարոզել յանուն Նորա ապաշխարութիւն՝ և թողութիւն մեղաց, յամենայն ազգս՝ սկսեալ յԵրուսաղէմէ. և դուք էք վկայք բանիցս այսոցիկ: Եւ ահա ես առաքեմ զաւետիս Հօր իմոյ 'ի ձեզ. և դուք նստարո՛ւք 'ի քաղաքիս Երուսաղէմ, մինչև զգենուցուք զզօրութիւն 'ի բարձանց:

Յովհ. 20. 21 — 31:

Ասէ ցնոսա դարձեալ. ողջո՛յն ընդ ձեզ. որպէս առաքեաց զիս Հայր իմ, և ես առաքեմ զձեզ: Եւ զայս իբրև ասաց, փչեաց 'ի Նոսա՝ և ասէ. առէ՛ք զՀոգի սուրբ: Եթէ ումեք թողուցուք զմեղս, թողեալ լիցի Նոցա. և եթէ զուրուք ունիցիք, կալեալ լիցի: Իսկ Թովմաս մի յերկոտասանիցն՝ անուանեալն երկուորեակ, ոչ էր ընդ Նոսա՝ յորժամ եկն Յիսուս: Ասեն ցնա այլ աշակերտքն, եթէ տեսաք զՏէր: Եւ Նա ասէ ցնոսա. եթէ ոչ տեսից 'ի ձեռս Նորա զնշան բևեռացն, և արկից զմատունս իմ 'ի տեղիս բևեռացն, և մխեցից զձեռս իմ 'ի կողս Նորա՝ ոչ հաւատամ: Եւ յետ ութ աւուր դարձեալ էին 'ի ներքս աշակերտքն, և Թովմաս ընդ Նոսա: Գայ Յիսուս դրօքն փակե-

լօք, և եկաց 'ի մէջ նոցա՝ և ասէ· ողջո՜յն ընդ ձեզ: Ապա ասէ ցԹովմաս· բե՛ր զմատունս քո, և ա՛րկ այսր, և տե՛ս ըզձեռս իմ· և բե՛ր զձեռն քո, և մխեա՛ 'ի կողս իմ· և մի՛ լինիր անհաւատ, այլ հաւատացեալ: Պատասխանի ետ Թովմաս, և ասէ ցնա· Տէ՛ր իմ, և Աստուած իմ: Ասէ ցնա Յիսուս· այդ զի տեսերդ զիս՝ և հաւատացեր· երանի՛ որոց ոչ իցէ տեսեալ՝ և հաւատասցեն: Բազում և այլ նշանս արար Յիսուս առաջի աշակերտաց իւրոց, որ ոչ է գրեալ 'ի գիրս յայսմիկ: Այլ այս այնչափ ինչ գրեցաւ՝ զի հաւատայցէք, և զկեանսն յաւիտենականս ընդունիցիք յանուն նորա:

Խ· ՅԻՍՈՒՍ ԵՐԵՒԻ ԴԱՐՁԵԱԼ ԱՌ ԾՈՎԵԶԵՐԲՆ ՏԻԲԵՐԵԱՑ:

Յովհ· 21· 1 — 14:

Յետ այսորիկ դարձեալ յայտնեաց զանձն իւր Յիսուս աշակերտաց իւրոց առ ծովեզերբն Տիբերեայ· և յայտնեաց այսպէս: Էին 'ի միասին Սիմոն Պետրոս, և Թովմաս անուանեալն Երկուորեակ, և Նաթանայէլ՝ որ 'ի Կանայ Գալիլեացւոց, և որդիքն Զեբեդեայ, և այլք յաշակերտաց անտի երկու: Ասէ ցնոսա Սիմոն Պետրոս· երթամ ձուկն որսալ: Ասեն ցնա, գամք և մեք ընդ քեզ: Գնացին, և մտին 'ի նաւ· և յայնմ գիշերի կալան և ոչինչ: Իբրև այգ եղև, կայր Յիսուս յեզր ծովուն· բայց ոչ ծանեան աշակերտքն թէ Յիսուս իցէ: Ասէ ցնոսա Յիսուս· մանկունք՝ մի՞թէ ունիք ինչ ուտելոյ: Պատասխանի ետուն, և ասեն ցնա· ոչ: Ասէ ցնոսա Յիսուս· արկէ՛ք յաջակողմն նաւին զուռկանդ, և գտանիցէք· արկին, և ոչ կարէին ձգել 'ի բազմութենէ անտի ձկանցն: Ասէ աշակերտն այն՝ զոր սի-

րէրն Յիսուս՝ ցՊետրոս. Տէ՛ր է այն: Սիմոն Պետրոս՝ իբրև լուաւ թէ Տէր է, էարկ զիւրև զսփածանելին, (քանզի մերկ էր). և ընկէց զինքն 'ի ծովն: Եւ այլ աշակերտքն նաւաւն իսկ գային. քանզի չէին հեռի 'ի ցամաքէ. այլ իբրև երկերիւր կանգնաւ. քարշէին զգործիսն հանդերձ ձկամբքն: Իբրև ելին 'ի ցամաք՝ տեսանեն կրակետղ կայծականց, և ձուկն մի 'ի վերայ՝ և հաց: Ասէ ցնոսա Յիսուս. բերէ՛ք 'ի ձկանց այտի՝ զոր դուքդ կալայք այժմիկ: Եմուտ Սիմոն Պետրոս, և ձգէր զգործին 'ի ցամաք՝ լի մեծամեծ ձկամբք, հարիւր յիսուն և երիւք. և այնչափ ինչ կայր, և ո՛չ պատառեցաւ գործին: Ասէ ցնոսա Յիսուս. եկա՛յք ճաշեցէ՛ք. և ո՛չ ոք յաշակերտացն իշխէր հարցանել՝ թէ դու ո՞վ ես. զի գիտէին թէ Տէրն է: Գայ Յիսուս՝ և առնու զհացն, տայ նոցա. նոյնպէս և զձուկն: Զայս երիցս անգամ երևեցաւ Յիսուս աշակերտացն՝ յարուցեալ 'ի մեռելոց:

15 — 19:

Եւ իբրև ճաշեցին, ասէ ցՍիմոն Պետրոս Յիսուս. Սի՛մոն Յովնանու՝ սիրե՞ս զիս առաւել քան զդոսա: Ասէ ցնա. այո Տէր, և դու գիտես՝ զի սիրեմ զքեզ: Ասէ ցնա, արածեա՛ զգառինս իմ: Դարձեալ ասէ ցնա. Սի՛մոն Յովնանու՝ սիրե՞ս զիս: Ասէ ցնա. այո՛ Տէր, և դու գիտես՝ զի սիրեմ զքեզ: Ասէ ցնա, արածեա՛ զոչխարս իմ: Ասէ ցնա երիցս անգամ. Սի՛մոն Յովնանու՝ սիրե՞ս զիս: Տրտմեցաւ Պետրոս, զի ասացն ցնա երիցս՝ թէ սիրե՞ս զիս. և ասէ ցնա. Տէ՛ր, դու զամենայն գիտես, և դու իսկ զամենայն ճանաչես՝ և եթէ սիրեմ զքեզ: Ասէ ցնա Յիսուս. արածեա՛ զոչխարս իմ: Ամէն ամէն ասեմ քեզ. զի մինչ մանուկն էիր, անձամբ անձին գօտի ածէիր՝ և երթայիր յո՛ և կամէիր. և յոր-

ժամ ծերասցիս, ձեռս 'ի վերայ կալցես. և այլք ածցեն քեզ գօտի, և տարցին՝ ուր ո՛չ կամիցիս: Զայս ասաց նշանակեալ, թէ որո՛վ մահու փառաւոր առնիցէ զԱստուած. և զայս իբրև ասաց, ասէ ցնա. ե՛կ զկնի իմ:

20 — 24:

Դարձաւ Պետրոս՝ և տեսանէ զաշակերտն՝ զոր սիրէր Յիսուս, զի երթայր զկնի, որ և անկաւ զլանջօք Նորա, և ասէ. Տէ՛ր, ո՞վ է՝ որ մատնելոց է զքեզ: Զնա տեսեալ Պետրոսի, ասէ ցՅիսուս. Տէ՛ր, իսկ սա զի՞: Ասէ ցնա Յիսուս, եթէ կամիմ, զի կացցէ դա՝ մինչև ես գամ, քեզ զի՞ փոյթ է. դու ե՛կ զկնի իմ: Ել ել բանս այս յեղբարս՝ և համարեցան թէ աշակերտն այն ո՛չ մեռանիցի. և ո՛չ ասաց նմա Յիսուս եթէ ո՛չ մեռանիցի. այլ թէ կամիմ ես՝ թէ կացցէ դա՝ մինչև ես գամ: Այս աշակերտ է՝ որ վկայէ վասն այսոցիկ. որ և գրեաց իսկ զայսոսիկ. և գիտեմք եթէ ճշմարիտ է վկայութիւն Նորա:

25:

Բայց է և այլ ինչ բազում, զոր արար Յիսուս. որք եթէ գրեալ էին մի ըստ միոջէ, կարծեմ թէ՝ և ո՛չ աշխարհըս բաւական էր տանել զգիրսն՝ որք թէ գրեալ էին:

ԽԱ. ՎԵՐՋԻՆ ՊԱՏՈՒԷՐ ՅԱՐՈՒՑԵԼՈՅՆ ՅԻՍՈՒՍԻ ԱՌԱՔԵԼՈՑ ԻՒՐՈՑ ԵՒ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ ՆՈՐԱ ՅԵՐԿԻՆՍ:

Մատ. 28. 16 — 20:

Իսկ մետասան աշակերտքն գնացին 'ի Գալիլեա, 'ի լեառն՝ ուր ժամադիր եղև Նոցա Յիսուս: Իբրև տեսին զնա՝ երկիր պագին Նմա, և ոմանք երկուացան: Եւ մատուցեալ Յիսուս՝ խօսեցաւ ընդ Նոսա, և ասէ. տուաւ Ինձ ամենայն

իշխանութիւն յերկինս և յերկրի· որպէս առաքեաց զիս Հայր, և ես առաքեմ զձեզ։ Գնացէ՛ք այսուհետև, աշակերտեցէ՛ք զամենայն հեթանոսս· մկրտեցէ՛ք զնոսա յանուն Հօր՝ և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։ Ուսուցէ՛ք նոցա պահել զամենայն՝ զոր ինչ պատուիրեցի ձեզ· և ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս՝ մինչև 'ի կատարած աշխարհի։

Մարկ· 16· 16 — 18։

Որ հաւատասցէ և մկրտեսցի, կեցցէ· և որ ոչն հաւատասցէ, դատապարտեսցի։ Նշանք այնոցիկ՝ որք հաւատան, երթիցեն զհետ այսոցիկ· յանուն իմ դևս հանցեն, լեզուս խօսեսցին։ Ի ձեռս իւրեանց օձս բարձցեն· և եթէ զմահացու ինչ դեղ արբցեն, նոցա ինչ ոչ վնասեսցէ· 'ի վերայ հիւանդաց ձեռս դիցեն, և բժշկեսցեն։

Ղուկ· 24· 48 — 53։

Եւ ահա ես առաքեմ զաւետիս Հօր իմոյ 'ի ձեզ· և դուք նստարո՛ւք 'ի քաղաքիս յԵրուսաղէմ, մինչև զգենուցուք զզօրութիւն 'ի բարձանց։ Եհան զնոսա մինչև 'ի Բեթանիա· և ամբարձեալ զձեռս իւր, օրհնեաց զնոսա։ Եւ եղև յօրհնելն նորա զնոսա, մեկնեցաւ 'ի նոցանէ՝ և վերանայր յերկինս։ Եւ նոցա երկիր պագեալ նմա, դարձան յԵրուսաղէմ ուրախութեամբ մեծաւ։ Եւ էին հանապազ 'ի տաճարին· գովէին, և օրհնէին զԱստուած։

Մարկ· 16· 19 — 20։

Եւ ինքն Տէր Յիսուս յետ խօսելոյն ընդ նոսա՝ համբարձաւ յերկինս, և նստաւ ընդ աջմէ Հօր։ Եւ նոքա ելեալ քարոզէին ընդ ամենայն երկիր՝ Տեառն գործակցութեամբ· և զբանն հաստատէին ամենայն նշանօք՝ որք երթային ըն-հետ նոցա։

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ

Ի ԳՈՐԾՈՑ ԱՌԱՔԵԼՈՑ։

1. ԻՋՈՒՄՆ ՀՈԳՒՈՅՆ ՍՐԲՈՅ ՅԱՌԱՔԵԱԼՍ ՅԱՒՈՒՐ ՊԵՆՏԵԿՈՍՏԷԻ, ԱՌԱՋԻՆ ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆ ՊԵՏՐՈՍԻ ԵՒ ՏԱՐԱԾՈՒՄՆ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՔՐԻՍՏՈՍԻ։

ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ 2. 1 — 4։

Եւ 'ի կատարել աւուրցն պենտեկոստէից՝ էին ամենեքեան միաբան 'ի միասին։ Եւ եղև յանկարծակի հնչիւն յերկնից՝ եկեալ իբրև սաստիկ հողմոյ, և ելից զամենայն զտունն յորում նստէին։ Եւ երևեցան նոցա բաժանեալ լեզուք՝ իբրև 'ի հրոյ. և նստաւ իւրաքանչիւր 'ի վերայ նոցա։ Եւ լցան ամենեքեան Հոգւով սրբով. և սկսան խօսել յայլ լեզուս, որպէս և Հոգին տայր բարբառել նոցա։

5 — 13։

Եւ էին յԵրուսաղէմ բնակեալ Հրէայք, արք երկիւղածք յամենայն ազգաց՝ որք 'ի ներքոյ երկնից։ Եւ իբրև եղև բարբառս այս, եկն միաբան բազմութիւն՝ և խռնեցաւ. զի լսէին յիւրաքանչիւր լեզուս խօսել նոցա։ Սքանչա-

*

նայրն ամենեքեան՝ և զարմանային, և ասէին ընդ միմեանս. ո՞չ ահաւասիկ ամենեքին սոքա որք խօսին՝ Գալիլեացիք են: Եւ զիա՞րդ լսեմք մեք յիւրաքանչիւր բարբառս մեր՝ յորում ծնեալ եմք: Պարթևք՝ և Մարք՝ և Իլամացիք, և որք բնակեալ են 'ի Միջագետս՝ 'ի Հրէաստանի՝ և 'ի Գամիրս, 'ի Պոնտոս՝ և յԱսիա, 'ի Փռիւգիայ, և 'ի Պամփիլիա, յԵգիպտոս՝ և 'ի կողմանս Լիբէացւոց, որք ընդ Կիւրենացիս, և որք եկք Հռովմայեցիք, Հրէայք՝ և եկք նոցուն, Կրետացիք և Արաբացիք, լսեմք խօսից նոցա 'ի մեր լեզուս զմեծամեծս Աստուծոյ: Սքանչանային ամենեքեան զարմացեալք, և ասէին ցմիմեանս. զի՞նչ կամիցի այս լինել: Եւ կիսոցն ընդ խաղ արկեալ՝ ասէին, թէ քաղցուալիցք իցեն:

14 — 36:

Յարուցեալ Պետրոս հանդերձ մետասանիւքն՝ ամբարձ զձայն իւր, և խօսեցաւ ընդ նոսա. արք Հրէաստանեայք՝ և որք բնակեալ էք յԵրուսաղէմ ամենեքին, այս ձեզ յայտնի լիցի՝ և ունկն դիք բանից իմոց: Ո՛չ որպէս դուքդ կարծէք՝ թէ սոքա արբեալք իցեն, զի դեռ երեք ժամք են աւուր: Այլ այս է՝ որ ասացաւ 'ի ձեռն մարգարէին Յովելայ. և եղիցի յետ այսորիկ յաւուրս յետինս, ասէ Աստուած, հեղից յՈգւոյ իմմէ 'ի վերայ ամենայն մարմնոյ. և մարգարէասցին ուստերք ձեր, և դստերք ձեր. և երիտասարդք ձեր տեսիլս տեսցեն, և ծերք ձեր երազօք երազասցին: Եւ 'ի վերայ ծառայից իմոց՝ և 'ի վերայ աղախնեայց իմոց՝ յաւուրս յայնոսիկ հեղից յՈգւոյ իմմէ, և մարգարէասցին: Եւ տաց նշանս յերկինս 'ի վեր՝ և նշանս յերկիր 'ի խոնարհ. արիւն, և հուր, և մրրիկ ծխոյ: Արեգակն դարձցի 'ի խաւար, և լուսին յարիւն, մինչչև եկեալ իցէ օր Տեառն մեծ և երևելի: Եւ եղիցի ամենայն՝ որ կարդաս-

ցէ զանուն Տեառն, կեցցէ: Արք Իսրայէլացիք, լուարուք զբանս զայսոսիկ. զՅիսուս Նազովրեցի, զայր ցուցեալ յԱստուծոյ 'ի ձեզ զօրութեամբ, և նշանօք, և արուեստիւք՝ զորս արար նովաւ Աստուած 'ի միջի ձերում, որպէս և դուք իսկ գիտէք: Զնա նկատեալ խորհրդով և կանխագիտութեամբն Աստուծոյ, մատնեալ 'ի ձեռս անօրինաց՝ բևեռեալ 'ի փայտի սպանիք: Զոր Աստուած յարոյց՝ լուծեալ զերկունս մահու. քանզի ոչ էր հնար ըմբռնել նմա 'ի նմանէ: Դաւիթ իսկ ասէ զնմանէ. յառաջագոյն տեսանէի զՏէր առաջի իմ յամենայն ժամ, զի ընդ աջմէ իմմէ է, մի սասանեցայց: Վասն այսորիկ ուրախ եղև սիրտ իմ, և ցնծացաւ լեզու իմ, ես և մարմին իմ բնակեսցի յուսով: Զի ոչ թողցես զանձն իմ 'ի դժոխս, և ոչ տացես սրբոյ քում տեսանել զապականութիւն: Ծանուցեր ինձ զճանապարհս կենաց. լցուսցես զիս ուրախութեամբ երեսաց քոց: Արք եղբարք, պարտ է համարձակութեամբ ասել ձեզ վասն նահապետին Դաւթի, զի մեռաւ՝ և թաղեցաւ, և գերեզման նորա կայ 'ի միջի ձերում մինչև ցայսօր: Զի մարգարէ էր, և գիտէր՝ եթէ երդմամբ երդուաւ նմա Աստուած, 'ի պտղոյ որովայնի նորա նստուցանել յաթոռ նորա: Յառաջագոյն ծանուցեալ խօսեցաւ վասն յարութեանն Քրիստոսի. զի ոչ թողաւ ոգի նորա 'ի դժոխս, և ոչ մարմին նորա ետես զապականութիւն: Զայս Յիսուս յարոյց Աստուած՝ որում ամենեքին մեք վըկայեմք: Աջովն Աստուծոյ բարձրացեալ. զաւետիս Հոգւոյն սրբոյ ընկալեալ 'ի Հօրէ, սփռեաց զայս՝ զոր դուք իսկ տեսանէք՝ և լսէք: Զի ոչ եթէ Դաւիթ ել յերկինս. ասէ իսկ ինքն՝ „ասաց Տէր ցՏէր իմ, նիստ ընդ աջմէ իմմէ. մինչև եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց: Արդ՝ ճշմարտիւ գիտասցէ ամենայն տունդ Իսրայէլի. զի Տէր ըզ-

նա՝ և օծեալ Աստուած արար, զայն Յիսուս՝ զոր դուքն խաչեցիք:

37 — 41:

Եւ լուեալ զայս՝ զղջացան 'ի սիրտս իւրեանց, և ասեն ցՊետրոս և ցայլ առաքեալսն. զի՞նչ գործեսցուք արք եղբարք: Ասէ ցնոսա Պետրոս. ապաշխարեցէ՛ք՝ և մկրտեսցի իւրաքանչիւր ոք 'ի ձէնջ յանուն Տեառն Յիսուսի Քրիստոսի 'ի թողութիւն մեղաց. և ընկալջիք զաւետիս Հոգւոյն սրբոյ: Զի ձե՛զ են աւետիքս՝ և որդւոց ձերոց. և ամենայն հեռաւորաց՝ զորս կոչեսցէ Տէր Աստուած մեր: Եւ այլովք բանիւք բազմօք վկայութիւն դնէր, և մխիթարէր զնոսա, և ասէր. ապրեցարո՛ւք յազգէ աստի խոտորելոյ յայսմանէ: Ոմանք յօժարութեամբ ընկալեալք զբան նորա, մկրտեցան. և յաւելան յաւուր յայնմիկ հոգիք իբրև երեք հազարք:

42 — 47:

Եւ էին հանապազորդեալք վարդապետութեան առաքելոցն, և հաղորդութեան, և բեկանելոյ հացին, և աղօթից: Եւ լինէր ամենայն անձին ահ և երկիւղ. բազում նշանք և արուեստք 'ի ձեռս առաքելոցն գործէին: Ամենայն հաւատացեալքն էին 'ի միասին. և ունէին զամենայն ինչ հասարակաց: Եւ զստացուածս և զինչս վաճառէին, և բաշխէին զայն ամենեցուն, ում զիարդ պիտոյ ինչ լինէր: Հանապազոր կանխեալ միաբանութեամբ 'ի տաճարն, և առ տնին բեկանէին զհացն, և առնուին զկերակուր ուրախութեամբ, և միամտութեամբ սրտի: Օրհնէին զԱստուած, և ունէին շնորհս առ ամենայն ժողովուրդն. և Տէր յաւելոյր 'ի փրկեալսն հանապազոր 'ի նոյն:

2· ԲԺՇԿՈՒԹԻՒՆ Ի ԾՆԷ ԿԱՂԻ, ԵՒ ԵՐԿՐՈՐԴ ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆ ՊԵՏՐՈՍԻ։

3· 1 — 10։

Պետրոս և Յովհաննէս ելանէին 'ի տաճար անդր յիններորդ ժամու աղօթիցն։ Եւ էր այր մի կաղ յորովայնէ մօր իւրոյ՝ զոր բարձեալ դնէին հանապազ առ դրան տաճարին, որ կոչիւր Գեղեցիկ· խնդրել ողորմութիւն յայնցանէ՝ որք մտանէին 'ի տաճարն։ Որոյ տեսեալ զՊետրոս և զՅովհաննէս՝ զի մտանէին 'ի տաճարն, աղաչէր ողորմութիւն առնուլ։ Հայեցաւ 'ի նա Պետրոս Յովհաննու հանդերձ, և ասէ· Հայեաց 'ի մեզ։ Նա դարձաւ 'ի նոսա, և ակն ունէր առնուլ ինչ 'ի նոցանէ։ Եւ ասէ Պետրոս, զարծաթ և զոսկի ո՛չ ունիմ, բայց զոր ունիմս, զայս տաց քեզ, յանուն Յիսուսի Քրիստոսի Նազովրեցւոյ՝ արի՛ և գնա՛։ Եւ կալեալ զաջոյ ձեռանէ նորա՝ յարոյց զնա· և անդէն հաստատեցան բարձք նորա և սրունք։ Ի վեր վազեաց՝ և սկսաւ գնալ· և եմուտ ընդ նոսա 'ի տաճարն, գնայր՝ և վազէր, օրհնէր զԱստուած։ Եւ գիտէին զնա, զի սա էր՝ որ նստէր վասն ողորմութեան առ Գեղեցիկ դրան տաճարին· և լցան զարմանալեօք 'ի վերայ նշանին՝ որ եղև։

11 — 26։

Եւ մինչ նա ունէր զՊետրոս և զՅովհաննէս, ընթացաւ ամենայն ժողովուրդն առ նոսա 'ի սրահն՝ որ կոչիւր Սողոմոնի զարմացեալք։ Իբրև ետես Պետրոս՝ պատասխանի ետ ժողովրդեանն· Արք Իսրայէլացիք, զի՞ զարմացեալ էք 'ի վերայ այսորիկ, կամ ընդ մեզ զի՞ էք պշուցեալք, իբր թէ անձին զօրութեամբ ինչ՝ կամ քաջութեամբ արարեալ իցէ զգնալդ դմա։ Աստուած Աբրահամու՝ և Աստուած Իսա-

Հակայ՝ և Աստուած Յակոբայ, Աստուած հարցն մերոց փա-
ռաւորեաց զՈրդի իւր զՅիսուս, զոր դուքն մատնեցիք՝ և
ուրացայք առաջի Պիղատոսի, 'ի դատելն Նորա արձակել:
Եւ դուք զսուրբն և զարդարն ուրացայք. և խնդրեցիք զայր
մի մահապարտ շնորհել ձեզ: Եւ զառաջնորդ կենացն սպա-
նիք, զոր Աստուած յարոյց 'ի մեռելոց. որում մեք իսկ
վկայ եմք: Եւ հաւատովք անուան Նորա զսա՝ զոր տեսա-
նէքդ և գիտէք, հաստատեաց անունն Նորա. և հաւատքն՝
որք Նովաւ, ետուն դմա զառողջութիւնս զայս՝ յանդիման
ձեր ամենեցուն: Եւ արդ եղբարք, գիտեմ՝ զի անգիտու-
թեամբ արարէք՝ որպէս և իշխանքն ձեր: Այլ Աստուած՝
որպէս յառաջագոյն պատմեաց 'ի բերանոյ ամենայն մար-
գարէից զչարչարելն Քրիստոսի իւրոյ, նոյնպէս և կատա-
րեաց: Արդ՝ ապաշաւեցէ՛ք և դարձարո՛ւք 'ի ջնջել զմեղս
ձեր: Որպէս զի եկեսցեն ժամանակք հանգստեան յերե-
սաց Տեառն. և առաքեսցէ զյառաջագոյն նկատեալն ձեզ
զՅիսուս Քրիստոս: Զոր պա՛րտ է երկնից ընդունել մինչև
'ի ժամանակս ամենեցուն հաստատելոյ, զորոց խօսեցաւ
Աստուած 'ի բերանոյ սրբոց իւրոց մարգարէից: Մովսէս
ասաց ցհարսն, թէ մարգարէ յարուսցէ ձեզ Տէր Աստուած
ձեր յեղբարց ձերոց իբրև զիս, նմա լուիջիք ըստ ամենայ-
նի՝ որ զինչ և խօսեսցի առ ձեզ: Եւ եղիցի ամենայն անձն՝
որ ո՛չ լուիցէ մարգարէին այնմիկ, սատակեսցի 'ի ժողո-
վրդենէն: Եւ ամենայն մարգարէք՝ որք 'ի Սամուէլէ և այսր
խօսեցան, և պատմեցին զաւուրս զայսոսիկ: Դուք էք որ-
դիք մարգարէիցն, և ուխտին՝ զոր ուխտեաց Աստուած ընդ
հարս ձեր, և ասէ ցԱբրահամ. „'ի զաւակի քում օրհ-
նեսցին ամենայն ազգք երկրի'': Ձեզ նախ յարոյց Աս-
տուած զՈրդի իւր. և առաքեաց զնա օրհնել զձեզ, 'ի
դառնալ ձեզ իւրաքանչիւր 'ի չարեաց ձերոց:

3· ԱՆՎԵՀԵՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԵԼՈՑ ՎԿԱՅԵԼՈՅ ԶՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ ԵՒ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՒԱՏԱՑԵԼՈՑ:

Դ 1· — 3:

Եւ մինչդեռ խօսէին նոքա ընդ ժողովրդեանն, հասին ՚ի վերայ նոցա քահանայքն և իշխանք տաճարին, և Սադուկեցիքն: Զայրագնեալք՝ վասն ուսուցանելոյ նոցա ըզժողովուրդն, և պատմելոյ Յիսուսիւ զյարութիւն մեռելոց: Մխեցին ՚ի նոսա զձեռս իւրեանց. և եդին զնոսա ՚ի բանտի, մինչև ՚ի վաղիւն, զի էր ընդ երեկս:

4:

Իսկ բազումք ՚ի լսողաց բանին՝ հաւատացին. և եղև թիւ մարդկան իբրև հազարաց հնգից:

5 — 12:

Եւ եղև ՚ի վաղիւ անդր ժողովել նոցա զիշխանսն՝ և զերիցունս՝ և զդպիրս յԵրուսաղէմ: Եւ զԱննայ քահանայապետ և զԿայիափայ, և զՅօհաննէս, և զԱղեքսանդրոս, և որք միանգամ էին յազգէ քահանայութեանն: Եւ կացուցեալ զնոսա ՚ի մէջ՝ հարցանէին. որո՞վ զօրութեամբ, կամ որո՞վ անուամբ արարէք դուք զայս: Յայնժամ Պետրոս լցեալ Հոգւով սրբով, ասէ ցնոսա. իշխանք ժողովրդեան, և երիցունք Իսրայէլի: Եթէ արժան ինչ իցէ դատել զմեզ այսօր վասն երախտեաց առն միոյ տկարի, որով սա բժշկեցաւ: Յայտնի լիցի ամենեցուն ձեզ՝ և ամենայն ժողովրդեանն Իսրայէլի. զի յանուն Յիսուսի Քրիստոսի Նազովրեցւոյ՝ զոր դուքն խաչեցիք, զոր Աստուած յարոյց ՚ի մեռելոց. նովաւ սա կայ աւասիկ առաջի ձեր ողջացեալ: Նա է վէմ անարգեալ ՚ի ձէնջ շինողաց, որ եղև գլուխ

անկեան: Եւ չի՛ք այլով իւիք փրկութիւն, զի և ո՛չ անուն այլ գոյ 'ի ներքոյ երկնից տուեալ 'ի մարդիկ՝ որով արժան իցէ կեալ մեզ:

13 — 22:

Հայեցեալ 'ի համարձակութիւնն Պետրոսի և Յովհաննու, և 'ի վերայ հասեալ թէ արք տգէտք՝ և առանց դըպրութեան են, զարմանային. զի ճանաչէին զնոսա՝ թէ ընդ Յիսուսի էին: Եւ զայրն ևս տեսանէին զբժշկեալն՝ զի կայր ընդ նոսա. և ո՛չ կարէին տալ պատասխանի: Եւ հրամայեալ նոցա արտաքս քան զատեանն ելանել, խորհեցան ընդ միմեանս, և ասեն. զի՞նչ արասցուք արանցս այսոցիկ՝ զի երևելի նշան եղև 'ի ձեռն սոցա. ամենայն իսկ բնակչաց Երուսաղէմի յայտ է, և ո՛չ կարեմք ուրանալ: Այլ զի մի՛ առաւել ճարակեսցի 'ի ժողովուրդն՝ սպառնասցուք նոցա, մի՛ ևս խօսիլ յանունն յայն՝ մի՛ ումեք 'ի մարդկանէ: Եւ կոչեալ զնոսա պատուիրեցին ամենևին մի՛ խօսիլ՝ և մի՛ ուսուցանել յանուն Յիսուսի: Իսկ Պետրոս և Յովհաննէս պատասխանի ետուն և ասեն ցնոսա. եթէ արժան իցէ առաջի Աստուծոյ՝ ձեզ լսել առաւել քան Աստուծոյ, ընտրեցէ՛ք: Այլ մեք ո՛չ կարեմք, զոր տեսաքն և լուաք՝ չխօսիլ: Նոքա սպառնացեալ արձակեցին զնոսա, և ոչինչ գտեալ՝ թէ որպէս պատուհասեսցեն զնոսա վասն ժողովըրդեանն. զի ամենեքեան փառաւոր առնէին զԱստուած՝ վասն իրացն եղելոց: Զի ամաց էր այրն՝ աւելի քան զքառասուն՝ յորոյ վերայ եղև նշանս այս բժշկութեան:

23 — 31:

Եւ անտի արձակեալք եկին առ իւրեանս. և պատմեցին, որչափ ինչ ասացին ցնոսա քահանայապետքն և երի-

ցունքն։ Եւ նոցա լուեալ՝ ամբարձին զձայնս իւրեանց առ Աստուած, և ասեն. դու Տէր Աստուած՝ որ արարեր զերկինս և զերկիր, զծով՝ և զամենայն, որ է 'ի նոսա։ Որ 'ի բերանոյ հօր մերոյ Դաւթի ծառայի քո՝ 'ի ձեռն Հոգւոյն սրբոյ ասացեր. զմէ՞ խռովեցան հեթանոսք՝ և ժողովուրդք խորհեցան սնոտիս։ Յանդիման եղեն թագաւորք երկրի. և իշխանք ժողովեցան 'ի միասին, վասն Տեառն և վասն օծելոյ նորա։ Ժողովեցան արդարև 'ի քաղաքիս յայսմիկ 'ի վերայ Սրբոյ Որդւոյ քո Յիսուսի, զոր օծերն. Հերովդէս՝ և Պոնտոս Պիղատոս՝ ազգօք և ժողովրդօք Իսրայէլի. առնել որչափ ձեռն քո և կամք՝ յառաջագոյն սահմանեցին լինել։ Եւ արդ Տէ՛ր, հայեա՛ց 'ի սպառնալիսն նոցա՝ և տո՛ւր ծառայից քոց ամենայն համարձակութեամբ խօսել զբանն քո։ Ի ձգել զձեռն քո 'ի բժշկութիւն, և նշանս և արուեստըս՝ լինել անուամբ Սրբոյ Որդւոյ քո Յիսուսի։ Եւ մինչ կային նոքա յաղօթս, շարժեցաւ տեղին՝ յորում էին ժողովեալ. և լցան ամենեքեան Հոգւով սրբով. և խօսէին զբանն Աստուծոյ համարձակութեամբ։

32 — 33։

Եւ բազմութիւն հաւատացելոցն էր սիրտ և անձն մի, և ոչ ոք 'ի նոցանէ ասէր զընչից իւրոց թէ իւր իցէ. այլ էր նոցա ամենայն ինչ հասարակաց։ Եւ զօրութեամբ բազմաւ տային զվկայութիւն առաքեալքն յարութեանն Տեառն Յիսուսի Քրիստոսի. և շնորհք մեծամեծք էին 'ի վերայ ամենեցուն նոցա։

Դ· ՀՐԱՇԻՒՔ ՁԵՐԾՈՒՄՆ ՊԵՏՐՈՍԻ ԵՒ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԵՒ ՀԱԼԱԾԱՆՔ ՆՈՑԱ ՎԱՍՆ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ:

5· 12 — 16:

Եւ 'ի ձեռս առաքելոցն լինէին նշանք և արուեստք բազումք 'ի ժողովրդեանն. և էին միաբան ամենեքեան 'ի սրահին Սողոմոնի: Եւ յայլոց անտի ոչ ոք իշխէր մերձենալ առ նոսա. այլ յարգէր զնոսա ժողովուրդն: Եւ առաւել ևս յաւելանային հաւատացեալքն 'ի Տէր, բազմութիւն արանց և կանանց: Մինչև 'ի հրապարակսն հանել զհիւանդս, և դնել պատգարակօք և մահճօք իւրեանց. զի ընդ անցանելն Պետրոսի՝ գոնէ հովանի նորա հասցէ ումեք 'ի նոցանէ: Եւ ժողովիւր բազմութիւն շուրջ 'ի քաղաքաց անտի յԵրուսաղէմ. բերէին զհիւանդս և զնեղեալս յայսոց պղծոց. որք և բժշկէին ամենեքեան:

17 — 24:

Յարուցեալ քահանայապետքն, և ամենեքեան որք ընդ նմա (աղանդն Սադուկեցւոց) լցան նախանձու: Եւ արկին զձեռս յառաքեալսն՝ և եդին զնոսա հրապարակաւ 'ի բանտի: Ապա հրեշտակ Տեառն 'ի գիշերի եբաց զդուրս բանտին. և հանեալ զնոսա, ասէ. գնացէ՛ք, կացէ՛ք 'ի տաճարին, և խօսեցարո՛ւք ընդ ժողովրդեան զամենայն զպատգամըս կենացս այսոցիկ: Եւ իբրև լուան, մտին ընդ առաւօտն 'ի տաճարն՝ և ուսուցանէին. եկն քահանայապետն՝ և որք ընդ նմա, կոչեցին միաբան զատեանն, և զամենայն ծերակոյտ որդւոցն Իսրայէլի, և առաքեցին 'ի բանտն ածել զնոսա: Եւ իբրև եկին սպասաւորքն՝ ոչ գտին զնոսա 'ի բանտին. դարձեալ անդրէն՝ պատմեցին, և ասեն. թէ ըզ-

բանտն գտաք փակեալ ամենայն զգուշութեամբ, և զպահապանսն՝ զի կային առ դրանն. բացաք՝ և 'ի ներքս զոք ոչ գտաք: Իբրև լուան զբանս զայս իշխանք տաճարին՝ և քահանայապետքն, հիացան վասն նոցա, թէ զի՞նչ արդեօք լինիցի այն:

25 — 32:

Եւ եկն ոմն պատմեաց նոցա, թէ ահա՛ արքն՝ զորս եդիք 'ի բանտի՝ կան 'ի տաճարին, և ուսուցանեն զժողովուրդն: Յայնժամ երթեալ իշխանն սպասաւորօքն հանդերձ՝ էած զնոսա ոչ բռնութեամբ. քանզի երկնչէին 'ի ժողովրդենէն՝ զի մի՛ քարկոծեսցին: Եւ ածեալ զնոսա՝ կացուցին յատենի: Եհարց զնոսա քահանայապետն, և ասէ. ո՞չ պատուիրելով պատուիրեցաք ձեզ, մի՛ ուսուցանել յանուանն յայն. և արդ ահաւասիկ լցիք զԵրուսաղէմ ուսմամբ ձերով. և կամիք ածել 'ի վերայ մեր զարիւն առն այնորիկ: Պատասխանի ետ Պետրոս և այլ առաքեալքն, և ասեն. հնազանդել պարտ է Աստուծոյ առաւել քան մարդկան: Աստուած հարցն մերոց յարոյց զՅս՝ զոր դուք սպանիք կախեալ զփայտէ: Զնա Աստուած առաջնորդ և փրկիչ բարձրացոյց աջով իւրով՝ տալ զապաշխարութիւն Իսրայէլի, և զթողութիւն մեղաց: Եւ մեք եմք վկայք բանիցս այսոցիկ: Եւ Հոգին սուրբ՝ զոր ետ Աստուած հնազանդելոց իւրոց:

33 — 42:

Եւ նոքա իբրև լուան, առաւօտնային. և խորհէին սպանանել զնոսա: Յարուցեալ ոմն 'ի մէջ ատենին փարիսեցի որում անուն էր Գամաղիէլ. օրէնսուսոյց՝ պատուական ամենայն ժողովրդեանն. հրամայեաց սակաւիկ մի զարսն

արտաքս տանել: Եւ ասէ ցնոսա. արք Իսրայէլացիք, հայեցարո՛ւք 'ի ձեզ վասն արանցս այսոցիկ՝ զի՞նչ արժան է գործել: Յառաջ քան զաւուրս զայսոսիկ՝ յարեաւ Թեւդաս ասել զանձնէ՝ թէ իցէ ոմն, յոր անկան արք թուով իբրև չորեք հարիւր՝ որ սպանաւ. և ամենեքեան՝ որք միաբանեալ էին ընդ նմա, քակտեցան՝ և եղեն ոչինչ: Յետ նորա յարեաւ Յուդա գալիլեացի՝ յաւուրս աշխարհագրին. և ապստամբեցոյց զժողովուրդ բազում զկնի իւր. և նա կորեաւ՝ և ամենեքեան որք ընդ նմա հաւանեալք էին, ցրուեցան: Եւ զարդ ասեմ ձեզ. 'ի բա՛ց կացէք յարանցդ յայդցանէ. և թո՛յլ տուք դոցա, զի թէ 'ի մարդկանէ իցէ խորհուրդդ այդ՝ կամ գործ, քակտեսցի. ապա թէ յԱստուծոյ է, ո՛չ կարէք քակտել զդոսա. գուցէ և Աստուածամարտք գտանիցիք: Հաւանեցան նմա: Եւ կոչեալ զառաքեալսն՝ գան հարին. և պատուիրեցին՝ մի՛ խօսել յանուանն Յիսուսի. և արձակեցին զնոսա: Եւ նոքա գնացին խնդալով յերեսաց ատենին. զի վասն անուանն Տեառն Յիսուսի՝ արժանի եղեն անարգելոյ: Եւ զամենայն օր 'ի տաճարին՝ և առ տնին, ո՛չ դադարէին յուսուցանել և աւետարանել զՅիսուս Քրիստոս:

5. ՍՏԵՓԱՆՆՈՍ ԱՌԱՋԻՆ ՎԿԱՅ ՔՐԻՍՏՈՍԻ:

6. 7 — 8:

Եւ բանն Աստուծոյ աճէր, և բազմանայր թիւ աշակերտացն յոյժ յԵրուսաղէմ. և բազում ժողովք 'ի քահանայիցն անսային հաւատոյն: Ստեփաննոս՝ այր լի շնորհօք և զօրութեամբ, առնէր արուեստս և նշանս մեծամեծս 'ի ժողովրդեանն:

9 — 15:

Յարեան ոմանք 'ի ժողովրդենէն՝ որ կոչէր Լիբէացւոց՝ և Կիւրենացւոց՝ և Աղեքսանդրացւոց՝ և որ 'ի Կիւլիկեցւոց՝ և յԱսիա, վիճել ընդ Ստեփաննոսի: Եւ ոչ կարէին զդէմ ունել իմաստութեան և Հոգւոյն՝ որով խօսէր: Ցայնժամ հրապուրեցին արս ոմանս ասել. լուաք զդորա խօսիլ բանս հայհոյութեան 'ի Մովսէս և յԱստուած: Եւ խռովեցին զժողովուրդն, և զերիցունսն և զդպիրսն. և հասեալ 'ի վերայ յափշտակեցին զնա՝ և ածին յատեանն: Եւ կացուցին վկայս սուտս՝ որք ասէին. այրս այս ոչ դադարի խօսիլ բանս հայհոյութեան՝ զտեղւոյն սրբոյ՝ և զօրինացն: Լուաք 'ի դմանէ, զի ասէր՝ թէ Յիսուս Նազովրեցի, նա քակեսցէ զտեղիս զայս՝ և փոխեսցէ զօրէնս՝ զորս ետ մեզ Մովսէս: Եւ հայեցեալ 'ի նա ամենեցուն՝ որք նստէին յատենին, տեսին զերեսս նորա իբրև զերեսս հրեշտակի:

7. 1 — 33.

Ասէ քահանայապետն. թէ արդարև այդ այդպէ՞ս իցէ: Եւ նա ասէ. արք եղբարք և հարք, լուարո՛ւք ինձ: Աստուած փառաց երևեցաւ հօր մերում Աբրահամու՝ մինչդեռ 'ի Միջագետս էր, մինչչև բնակեցուցեալ էր զնա 'ի Խառան, և ասէ ցնա. ե՛լ յերկրէ քումմէ և յազգէ քումմէ, և ե՛կ յերկիր՝ զոր ցուցից քեզ: Ցայնժամ ելեալ յերկրէն Քաղդէացւոց, բնակեցաւ 'ի Խառան. և անտի յետ մեռանելոյ հօր նորա՝ փոխեաց և պանդխտեցոյց զնա յերկիրս յայսմիկ՝ յորում դուք այժմ բնակեալ էք: Եւ ոչ ետ նմա զժառանգութիւն 'ի սմա, և ոչ քայլ մի ոտին. և խոստացաւ տալ նմա զսա 'ի բնակութիւն և զաւակի նորա յետ նորա, մինչ ոչ դոյր նորա որդի: Խօսեցաւ Աս-

տուած այսպէս. թէ ,,եղիցի զաւակ նորա պանդուխտ յօտար երկրի, և ծառայեցուսցեն զնա և չարչարեսցեն զնա ամս չորեք հարիւր: Եւ զազգն՝ որում ծառայեսցեն, դատեցայց ես՝ ասէ Աստուած. և յետ այսորիկ ելցեն՝ և պաշտեսցեն զիս 'ի տեղւոջս յայսմիկ'': Եւ ետ նմա ուխտ թլփատութեան, և այս ծնաւ զԻսահակ, և թլփատեաց զնա յաւուր ութերորդի. և Իսահակ զՅակոբ, և Յակոբ զերկոտասան նահապետսն: Եւ նահապետքն նախանձեալ ընդ Յովսէփայ՝ վաճառեցին յԵգիպտոս. Եւ էր Աստուած ընդ նմա: Եւ փրկեաց զնա յամենայն նեղութեանց նորա: Եւ ետ նմա շնորհս և իմաստութիւն առաջի փարաւոնի արքային Եգիպտացւոց. և կացոյց զնա իշխան Եգիպտացւոց և ամենայն տան նորա: Եւ եկն սով յամենայն երկիրն Եգիպտոսի, և 'ի Քանան նեղութիւն մեծ. և ոչ գտանէին զկերակուր հարքն մեր: Եւ լուեալ Յակոբայ՝ թէ գտանի կերակուր յԵգիպտոս, առաքեաց զհարսն մեր յառաջագոյն: Եւ յերկրորդումն ետ ծանօթս Յովսէփ եղբարց իւրոց. և յայտնի եղև փարաւոնի ազգ նորա: Առաքեաց Յովսէփ, և կոչեաց զՅակոբ զհայր իւր, և զամենայն ազգատոհմն, ոգիս եօթանասուն և հինգ: Եւ էջ Յակոբ յԵգիպտոս, և վախճանեցաւ ինքն և հարքն մեր: Եւ փոխեցան 'ի Սիւքէմ, և եդան յայրին՝ զոր ստացաւ Աբրահամ գնոց արծաթոյ յորդւոցն Եմօրայ՝ որդւոյ Սիւքէմայ: Իբրև մերձեցաւ ժամանակ աւետեացն՝ զորս խոստացաւ Աստուած Աբրահամու, աճեաց ժողովուրդն՝ և բազմացաւ յԵգիպտոս. մինչև յարեաւ այլ թագաւոր յԵգիպտոս՝ որ ոչ ճանաչէր զՅովսէփ: Նա հնարեցաւ ազգի մերում, և չարչարեաց զհարսն մեր, առնել ընկեցիկ զմանկունս նոցա՝ զի մի ապրեսցին: Յորում ժամանակի ծնաւ և Մովսէս, և էր կայտառ առաջի Աստուծոյ. որ և սնաւ 'ի տան հօր իւրոյ ա-

միսս երիս։ Եւ յընկեցիկ առնել զնա, եբարձ զնա դուստր փարաւոնի, և սնոյց զնա իւր յորդեգիրս։ Եւ վարժեցաւ Մովսէս ամենայն իմաստութեամբ Եգիպտացւոց. և էր զօրաւոր բանիւք և գործովք իւրովք։ Իբրև լցան նորա քառասնամեայ ժամանակք, անկաւ 'ի սիրտ նորա այց առնել եղբարց իւրոց՝ որդւոյն Իսրայէլի։ Եւ տեսեալ զոմն զըրկեալ՝ վչարեցաւ, և խնդրեաց զվրէժ զրկելոյն, սպանեալ զԵգիպտացին։ Զմտաւ ածէր՝ թէ իմասցին եղբարք նորա, զի Աստուած 'ի ձեռն նորա տալոց էր զփրկութիւն նոցա. և նոքա ոչ իմացան։ Եւ 'ի վաղիւ անդր երևեցաւ նոցա մինչդեռ մարտնչէին, և վարեաց զնոսա 'ի խաղաղութիւն, ասէ. արք եղբարք էք, ընդէ՞ր զրկէք զմիմեանս։ Իսկ որ զրկէր զընկերն՝ մերժեաց զնա, և ասէ. ո՞ կացոյց զքեզ իշխան և դատաւոր 'ի վերայ մեր։ Մի թէ սպանանե՞լ կամիցիք զիս, զոր օրինակ սպաներ երէկ զԵգիպտացին։ Եւ փախեաւ Մովսէս 'ի բանիցս յայսցանէ, և եղև պանդուխտ յերկրին Մադիանու, ուր ծնաւ երկուս որդիս։ Եւ 'ի կատարել ամացն քառասնից, երևեցաւ նմա յանապատի լերինն Սինայ հրեշտակ Տեառն 'ի բոց հրոյ մորենւոյն։ Եւ Մովսէս տեսեալ՝ զարմացաւ ընդ տեսիլն, և 'ի մատչելն նորա նշմարել, եղև ձայն Տեառն. Ես եմ Աստուած հարցն քոց, Աստուած Աբրահամու, Աստուած Իսահակայ, և Աստուած Յակոբայ։ Եւ զահի հարեալ Մովսէս՝ ոչ իշխէր հայիլ։ Եւ ասէ ցնա Տէր. լոյծ զկօշիկս յոտից քոց, զի տեղիդ՝ յորում դուդ կայցեր՝ երկիր սուրբ է։ Տեսանելով տեսի զչարչարանս ժողովրդեան իմոյ՝ որ յԵգիպտոս, և լուայ հեծութեան նոցա, և իջի փրկել զընոսա. և արդ՝ ե՛կ, առաքեցից զքեզ յԵգիպտոս։ Զայն Մովսէս՝ զոր ուրացանն, և ասէին. ո՞ կացոյց զքեզ իշխան և դատաւոր 'ի վերայ մեր. զնա Աստուած իշխան և

փրկիչ առաքեաց 'ի ձեռն հրեշտակին՝ որ երևեցաւ նմա 'ի մորենւոյն: Նա եհան զնո՛ արարեալ նշանս և արուեստս յերկրին Եգիպտացւոց, և 'ի Կարմիր ծովուն, և յանապատին՝ ամս քառասուն: Այս Մովսէս է՝ որ ասաց ցորդիսն Իսրայէլի. մարգարէ յարուսցէ ձեզ Տէր Աստուած ձեր յեղբարց ձերոց իբրև զիս՝ նմա լուիջիք: Սա է՝ որ եղև յեկեղեցւոջն յանապատի ընդ հրեշտակին՝ որ խօսեցաւ ընդ նմա 'ի լերինն Սինայ՝ և ընդ հարսն մեր, որ ընկալաւ զպատգամս կենդանիս՝ տալ մեզ: Որում ո՛չ կամեցան հնազանդիլ հարքն մեր. այլ մերժեցին, և դարձան սրտիւք իւրեանց յԵգիպտոս: Եւ ասեն ցԱհարոն. արա՛ մեզ աստուածս՝ որք երթիցեն առաջի մեր. զի Մովսէսն այն՝ որ եհան զմեզ յերկրէն Եգիպտացւոց, ո՛չ գիտեմք՝ զի՞ եղև նմա: Եւ արարին յաւուրսն յայնոսիկ զորթ, և մատուցին զոհս կռոց. և ուրախ լինէին 'ի գործս ձեռաց իւրեանց: Դարձոյց Աստուած, և մատնեաց զնոսա 'ի պաշտօն զօրութեան երկնից, որպէս և գրեալ է 'ի գիրս մարգարէից. մի՞ թէ զոհս և պատարագս մատուցէք ինձ զամս քառասուն յանապատին՝ տո՛ւնդ Իսրայէլի: Եւ առիք զխորանն Մողոքայ, և զաստղն աստուծոյն Հռեմփայ, զպատկերսն՝ զորս արարիք երկիրպագանել նոցա. և փոխեցից զձեզ յայն կողմն Բաբելացւոց: Խորանն վկայութեան էր ընդ հարսն մեր յանապատին. որպէս հրաման ետ՝ որ խօսէրն ընդ Մովսէսի, առնել զայն ըստ օրինակին՝ զոր ետես: Զոր և ընկալեալ բերէին հարքն մեր՝ հանդերձ Յեսուաւ 'ի վիճակ ազգացն, զորս մերժեաց Աստուած յերեսաց հարցն մերոց, մինչև յաւուրսն Դաւթի. որ եգիտ շնորհս առաջի Աստուծոյ, և խնդրեաց գտանել զյարկս Աստուծոյ Յակոբայ: Նաև Սողոմոն շինեաց նմա տուն: Այլ ո՛չ եթէ Բարձրեալն 'ի ձեռագործ տաճարս բնակի. այլ որպէս մար-

գարէն ասէ. Երկինք աթոռ իմ են, և երկիր պատուանդան ոտից իմոց. զո՞րպիսի տուն շինեցէք ինձ, ասէ Տէր. կամ զի՞նչ տեղի հանգստեան իմոյ. ո՞չ ձեռն իմ արար զայս ամենայն: Խստապարանոցք և անթլփատք սրտիւք և ականջօք. դուք հանապազ Հոգւոյն սրբոյ հակառակ կայք, որպէս հարքն ձեր՝ և դուք: Զո՞ ՚ի մարգարէից ո՛չ հալածեցին հարքն ձեր. և սպանին զայնոսիկ՝ որք յառաջագոյն պատմեցին վասն գալստեան արդարոյն, որոյ դուք այժմ մատնիչք և սպանողք եղէք: Որք առիք զօրէնս ՚ի հրամանս հրեշտակաց, և ո՛չ պահեցիք:

54 — 60:

Եւ լուեալ զայս՝ զայրանային ՚ի սիրտս իւրեանց, և կրճտէին զատամունս ՚ի վերայ Նորա: Եւ Նա էր լի Հոգւով սրբով: Հայեցաւ յերկինս՝ և ետես զփառս Աստուծոյ, և զՅիսուս՝ զի կայր ընդ աջմէ Աստուծոյ, և ասէ. Ահա տեսանեմ զերկինս բացեալ՝ և զՈրդի մարդոյ զի կայ ընդ աջմէ Աստուծոյ: Աղաղակեալ ՚ի ձայն մեծ՝ խցին զականջս իւրեանց, և դիմեցին առ հասարակ ՚ի վերայ Նորա: Եւ հանեալ արտաքոյ քաղաքին՝ քարկոծէին. և վկայքն դնէին զձորձս իւրեանց առ ոտս երիտասարդի միոջ՝ որ կոչէր Սաւուղ: Եւ քարկոծ առնէին զՍտեփաննոս՝ որ կարդայր և ասէր. Տէ՛ր Յիսուս, ընկա՛լ զոգի իմ: Եդ ծունր՝ և աղաղակեաց ՚ի ձայն բարձր. Տէ՛ր, մի՛ համարիր դոցա զայս մեղս: Եւ զայս իբրև ասաց, ննջեաց: Եւ Սօղոս էր կամակից սպանման Նորա:

6. ԴԱՐՁ ԵԹՈՎՊԱՑԻ ՆԵՐՔԻՆԻՈՅՆ Ի ՁԵՌՆ ՓԻԼԻՊՊՈՍԻ:

8. 26 — 40:

Հրեշտակ Տեառն խօսեցաւ առ Փիլիպպոս, և ասէ.

արի՛ և գնա՛ դու 'ի կողմն հարաւոյ՝ ընդ ճանապարհ, որ իջանէ յԵրուսաղէմէ 'ի Գազայ. այս է անապատ։ Եւ յարեաւ գնաց. և ահաւասիկ այր մի Եթովպացի, ներքինի, հզօր կանդակայ տիկնոջ Եթովպացւոյ, որ էր 'ի վերայ ամենայն գանձուց նորա, որ եկեալ էր երկիրպագանել յԵրուսաղէմ։ Եւ էր անդրէն դարձեալ՝ և նստեալ 'ի կառս իւրում. ընթեռնոյր զմարգարէ զԵսայի։ Ասէ Հոգին ցՓիլիպպոս. մատի՛ր, և յարեա՛ց 'ի կառսդ յայդոսիկ։ Եւ ընթացաւ Փիլիպպոս. լսէր՝ զի ընթեռնոյր զԵսայի մարգարէ, և ասէ. գիտիցե՞ս արդեօք զոր ընթեռնուցուսդ։ Եւ նա ասէ. զիա՞րդ կարիցեմ գիտել՝ թէ ոք ո՛չ առաջնորդեսցէ ինձ. և աղաչեաց զՓիլիպպոս ելանել նստիլ ընդ նմա։ Եւ գլուխ գրոյն՝ զոր ընթեռնոյր՝ էր այս. իբրև զոչխար 'ի սպանդ վարեցաւ. և իբրև զորոջ առաջի կտրչի իւրոյ անմռունչ. այնպէս ո՛չ բանայ զբերան իւր։ Ի խոնարհութեան նորա դատաստան նորա բարձաւ. զազգատոհմըն նորա ո՛ պատմեսցէ. զի բառնին յերկրէ կեանք նորա։ Պատասխանի ետ ներքինին Փիլիպպոսի, և ասէ. աղաչեմ զքեզ, վասն ո՞յր ասէ մարգարէն զայս. վասն ի՞ւր, եթէ վասն այլոյ ուրուք։ Եբաց Փիլիպպոս զբերան իւր, և սկսեալ 'ի գրոցս յայսմանէ՝ աւետարանեաց զՅիսուս։ Իբրև երթային զճանապարհայն, եկին 'ի ջուր ինչ. և ասէ ներքինին. ահաւասիկ ջուր՝ զի՞նչ արգելու զիս 'ի մկրտելոյ։ Եւ ասէ ցնա Փիլիպպոս. եթէ հաւատաս բոլորով սրտիւ, մարթ է։ Պատասխանի ետ ներքինին և ասէ. հաւատամ՝ եթէ է Յս̃ Քս̃ Որդի Աստուծոյ։ Եւ հրամայեաց կացուցանել զկառսն. և իջին երկոքեան ի ջուրն, Փիլիպպոս և ներքինին. և մկրտեաց զնա։ Եւ իբրև ելին 'ի ջրոյ անտի, Հոգին Սուրբ եկն 'ի վերայ ներքինւոյն. և հրեշտակ Տեառն յափշտակեաց զՓիլիպպոս. և ո՛չ ևս ետես զնա ներքինին.

և գնայր զճանապարհ իւր ուրախութեամբ։ Բայց Փիլիպպոս գտաւ յԱզովտոս. և շրջեալ աւետարանէր ամենեցուն քաղաքացն՝ մինչև ՚ի գալ նորա ՚ի Կեսարիա։

7. ԴԱՐՁ ՍԱՒՈՒՂԱՅ։

9. 1 — 9։

Իսկ Սողոս տակաւին լցեալ սպառնալեօք և սպանմամբ աշակերտացն Տեառն։ Մատուցեալ առ քահանայապետն, խնդրեաց ՚ի նմանէ թուղթս ՚ի Դամասկոս առ ժողովարանս. որպէս թէ զոք գտցէ զայնր ճանապարհաւ արս կամ կանայս, կապեալս ածցէ յԵրուսաղէմ։ Եւ ընդ երթալն նորա՝ եղև մերձենալ ՚ի Դամասկոս. յանկարծակի շուրջ զնովաւ փայլատակեցաւ լոյս յերկնից։ Եւ անկեալ յերկիր՝ լուաւ զբարբառ՝ որ ասէր ցնա. Սաւուղ Սաւուղ, զի՞ հալածես զիս։ Եւ ասէ՝ ո՞վ ես Տէ՛ր։ Եւ նա ասէ. ես եմ Յիսուս, զոր դու հալածես. խի՛ստ է քեզ ընդդէմ խթանի աքացել։ Եւ զարհուրեալ՝ և անշշունչ լեալ՝ ասաց. Տէ՛ր, զիս զի՞նչ կամիս առնել։ Եւ ասէ ցնա Տէր. այլ յոտն կաց՝ և մուտ ՚ի քաղաքդ. և պատմեսցի քեզ՝ զի՞նչ քեզ պարտ իցէ առնել։ Իսկ արքն՝ որք ընդ նմայն երթային, կային անշշունչ. զձայնն միայն լսէին, բայց տեսանէին և զոչինչ։ Յարեաւ Սողոս յերկրէ անտի, և աչօք բացօք ոչ զոք տեսանէր, զձեռանէ առեալ նորա՝ մուծին ՚ի Դամասկոս։ Եւ էր անդ աւուրս երիս՝ և ոչ տեսանէր, և ոչ եկեր, և ոչ էարբ։

10 — 22։

Եւ էր ոմն աշակերտ ՚ի Դամասկոս՝ Անանիա անուն. և ասէ ցնա Տէր ՚ի տեսլեան. Անանիա՛։ Եւ նա ասէ. աւասիկ եմ Տէր։ Եւ ասէ ցնա Տէր, յոտն կաց՝ և գնա՛ ընդ փողո-

ցըն՝ որ կոչի Ուղիղ· և խնդրեսցես յապարանսն Յուդայ, Սօղոս անուն Տարսոնացի՝ զի կայ դեռ յաղօթս: (Եւ ետես 'ի տեսլեան զայր մի Անանիա անուանի մտեալ և եդեալ 'ի վերայ նորա ձեռս. որպէս զի տեսցէ): Պատասխանի ետ Անանիա. Տէ՛ր, լուայ 'ի բազմաց վասն առն այնորիկ՝ որչափ արար չարիս սրբոց քոց յԵրուսաղէմ: Եւ աստ ունի իշխանութիւն 'ի քահանայապետիցն կապել զամենեսեան՝ որք կարդան զանուն քո: Ասէ ցնա Տէր. ե՛րթ դու՝ զի անօթ ընտրութեան է նա ինձ, կրել զանուն իմ առաջի հեթանոսաց՝ և թագաւորաց՝ և որդւոյն Իսրայէլի: Քանզի ես իսկ ցուցից նմա՝ որչափ պարտ իցէ նմա չարչարել վասն անուան իմոյ: Եւ գնաց Անանիա, և եմուտ յապարանսն. և եդեալ 'ի վերայ նորա ձեռս, ասէ. Սաւուղ եղբայր՝ 'ի վե՛ր հայեաց, Տէր առաքեաց զիս, Յիսուս, որ երևեցաւն քեզ 'ի ճանապարհին՝ յորում գայիր. որպէս զի տեսցես՝ և լցցիս հոգւով սրբով: Եւ վաղվաղակի անկան յաչաց նորա իբրև կեղևանք. ետես՝ և յարեաւ մկրտեցաւ: Եւ առեալ զկերակուր՝ զօրացաւ. և եղև 'ի Դամասկոս աւուրս ինչ ընդ աշակերտսն: Եւ վաղվաղակի 'ի ժողովուրդսն քարոզեաց զՅիսուս, թէ սա է Որդին Աստուծոյ: Զարմացեալ էին ամենեքեան՝ որք լսէինն, և ասէին. ո՞չ սա էր՝ որ աւար հարկանէր յԵրուսաղէմ զայնոսիկ՝ որք կարդային զանուն Յիսուսի, և այսր նմին իրի եկեալ է, զի կապեալս զսոսա տարցի առ քահանայապետսն: Այլ Սօղոս առաւել ևս զօրանայր՝ և յաղթահարէր զՀրէայսն՝ որք բնակեալ էին 'ի Դամասկոս, և խելամտեցուցանէր, թէ սա է Քրիստոսն:

Ց· ԱՒԵՏԱՐԱՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ ՔԱՐՈԶԻ ԵՒ ՀԵԹԱՆՈՍԱՑ, ԵՒ ՆՈՔԱ ԸՆԴՈՒՆԻՆ ԶՀՈԳԻ ՍՈՒՐԲ։

11· 1 — 18։

Լուան առաքեալքն և եղբարք՝ որք էին ՚ի կողմանս Հրէաստանի, զի և ՚ի հեթանոսս ընկալան զբանն Աստուծոյ։ Բայց յորժամ ել Պետրոս յԵրուսաղէմ, խղճէին ՚ի նմանէ՝ որք ՚ի թլփատութենէ հաւատացեալքն և ասէին, եթէ մտեր առ արս անթլփատս՝ և կերեր ընդ նոսա։ Եւ սկսաւ Պետրոս պատմել նոցա կարգաւ, և ասէ. ես էի ՚ի քաղաքին Յոպպէ յաղօթս, և տեսի ՚ի զարմացման տեսիլ. իջանել անօթ ինչ իբրև կտաւոյ մեծի չորեցունց տանոյն կախեալ յերկնից՝ և եհաս մինչև առ իս։ Յոր պշուցեալ հայէի. և տեսի զչորքոտանիս երկրի, և զգազանս՝ և զսողունս, և զթռչունս երկնից։ Եւ լուայ բարբառ՝ որ ասէր. արի՛ Պետրոս, զե՛ն և կե՛ր։ Եւ ասեմ. քա՛ւ լիցի Տէ՛ր, զի խառնակ ինչ և անսուրբ ո՛չ երբէք եմուտ ՚ի բերան իմ։ Պատասխանի ետ բարբառն երկիցս անգամ յերկնից. զոր Աստուած սրբեաց՝ դու մի՛ խառնակ համարիր։ Այս եղև երիցս, և վերացաւ դարձեալ ա͞մ անօթն յերկինս։ Եւ ահա անդրէն երեք արք եկին՝ կացին առ ապարանիցն՝ ուր եսն էի, առաքեալք ՚ի Կեսարիոյ առ իս։ Եւ ասէ ցիս Հոգին՝ երթալ ընդ նոսա, և մի՛ ինչ խղճել. եկին ընդ իս և սոքա վեցեքին եղբարքս. և մտաք ՚ի տուն առնն այնորիկ։ Եւ պատմեաց մեզ՝ որպէս ետես զհրեշտակն ՚ի տան իւրում, զի կայր, և ասէր ցնա. առաքեա՛ ՚ի Յոպպէ, և կոչեա՛ զՍիմոն զկոչեցեալն Պետրոս. որ խօսեսցի բանս ընդ քեզ, որով կեցցես դու՝ և ամենայն տուն քո։ Եւ իբրև սկսայ խօսել՝ եկն Հոգին Սուրբ ՚ի վերայ նոցա. որպէս ՚ի վերայ մեր ՚ի սկզբանն։ Յիշեցի զբանն Տեառն՝ զոր

ասէր. Յովհաննէս մկրտեաց 'ի ջուր. բայց դուք մկրտիցիք 'ի Հոգին Սուրբ: Իսկ արդ՝ եթէ զհաւասարակաց պարգեւն ետ Աստուած և նոցա՝ որպէս և մեզ՝ 'ի հաւատալն 'ի Տէր Յիսուս Քրիստոս. ես զի՞նչ կարող էի արգելուլ զԱստուած: Եւ լուեալ զայս՝ լռեցին. և փառաւոր առնէին զԱստուած, և ասէին. ուրեմն և 'ի հեթանոսս ետ Աստուած զապաշխարութիւն կենաց:

9. ՊԵՏՐՈՍ ԱՐԿԱՆԻ Ի ԲԱՆՏ ԵՒ ՀՐԱՇԻՒՔ ԱԶԱՏԻ Ի ԲԱՆՏԷ:

12. 1 — 11:

Ընդ ժամանակսն ընդ այնոսիկ եարկ Հերոդէս արքայ զձեռն՝ չարչարել զոմանս յեկեղեցւոյն: Եւ սպան զՅակոբոս զեղբայրն Յովհաննու սրով: Եւ տես եթէ հաճոյ է Հրէիցն, յաւել ևս ունել զՊետրոս. և էին աւուրքն Բաղարջակերաց: Զոր իբրև կալաւ՝ ետ 'ի բանտի. և մատնեաց չորից չորրորդաց զինուորաց պահել զնա, և կամէր յետ զատկին ածել զնա ժողովրդեանն: Եւ Պետրոս 'ի պահեստի էր 'ի բանտին. և աղօթք ստէպ լինէին յեկեղեցւոյն վասն նորա առ Աստուած: Իբրև կամեցաւ ածել զնա Հերովդէս, 'ի գիշերին յայնմիկ էր Պետրոս 'ի քուն 'ի մէջ երկուց զինուորաց՝ կապեալ կրկին շղթայիւք, և պահապանքն առաջի դրանն պահէին զբանտն: Եւ ահա հրեշտակ Տեառն եկն և եկաց 'ի վերայ՝ և լոյս ծագեցաւ 'ի տանն. և խթեաց զկողսն Պետրոսի, յարոյց զնա՝ և ասէ. Արի՛ վաղվաղակի: Եւ անկան շղթայքն 'ի ձեռաց նո- Եւ ասէ հրեշտակն ցնա. ա՛ծ զգօտի քո. և ա՛րկ զհողաթափիս յոտս քո. և արար այնպէս. և ասէ ցնա. ա՛րկ զձորձս քո, և ե՛կ զկնի իմ: Եւ ելեալ երթայր զհետ, և ո՛չ գիտէր եթէ ճշմարիտ իցէ՝ որ ինչ եղեն 'ի հրեշտակէն. զի համարէր երազ տեսանել: Եւ իբրև անցին նոքա՝ ըստ մի

պահ և ըստ երկուս, եկին մինչև 'ի դուռն երկաթի՝ որ հանէր 'ի քաղաքն, որ ինքնին բացաւ նոցա. և ելեալ անցին ընդ փողոց մի, և վաղվաղակի 'ի բաց եկաց 'ի նմանէ հրեշտակն: Եւ Պետրոս իբրև 'ի միտս եղև, ասէ. Արդ գիտեմ ճշմարտիւ՝ թէ առաքեաց Տէր զհրեշտակ իւր. և փրկեաց զիս 'ի ձեռաց Հերովդէի, և յամենայն ակնկալութենէ ժողովրդեանն Հրէից:

10. ՊՕՂՈՍ ՔԱՐՈԶԷ Ի ԺՈՂՈՎՐԴԱՆՈՑՍ ԱՆՏԻՈՔԱՅ ՊԻՍԻԴԵԱՑ:

13. 13 — 41:

Եւ յետ ընթեռնլոյ զօրէնսն և զմարգարէս, առաքեցին առ նոսա ժողովրդապետքն, և ասեն. արք եղբարք՝ եթէ իցէ 'ի ձեզ բանք մխիթարութեան առ ժողովուրդդ՝ խօսեցարո՛ւք: Յոտն եկաց Պօղոս՝ շարժեաց զձեռն, և ասէ. արք Իսրայէլացիք՝ և որք երկնչիք յԱստուծոյ՝ լուարո՛ւք. Աստուած ժողովրդեանս այսորիկ Իսրայէլի, ընտրեաց ըզհարսն մեր. և զժողովուրդն բարձրացոյց 'ի պանդխտութեան յերկրին Եգիպտացւոց. և 'ի բազուկ բարձր եհան զնոսա անտի: Եւ իբրև քառասնամեայ ժամանակ կերակրեաց զնոսա յանապատի: Եւ քակեալ զազգս եօթն յերկրին Քանանու, ժառանգեցոյց նոցա զերկիրն նոցա իբրև ամս չորեք հարիւր և յիսուն, և յետ այսորիկ ետ նոցա դատաւորս մինչև 'ի Սամուէլ մարգարէ: Եւ անտի յառաջ խնդրեցին զթագաւոր. և ետ նոցա Աստուած զՍաւուղ որդի Կիսեայ, այր յազգէ Բենիամինի՝ ամս քառասուն: Եւ իբրև փոխեաց զնա, յարոյց նոցա զԴաւիթ թագաւոր. որում և ասաց վկայութեամբ. ''Գտի զԴաւիթ որդի Յեսսեայ, այր ըստ սրտի իմում, որ արասցէ զամենայն ըզկամս իմ'' 'ի սորա զաւակէ. Աստուած ըստ աւետեացն յարոյց Իսրայէլի զփրկիչն Յիսուս: Ըստ յառաջագոյն քարո-

զութեանն Յովհաննու առաջի երեսաց մտին Նորա, մկրտութիւն ապաշխարութեան՝ ամենայն ժողովրդեանն Իսրայէլի: Եւ իբրև լնոյր Յովհաննէս զընթացսն, ասէր. զո՞ք կարծէք զինէն թէ իցեմ. չե՛մ ես այն, այլ ահա գայ զկնի իմ՝ որում չե՛մ արժանի զկօշիկս ոտիցն լուծանել: Արք եղբարք՝ որդիք Աբրահամեան տոհմին, և որք 'ի ձեզ երկիւղածք իցեն յԱստուծոյ. ձեզ բանս այս փրկութիւն առաքեցաւ: Բայց որք բնակեալք են յԵրուսաղէմ, և իշխանք Նոցա անծանօթք եղեն 'ի սմանէ, և ըստ բարբառոց մարգարէիցն՝ որք յամենայն շաբաթս ընթերցեալ լինէին, դատեալ կատարեցին: Եւ ո՛չ մի ինչ պատճառս մահու գտեալ, խնդրեցին 'ի Պիղատոսէ սպանանել զնա: Եւ իբրև կատարեցին զամենայն՝ որ վասն Նորա գրեալ էր, իջուցեալ 'ի փայտէն՝ եդին 'ի գերեզմանի: Այլ Աստուած յարոյց զնա 'ի մեռելոց, որ երևեցաւ աւուրբք բազմօք այնոցիկ, որք ելեալ էին ընդ Նմա 'ի Գալիլեէ յԵրուսաղէմ. որք և արդ իսկ վկայք են Նորա առ ժողովուրդն: Եւ մեք ձեզ աւետարանեմք զխոստումն՝ որ առ հարսն եղեալ էր: Զի զնոյն Աստուած կատարեաց առ մեզ որդիս Նոցա՝ յարուցեալ զՅս̃, որպէս և 'ի Սաղմոսին գրեալ է յերկրորդում. "Որդի իմ ես դու, և ես այսօր ծնայ զքեզ": Եւ զի յարոյց զնա 'ի մեռելոց, և ո՛չ ևս դառնալոց է յապականութիւն, այսպէս ասէ. եթէ տաց ձեզ զսրբութիւնսն Դաւթի զհաւատարիմս. քանզի և 'ի միւսումն ասէ. Ո՛չ տացես սրբոյ քում տեսանել զապականութիւն: Այլ Դաւիթ յազգի անդ իւրում պաշտեաց, և 'ի կամս Աստուծոյ ննջեաց, և յաւելաւ առ հարս իւր, և ետես զապականութիւն: Բայց զոր Աստուածն յարոյց, ո՛չ ետես զապականութիւն: Յայտնի լիցի ձեզ՝ արք եղբարք, զի սովաւ ձեզ թողութիւն մեղաց աւետարանի. և յամենայնէ՝

յորմէ ոչ կարացէք օրինօքն Մովսիսի արդարանալ, սովաւ ամենայն որ հաւատայ՝ արդարանայ։ Զգո՛յշ կացէք՝ գուցէ եկեսցէ ՚ի վերայ ձեր ասացեալն ՚ի մարգարէսն. Տեսէ՛ք արհամարհոտք, և զարմացարո՛ւք՝ և եղծարո՛ւք, զի գործ մի գործեմ ես յաւուրս ձեր. գործ՝ որում ոչ հաւատայցէք՝ թէ ոք պատմեսցէ ձեզ։

11. ԲԱՆՏԱՐԿՈՒՄՆ ՊՕՂՈՍԻ ԵՒ ՇԻՂԱՅԻ ԵՒ ԴԱՐՁ ՊԱՀԱՊԱՆԻ ԲԱՆՏԻՆ։

16. 22 — 34։

Եւ ընթացաւ ժողովուրդն ընդդէմ նոցա, և զօրագլուխքն պատառեցին զհանդերձս նոցա. հրամայէին գան հարկանել։ Եւ բազում վէրս եդեալ ՚ի վերայ նոցա՝ արկին ՚ի բանտ. պատուիրեցին բանտապետին զգուշութեամբ պահել զնոսա։ Որոյ առեալ զայսպիսի պատուէր, էարկ զնոսա ՚ի ներքին բանտն, և զոտս նոցա պնդեաց ՚ի կոճեղս։ Եւ ՚ի մէջ գիշերոյն Պօղոս և Շիղայ կային յաղօթս՝ և օրհնէին զԱստուած, և ունկն դնէին նոցա կալանաւորքն։ Եղև յանկարծակի շարժումն մեծ՝ մինչև շարժիլ հիմանց բանտին. և բացան անդէն դրունքն ամենայն. և ամենեցուն կապանք լուծան։ Իբրև զարթեաւ բանտապետն՝ և ետես բացեալ զդրունս բանտին, ձգեաց զսուսեր՝ և կամէր երթալ զիւրովին. կարծէր փախուցեալ զկապեալսն։ Եւ գոչեաց ՚ի ձայն մեծ Պօղոս, և ասէ. մի՛ ինչ գործեր ընդ անձն քո չար. քանզի ամենեքին աստ եմք։ Խնդրեաց լոյս՝ և դիմեաց ՚ի ներքս. և դողահար անկաւ առաջի Պօղոսի և Շիղայի։ Եւ ածեալ զնոսա արտաքս, ասէ. Տեա՛րք՝ զի՞նչ պարտ է ինձ առնել, զի ապրեցայց։ Եւ նոքա ասեն. հաւատա՛ ՚ի Տէր Յիսուս Քրիստոս. և ապրեսցիս դու՝ և ամենայն տուն քո։ Եւ խօսեցան նմա զբանն Տեառն, և

ամենեցուն՝ որք էին 'ի տան նորա։ Եւ առեալ զնոսա 'ի նմին ժամու գիշերոյն՝ լուաց 'ի վիրաց անտի. և մկրտեցաւ ինքն՝ և իւրքն ամենեքեան անդէն վաղվաղակի։ Եւ ածեալ զնոսա 'ի տուն իւր, եդ առաջի սեղան. և ուրախ եղև ամենայն տամբն հաւատացեալ յԱստուած։

12. ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆ ՊՕՂՈՍԻ ՅԱԹԷՆՍ։

17. 16 — 18։

Եւ յԱթէնս 'ի մնալ նոցա Պօղոսի, զայրանայր հոգի նորա 'ի նմա. զի տեսանէր 'ի կռապաշտութեան զքաղաքն։ Եւ խօսէր 'ի ժողովրդեանն ընդ Հրէայս և ընդ պաշտօնեայս՝ և 'ի հրապարակսն զամենայն օր՝ որոց և պատահէին։ Ոմանք յԷպիկուրեանցն, և 'ի Ստոյիկեանցն փիլիսոփայից հակառակէին ընդ նմա. և ոմանք ասէին, զի՛նչ կամիցի սերմանաքաղս այս խօսիլ· իսկ այլք, թէ օտարոտի իմն դից թուի պատմիչ լինիլ· քանզի զՅիսուս և զյարութիւն աւետարանէր։

19 — 33։

Եւ առեալ զնա ածին յԱրիսպագոսն, և ասէին. կարասցո՞ւք իմանալ՝ թէ զի՞նչ է նոր վարդապետութիւնդ՝ որ 'ի քէն պատմի։ Օտարացուցիչս իմն բերես 'ի լսելիս մեր· կամիմք գիտել՝ թէ զի՞նչ կամիցի այս լինիլ։ Զի Աթենացիքն ամենեքին՝ և եկքն օտարք, ո՛չ յայլ ինչ պարապէին, բայց ասել ինչ՝ կամ լսել նորագոյնս։ Եկաց Պօղոս 'ի մէջ Արիսպագին, և ասէ. ա՛րք Աթենացիք, ըստ ամենայնի իբրև պաշտօնասէրս տեսանեմ զձեզ։ Քանզի շրջեալ և տեսեալ զպաշտամունս ձեր, գտի բագին մի՝ յորում գրեալ էր՝ անծանօթի Աստուծոյ. զոր դուք յանծանօթս պաշտէք, ես զնոյն պատմեմ ձեզ։ Աստուած՝ որ արար

զաշխարհս և զամենայն որ 'ի նմա, նա երկնից և երկրի է Տէր: Ո՛չ 'ի ձեռագործ տաճարս բնակի, և ո՛չ 'ի ձեռաց մարդկան պաշտի իբրև կարօտ իմիք. նա տայ ամենայնի կեանս՝ և զշունչ, և զամենայն ինչ: Արար 'ի միոջէ արենէ զամենայն ազգս մարդկան՝ բնակել 'ի վերայ ամենայն երեսաց երկրի. հաստատեաց կարգեալ ժամանակս՝ և սահմանադրութիւն բնակութեան նոցա, խնդրել զԱստուած: Զի թերևս զննիցեն զնա և գտանիցեն, նա և ո՛չ հեռի իսկ է յիւրաքանչիւր ումեքէ 'ի մէնջ: Զի նովաւ կեամք՝ և շարժիմք՝ և եմք. որպէս և ոմանք 'ի ձերոց ճարտարաց ասացին, թէ նորա և ազգ իսկ եմք: Եւ արդ՝ որովհետև ազգ եմք Աստուծոյ, ո՛չ պարտիմք համարել ոսկւոյ՝ կամ արծաթոյ՝ կամ քարի, որ 'ի ճարտարութենէ և 'ի մտաց մարդոյ քանդակեալ իցէ՝ զԱստուածականն լինել նմանող: Բայց զժամանակս անգիտութեան անտես արարեալ Աստուծոյ, արդ զայս պատուիրէ մարդկան՝ ամենայն ումեք ապաշխարել: Քանզի հաստատեաց զօր՝ յորում պարտ է դատել զաշխարհս արդարութեամբ, 'ի ձեռն առն՝ որով սահմանեաց տալ հաւատս ամենեցուն, յարուցեալ զնա 'ի մեռելոց: Իբրև լուան զյարութիւն մեռելոց, ոմանք ծաղր առնէին զնա. կէսքն ասէին, լուիցուք 'ի քէն վասն այդորիկ միւսանգամ: Եւ ապա Պօղոս ել և գնաց 'ի միջոյ նոցա:

34:

Եւ ոմանք արք անկեալք 'ի նա՝ հաւատացին, ընդ որս էր և Դիոնէսիոս Արիսպագացի. և կին մի անուն Դամարիս՝ և այլք ընդ նոսա:

13. ԲԱՆՔ ՊՕՂՈՍԻ ԱՌ ՀՈՎՒԻՍ ԵԿԵՂԵՑՒՈՅՆ ԵՓԵՍՈՍԻ:

20. 17 — 38:

Եւ 'ի Միլիտեայ յղեալ յԵփեսոս՝ կոչեաց զերիցունըս եկեղեցւոյն: Եւ իբրեւ եկին առ նա, ասէ ցնոսա. դուք ձեզէն գիտէք յօրէ յառաջնմէ՝ յորմէ եկի յԱսիա. որպէս ընդ ձեզ զամենայն ժամանակն եղէ: Ծառայել Տեառն ամենայն խոնարհութեամբ՝ և բազում արտասուօք՝ և փորձութեամբ, որք դիպեցան ինձ 'ի նենգութեանց Հրէից: Որպէս ոչինչ զանգիտեցի յօգտակարացն չպատմել ձեզ՝ և ուսուցանել զձեզ հրապարակաւ և առ տունս: Տալ ըզվկայութիւն Հրէից և հեթանոսաց զապաշխարութեանն՝ որ առ Աստուած, և զհաւատոցն՝ որ 'ի Տէր մեր Յիսուս Քրիստոս: Եւ արդ՝ ահաւասիկ ես կապեալ հոգւով երթամ յԵրուսաղէմ. և որ ինչ անդ ընդ իս անցք անցանելոց իցէ, չգիտեմ: Բայց զի Հոգին Սուրբ ըստ քաղաքաց քաղաքաց վկայէ ինձ, և ասէ. եթէ կապանք և նեղութիւնք մնան քեզ: Այլ և ոչ ինչ համարիմ զանձն իմ պատուական, որպէս զի կատարեցից զընթացս իմ ուրախութեամբ, և զպաշտօնն զոր առի 'ի Տեառնէ Յիսուսէ, վկայ լինել աւետարանի շնորհացն Աստուծոյ: Եւ արդ՝ ահաւասիկ գիտեմ ես, եթէ ոչ ևս տեսանէք զերեսս իմ դուք ամենեքեան, յորս շրջեցայ քարոզել զարքայութիւն Աստուծոյ: Վասն որոյ զվկայութիւն դնեմ ձեզ յաւուր յայսմիկ՝ զի սուրբ եմ յարենէ ամենեցուն. քանզի ոչ խորշեցայ 'ի պատմելոյ ձեզ զամենայն կամսն Աստուծոյ: Զգոյշ կացէք անձանց՝ և ամենայն հօտին, յորում եդ զձեզ Հոգին Սուրբ տեսուչս՝ հովուել զժողովուրդ Տեառն, զոր ապրեցոյց արեամբն իւրով: Քանզի գիտեմ ես, եթէ յետ իմոյ մեկնելոյ՝ գայցեն գայլք յափշտակօղք 'ի ձեզ, որք ոչ խնայի-

ցեն հօտին։ Եւ 'ի ձէնջ յարիցեն արք, որք խօսիցին թիւրս՝ ձգել զաշակերտսն զկնի իւրեանց։ Վասն այնորիկ արթուն կացէք, և յիշեցէք՝ զի զերկեամ մի զցայգ և զցերեկ՝ ոչ դադարեցի արտասուօք խրատել զմի մի իւրաքանչիւր։ Եւ արդ՝ յանձն առնեմ զձեզ Այ՝ և բանի շնորհաց նր, որ կարօղն է շինել, և տալ ձեզ զժառանգութիւն ընդ սուրբսն ամենայն։ Արծաթոյ՝ կամ ոսկւոյ՝ կամ հանդերձից՝ ոչ ուրուք 'ի ձէնջ ցանկացայ։ Դուք ինքնին գիտէք՝ զի պէտըս իմ, և որոց ընդ իս էին՝ պաշտեցին ձեռքս այս։ Եւ զամենայն ինչ ցուցի ձեզ. զի այսպէս պարտ է վաստակել և զարմանել զհիւանդս. և յիշել զբանն Տեառն Յիսուսի, զոր ինքն իսկ ասաց. Երանելի է մանաւանդ տալն քան զառնուլն։ Եւ զայս իբրև ասաց, եդեալ ծունր ամենեքումբք՝ եկաց յաղօթս։ Բազում լալին եղև ամենեցուն. և անկեալ զպարանոցաւն Պօղոսի՝ համբուրէին զնա։ Մորմոքէին մանաւանդ 'ի վերայ բանին՝ զոր ասէր, թէ ոչ ևս տեսանելոց են զերեսս նորա. և յուղարկեցին զնա 'ի նաւ անդր։

14. ՊՕՂՈՍ ՊԱՇՏՊԱՆԻ ԵՒ ՔԱՐՈԶԷ ԱՌԱՋԻ ՓԵԼԻՔՍԻ։

24. 10 — 23։

Պատասխանի ետ Պօղոս՝ (յակնարկելն նմա դատաւորին խօսել). 'ի բազում ամաց լինել զքեզ դատաւոր ազգիս այսորիկ գիտեմ. յօժարութեամբ վասն իմոց իրաց պատասխանի առնեմ. քանզի կարող ես գիտել, զի ոչինչ աւելի է իմ քան զաւուրս երկոտասան, յորմէ հետէ ելի երկիրպագանել յԵրուսաղէմ։ Եւ ոչ 'ի տաճարի անդ գըտին զիս ընդ ումեք խօսեցեալ, և կամ ժողով արարեալ բազմաց, ոչ 'ի ժողովուրդս, և ոչ 'ի քաղաքի. և ոչ յանդիման առնել կարեն քեզ, վասն որոյ այժմդ չարախօսեն

զինէն ։ Բայց զայս խոստովանիմ քեզ, եթէ ըստ ճանապարհին՝ զոր ասեն հերձուած, այնպէս պաշտեմ զհայրենի Աստուածն, հաւատացեալ ամենայնի՝ որ ինչ յօրէնսն և ՚ի մարգարէս գրեալ է ։ Ունիմ զյոյս առ Աստուած, որում և դոքա իսկ ակն ունին՝ թէ յարութիւն լինելոց է արդարոց և մեղաւորաց ։ Յորում և ես իսկ ճգնիմ, անխիղճ միտս ունել առ Աստուած, և առ մարդիկ յամենայն ժամ ։ Ի բազում ամաց ողորմութիւնս եկի առնել յազգ իմ, և նուէր պատարագիս ։ Որովք գտին զիս սրբեալ ՚ի տաճարին, ո՛չ բազմօք՝ և ո՛չ ամբոխիւ ։ Ոմանք յԱսիացւոց անտի Հրէայք՝ որոց պարտ էր գալ առաջի քո, և ամբաստան լինել՝ եթէ ունիցին ինչ զինէն ։ Եւ կամ ինքեանք սոքա ասասցեն, զի՛նչ գտին յիս անիրաւութիւն՝ մինչդեռ կայի յատենին ։ Բայց [illegible] վասն միոյ բարբառոյս այսորիկ՝ զոր աղաղակեցի ՚ի մէջ նոցա, եթէ վասն յարութեան մեռելոց դատիմ ես այսօր ՚ի ձէնջ ։ Եւ յապաղեաց զնոսա Փելիքս՝ զի ստուգագոյնս գիտէր վասն ճանապարհին, ասէ · յորժամ Լիւսիաս հազարապետ իջցէ այսր, տեղեկացայց վասն ձեր ։ Հրամայեաց հարիւրապետին պահել զնա, և ունել յընդարձակի, և մի զոք յիւրոց անտի արգելուլ ՚ի պաշտելոյ զնա ։

24 — 25 ։

Եւ յետ աւուրց ինչ եկն Փելիքս հանդերձ Դրուսիղաւ կնաւ իւրով՝ որ էր Հրէայ · կոչեաց զՊօղոս, և լուաւ ՚ի նմանէ՝ վասն որ ՚ի Քրիստոս Յիսուս հաւատոցն ։ Եւ ՚ի խօսելն նորա վասն արդարութեան, և ժուժկալութեան, և հանդերձելոյ դատաստանին, զահի հարեալ Փելիքս, ետ պատասխանի · դու առ այժմ ե՛րթ, և յորժամ ժամ լինիցի՝ կոչեցից զքեզ ։

26· ՊՕՂՈՍ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՌԱՋԻ ԱՐՔԱՅԻՆ ԱԳՐԻՊՊԱՅ։

26·

Եւ Ագրիպպաս ասէ ցՊօղոս. Հրամայեալ է քեզ՝ վասն քո խօսիլ։ Յայնժամ Պօղոսի ձգեալ զձեռն, առնէր պատասխանի. վասն ամենայն ամբաստանութեան Հրէիցդ զինէն, արքայ Ագրիպպաս, համարիմ զանձն իմ երանելի. զի քո առաջի այսօր տալոց եմ զպատասխանի։ Մանաւանդ զի գիտակ ես իսկ ամենայն կրօնից և խնդրոց Հրէից։ Վասն որոյ աղաչեմ երկայնմտութեամբ լսել ինձ։ Քանզի զկենաց իմոց՝ որ 'ի մանկութենէ, 'ի սկզբանէ լեալ յազգի իմում յԵրուսաղէմ, տեղեակ են ամենայն Հրէայք։ Յառաջագոյն գիտեն 'ի վաղուց հետէ՝ (եթէ կամիցին վկայել) զի ըստ ճշմարտագոյն կրօնից օրինացն մերոց՝ կեցեալ եմ փարիսեցի։ Արդ վասն յուսոյն՝ առ հարսն մեր եղելոյ աւետեացն յԱստուծոյ՝ դատեալ կամ յատենի։ Յոր երկոտասան ազգատոհմին մերոյ անպակաս զցայգ և զցերեկ պաշտեալ ակնունէին հասանել։ Վասն որոյ յուսոյ ամբաստանիմ, արքայ՝ 'ի Հրէիցդ։ Զի՞նչ անհաւատ թուի ձեզ, եթէ Աստուած զմեռեալս յարուցանէ։ Ես իսկ ինքնին պատշաճ համարէի՝ զբազում ինչ հակառակ անուանն Յիսուսի Նազովրեցւոյ գործել, զոր և արարի իսկ յԵրուսաղէմ։ Եւ զբազումս 'ի սրբոցն ես բանտարգել առնէի, 'ի քահանայապետիցն առեալ իշխանութիւն, և զսպանելոցն նոցա բերէի զհամար։ Եւ ըստ ամենայն ժողովրդոցն բազում անգամ պատժեալ զնոսա՝ բռնադատէի հայհոյել. առաւել ևս մոլեալ 'ի վերայ նոցա, հալածէի մինչև յարտաքին քաղաքսն։ Որովք գնացեալ 'ի Դամասկոս՝ իշխանութեամբ և հրամանօք քահանայապետիցն, զմիջաւուրն 'ի ճանապարհի տեսի՝ արքայ, յերկնից առաւել քան զլու-

սաւորութիւն արեգական ծագեալ զինև լոյս, և զնոքօք՝
որք ընդ իս երթային։ Եւ յամենեցուն մեր անկանելն յեր-
կիր, լուայ զձայն՝ որ ասէր ցիս Եբրայեցւոց բարբառովն.
Սաւուղ՝ Սաւուղ, զի՞ հալածես զիս. խի՛ստ է քեզ ընդ-
դէմ խթանի աքացել։ Եւ ես ասեմ. ո՞ ես Տէ՛ր։ Եւ Տէր
ասէ. ես եմ Յիսուս՝ զոր դուն հալածես։ Այլ արի՛, կա՛ց
'ի վերայ ոտից քոց, զի վասն այսորիկ երևեցայ քեզ՝ զի
կացուցից պաշտօնեայ և վկայ այնոցիկ՝ զորս տեսեր, և
նոցա՝ որովք երևեցայց քեզ։ Փրկել զքեզ 'ի ժողովրդեդ՝
և 'ի հեթանոսաց, յորս ես առաքեցից զքեզ։ Բանալ զաչս
նոցա, դարձուցանել 'ի խաւարէ 'ի լոյս, և յիշխանութե-
նէ սատանայի յԱստուած. առնուլ նոցա զթողութիւն մե-
ղաց, և զվիճակ ընդ սուրբս՝ հաւատովքն որ յիս։ Ուստի,
ա՛րքայ Ագրիպպա՝ ո՛չ եղէ անհաւան երկնաւոր տեսլեանն։
Այլ նախ՝ որոց 'ի Դամասկոս և յԵրուսաղէմ էին, և ընդ
ամենայն գաւառսն Հրէաստանի, և 'ի հեթանոսս, պատմեցի
զղջանալ և դառնալ յԱստուած կենդանի. արժանի ապաշ-
խարութեան գործս գործել։ Վասն այսորիկ Հրէից կա-
լեա՛լ զիս 'ի տաճարին՝ կամէին սպանանել։ Օգնութիւն
հասեալ առ յԱստուծոյ, մինչև ցայսօր կացի վկայել փո-
քու և մեծի. ոչինչ արտաքոյ ասել՝ քան զոր մարգարէքն
և Մովսէս խօսեցան զհանդերձելոց լինելոյ, եթէ չարչա-
րելոց է Քրիստոսն, եթէ առաջին 'ի յարութենէ մեռելոց՝
լոյս պատմելոց է ժողովրդեանն և հեթանոսաց։ Եւ նորա
զայս պատասխանի տուեալ, Փեստոս 'ի ձայն մեծ, ասէ.
մոլի՛ս՝ Պօղէ. բազում դպրութիւնքդ զքեզ 'ի մոլորու-
թիւն դարձուցանեն։ Իսկ Պօղոս ասէ. ո՛չ մոլիմ, քաջդ
Փեստոս. այլ զցածութեան և զճշմարտութե̃ բանս բար-
բառիմ։ Գիտակ իսկ է այսոցիկ արքայ, ընդ որում և հա-
մարձակեալդ խօսիմ. քանզի ծածկել 'ի քէն իմիք 'ի սո-

ցանէ՝ հաւանում յանձն. զի ոչ եթէ յանկեան ուրեք գործեալ իցէ այս։ Հաւատա՞ս, արքայ Ագրիպպաս, մարգարէից. գիտեմ զի հաւատաս։ Եւ ասէ Ագրիպպաս ցՊօղոս. փոքու իմն հաւանեցուցանես զիս լինել քրիստոնեայ։ Եւ Պօղոս ասէ. խնդրէի յԱստուծոյ՝ և փոքու՝ և մեծաւ՝ ոչ միայն զքեզ, այլ զամենեսեան՝ որք լսեն ինձ այսօր, լինել այսպիսի՝ որպէս և ես եմ, բաց 'ի կապանաց աստի։ Յոտն եկաց արքայն՝ և դատաւորն՝ և Բերինիկէ, և որք ընդ նոսայն նստէին։ Եւ իբրև գնացին, խօսէին ընդ միմեանս և ասէին, թէ ոչինչ արժանի մահու կամ կապանաց գործէ այրս այս։ Իսկ Ագրիպպաս ցՓեստոս ասէ. արձակել մարթ էր զայրս զայս՝ եթէ ոչ էր բողոքեալ 'ի կայսր։

16. ՊՕՂՈՍ ՆԱԽԱԳՈՒՇԱԿԷ ՈՒՂԵԿՑԱՑ ԻՒՐՈՑ ԶՆԱՒԱԲԵԿՈՒԹԵՆԷ ԵՒ ԶԱԶԱՏՈՒԹԵՆԷ։

27. 9 — 44։

Եւ իբրև բազում ժամանակք անցանէին, և սխալ ևս լինէր նաւելոյն. և վասն այն ինչ ևս պահոցն անցանելոյ՝ տայր խրատ Պօղոս։ Եւ ասէր ցնոսա. արք՝ տեսանեմ զի թշնամանօք և բազմաւ վնասու՝ ոչ միայն բեռինդ և նաւիդ, այլ և անձանց մերոց լինելոց է նաւարկութիւնս։ Իսկ հարիւրապետն նաւապետին և նաւավարին առաւել անսայր՝ քան բանիցն Պօղոսի։ Իբրև դժպատեհ իմն թուէր նաւահանգիստն առ 'ի ձմերել, բազումք խորհեցան գնալ անտի. թերևս կարասցեն հասանել 'ի Փիւնիկէ՝ ձմերել 'ի նաւահանգստին Կրետացւոց, որ հայէր ընդ հարաւակողմն և ընդ աշխարհն։ Եւ 'ի շնչել հարաւոյն, համարեցան ուր դիմեալն էին հասանել. և արկեալ՝ մօտ անցանէին զԿրետեաւ։ Եւ ոչ յետ բազում ժամուց՝ անկաւ զնովաւ հողմ ուռուցիկ՝ որ կոչի Եւրակիւդոն։ Ընդ յափշտակել նաւին

և 'ի չհանդուրժել ընդդէմ հողմոյն, թոյլ տուեալ եր-
թայաք և գայաք: Ի կղզի ինչ դիմեալ՝ որ կոչիւր Կլօդա,
հազիւ կարացաք ըմբռնել զմակոյկն. զոր առեալ՝ յօգնա-
կանութիւն կապէին ընդ նաւն: Երկուցեալք՝ եթէ գուցէ
'ի յորձանուտն անկանիցին, իջուցեալ զառագաստն՝
այնպէս երթային և գային: Եւ 'ի սաստկագոյն վշտանա-
լոյն մերոյ՝ 'ի վաղիւ անդր զկարասին ընկեցիկ առնէին:
Եւ յերիր աւուր ընդ իւրեանց ձեռն՝ զգործի նաւին ընկե-
ցին: Իբրև ո՛չ արև՝ և ո՛չ աստեղք երևէին 'ի բազում
աւուրս, և ձմեռն ո՛չ սակաւ կայր 'ի վերայ. ապա բառնայր
ամենայն յոյս փրկութեան մերոյ: Եւ զի 'ի բազում աւու-
րս նօթիք էին. յայնժամ Պօղոս կացեալ 'ի մէջ նոցա՝
ասէ. պա՛րտ էր ձեզ՝ ո՛վ ա՛րք, անսալ ինձ, և ո՛չ ելանել 'ի
Կրետեայ՝ և շահել զվիշտս զայս և զվնաս: Եւ արդ՝ խրա-
տեմ զձեզ քաջալերել՝ զի վնաս անձին և ո՛չ միում 'ի
ձէնջ լինիցի՝ բաց 'ի նաւէդ: Քանզի երևեցաւ ինձ յայսմ
գիշերի հրեշտակ Աստուծոյ՝ որոյ եմն ես, և պաշտեմ զնա:
Եւ ասէ. մի՛ երկնչիր Պօ՛ղէ, կայսեր ևս պարտ է քեզ յան-
դիման լինիլ. և ահա՛ շնորհեալ է քեզ յԱստուծոյ զամե-
նեսեան, որք են ընդ քեզ 'ի նաւիդ: Վասն այսորիկ քա-
ջալերեցարո՛ւք ա՛րք, զի հաւատամ յԱստուած, թէ այս-
պէս լինի՝ զորօրինակ խօսեցաւ ընդ իս: Բայց 'ի կղզի ինչ
հասանի մեզ անկանիլ: Իբրև չորեքտասաներորդ գիշեր լի-
նէր՝ մինչդեռ ծփէաք 'ի հանդրին անդունդս, 'ի մէջ գի-
շերին կարծէին նաւավարքն՝ եթէ հասեալ իցեն յաշխարհ
ուրեք: Եւ ընկեցեալ զգունդսն՝ գտին գիրկս քսան. և
սակաւ ինչ գաղարեալ՝ դարձեալ ընկեցին՝ և գտին գիրկս
հնգետասան: Զահի հարեալ թէ գուցէ 'ի խիստ ինչ տե-
ղի անկանիցին, յետուստ կողմանէ ընկեցին խարիսխս
չորս. ըղձանային այգուն լինելոյ: Բայց նաւավարքն խընդ-

րէին փախչել 'ի նաւէ անտի, և իջուցեալ զկուրն 'ի ծով անդր՝ պատճառանօք, որպէս թէ յառաջոյ կողմանէ խարիսխս ձգելոց իցեն։ Ասէ Պօղոս ցհարիւրապետն և ցզօրականսն. եթէ ոչ դոքա մնան 'ի նաւիս, դուք ապրել ոչ կարէք։ Յայնժամ զօրականքն հատին զլարս կրին՝ և 'ի բաց ընկեցին։ Եւ մինչդեռ այգն կամէր լինել՝ աղաչէր Պօղոս զամենեսեան առնուլ զկերակուր՝ ասէ. այս չորեքտասաներորդ օր է, որում ակն ունիք նօթի կատարել. և չէ ինչ ճաշակեալ։ Վասն որոյ աղաչեմ զձեզ՝ ճաշակել զկերակուր, զի այն իսկ վասն ձերոյ փրկութեան է. զի ոչ ուրուք 'ի ձէնջ մազ մի 'ի գլխոյ կորիցէ։ Եւ իբրև ասաց զայս, առեալ զհաց՝ գոհացաւ զԱստուծոյ առաջի ամենեցուն. եբեկ, և սկսաւ ուտել։ Եւ քաջալերեցան ամենեքին, և նոքա առին զկերակուր։ Եւ էաք ամենայն հոգիք 'ի նաւին՝ երկերիւր եօթանասուն և վեց։ Իբրև յագեցան կերակրով, թեթևացուցին զնաւն՝ թափեալ զցորեանն 'ի ծով։ Եւ իբրև այգ եղև՝ զերկիրն ոչ ճանաչէին, բայց ըզգոգ մի նշմարէին՝ թէ առ ափն ծովուն իցէ, յոր խորհէին եթէ հնար ինչ իցէ զերծուցանել զնաւն։ Եւ զխարիսխն հատեալ՝ ընկեցին 'ի ծով, թուլացուցին զկառանելիս թևոցն, և 'ի բաց առին զառագաստն. և ետուն հողմոյն յափն կոյս ծովուն։ Անկեալ 'ի տեղի մի երկծով՝ թիրեցին զնաւն. և առաջին կողմն նաւին խրեալ՝ անշարժ մնայր, և յետին կողմն քակիւր 'ի բռնութենէ ալեաց։ Եւ զօրականացն խորհուրդ արարեալ՝ զի զկապեալսն սպանցեն, և մի' ոք լողիցէ՝ և փախիցէ։ Եւ հարիւրապետն քանզի կամեցաւ ապրեցուցանել զՊօղոս՝ արգել զնոսա 'ի խորհրդոյն. հրամայեաց՝ զի որք կարողք իցեն լողել, անկանիցին՝ և 'ի ցամաք ելանիցեն, և զայլսն՝ զորս 'ի տախտա-

կըս, և զորս յայլ ինչ կան 'ի նաւէ անտի. և այսպէս եղև ամենեցուն փրծանիլ յերկիր։

27· ԲՆԱԿԻՉՔ ԿՂԶԻՈՅՆ ՄԵԼԻՏԻՆԵԱՑ ՀԻՒՐԸՆԿԱԼԵՆ ԶՊՕՂՈՍ ԵՒ ԶԿՆԻ ԱՆՑԵԱԼ ԳՆԱՑ Ի ՀՌՈՎՄ։

28· 1 — 6։

Եւ ապրեալք յայնժամ գիտացաք՝ թէ Մելիտինէ էր անուն կղզւոյն. բայց բարբարոսքն շնորհեցին ոչ սակաւ մարդասիրութիւն մեզ։ Քանզի լուցին զխարոյկ՝ և ընկալան զամենեսին զմեզ վասն անձրևին՝ որ ստիպէր, և վասն ցրտոյն։ Եւ 'ի ժողովել Պօղոսի զխռիւ ինչ բազում, և դնել 'ի վերայ խարուկին, իժ մի 'ի ջերմութենէն ելեալ՝ կալաւ զձեռանէ նորա։ Եւ իբրև տեսին բարբարոսքն կախեալ զգազանն զձեռանէ նորա, ասէին ցմիմեանս. ուրեմն սպանող է այրս այս. որ թէպէտ ապրեցաւ 'ի ծովէն, իրաւունքն ոչ ետուն կեալ։ Եւ նորա թօթափեալ զգազանն 'ի հուրն, եղև նմա չար և ոչինչ։ Եւ նոքա ակն ունէին նմա այտնլոյ՝ կամ անկանելոյ՝ և յանկարծակի մեռանելոյ։ Իբրև շատ ակնկալեալ, և տեսանէին՝ թէ ոչինչ վնաս եղև նմա, դարձեալ դարձուցեալ զբանն, ասէին՝ թէ Աստուած ումն է։

7 — 10։

Եւ շուրջ զտեղեաւն զայնուիկ էին գիւղք գլխաւորի կղզւոյն՝ որում անուն էր Պօպղիոս, որ էառ զմեզ յերաշխի զերիս աւուրս՝ և սիրով ընկալաւ։ Եւ եղև հօրն Պօպղեայ 'ի ջերմն, և յախտ թանչից հիւանդանալ դնիլ, առ որ մտեալ Պօղոս՝ և կացեալ յաղօթս՝ եդ զձեռն, և բժշկեաց զնա։ Եւ իբրև այս եղև, և այլ հիւանդք՝ որք էին 'ի կղզւոջն, գային՝ և բժշկէին։ Որք և բազմօք պատուօք պատուեցին զմեզ. և իբրև գնացաք, ետուն՝ որ ինչ պէտք էին։

11 — 26։

Եւ յետ երից ամսոց ելաք 'ի նաւ մի Աղեքսանդրացի, որ ձմերեալ էր 'ի կղզւոջն նշանաւոր Դիոսկուրացւոց : Եւ իջեալ 'ի Սիրակուսայ, եղեաք անդ աւուրս երիս : Ուստի գնացեալ հասաք 'ի Հռէգիոն. և յետ աւուր միոյ 'ի շըն- չել հարաւոյն, երեկորեայք եկաք 'ի Պատիողոս : Ուր և գտաք եղբարս, աղաչեցեալք 'ի նոցանէ լինիլ առ նոսա աւուրս եօթն, և ապա ելաք 'ի Հռոմ : Եւ անտի լուեալ եղբարց զմէնջ, ելին ընդ առաջ մեր մինչև յՈրգոստայն Ապփեայ՝ և երիցն կրպակաց. զորս տեսեալ Պօղոսի, գո- հացաւ զԱստուծոյ՝ և քաջալերեցաւ : Եւ իբրև մտաք 'ի Հռոմ, հրամայեցաւ Պօղոսի լինիլ առանձինն հանդերձ զինուորաւն՝ պահապանաւ իւրով : Եւ եղև յետ երից ա- ւուրց կոչել նմա զհրէիցն գլխաւորս. և իբրև եկին, ասէ ցնոսա. ես՝ արք եղբարք՝ ոչինչ հակառակ գործեալ ժո- ղովրդեանն կամ կրօնիցն հայրենեաց, կապեալ յԵրուսա- ղեմէ՝ մատնեցայ 'ի ձեռս Հռոմայեցւոց : Որք իբրև դատե- ցին զիս՝ կամեցան արձակել. վասն և ոչ զմի ինչ վնաս մահու գտանելոյ յիս : Ի հակառակիլ Հրէիցն, հարկ եղև բողոքել 'ի կայսր. իբրև ոչ թէ զազգէն իմմէ ունէի ինչ չարախօսել : Վասն այսր պատճառանաց աղաչեցի զձեզ տեսանել և խօսել. քանզի վասն յուսոյն Իսրայէլի կամ՝ 'ի շղթայս յայսոսիկ : Եւ նոքա ասեն ցնա. մեք ոչ թուղ- թս ինչ վասն քո ընկալաք 'ի Հրէաստանէ, և ոչ եկեալ ոք յեղբարց պատմեաց՝ կամ խօսեցաւ ինչ վասն քո ըզ չարութիւն : Բայց աղաչեմք 'ի քէն լսել՝ թէ զի՛նչ խոր- հիցիս. զի վասն հերձուածոյդ այդորիկ յայտնի իսկ է մեզ, զի ամենայն ուրեք զհակառակութիւն կրէ : Ժամ եդեալ նմա օր մի, եկին 'ի վանսն առ նա բազումք. որոց պատմէր

վկայութեամբ զարքայութիւն Աստուծոյ, և հաւանեցուցանէր զնոսա վասն Յիսուսի՝ յօրինացն Մովսէսի և 'ի մարգարէից՝ յայգուէ մինչև ցերեկոյ։ Եւ ոմանք հաւանէին բանիցն, և կէսք չհաւատային։ Եւ անմիաբանք լեալ միմեանց՝ արձակէին, յասելն Պօղոսի բան մի, թէ բարւոք խօսեցաւ Հոգին սուրբ 'ի ձեռն Եսայեայ մարգարէի առ հարսն մեր, և ասէ. Ե՛րթ առ ժողովուրդն, և ասասցես. լսելով լուիջիք՝ և մի՛ իմասջիք, և տեսանելով տեսջիք՝ և մի՛ տեսջիք։ Զի թանձրացաւ սիրտ ժողովրդեանն այնորիկ՝ և ականջօք իւրեանց ծանր լուան, և զաչս իւրեանց կափուցին. զի մի՛ երբէք տեսանիցեն աչօք՝ և ականջօք լուիցեն. և սրտիւք իմասցին՝ և դարձցին, և բժշկեցից զնոսա։ Եւ արդ՝ յայտնի լիցի ձեզ, զի հեթանոսաց առաքեցաւ փրկութիւն Աստուծոյ. Նոքին և լուիցեն։ Եւ իբրև զայս ասաց, արտաքս գնացին 'ի նմանէ Հրէայքն՝ որք ունէին 'ի մէջ ինքեանց զբազում խնդիրս։

30 — 31։

Եւ եղև զերկեամ մի բովանդակ իւրով վարձու. և ընդունէր զամենեսեան՝ որք մտանէին առ նա։ Քարոզէր զարքայութիւնն Աստուծոյ, և ուսուցանէր վասն Տեառն Յիսուսի Քրիստոսի, անխափան՝ ամենայն համարձակութեամբ։

ՎԵՐՋ։

Бук. № 1124/868
Ц. 4 р. — к.
ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0466459

A II / 42602